891.99
Ա-42

06 DEC 2010
07 JUN 2005

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԵՐԿԵՐԻ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԽԵՂՃԵՐԸ

Բ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ- ի Ա.Ա.Ա.Ն
им. А. Мясникяна
Ա ՍՕՑԻԱԼԻԶՄԻ ԱԿԱԴԵՄԻԱ

19284

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵՔՏՐԱՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ, ՓՈՂՈՑ 7
1909

5 .02. 2013

18269

14



3626-2002

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԵՎՐՀԻԼՈՒՄ
1897
ARMENIAN LIBRARY OF HAVERHILL, MASS.

ՍԵՒ ՕՐԵՐ*)

I.

Գեղեցիկ էր Մարօն, որպէս կուսական լեռան կրծքին հարաւային երկնքի տակ բացուած բուրաստից շուշան։ Բնութիւնը ոչինչ չէր խնայել իր այդ չքնաղ ստեղծագործութիւնը հրաշակերտելու համար. ասես նա կամեցել էր սրանով ցոյց տալ, թէ փոթորիկներին և կայծակներին հրամայող իր զօրութիւնը երբեմն ո՛րքան քնքոյշ, ինչպիսի նուրբ գործեր հրաշակերտել գիտէ։

Շա՛տ գեղեցիկ էր Մարօն։ Նրա սև մազերի հարուստ խոպոպները տատնեակ համաչափ հիւսերով բարձր պարանոցի վրայից շքեղապէս իջնում էին դէպի թիկունք և ամեն անգամ շարժում գործելիս, ասես թեթև հովից ալեծածան՝

*) Այս հատորում զետեղուած առաջին չորս պատմուածքները արտատպուած են «Մուրճ» ամսագրից, իսկ «Դարձը» «Վտակ» ժողովածուից։

ծըփում էին և իրանց ծայրերի շքեղ փնջերով մեղմիկ ծեծում էին նրա բարակ մէջքը։ Գոյնզգոյն խաս թելերը միացնում էին իրար հետ այդ հիւսերը, իսկ նրանց վրայ շարուած արծաթեայ դրամները նրա ամեն մի քայլը փոխելիս անուշ ղընդոց էին բարձրացնում։ Նրա կլոր դէմքը կարծես լուսին լինէր, նուրբ կամարաձև յօնքերի տակ վառւում էին մեծ սև աչքերը, անհուն՝ որպէս երկինք և յըստակ՝ որպէս ջինջ եթերը։ Դիւթիչ էր այդ աչքերի արտայայտութիւնը, կուսական սրտի անմեղութիւնը, խառնուած այն ջերմութեան հետ, որ յատուկ է նոր արքունքի հասած կայտառ, կենսալից աղջիկներին, ցոլանում էր նրա հայեացքի մէջ ամեն անգամ, երբ նա իր երկար թերթերունքների միջից նայում էր մէկին։ Բայց երբ դէմքի վրայ խաղում էր կախարդական ժպիտը, երբ նա բաց էր անում իր վարդ շրթունքները, այն ժամանակ Մարօն աննման էր դառնում. երկու կարմիր այտերի վրայ միաժամանակ ձևանում էին երկու այնպիսի հրաշալի փոսիկներ, որ ամեն մի երիտասարդ յանձն կ'առնէր կեանքը տալ այդ չնաշխարհիկ պատկերի տէրը լինելու համար։ Բայց շատ քիչ երիտասարդներ կարող էին պարծենալ, թէ իրանց յաջողուել է թէկուզ գաղտագողի տեսնել նրա ժպիտը, սքանչանալ այտերի գեղարուեստական փոսիկներով։

Մարօն զգոյշ էր, որպէս իր հայրենի լեռների այծեամը. նա քիչ էր երևում տղամարդկանց աչքերին, երևալիս էլ գլուխը միշտ կախ էր, աչքերը խոնարհած, ասես թէ ամաչում էր իր գեղեցկութիւնից։

Նա իր հօր, Սհօի՝ մի հատիկ զաւակն էր, նրա քնքոյշ սիրոյ առարկան, նրա պաշտած էակը, նրա կուռքն էր։ Վաղուց... տասն և չորս տարի առաջ, երբ բախտը խեթ նայեց նրան, մի քանի ամսուայ մէջ նա կորցրեց իր մի հատիկ արու զաւակը և ապա իր ամուսնուն, Մարօն մնաց մօրից որբ, մենակ։ Նոյնքան, գուցէ և աւելի որբ զգաց իրան Սհօն, ուստի իր բոլոր սէրը նուիրեց մի հատիկ աղջկան, նրա հետ կապուեց, նրա վրայ թափեց սիրող ծնողի բոլոր խնամքը, բոլոր դուրդուրանքները։

Արդարև, վաղամեռիկ և սիրելի ամուսնու և ծաղկափթիթ որդու կորուստը Սհօին շատ վիշտ պատճառեցին, նա շատ սգաց, մաղերը վաղաժամ ճերմակեցին, բայց Մարօն կամաց-կամաց մեծանալով՝ փարատեց իր հօր ծանր վիշտն ու թախիծը։ Սհօն կարօտ էր մի սիրող սրտի, որ սպեղանի դնէր նրա հոգու վէրքերի վրայ, որ սիրով լցնէր նրա աննպատակ դարձած կեանքի ամայութիւնը և այն գտաւ իր նազելի Մարօի մէջ։ Աղջիկը հօր անբաժան ընկերը դարձաւ, հայրը սովորեց Մարօին շարունակ իր մօտ ունենալ, նրա տեսքը, ձայնը, շարժուածքը Սհօին անվերջ մխիթարութիւն էր պատճառում։ Նրա ներկայութեամբ Սհօն իր շուրջն զգում էր և՛ կեանք, և՛ խնդութիւն, ահա թէ ինչու իր աղ-

չկայ մի քանի ժամուայ բացակայութիւնն անգամ դժուարութեամբ էր տանում։

Տատն և վեց գարուն էր բոլորել Մարօի գլխով, բայց նա տակաւին ուրիշ սէր չը գիտէր, բացի անմեղ որդիական սիրուց, որ նա տածում էր դէպի իր հայրը։ Նա չէր յիշում ոչ մօրը և ոչ եղբօրը, նա գիտէր միայն որ հայր ունի, խնամոտ սիրող հայր, որ նրան ձեռների վրայ է մեծացրել, գիշերները թևի վրայ պարկեցրել, քաղցը օրօրներով, տխուր մեղեդիներով քնացրել։ արթուն ժամանակ գուրգուրելով փայփայել է։ և Մարօն իր բոլոր սէրը իր ծնողին նուիրեց։ Սակայն հարազատներ ունենալու քաղցրութիւնը դեռ մանկութիւնից նա զգում էր բնազդով, մանաւանդ երբ տեսնում էր, որ ընկերուհիները մայր, քոյր, եղբայր ունեն։ Աւելի ևս խորն էր զգում նա իր միայնութիւնը, երբ դեռ փոքր հասակում ընկերուհիների հետ տարաձայնութիւն ունենալիս, հակառակորդները նրան սպառնում էին իրանց եղբայրների անունից։ Այդպիսի դէպքում Մարօն կորցնում էր իրան, պատասխան չէր գտնում. ամաչում էր հօր անունից սպառնալ, ախր նա մեծ էր, անյարմար էր։ Ճարը կարուած նա կրծոտում էր շրթունքները և դառն-դառն արտասուում։ Օ՛, ինչպէս կ՛ուզենար նա այդ ժամերին եղբայր ունենալ։

Եղբայր չը կար, միայն էին հայր և որդին, բայց կարողացան մի ամբողջ աշխարհ ստեղծել ծնողական և որդիական սիրով և այդ աշխարհում

ապրում էին նրանք փոխադարձաբար մխիթարելով իրար։ Գոհ էր Սհօն, գոհ էր և Մարօն։ Տատն և վեց երկար տարիներ անցան այս կերպով։

Վերջին ժամանակներում միայն Մարօն անհանգստութեամբ և երկիւղով նկատեց, թէ ինչպէս հայրը նորից կամաց-կամաց անձնատուր է լինում ինչ-որ անծանօթ վշտի։ Սհօն ժամերով և օրերով լուռ մտածում էր, կարծես նա աշխատում էր լուծել մի ծանրակշիռ խնդիր, որ նրա համար կենսական նշանակութիւն ունէր։ Եւ այս մտահոգութիւնը կրկնւում էր ամեն անգամ, երբ նա երկար և ուշադիր նայում էր աղջկան։

Ի՞նչ էր տանջում Սհօին, արդեօք աղջկայ պատկերը վերակենդանացնո՞ւմ էր ամուսնու յիշողութիւնները, վաղամեռիկ զաւակի՞ն էր մտաբերում, թէ մի ուրիշ աւելի ծանր պատճառ ունէր այդ խռովութիւնը, այդ ծածուկ վիշտը, որ ցեցի պէս կրծում էր նրա սիրտը։ Այդ չը գիտէր Մարօն. բայց գաղտնի խռովութիւնը հօր դէմքին կարդալով, աղջիկը խորապէս վշտանում էր։ Վաղուց էր, որ նա հօրն այսպէս տխուր չէր տեսել, վաղուց էր, որ հայրը միշտ ժպտադէմ, ուրախ էր, այս պատճառով աղջիկն այժմ և՛ զարմանում էր, և՛ ցաւում էր։ Նա ուզում էր, որ իր հայրը բախտաւոր լինի, ինչպէս ինքն է, որ նա էլ ցաւ ու տրտմութիւն չունենայ։ Այս ցանկութիւնը նրան դէպի իր հայրը տածած

քնքոյշ սիրոյ արգասիք էր։ Ահա թէ ինչու սիրելի հօր դէմքին տխրութեան քօղ նկատելով՝ նա ամեն անգամ նայում էր նրան իր արցունքոտ արտահայտութիւնների միջից և վզովն ընկնելով հարցնում էր.

— Հայրիկ, դարձեալ տխուր ես, էլի՞ մայրիկին և եղբօրս յիշեցիր, մինչև ե՞րբ «դարդ» անես, մի՞թէ բաւական չէ։

— Չէ, զաւակս, չէ, պատասխանում էր շփոթուած հայրը յանցանքի մէջ բռնուած մարդու պէս. ողորմի իրանց, Աստծոյ կամքն էր, դու ողջ լինես՝ ինձ համար բաւական է, ես տխուր չեմ, քեզ այդպէս թւում է միայն։

Այս խօսակցութեան վերջում հայրը սովորաբար փոխում էր իր դէմքի արտայայտութիւնը, աշխատում էր ուրախ ձեւանալ և նոյն իսկ ժըպտում էր Մարօի երեսին։

Եւ իրօք մեռած սիրելիների տխուր յիշատակը չէր, որ գալիս էր մռայլելու նրա ծեր ճակատը։ Շատ տարիներ առաջ նա իր վիշտն Աստծուն յանձնեց, ուխտեց իր Մարօին խորթ մօր ձեռք չը ձգել և իր բոլոր սէրը նրան նուիրեց։ Նոյն իսկ իր ծանր կորուստից յետոյ, երբ սրտի վէրքը դեռ թարմ էր, Սհօն միշտ Մարօից ծածուկ էր անձնատուր լինում վշտի, դիշերները, խաւարի մէջ էր արտասուում, որպէս զի այդ որը մնացած ծաղկի վրայ ոչ մի սառնաշունչ հով չը փչի, ոչ մի անախորժ զգացմունք չը խռովի նրա քնքոյշ սիրտը։ Եւ Սհօն հասաւ

իր նպատակին, Մարօն մեծացաւ, որպէս անհոգ թիթեռնիկ։ Եւ այժմ, երբ Սհօն պէտք է խպատառոտած լինի այն դառն օրերի յիշատակը, երբ Մարօն մեծացել, հասած աղջիկ է դարձել անդուզական գեղեցկութեամբ, նման իր մօրն ինչպէս մի ձու միջից կէս արած, այժմ երբ նա իր պիտակցական սիրով երախտապիտաբար վարձատրում է հօրը նրա կրած բոլոր դառնութիւնների փոխարէն, այժմ Սհօն փոխանակ ուրախ լինելու, յաճախակի անձնատուր է լինում խորասոյն վշտի։ Ինչո՞ւ։ Որովհետև Մարօն շատ սիրուն է, անչափ գեղեցիկ, նա բախտաւորը լինել չի կարող, մտածում և զգում է հայրը։

— Էս «վէրան» երկրի մէջ խօրօտին բախտ չը կայ, չարը ոտից կապած է, մռմռում էր նա յաճախ միայնութեան րոպէներում։ Ահա թէ ինչն էր նրա ծածուկ վշտի, նրա յարատեւ մտահոգութեան պատճառը։

Սև օրերի, սև աշխարհի ծնունդ էր Մարօն։ Այդ այն աշխարհն է, որ ձգւում է Վ... ծովակի ափերում և մի շարք ցեղանկար լեռների ստորոտներում։ Այստեղ լոյս ու արև տեսաւ, այստեղ աճեց ու զարգացաւ Մարօն մանկական անհոգութեամբ ու անպիտութեամբ։ Հօր սիրով թեւաւորուած, նա խաղում էր ժամանակի հետ, առանց զգալ կարողանալու, թէ ինչ տարօրինակ աշխարհում է ծնուած ինքը։

Եւ յիրաւի դա մի զարմանալի աշխարհ էր։ Այնտեղ բնութեան ներդաշնակութիւնը խախ-

տուած էր մարդկանց ձեռքով։ Աղաւաղուած, վայրենաբար այլանդակուած էր այն բոլորը, ինչ որ բնութեան մէջ վեհ է ու վսեմ, ինչ որ ոգի է ներշնչում, խորհուրդ տալիս կեանքին, բնութեանը, տիեզերքին։ Կապուտակ, անհուն երկինքը միշտ ժպտուն, միշտ գեղածիծաղ էր այնտեղ, բայց մարդկային գազանութիւնը նրան բանտի հակայական կամար էր դարձրել. այնտեղ օդը մեղմ էր՝ որպէս քնած մանկան շունչ և ջինջ՝ որպէս կուսական խոհեր, բայց արիւնածարաւ մարդը այդ հրաշալի մթնոլորտը լցրել էր արեան գոլորշիներով,—ծանր էր շնչել։ Լեռ ու դաշտ պճնուած էին գեղահրաշ ծաղիկներով, կանաչաւէտ հիւթալի սեզերով, հազարաւոր աղբիւրները գլգլալով վայր էին գլորում լեռներից իրանց բիւրեղեայ շիթերի ցնցուղները, բայց ծաղիկներն ու խոտերը ջրից աւելի արիւն էին ծծում, արիւնով սնուում, աղբիւրները շատ անգամ կարմիր, բոսորային վտակներ էին կազմում։ Ամեն առաւօտ հակայ լեռների թիկունքից բարձրանում էր արևը և ոսկեզօծում սպիտակափառ բարձրութիւնների կատարները. ամեն երեկոյ՝ վերջալուսին արևմուտքում գոյների մի սքանչելի մրցութիւն էր կատարւում, երկնակամարի այդ մասը վառւում էր՝ ասես հակայական հրդեհով բռնուած. դիշերները լուսինն էր սահում բիւրաւոր աստղերի միջից և իր արծաթեայ շիթերով ողողում լեռ ու դաշտ։ Բայց բնութեան այս հրաշալիքներով մարդիկ այդ երկրում յափշտակուել չը գիտէին,

վսեմ երազներ չը կային այնտեղ, բնութեան իսկական լեզուն անհասկանալի էր, երկնակամարի կարմրութիւնն արիւնից էր խօսում, երեկոն՝ խաւարի կարապետը, սարսափ էր պատմում, ջրերի կարկաչիւնը՝ հեծեծանք, դիշերային խոր լռութիւնը՝ մահ։

Այսպէս էր այն աշխարհը—և՛ գեղեցիկ, և՛ զարհուրելի միաժամանակ։

Այն բոլորը՝ ինչ որ գեղեցիկ էր ու բարի, հալածւում էր այդ սարսափելի աշխարհում։ Զարը և միմիայն չարն էր թևատարած դևի պէս իշխում այդ երկրի վրայ և նրա սև թևերի սոսկալի հովանու տակ գեղեցիկը, բարին խեղդւում, հեծում էին ինչպէս երկաթեայ օղակի մէջ։

Յանցանք էր գեղեցիկ սեփականութիւն ունենալ, այդպիսի սեփականատէրը իր ունեցածի հետ յաճախ զրկւում էր նաև իր կեանքից։ Գեղեցիկ արար բարբարոսների ձիերի կոխան էր լինում, բուրմունքով լի, չքնաղ ծաղիկները մի ժամ էին միայն ապրում. դրախտանմման պարտէզները մի քանի ժամում ամայի անապատ էին դառնում. ոտքեր կային, որոնց կոխած տեղն այլ ևս ոչինչ չէր բուսնում։ Սրընթաց նժոյգն ու հաստավիզ եզն ու գոմշուկը խլւում էին և տէրերն առանց բողոքի, իրանց անասուններից համբերութեամբ խողխողւում էին։ Հարուստ և երջանիկ մարդը մի օրում մուրացիկ էր դառնում։

Եւ ահա թէ ինչու՛ ամենքն աշխատում էին թագցնել, հարստահարիչների աչքից հեռացնել այն բոլորը, ինչ որ գեղեցիկ էր, ինչ որ ախորժակ կամ կիրք կարող էր գարթեցնել։ Գեղեցիկ ձիերը շուտով վաճառւում, անյայտանում էին, անասունները մորթւում, պարարտ դաշտերը ճնում էին առանց ցանելու, ոսկեայ և արծաթեայ գարդերը ծածկւում էին երկրի տակ։ Հարուստը շրջում էր ինչպէս մուրացիկ, ազատութեան սիրահարը՝ ստրուկ էր ձևանում, բարի մարդը՝ չարագործութեան ջատագով, առաքինին՝ ծածկում էր իր հոգու խորքերում թանձր մրուրի տակ այն աստուածային կայծը, որ մեծագործութեան հուրն է բորբոքում ընտրեալների սրտերում և բարւոյ յաղթանակի վսեմ նշանով զրոշմում ոսկեզարերի փայլուն ճակատները։

Մարդիկ այս բոլորը թագցնում էին, այս բոլորի համար ճար ունէին, մի բան կար միայն, որ անկարելի էր թագցնել, որից հեշտ չէր զըրկուել և որ այս պատճառով ամենավտանգաւորը սեփականութիւնն էր համարւում այն դժոխային աշխարհում—դա կանացի գեղեցկութիւնն էր։ Գեղեցիկ աղջիկներն ու իրանց ծնողները, գեղեցիկ կանայք ու իրանց ամուսինները դեռ երբէք այն աշխարհում բախտաւոր չէին եղել։ Այդ գիտէր Սհօն, ահա՝ թէ ինչու՛ իր Մարօի դիւթիչ գեղեցկութիւնը տեսնելով, նա տխրում էր, գլուխ քաշ գցում, և ծանր, մաշող մտքերը մռայլում էին նրա ծեր ճակատը։

Շատ սիրուն է... իսկ եթէ նրա գարմանալի գեղեցկութեան հռչակը գիւղից տարածուելով՝ վերջ ի վերջոյ անօրէնների և նրանց տուփոտ բէգերի ականջին հասնի և նրանք մտածեն խլել իրանից Մարօին իրանց սև աշխարհի սովորութեան համեմատ։ Օ՛, այս բանը երևակայելիս անգամ ծերունին դողում էր սարսափից։ Նա գարհուրում էր նոյն իսկ իր սեփական չարագուշակ մտքերից, նա աշխատում էր հեռու քշել իր գլխից այդ սև մտքերը, վախենալով մի՛ գուցէ աշխարհն իմանայ, թէ ինքն ի՞նչ էր մտածում իր Մարօի մասին և դրանով հէնց ինքը պատճառ դառնայ նրա կորստեան... Սարսափելի կասկածամտութիւնն օր աւուր տիրում էր նրան, ինքն իրան չէր հաւատում. նրան թւում էր թէ ինքը բաւականաչափ զգոնութիւն չէ, թէ իր գարհուրելի կասկածները միայն լուռ թեամբ չեն փորփրում նրա ուղեղի ծածուկ խորշերը, թէ նա բարձրաձայն է յայտնում ամենքին, ուստի կրկնապատկում էր իր զգոնութիւնը։ Երբեմն էլ ինքն իրան հաւատացնում էր, թէ կասկածելն անմտութիւն է. քի՛չ աղջիկներ կան աշխարհում, խօմ մենակ Մարօն չէ՞, հէնց սրա՛ն պիտի տեսնեն, սրա՛ն տանեն. այս մտքերը նրան մի փոքր հանգստացնում էին, բայց այդ հանգստութիւնը շատ կարճատև էր լինում, բաւական էր նորից նայել Մարօին խորապէս համոզուելու համար, որ գարհուրելի ենթադրութիւնը զուրկ չէ հիմունքնե-

ըից, որ վանդը մօտ է... Մարօն աննման էր, ուրիշներին ինչո՞ւ պիտի տանեն։

Սհօն նոյն իսկ ատում էր այն երիտասարդին, ով և լինէր նա, որին ճակատագիրը վիճակել էր Մարօի օրինաւոր ամուսինը դառնալ, նա նախանձում էր այդ երիտասարդին, չէր կարողանում հասկանալ, թէ ինքն ինչպէս սուրբ Թոնրան շրթին կանգնեցնի Մարօին և նրան, օրհնի և իր ձեռքով իր մի հատիկ աղջկայ բախտը յանձնի նրան, որ տանի ուր կամենում է, իսկ ինքը մնայ մենակ խրճթի մէջ, Թոնրան կողքին կծկուած, ինչպէս ձագերից զրկուած սգաւոր Թռչուն։ Նա չէր կարողանում հասկանալ, թէ ինքն ինչպէս կարող է այդ վիճակում մի օր ապրել, թէկուզ իր զաւակը բախտաւոր ամուսին լինի, ուր միայն թէ բայ աչքով տեսնի թէ ինչպէս Մարօին... միայնածը նա չէր կարողանում մտածել, մաքերի թելը կտրւում էր և նա միայն իր անհանգիստ, թրթռան սիրտն էր բռնում,— այնտեղ ցաւ կար...

Օ՛, ինչպէս կ՛ուզէր Սհօն, որ իր Մարօն տզեղ լինէր, այդքան դրաւիչ, այգպէս չքնաղ չը լինէր։

—Տէր, խօրօտը խեղճն ինչ անի, տրտնջում էր նա յաճախ.—էս անիրաւ երկրում ո՞րտեղ թագնի, ինչպէս պահի. խօրօտը «զալումին» տուր, գէշն է մեր բաժինը, խօրօտը խեղճն ինչ անի։

Սակայն քանի շատ էին անցնում տարի-

ները, այնքան աւելի գեղեցկանում էր Մարօն և այնքան աւելի կասկածամիտ էր դառնում Սհօն։ Անորոշ՝ բայց յարատև երկիւղը պաշարում էր նրան օր աւուր աւելի և աւելի։ Զանազան պատրուակներով նա աշխատում էր որքան կարելի է քիչ դուրս թողնել Մարօին, մանաւանդ՝ երբ պէտք էր մի փոքր հեռու գնալ։ Տօն օրերին նոյն իսկ, երբ աղջիկները տղամարդկանց գաղտնի հակողութեամբ սիրտ էին անում դուրս՝ լեռները ծաղիկներ հաւաքելու կամ զբօսնելու գնալ, կասկածամիտ ծերունին հիւանդ էր ձևանում և Մարօն ստիպուած էր լինում տանը նստել հիւանդ հօրը խնամելու համար։ Նա սիրով և անտրտունջ էր կատարում իր որդիական պարտքը, առանց կասկածելու թէ հայրը դիտաւորեալ հիւանդ է։ Միակ տեղը, ուր Մարօն առաւօտ և երեկոյ գնում էր, դա մօտիկ ձորակի աղբիւրն էր, որտեղից Գ... գիւղի աղջիկները ջուր էին բերում։

Մի աննման վայր էր այդ ձորակը, որից վեր տափարակի վրայ Գ. գիւղն էր։ Ոլորապտոյտ շաւիղը, որ գիւղից սկսուելով՝ լեռնալանջի վրայով իջնում էր դէպի ձորի խորութիւնը, անցնում էր սեղերի և գոյնզգոյն ծաղիկների միջից։ Ջորակի կրծքերից ցած էին թափւում վճիտ, սառնորակ աղբիւրներ։ Այս ու այն մացառի տակ, խոտերի մէջ, այս ու այն ժայռի վրայ, քարերի ճեղքերում վխտում էին բազմաթիւ ու բազմա-

պիսի թռչուններ, որոնք իրանց ճռւողիւնով օրն ի բուն լցնում էին օդը։

Այն վայրերը, որոնց անուան հետ կապուած է որ և է ոճիր, արեան յիշողութիւն, սովորաբար գիւղերում նզովուած են համարւում. գիւղացիք երկիւղով ու զզուանքով խոյս են տալիս այդպիսի տեղերից և եթէ պէտք էլ ունենում են լինել այդպիսի տեղերում, շտապում են շուտով հեռանալ։ Որքան շատ էին այդպիսի արիւնոտ տեղեր Գ. գիւղի շրջակայքում։ Այս ձորակը միակ օրհնուած վայրն էր, որի հետ կապուած չէր արեան պատմութիւն, որտեղ տակաւին արտասուք թափուած չէր։ Օրհնուած, սուրբ տեղ էր, ուստի առանձնապէս սիրելի էր Գ. գիւղի ջահիլներին, մանաւանդ՝ աղջիկներին, որոնք աւելի հեռու տեղեր գնալու հնարաւորութիւնից զրկուած լինելով, սիրով էին յաճախում ձորակը։ Ձորակի մերձաւորութիւնը և գիւղացիների յաճախակի երթևեկութիւնն այնտեղ Մհօին էլ վտահութիւն էր ներշնչել, նա էլ հանգիստ սրտով էր տեսնում, թէ ինչպէս Մարօն առաւօտներն ու երեկոները կուժն ուսին դրած շտապում է դէպի ձորակը։

II

Գարնանային մի գեղածիծաղ առաւօտ էր։ Ձորակը կազմող բլուրների կուրծքը գորգի պէս ծածկող ծաղիկները բաց էին արել իրանց ցօղալից բաժակները և վաղորդեան արևի շողերը խաղում էին նրանց վրայ քնաթաթախ թիթեռնիկների հետ միասին։ Մացառների մէջ ծուարած թռչունները թևերի տակից դուրս հանելով իրանց փոքրիկ գլխիկները, կիսախուփ, քնաթաթախ աչքերով ողջունում էին արևի ծագումը, ճռւողում էին, թափահարում, պատրաստում էին իրանց թևերը, որ դուրս թռչեն իրանց գիշերային ապաստարաններից։ Աղբիւրը, որից սովորաբար ջուր էին վերցնում գիւղի աղջիկները, քչքչալով գլորում էր իր վճիտ կոհակները արծաթեայ ոլորուն ժապաւէնի ձևով, և կորչում էր ցօղապատ խոտերի մէջ։ Առաւօտեան հեզաշունչ հովիկն այնքան մեղմութեամբ էր փչում, որ ասես վախենում էր խրտնացնել թռչուններին, խանգարել նրանց դայլայլիկը։ Եւ բոլորը միասին այնքան գրաւիչ, այնպէս ներդաշնակ էին։

Օրուայ այդ ժամին Մարօն կուժն ուսին յայտնուեց դէպի ձորակն իջնող շաւղի վրայ և յուշիկ քայլերով սկսեց իջնել դէպի աղբիւրը։ Նա նախ ջրով լուաց իր երեսը, գոգնոցով սրբեց. ջրի սառնութիւնից նրա այտերը կարմրեցին և էլ աւելի գեղեցկացան. ապա դանդաղութեամբ լցրեց իր կուժը։ Այս բոլորը նա կատարեց մի անհոգ հանդարտութեամբ։ Նրա բոլոր շարժուձևերից երևում էր, որ նա ոչ միայն չի շտապում, այլ նոյն իսկ աշխատում է որքան կարելի է աւելի ժամանակ անցկացնել ձորակում։

Վերջին ժամանակները Մարօին մի անսո-

3626-2002

Պետական գրադարան Гос. Библиотека ZUUն ԳՈՐ. ՇԱՀ

վոր բան էր պատահել, մի սրտմաշուկ ձանձրույթ տիրել էր նրա ամբողջ էությունը և ծանր քարի պես օր աւուր ծանրանում էր նրա սրտի վրայ։ Իրանց տունն ու իր ամենօրեայ կեանքն սկսել էին նրան խիստ միակերպ, խիստ տաղտուկ թուալ։ Հօր սէրն ու փաղաքշանքները նրան չէին ձանձրացրել, նա այժմ էլ կարօտ էր իր ծնողի քնքշութիւններին, ինչպէս պապակած բոյսը երկնքի ցօղին, բայց մի նոր, բոլորովին անծանօթ զգացմունք էր ծնել նրա սրտի ամենանուիրական խորշերում և նա բացի իր հօր սիրուց, էլի մի ինչ-որ բան էր փնտրում, ինչ-որ փափագում։ Նա անորոշ կերպով զգում էր, որ մի շատ խոշոր, շատ թանկագին բան է պակասում իր կատարեալ երջանկութեան համար և ահա այս պակասն էր, որ նա փնտրում էր ձորակում, բնութեան խորհրդաւոր ներդաշնակութեան մէջ։ Նրան թուում էր, թէ այդ աղբիւրն իր վճիտ ջրերը գլորելիս ի զուր չէ արծաթահնչիւն կրկչոց բարձրացնում, որ նրա պղպճաւոր կոհակները փոքրիկ, չարաճճի մանուկների պէս զուր չեն այդպէս շատ-շատ իրար յետևից վազվզում, իրար փէշից բռնում, քաշքշում, իրար հետ գրկւում, համբուրւում, և սիրահար զոյգերի պէս ծածկւում խոտերի ստուերների մէջ. որ այս մանր ու մեծ թռչուններն իզուր չեն իրանց քաղցրիկ ծլըլոցով լցրել օդը, ցատկոտում իրար մօտ, զուրգուրում իրար։ Հապա զեփիւռը, մի՞թէ նա պարապ տեղն է իր կուսական շնչով սլացնում, իրար տալիս խոտերը, իրար դիպցնում բուրաստան ծաղիկները, որոնք այնպէս սիրով, այնպէս նազելով մօտեցնում են իրար իրանց գլխիկները, ասես հաղորդում են իրար զեփիւռի բերած յուզիչ լուրերը, կամ տալիս են նրան առաւօտեան առաջին համբոյրը։

Մարօն հոգեմայլուած՝ դիտում էր այս բոլորը, դիտում էր և հաւատացած էր, որ սրանք բոլորն էլ բաներ են ասում իրար, քաղցրիկ պատմութիւններ են անում և նոյն իսկ իր ականջին փափսում են ինչ-որ շատ անուշ բան, որի նմանը մարդ միայն երազներում է տեսնում։ Մարօն աշխատում էր հասկանալ բնութեան լեզուն, ըմբռնել, թէ ինչ են ասում այս թռչունները, այս խոտերն ու ծաղիկները, այս զեփիւռն ու աղբիւրը. ձգտում էր հասկանալ, թէ ինչ է փնտրում ինքը, ինչ է իր ուզածը։ Նա խորապէս համոզուած էր, թէ այն՝ ինչ ինքը փնտրում է, հէնց նրա մասին է խօսում մայր բնութիւնը, նրա մասին է փսփսում իր ականջին։ Նա էլ աւելի լարում էր իր ուշադրութիւնը, աշխատում էր խլել իւրաքանչիւր հնչիւն, իւրաքանչիւր նուագ. բայց ի զուր. նա անկարող էր լինում հասկանալ, ճնշող անորոշութիւնը մնում էր անհասկանալի և մտահոգութիւնն անբաժան։

Յափշտակութեան այդ րոպէներից յետոյ մի թեթև թախիծ էր իջնում նրա վրայ, նա տխրում էր, գլխակոր և մտահոգ էր վեր բարձրանում տուն գնալու։ Սակայն նոյն իսկ այդ անհասկա-

նալի վիշտը, կուսական քմահաճ սրտի այդ տա-
բօրինակ խաղը որքան հաճելի էր, ինչպէս գո-
վացուցիչ, որքան դուրեկան էր նրա համար: Նա
չէր էլ աշխատում բաժանուել իր վշտից, չէր
ուզում ցրել իր թախիծը և անքուն գիշերներին
երկար ժամանակ փայփայում էր իր համար նուի-
րական այդ կուսական վիշտը, խաղում էր նրա
հետ, ինչպէս Թիթեռնիկը ճրագի բոցի հետ,
մինչև որ լցուած սիրտը փղձկում էր, մի քանի
կաթիլ տաք արտասուքներ էին թափւում աչքե-
րից, հոգին խաղաղւում էր և փախած քունը
միայն այն ժամանակ գալիս էր փակելու նրա
թաց արտևանունքները, բերելով իր հետ մէկը
միւսից աւելի գեղեցիկ, մէկը միւսից աւելի հա-
ճելի տեսիլքներ, որոնցով նա փայփայում էր
կոյսի երևակայութիւնը:

Այսպէս էին անցնում Մարօի օրերն ու գի-
շերները վերջին ժամանակներում:

Այսօր էլ նա դարձեալ ձորակումն էր և չէր
շտապում: Մի ձեռքով բռնել էր կժի կանթը և
միւս ձեռքը ծնօտին դէմ արած, արմունկով յե-
նուել էր կժին և խոհուն աչքերով դիտում գրա-
ւիչ տեսարանը:

Ո՛վ գիտէ, որքան ժամանակ Մարօն կը
մնար այդ դրութեան մէջ, եթէ ձորակի բար-
ձրութեան վրայ յանկարծ չը յայտնուէր մի երի-
տասարդի պատկեր: Համարեա ամենայն օր Մա-
րօին իր սովորական յափշտակութիւններից հա-
նում էին կամ ընկերուհիներից մէկն ու մէկը,

կամ դաշտ գնացող որ և է գիւղացի. սակայն
այդ դէպքերում նա միշտ առանց որևէ յուզմուն-
քի առնում էր իր կուժը և առանց իրան մատ-
նելու շտապում էր դէպի տուն: Բայց այսօր
յայտնուող երիտասարդը նրան սաստիկ շփոթեց
և գողութեան մէջ բռնուած յանցաւորի վիճակի
մէջ դրեց: Ձորակի ոլորապտոյտ շաւղից ցած էր
իջնում նա՝ վայլուն գերանդին ուսին դրած և
բարձր յստակ ձայնով երգում էր քրդական մի
սրտայոյզ երգ: Նրա երգի քաղցր ելևէջները
առաւօտեան խաղաղ ու թարմ օդի մէջ սփռուե-
լով տարածւում էին հեռու ու հեռու և հնչում
էին ձորերում: Ե՞րբ էր լսել Մարօն այդ երգը,
այդ նա չէր կարողանում յիշել, բայց համոզուած
էր, որ էլի մի անգամ, ուրիշ տեղ լսել է այդ
ձայնը, նրա մելամաղձոտ ոլորները իր սրտի թե-
լերը մի օր թրթռացրել են: Թեթև և դուրեկան
դող անցաւ նրա բոլոր ջղերի վրայով, երբ իր
յիշողութիւնը փորփրելով դաաս, որ նոյն իսկ
ներկայ անորոշ թախիծը, այս ճնշող վիշտն սկը-
սուեց հէնց այն օրից, երբ առաջին անգամ լսեց
այս երիտասարդի ձայնը: Մարօն յիշեց բոլորը,
դա անցեալ տարի՝ Համբարձման տօնին էր...
Ծաղկաքաղի էին դուրս եկել... երիտասարդները
հետևում էին նրանց և Մարօն լսեց այդ ձայնը...
Օ՛, նա այժմ աւելին է յիշում. նա յիշում է թէ
ինչպէս այն ժամանակ հէնց այս միևնոյն երգի
իւրաքանչիւր հնչիւնը թափանցում էր նրա հոգու
խորքը և ինչ լաւ էր... ճիշտ այնպէս, ինչպէս

այժմ։ Այն ժամանակ Մարօն չը կարողացաւ իմանալ թէ ինչ կապ կարող էր լինել իր ծածուկ, անհասկանալի վշտի և այդ երգի հնչիւնների մէջ. բայց ա՛յժմ... այժմ Մարօն ականջ է դնում և նրան թւում է, որ այդ երգն էլ ձորակին է պատկանում, թէ դա այն խորհրդաւոր հնչիւններից մէկն է, որոնք ահա քանի՛ ժամանակ է դուրեկան, դիւթական բաներ են շշնջում նրան։

Բարձրահասակ էր այդ երիտասարդը, դէմքն առնական, գոյնզգոյն թելերով նախշած թասակը թեք դրած գլխին, մի ձեռքն ականջին դէմ տըւած, նա շարունակում էր իր երգը, մինչդեռ միւս ձեռքով նա բռնել էր ուսի վրայի դերանդին, որ արեւի տակ փալփլում էր։ Ե՛ւ երիտասարդը, և՛ իր երգը, և՛ ուսի փայլուն դերանդին բոլորն էլ գեղեցիկ, բոլորն էլ գրաւիչ, դիւթական թուացին Մարօին, բայց և շփոթեցին, յուզեցին նրան։

Ո՞վ էր այդ երիտասարդը։

Զօրանենց Մուսօն, այդպէս էին անուանում նրան Գ... գիւղում. նրա հայրը, Մանուկը, հովիւ չէր եղել, բայց նա բացի հողագործութիւնից նաև ոչխարի առուտուրով էր պարապում։ Մի քանի տարի շարունակ նա բազմացնում էր իր ոչխարները, մասամբ էլ առնում էր հարևաններից ձեռնտու գներով և ապա մի անգամ առաջն ածած ճանապարհ էր ընկնում քաղաք, ուր վաճառում և վերադառնում էր լաւ արդիւնքով։ Այս էր պատճառը, որ հարևանները նրան «Չորան»

և իր տունը «Զօրանենց տուն» անուանեցին։

Ծաղած ու երջանիկ էր ապրում Մանուկն իր կնոջ՝ Նուբարի հետ։ Նրանք միայն մի հատիկ ցաւ ունէին և այդ այն էր, որ Նուբարի ծնած բոլոր զաւակները տարին չը լրացած մեռնում էին։ Քանի՛ սուրբերի դիմեցին, քանի՛ մատաղներ տարան, մի անգամ վերջապէս Աստուած խղճաց, նրանց վերջին զաւակը՝ Մուսօն արդէն մանաբեր, ճակատագրական մի՛ջոցն անցրեց—նա երեք տարեկան էր, և Մանուկն ու Նուբարը կատարելապէս երջանիկ էին։ Մանուկն այս անգամ աւելի քան երբ և իցէ ուրախ սրտով քշեց իր ոչխարները դէպի քաղաք։ Նուբարը ճամբայ իր Մուսօի հետ սպասելով ամուսնու վերադարձին։ Շատ երկար սպասեցին։ Վերադարձի հաւանական ժամանակն անցաւ, սև սուգը պատեց Զօրանենց տունը։ Ամբողջ մի տարի անցաւ, սգի և արտասուքի տարի Նուբարի համար։ Քանի՛-քանի կարաւաններ գնացին դարձան, Մանուկը չը կար ու չը կար, վերջապէս տարի ու կէս յետոյ մի կարաւան նրա դիակի ճնշացորդները բերեց. քըրդերը վերադարձի ժամանակ կողոպտել ու սպանել էին Մանուկին։

Այրւոցած Նուբարը սև կապեց, իր մի հատիկ զաւակի բախտին կապեց իր բախտը, օջաղը չը ցրուեց, մարդու չը գնաց, նստեց իր տանը և իր Մուսօին խնամեց, մեծացրեց։ Հայի ճախարակը իր պատմական գոյութեան ընթացքում շատ անճար, որբ ընտանիքներ է պահել, այս

անգամն էլ նա Նուբարին օգնութեան հասաւ։ Անօգնական այրին դրեց իր առաջ այդ փրկարար գործիքը, մանեց, մանեց, թելերը պատրաստեց և իր ու Մուսօի ապրուստը հոգաց։

Անցան տարիներ և Զօրանենց օջաղի մի հատիկ տունկը աճեց, զօրացաւ և մեծ ծառ դարձաւ։ Մուսօն այժմ հասակ առած տղամարդ էր և պառաւած Նուբարը իր կեանքի վերջալուսին դարձեալ երջանիկ էր։

Գ. գիւղում ամենքը սիրում էին Մուսօին։ Նա իր գեղեցիկ արտաքինի, սրտի պարզութեան, քաղցր բնաւորութեան հետ ունէր և մի ուրիշ այնպիսի բան, որ դիւթում էր ամենքին—դա նրա աննման ձայնն էր, նրա քաղցր, սրտայոյզ երգերը։ «Կռունկի պէս է երգում», ասում էին նրա համար գիւղացիք։ Բոլոր հարսանիքների, բոլոր խնճոյքների զարդն էր Մուսօն։ Երբ հրաւիրուած ծերերը բազմում էին քահանայի հետ միասին, Մուսօն իր հասակակից «ազավիներով» շրջապատուած՝ կանգնում էր իշխանների, ծերերի դէմ ու դէմը և մի ձեռքն այտին դրած հնչեցնում էր իր վշտոտ երգերը։ Ծեր գլուխներն օրօրւում էին, ջուտ ձեռներն իրար փակւում, ցաւերով լի կրծքերն եռում և ալեզարդ միրուքների վրայից ցած էին գլորւում աղի արտասուքներ։

— Օ՜ֆ, օֆ, այս ինչ արիր, Մուսօ, ասում էր ծերունի քահանան, մեր ուրախութիւնը սուգի փոխեցիր, զաւակս. բաւական է, մատաղ, բաւական է, թող որ մի քիչ էլ ուրախանանք, առանց այն էլ լացի ժամանակ շատ ունենք։

— Տէրտէր ջան, աջիդ մեռնինք, մէջ էին ընկնում այս ու այն կողմից ծերունիները լացից կերկերուող ձայնով.—լցուած սիրտը դուրս թափելն էլ մեծ բախտաւորութիւն է, մեծ մխիթարութիւն է մեզ համար։ Ապրի Մուսօն, սրտները հովացրեց. դէ ինչ անենք, հայր ջան, մեր ճակատագիրն էլ էսպէս է եղել, հարսանիքն էլ առանց արտասուքի չի լինում։

Այսպէս էին ուրախանում այն աշխարհում։ Վիշտը սիրելի էր, ուրախութիւնը՝ խորթ, իսկ Մուսօն վշտի երգիչ էր և ընդհանուրի սիրելի։ Նա ոչ աղքատ էր և ոչ հարուստ. հօր թողած արտերը բաւական էին, որ նա մշակելով՝ գոհ կերպով ապրել կարողանար իր մօր հետ։

Ահա այս երիտասարդն էր իջնում դէպի ձորակը, սրա երգն էր, որ յուզեց, տակն ու վրայ արեց Մարօին։ Մի թեթև սարսուռ զգալով՝ Մարօն շտապեց, խլեց կուժը և շարժուեց ձորն ի վեր։ Նրանք շուտով իրար հանդիպեցին նեղ շաւղի վրայ. Մուսօն ճանապարհ տուեց նրան և անցաւ, աշխատելով գաղտագողի հայեացքով տեսնել Մարօի դէմքը՝ որի գեղեցկութիւնը նրա ընկերական շրջանի խօսակցութեան առարկան էր։ Մարօն աջ ուսին բարձրացրել էր կուժը, ձախ ձեռքն էլ դէմքի վրայից տանելով, բռնել էր կժի կանթից, այս պատճառով նրա դէմքը համարեա ծածկուած էր և Մուսօի ջանքերն իզուր անցան։ Մարօն աչքերն անգամ չը բար-

ձրացրեց, բայց սաստիկ կարմրեց, զգալով՝ որ երիտասարդի հայեացքը վնտրում է նրա դէմքը։ Մի քանի քայլ վեր եկնելուց յետոյ աղջիկը սաստիկ պահանջ զգաց շուռ գալ և գաղտագողի կերպով դիտել այդ երիտասարդին յետևից։ Բայց անմիջապէս այս միտքը նրան հրէշաւոր, սարսափելի թուաց. սակայն Մուսօին նայելու պահանջը զօրեղ էր, համարեա անընկճելի, մանաւանդ կարելի էր այնպէս նայել, որ նա չը տեսնի. նա դէպի ներքև է իջնում, ինչ կարող է լինանալ, այսպէս էր դատում աղջիկը։ Ներքին այս կռիւը մի քանի վայրկեան միայն տևեց, մաաղ սրտի բուռն տենչանքը յաղթող հանդիսացաւ կուսական ամօթխածութեան և բանականութեան վրայ... Մարօն շուռ եկաւ և յետ նայեց հէնց այն րոպէին, երբ Մուսօն էլ նոյն անյաղթելի զգացմունքից դրդուած, շուռ էր եկել և նայում էր աղջկան։ Խեղճ աղջիկն իր ձեռնարկութեան բոլոր վտանգները կշռադատելիս, հէնց այս մէկին աչքի առաջ չէր ունեցել. նա չէր ենթադրել այն պարզ, հասանական բանը, թէ գուցէ երիտասարդն էլ յետ դարձած իրան է նայում, նա զգաց իր սարսափելի սխալը, բայց արդէն ուշ էր. նրանց հայեացքները մագնիսականն ուժով իրար հանդիպեցին, Մարօն զգաց ոտից գլուխ, ցնցուեց այնպէս, որ կարծես մէկը ծանր հարուած իջեցրեց նրա գլխին, շշմեցրեց նրան և նա այնպէս թափով շուռ եկաւ, այն սաստիճան յուզուեց ու վախեցաւ, որ կուժը ձեռքից

բաց թողեց, որ վայր ընկաւ, փշուր-փշուր եղաւ նրա ոտների տակ, նախապէս ողողելով նրա թիկունքն ու մազերի հիւսերը։ Խեղճ աղջիկը քիչ մնաց բարձրաձայն լաց լինէր. ապա առանց ուշք դարձնելու, որ իրան նայող կայ, ամօթից և երկիւղից ոտների տակ գետին չ'զգալով՝ վազեց դէպի տուն։

—Սա ինչ բան էր, Տէր Աստուած. ախր ինչու՞ չարը կապեց ինձ և ես յետ նայեցի, մըրմընջում էին նրա շրթունքները. վաղը՝ միւս օրը ամբողջ գիւղի բերնում ծամոն կը դառնամ։ Տխուր, դունատ, ընչակուր նա տուն հասաւ։

—Մարօ ջան, ինչ է պատահել, վրայ պրծաւ հայրը, ինչու՞ ես դունատ, կուժդ ո՞ւր է, շունչդ ինչու է կտրուում, վազե՞լ ես, փախե՞լ ես...

—Չէ հայրիկ, չեմ փախել, ոչինչ չըկայ, ոտքս սոթ տուեց, կուժս ընկաւ, կոտրուեց, մի փոքր վախեցայ։

—Դրա համար ինչու՞ էիր վախենում, հոգիս, չե՞ս իմանում որ «կուժը ջրի ճամբին կը կոտրուի», ասաց հայրը գրկելով դողդողացող Մարօի սիրուն գլուխը և կրծքին սեղմելով նրան։

Հասաւ գիշերը. Մարօն անկողին մտաւ, բայց քունը երկար ժամանակ հեռու էր փախչում նրանից։ Նա փակում էր աչքերը, աշխատում էր քնել. իզուր. ձորակում պատահածը նրան հանգիստ չէր տալիս, Մուսօի պատկերը նրա առաջն էր, չընայելով՝ որ ինքը չէր կամենում նրան տեսնել, աշխատում էր ուրիշ բանի

մասին մտածել, հեռացնել իր գլխից այդ պատկերը. ի զուր, ի զուր. Մուսան նրա առաջն էր... Ուշ գիշեր էր, բայց նա դեռ անկողնի մէջ չարչարւում էր, մինչև որ յոգնած միտքն ինքնամոռացութեան մէջ ընկաւ։ Ահա նա դարձեալ ձորակումն է. յանկարծ ժայռի տակից դուրս են գալիս մի խումբ դևեր, մեծ, հսկայ. Մարօն բոլոր ուժով փորձում է սարն ի վեր փախչել, բայց ոտները չեն հնազանդւում, ծնկները ծալւում են. նա աշխատում է ճչալ, օգնութիւն աղաղակել, իզուր, ձայնը դեռ կոկորդից դուրս չեկած, մարում է. ահա մի զարհուրելի դև ամենից առաջ հասնում, գրկում է նրան, վրայ են հասնում նաև միւսները, վերցնում են նրան և տանում... տանում են... ուր, Մարօն այդ չի կարողանում իմանալ, միայն գիտէ որ շատ հեռու են տանում։ Նա աշխատում է գոնէ չը տեսնել դևերի դէմքերը, սարսափելի են. մի անգամ նայեց միայն, նրանք ժպտում էին զզուելի երախներով, արիւնոտ փըրփուր, սուր, սուր ժանիքներ... և Մարօն փակեց աչքերը այդ ժպտից փրկուելու համար։ Նրանք տանում են, տանում... Մարօն մէկ էլ բացեց աչքերը և մի զարմանալի բան տեսաւ, երկընքից կատաղի թռիչքով ցած է սաւառնում մի մեծ, շատ մեծ, հսկայաթև արծիւ. նա իր սուր ճիրանների մէջ բռնած ունէր ինչ-որ փայլուն բան. արծիւն այդ փայլուն բանով հասծում է հրէշներին և խլելով նրանց ձեռքից Մարօին, դնում է իր թևերի վրայ և նրանք

սլանում են վեր, վեր։ Մարօն այժմ աւելի է սարսափում, նրանց ոտների տակն են ծիւում լեռ, ձոր, դաշտ, անտառ։ Ահա վերջապէս նրանք անցնում են իրանց գիւղի վրայով. Մարօն տեսնում է իրանց խրճիթը. շատ մօտ են, որ ծրւայ, հայրը կը լսի, բայց իր ձայնը չի դուրս գալիս, Մարօն նոյն իսկ տեսնում է, թէ ինչպէս հայրը բակում կանգնած արտասւում է, բայց վերև չի նայում. ախ, որ նայէր, կըտեսնէր, նա նորէն փորձում է ճչալ, կանչել, յանկարծ արծիւը խօսում է Մուսօի ձայնով, Մարօն զարմացած հարցնում է.

—Դու Մուսօն ես։

—Հա, ի հարկէ Մուսօն եմ, էլ ո՞վ կը տանէր քեզ։

—Ապա ինչո՞ւ ես այդպէս։

—Ի՞նչ եմ։

—Ախր Մուսօի պէս չես. տես թևերդ...

—Այդ միտս չունի, ես Մուսօն եմ։ Կ'ուզես երգեմ։

—Երգի՞ս։

—Հա։

—Չէ, մի՛ երգի, ասա, մենք ո՞ւր ենք թռչում, ո՞ւր ես տանում ինձ։

—Քեզ ի՞նչ, չես ուզում ինձ հետ գալ։

—Քեզ հետ...ախր այնպէս վերից լաւ չէ, ես վախենում եմ։

—Կ'ուզե՞ս ցած դգեմ քեզ։

—Զը դգե՛ս, ցած իջեցրու ինձ կամաց, ես վախենում եմ այսպէս։

—Մի վախեցիր, չեմ ձգի, ահա հասանք, այ այնտեղ ցած կ'իջնենք, այնտեղ հնա։

Արծիւը ցոյց տուեց մի ծով, որ հեռու մըշուշի մէջ փայլում էր։

—Ծովի մէջ, հարցրեց Մարօն զարհուրած։

—Հա, ծովի մէջ։

—Ախր ես կը խեղդուեմ։

—Չես խեղդուի, ես հետդ եմ։

Նրանք հասան ծովին. արծիւն սկսեց արագութեամբ ցած իջնել. արդէն շատ մօտ են ջրին. ծովը կատաղած է, փրփրուն ալիքները լեռներ կազմած գոռում-գոչումով զարկւում են իրար։ Մարօն դողում է սարսափից, բայց նրանք իջնում են, իջնում են, ահա ալիքների ցայտումները թրջում են Մարօի դէմքը, էլի մի րոպէ և նա ալիքների մէջ կը լինի։ Սոսկումն իսպառ պատում է Մարօին և նա վերջին ճիգերը հաւաքելով սաստիկ ճչում է։

Մարօն վեր թռաւ, զարթեց, նա յոգնած էր ու քրտնաթոր. աչքերը բաց արեց, խրճիթը խաւար էր առաջուայ պէս, տեսածը երազ էր։ Դարձեալ ձորակը պատկերացաւ նրա աչքին, դարձեալ Մուսօն իջնում էր վերանդին ուսին, ինչ սիրուն էր... ականջ դրեց, հայրը խոր քնի մէջ ընկղմած՝ խռմփում էր։ Յանկարծ մի տարօրինակ միտք անցաւ նրա գլխով, նա հեռաքրքրուեց իմանալ, թէ ինքն ինչպէս կ'ասի՝ «Մուսօ», վերմակը գլխին ձգելով՝ կամացուկ փսփսաց՝ «Մուսօ», «Մուսօ», Մուսօ». ինքն ասաց, ինքը լսեց,

ինքն էլ սարսափեց. դարձեալ սովորական ախորժելի սարսուռն անցաւ նրա մարմնով. ինչ դուրեկան, երբ քաղցր հնչեց «Մուսօ» անունը նրա ականջին... Նրան թուաց, թէ Մուսօն իր մօտն է, այս տան մէջ և կծկուեց վերմակի տակ. նա նոյն իսկ ինչ որ փսփսուկ լսեց, կարծես իր անունն էր հնչւում, նա գլուխն աւելի խոր թաղեց վերմակի տակ. երևակայութիւնը խաբում էր նրան, հայրն էր զարթել և առաւօտեան աղօթքն էր մրմնջում ամբողջ աշխարհի և իր Մարօի համար։ Հաւերը խօսեցին, լոյսը բացւում էր, եկեղեցւոյ զանգակը հնչեց և Սհօն վերկենալով ժամ գնաց։

Անցան օրեր և շաբաթներ, անցան և բազմաթիւ անքուն գիշերներ։ Մարօն այլ ևս չէր կարողանում մոռանալ իր կուժն ու նրա հետ կապուած արկածը։ Գիշեր թէ ցերեկ, քուն թէ արթուն նա երևակայութեամբ շարունակ ձորումն էր և Մուսօն էլ իբր թէ ցած էր իջնում ձորի լանջից։ Եւ երբ նա այնուհետև ջրի էր գնում, ակամայ կանգ էր առնում իր կժի կոտրուած տեղը և մի թեթև ժպիտ խաղում էր այդ ժամանակ նրա դէմքի վրայ։ Այդ տեղը նրա համար մի ուխտատեղի դարձաւ. հաճելի էր նրան անցնել այնտեղից, դիտել կժի կտորները... օ, ինչպէս սիրով նա կը հաւաքէր այդ չնչին բեկորները և կը պահէր... Ինչո՞ւ, այդ ինքն էլ լաւ չը գիտէր։ Նա գիտէր միայն որ մինչև այսօր շատ երիտասարդներ էր տեսել, ոմանք նոյն իսկ հետամուտ էին

եղել նրան, բայց ոչ ոք այնպէս չէր յուզել նրան, ինչպէս Մուսօն։ Այդ երգիչ երիտասարդը լցրեց նրա սիրտը մի այնպիսի զգացմունքով, որպիսին նա դեռ երբեք չէր զգացել, դա մի զգացմունք էր, որ և՛ տանջում էր նրան, և՛ հաճելի էր. այդ զգացմունքն էր խլում նրա քունը, պաշարում միտքը տարօրինակ երազներով և մեխում նրա աչքերի առաջ Մուսօի պատկերը։

Ամեն անգամ, երբ այդ մտքերն անցնում էին նրա գլխով, սիրտն սկսում էր արագ-արագ բաբախել, վառ կարմրութիւնը պատում էր նրա այտերը։ Անհանգստութեամբ վախվխելով, գաղտագողի էր իջնում ձորակը։ Նրան թւում էր, թէ ահա որտեղից որ է, Մուսօն կը յայտնուի մի քարի, մի մացառի, մի թմբի տակից, կամ հեռուից կը լսուի նրա սիրուն ձայնը։ Նա այդ ժամանակ և՛ ուզում էր նրան տեսնել և չէր ուզում։ Անցան դարձեալ օրեր և աղջկայ յոյսերն ի դերև անցան, Մուսօն չը կար ու չը կար։

Մուսօն էլ մտքերի ծովն էր ընկել։ Ձորակի անցքն այնքան անսպասելի, այնպէս տարօրինակ էր Մուսօի համար, որ ամբողջ շաբաթներ էր հարկաւոր մինչև նա կարողանար պարզել իր համար իրերի իսկական դրութիւնը։ Նա Ձօրանենց Մուսօն էր, այդ ինքը լաւ գիտէր, իր չափը ճանաչում էր, նա չէր կարող երևակայել անդամ, թէ Մարօն, այդ անմատչելի հրեշտակն իրան բաժին կը լինի։ Նա վաղուց էր տեսել Մարօին, վաղուց էր սքանչացել նրա տեսքով, բայց

ամեն բանում միշտ համեստ, հազիւ նա թոյլ էր տալիս իրանց պատահելու ժամանակ մի վայրկեանով վայելել Մարօի դիւթիչ պատկերի հաճոյքը, այն էլ հեռուից։ Իր և այդ աղջկայ մէջ ծագումով և հարստութեամբ այնքան մեծ անջրպետ էր տեսնում, որ նրա ձեռքն առնելու մասին չէր մտածում, որովհետև յոյս չունէր։ Բայց ձորակի անցքը նրա աչքերը բացեց, նրան մի հեռատեսութիւն տուեց։ Յուսոյ այդ աղօտ նշոյլի առաջ մի հաստիկ սև ամպ կար. դա այն ենթադրութիւնն էր, թէ գուցէ ձորակում կատարուածը դիպուածի արդիւնք է, գուցէ Մարօն ամենևին չի էլ մտածում նրա մասին, չի էլ հետաքրքրւում նրանով։ Այս անախորժ ենթադրութիւնն էր պատճառ, որ նա վճռեց հետամուտ չը լինել Մարօին և իր սիրոյ գործը յանձնել ճակատագրին, մինչև որ մի երկրորդ բախտաւոր դիպուած վերջնականապէս համոզի նրան, թէ Մարօի սիրտը պատկանում է իրան։ Նա իբրև նահապետական բարքերի ծնունդ, խիստ կարգերի բովից անցած, օտար աղջկան հետամուտ լինելու համարձակութիւն չունէր. գիւղը հազիւ էր աէր թոյլատրում ամօթի, պատկառանքի սահմաններում, բայց սիրային՝ թէկուզ խիստ անմեղ արկածներ տանել չի կարող։ Այս շատ լաւ գիտէր Մուսօն և սպասում էր...

Ահա թէ ինչու Մարօն այլ ևս չէր տեսնում Մուսօին, այն ինչ ինքը կարծում էր, թէ Մու-

սօն անպատճառ կ'աշխատի նրան տեսնել։ Անցան էլի մի քանի օրեր։ Մարօն մօտ էր յոյսը կըտրելու, բայց ահա մի երեկոյ աղջիկը ձորակում կրկին լսեց նրա ձայնը հեռու դաշտից։ Այդպէս էր Մուսօի սովորութիւնը՝ առաւօտեան երգելով դաշտ գնալ և երեկոյեան երգելով վերադառնալ։ Մարօն շտապով լցրեց իր կուժը և աշխատում էր շուտով բարձրանալ Մուսօին չը հանդիպելու համար. ծանօթ դողը դարձեալ անցաւ նրա մարմնով։ Ահա նա արդէն գառիվայրի վրայ է, փորձեց շտապել, բայց ոտները դաւաճանեցին և հակառակ իր կամքի սկսեց յամրաքայլ բարձրանալ։ Մուսօն նրան տեսաւ հեռուից, այժ տուեց ոտներին և մի քանի րոպէից յետոյ նրա ոտնաձայնը հասնում էր արդէն Մարօի ականջին։ Աջ ձեռքով իր կուժը պահելով՝ Մարօն ձախ ձեռքով սեղմեց կուրծքը, կարծես կամենալով խլացնել սրտի թրթռոցը։ Իսկ Մուսօն այդ ժամին միայն մի ցանկութիւն ունէր, մէկ էլ այն հրաշալի աչքերի մէջ նայել։ Մարդկային ոչ մի այժ այլ ևս չէր կարող սոսկալ Մարօին յետ նայել, այդ պիտէր Մուսօն, ուստի շտապեց, առաջ անցաւ և մի քանի քայլ գնալով՝ դիտմամբ մի քանի անգամ յետ նայեց. վերջին անգամ հազիւ Մարօն սիրտ արեց. աչքերը բարձրացրեց և նրանց հրատապ հայեացքներն իրար հանդիպեցին։

Երկու սիրող սրտերն իրար հասկացան լըռութեամբ։ Նահապետական ընտանիքի զաւակներ էին, իրանց սէրը խօսքով յայտնել չը դիտէին, դա դատապարտելի էր։ Հեզուն պիտի լուռ ճնայ, գիւղական աշխարհում սիրոյ գործը վճռողները, նրա մասին խօսողներն աչքերն ու յօնքերն են և Մարօն ու Մուսօն իրանց աչքերով այդ օրը շատ բան ասացին, շատ բան խոստացան իրար։ Այնուհետև իւրաքանչիւր յարմար առիթին, մանաւանդ տօն օրերին, Մուսօն գալիս էր ձորակի գլխին կանգնում, երբ Մարօն յայտնուում էր ձորակում, սիրահար երիտասարդը մի այլ կողմից ցած էր իջնում և գիլ երգերով թնդացնում էր շրջակայքը։ Մարօն դանդաղութեամբ էր լցնում իր կուժը, զգոյշ հայեացքներ էր ձգում դէպի այն կողմը, ուր Մուսօն էր և ապա ժպտադէմ բարձրանում էր ձորն ի վեր։ Մուսօն չէր մօտենում Մարօին, չէր փորձում նրա հետ խօսել, այլ պահապան հրեշտակի պէս հետևում էր նրան հեռուից, զանազան պատրուակներով յայտնուում էր ձորի բարձրութեան վրայ, կամ ծածկուում էր մացառների մէջ, դիտում էր իր սիրելու շարժումները, դէմքը, ժպիտը և գոհ էր այսքանով։ Այսպէս անցնում էին օրեր և շաբաթներ, նրանց այս երջանկութիւնը ոչնչով չէր խանգարուում, նրանց սէրն օր աւուր աճում էր և այդ սէրը յստակ էր, որպէս իրանց աղբիւրների վճիտ ջրերը։

Մի անգամ միայն գեղջուկ սիրահարներին յստուկ եղանակով նրանք իրանց սիրային տեսակցութիւնների միակերպութիւնը խանգարեցին. Մուսօն մի մեծ կարմիր խնձոր դրեց այն-

տեղ, ուր կոտրուել էր կուժը և առաջ անցաւ հէնց այն րոպէին, երբ Մարօն սկսեց ցած իջնել դէպի ձորակը։ Մօտենալով իրան համար այնքան նուիրական տեղին, աղջիկը վերցրեց խըն-ձորը, հոտ քաշեց և պահեց ծոցում. Մուսօն շատ հեռու չէր, Մարօն ամեն բան հասկացաւ։

Բայց ամեն մի բաւարարութիւն սառցած ցանկութեանը միշտ հետևում է երկրորդը. երկու սիրահարներին իրանց սիրային տեսակցութիւնները վերջվերջոյ խիստ միակերպ, խիստ անբաւարար թուալ սկսեցին։ Նրանք երկսով էլ համարեա միաժամանակ պահանջ զգացին մի փոքր աւելի մօտենալ իրար, երես առ երես նայել, մի բառ, գոնէ մի հատիկ բառ արտասանել։ Այս ցանկութիւնը կար, բայց ոչ մէկը սիրտ չէր անում միանգամ դրուած սահմանից առաջինը դուրս գալ. ազամարդը համարձակ է. մի օր վերջապէս Մուսօն պատռեց այդ ամօթխած լռութեան քօղը և մօտենալով Մարօին շատ ցած ձայնով ասաց.

—Մարօ ջան, այսպէս մինչև ե՞րբ...

—Հօրս մօտ մարդ ուղարկիր, Մուսօ, շշնջաց աղջիկը և քիչ մնաց ամօթից հալուէր։

Պատառ Նուբարն ուրախութիւնից ոտքերի տակ գետին չէր զգում, երբ այս անցքից մի քանի օր յետոյ գնում էր Սհօենց տուն՝ Մարօի ձեռքը Մուսօի համար խնդրելու։

—Ուզում եմ քո տան օջաղից մի ճրագ վառեմ, Սհօ ախպէր, ասաց Նուբարը։

—Ես աղջիկ չունիմ մարդու տալու, վրճռական կերպով ասաց ծերունին խոժոռուելով և Նուբարը վերադարձաւ տխուր, սիրտը կոտրած։

Իսկապէս Սհօն շատ էլ հաւանում և նոյն իսկ սիրում էր Մուսօին. մեծ սիրով էլ կը կամենար Մարօի բախտը նրան յանձնել՝ քան թէ մի ուրիշին, բայց և այնպէս մերժեց՝ սոսկ աղջկանից բաժանուելու ճակատագրական անհրաժեշտութիւնն աւելի հեռացնելու համար։ Կ'անցնէին օրեր և եթէ երկրորդ դիմումն լինէր, նա անպատճառ կը զիջանէր, նոյն իսկ այժմ էլ նա փոշմանած էր, երբ մանաւանդ դէմի ընկաւ, որ իր մերժումը Մարօի սրտով չեղաւ, բայց արդէն ուշ էր, նա չէր կարող յետ կանչել պատասխանը, այդ անվայել էր. նոյն իսկ խայտառակութիւն էր, ոչ մի աղջկայ ծնող չի թոյլ տայ իրան այնքան ստորանալ, որ փեսացուին աղջիկ առաջարկի։

Եւ Սհօն՝ նկատելով թէ ինչպէս Մարօի դէմքից ժպիտը կորաւ, օր աւուր սպասում էր, թէ նոր խնամախօսը ե՞րբ կրկին կը բանայ իր դուռը։

III

Կարգից դուրս նորութիւններով, անօրինակ պատահարներով աղքատ էր Գ... գիւղը։ Թէև շաբաթ չէր անցնում, որ մի գիւղացի սարսափելի ծեծի չենթարկուի կամ բանտ չը նստի, ամիս չէր անցնում, որ մէկի անասուները դաշտից չը տարուին, տարի չէր անցնում, որ լեռներից որ

և է անմեղի դիակ չը բերէին արիւնաթաթախ, կամ որ և է աղջիկ կամ կին չը փախցնէին, բայց այս բոլորն էլ անօրինակ չէին համաբուում այն աշխարհում։ Այս երևոյթներն առօրեայ, սովորական պատահարների շարքն էին անցել և առանձին հետաքրքրութիւն չէին զարթեցնում։ «Անցածն՝ անցած է», կրկնում էին գիւղացիք մի այդպիսի դէպքից յետոյ և գլուխ քաշ ձգած՝ գործի։ Շատ անգամ քաղցած բէգերն էին հիւր լինում, բայց անկոչ հիւրերի գալուստը կարծես չէր խանգարում գիւղական կեանքի միակերպութիւնը։

Մի անգամ միայն Գ... գիւղում մի հետաքրքիր անձնաւորութիւն յայտնուեց և ընդհանուրի ուշադրութեան և խօսակցութեան առարկան դարձաւ։ Այս մարդը մօտ քառասուն տարեկան էր, կորացած մէջքով, նիհար, լպիրշ երեսով, որ իր վրայ կրում էր քաղաքային զեղխ կեանքի, ազատեղի շրջանների, անառականոցների, հարբեցութեան կնիքը։ Նրա փոքրիկ, պլատան աչքերի իւղոտ փայլը, խորամանկ արտայայտութիւնը զզուելի էր և դժուար էր առանց նողկանքի նայել նրա երեսին, մանաւանդ որ քթի ծայրն ու վերին շրթունքի մի մասն էլ կորուած էր և մի խոշոր սպի լրացնում էր այդ դէմքի այլանդակութիւնը։ Հնամաշ, իւղոտ սերթիւկի վրայ նա հագած ունէր տաճիկ գեներալի մի նոյնքան հնամաշ վերարկու, զեղին կոճակներով։ Գլխին կրում էր մի խունացած ֆէս նոր փնջով։ Քա-

ղաքացի չէր նա, այլ Գ... գիւղի գաւակն էր, նրան էլ շատ տարիներ առաջ այդ խղճուկ գիւղն էր ծնել, բայց այժմ նա այնքան այլափոխուած, այնպէս այլանդակուած էր, որ գիւղը դժուարանում էր ճանաչել իր գաւակին։ Նա տարօրինակ էր, ահա թէ ինչու ընդհանուրի ուշադրութեան առարկան դարձաւ։

Մարդիկ այդ օրը փափաքով ու հեգնութեամբ հաղորդեցին իրար, թէ քաչալ Սրքէն եկել է։ Հին-հին յիշողութիւններ էին փորփրուում, մի ամբողջ անցեալ էր մէջ բերուում, մինչև որ շատերը կարողանում էին յիշել քաչալ Սրքէին։ Ախր քանի՞ տարի էր, որ նա չը կար, մօտ քսան և հինգ տարի, մի ամբողջ կեանք է և ով էր կարծում, թէ նա մէկ էլ կ'երևայ, այնքան բաներ էին լսել նրա մասին... Երբ առաջին անգամ նա երևաց գիւղի հրապարակում, մի ծերունի ասաց գլուխը թափահարելով.

—Հայ գիտի, քո տունն աւերուի, Յակօ, դու էլ մի օր ուրախացար, ասիր, տղայ ունեցայ, օջախս շէն ու պայծառ կը պահի, թաղեմ էս տղան հաճ...

Յակօ, որքան արտասուք, որպիսի վշտոտ պատմութիւն էր կապուած այդ անուան հետ։ Նա էլ իր ժամանակին մի մարդ էր, մի տուն էր, մի օջաղ էր, կին ունէր, զաւակների տէր էր. երկու աղջիկ ու մի տղայի աղմուկն ու ճիչը լցնում էր նրա խրճիթը, երկինքը հաշտ էր նայում վերևից։ Տղան Սրքէ էր կոչւում, մանկա-

կան հասակում գլխի հիւանդութիւնը զրկել էր նրան մազերից, այն ժամանակից նրա անուանը կցուել էր «քաչալ» մականունը. Սրքէն քաչալ էր, բայց և այնպէս Յակօի տղան էր, նրա օջախի ճրագն էր. Յակօն սիրում էր նրան: Յակօն ապրում էր իր համար, լաւ չէր ապրում, վատ էր ապրում, բայց ապրում էր, արև ու աշխարհ էր տեսնում, կեանք էր վայելում, Աստուծոյ տուածով գոհ էր և չէր տրտնջում. շատերից մէկն էլ նա էր...

Բայց մի անգամ ճակատագիրը խեթ նայեց նրան. Յակօն մի գիշեր աղօթեց և անմեղ պառկեց ու քնեց, իսկ միւս առաւօտը մեղաւոր արթնացաւ. նա այդ գիշեր թէև հանգիստ ու խաղաղ իր խրճիթում քնած, բայց մի «զարհուրելի ոճիր էր գործել»—«նա սպանել էր հարեւան քիւրդ գիւղի ընգի չորս եզը»: Թէ ինչպէս էր կատարուել այդ յանցանքը, Յակօն ամենևին չէր իմանում, բայց վերջիվերջոյ նրան հասկացրին իր յանցանքը: Բէգի եզներն այդ գիշեր տիրոջ բակից դուրս գալով՝ դաշտ էին գնացել և մտել էին Յակօի թարմ առուոյտի մէջ, մինչև լոյս արար տրորել, կերել էին և լուսադէմին կուշտ ջուր խմելուց յետոյ՝ ուռել էին և սատկոտել հէնց առուոյտի մէջ: Նոյն առաւօտ բէգը գ... գիւղն եկաւ իր հետևորդներով, կանչել տուեց Յակօին և ասաց.

— Իմ եզները տուր, ֆլա՛:

— Ի՞նչ եզ, բէգ, հարցրեց զարմացած Յակօն,

որ անտեղեակ էր անցքին:

—Ի՞նչ եզ... իբր թէ չես հասկանում. իմ չորս եզը, որ քո առուոյտի մէջ այս գիշեր սատկացրել ես:

—Ե՞ս... Աստուած է վկայ, բէգ, ես ոչինչ չը գիտեմ:

—Մ'թթէ մխենոյն չէ, դու ես սպանել, թէ քո առուոյտը. այ լսիր, եզները գիշերը քո առուոյտն արածել են և սատկել, ուրեմն դու ես սպանել:

—Բէգ, գլխիդ մեռնեմ, բայց չէ՞ որ քո խուլուճներն են բաց թողել եզները. որ լաւ պահէին, դուրս չէին երթայ, ես ի՞նչ անեմ, խօմ քո...

—Զայնդ, շուն անպիտան, դեռ խօսում էլ է, ճչաց բէգը ապտակելով նրան, թող այնտեղ առուոյտ չը ցանէիր. եթէ ցորեն, կամ գարի լինէր ցանուած, եզները կը սատկէի՞ն, հա՛, ասա՛, կը սատկէի՞ն:

Յակօն լռեց. նա զգաց իր յանցանքը, հասկացաւ, որ յիրաւի եթէ այնտեղ առուոյտի փոխարէն ցորեն կամ մի այլ բան լինէր ցանած, այդ սևը չէր գայ իր գլխին:

—Աա՛, կը սատկէի՛ն, շարունակեց որոտալ բէգը:

—Չէ, չէին սատկիլ, դողդողալով պատասխանեց Յակօն:

—Տեսնում ես, որ դու ես մեղաւոր, դու ես սատկացրել եզները, թող ուրիշ բան ցա-

նէիը մեր գիւղի մօտ, դու այդ դիտմամբ ես արել։ Տուր եղներս։

—Բէգ, բայց վերև Աստուած կայ, եաման, խնայիր։

—Տուէք գեաւուրին։

Հետևորդները վրայ պրծան կատաղած շների պէս և Յակոբին թակելով տարան։ Դատաւորն արդար ճանաչեց բէգի պահանջը։ Յակոբ բանտ ղրուեց, մինչև որ վճարի չորս եզան գինը՝ քսան և հինգ ոսկի, մի գումար, որ Յակոբ երազել չէր կարող։

Քաչալ Սրքէն այդ ժամանակ տասնևվեց տարեկան էր։ Հարևանների խորհրդով նա պանդխտութեան գաւազան ձեռք առաւ և գնաց մեծ քաղաքներում աշխատելու, որ բերի հօր պարտքը վճարի և նրան բանտից ազատի։

—Տեսաք, ասում էին իրար գիւղացիք, երբ Սրքէն ճանապարհ ընկաւ, Աստուած ցաւը տուել է, ճարն էլ հետն է տուել. դէ պատահմունք էր, եղաւ, Յակոբ բանտ գնաց, բայց Աստուած պահի տղան, ահա գնաց աշխատելու, կը բերի, հօրը բանտից կ'ազատի. փառք քեզ Աստուած, դու արդար ես։

Անցան տարիներ։ Սրքէից ոչ մի լուր չը կար։ Խեղճ Յակոբ ոսկորները մաշուեցին բանտում, այնտեղ էլ նա հոգին փչեց, անտէր ու սոված թողնելով կնոջն ու երկու աղջիկները, որոնցից մեծը՝ տասն, իսկ փոքրը՝ հինգ տարեկան էր։ Բէգն իր պահանջի փոխարէն խըլեց Յակոբի միակ արտը։ Գոհարը՝ Յակոբ այրին, երկար ժամանակ մերթ կուշտ, մերթ սոված իր որբիկների հետ ծուարեց իր կիսաւեր խըրճթի մէջ, յուսալով մի կերպ քաշ տալ իր ողորմելի գոյութիւնը. բայց վերջիվերջոյ տեսնելով որ այդպէս շարունակել անհնարին է, երկրորդ անգամ յանձն առաւ ամուսնանալ իր որբերին սովից փրկելու համար։ Մորթ հայրն սկզբում սիրով ընդունեց երկու աղջիկներին և խնամում էր զաւակների պէս, բայց ժամանակի հետ նրա վերաբերմունքը փոխուեց, նրանք աւելորդ բեռը նկատուեցին, կերածները աչք եկաւ, միւս երեխաներն սկսեցին նրանց յաճախակի ծեծել, անից դուրս խրկել, կերակրից զրկել։ Քիչ չէր պատահում, որ երկու որբիկներն իրար գրկած բաց երկնքի տակ էին գիշերում նոյն իսկ ցուրտ եղանակներին։ Այդ այն ժամանակն էր, երբ նրանց մայրը հիւանդ ընկած էր անկողնում։ Նրա սիրտը կսկծում էր տեսնելով իր վաստաբախտ զաւակների դառն վիճակը. առանց այն էլ նրա ջարդուած սիրտը այս վերջին հարուածին էլ դիմանալ չը կարողացաւ և նա վշտահար գերեզման իջաւ։ Երկու որբերը մնացին գլխովին որբ —նրանք այժմ անպաշտպան մուրացիկներ էին։

Այդ ժամանակ միայն մարդիկ յիշեցին այս թշուառներին։ Գանուեց մէկը՝ Մահտեսի Փանոն, որ վերցրեց նրանց և պահում էր իր «varâfի» համար։ Որբերից փոքրը նոյնպէս չ'ապրեց երկար, ծանր զրկանքները քայքայել

էին նրա քնքոյշ կազմուածքը և նա շուտով թողեց այս դառն աշխարհը և հետևեց իր վաստաիատ ծնողներին։ Մնաց մեծը, բայց սրա ճակատագիրն աւելի սև եղաւ։ Երբ նա հասած աղջիկ էր արդէն, Փանօի քիւրդ հովիւը՝ Ճապօն, իր երկու ուրիշ ընկերների հետ նրան բռնի խլեց ու փախցրեց։ Յակօի օջախը մարեց։

Քաչալ Սրքէն չը կար ու չը կար։ Նա շրջնակում էր ճոխ քաղաքներում։ Քաղաքային կեանքին նա հեշտ ընտելացաւ, նուիրեց իրան անառակութեան, մոռացաւ հօրն ու նրա ցաւերը, մոռացաւ մօրն ու քոյրերին։ Նրան կարելի էր տեսնել մերթ իբրև սրճարանների ծառայ, մերթ քարվանսարայի «օղաբաճի», մերթ այս ու այն թուրքի տանն ատոր և գաղտնի յանձնարարութիւններ կատարող և մերթ էլ իր նման արիկաների հետ գինետներում ու անառականոցներում, ուր նա վատնում էր արդար կամ անարդար ճանապարհով ձեռք բերած մի քանի կոպեկները։ Վերջին տարիները նրա առաջ դռները ծունկեցութեան մի բոլորովին նոր տպարէզ բացուեց։ Նրան կարելի էր յաճախ տեսնել «փօլիս» էֆէնդու դռանը, կամ զափթիաների հետ շրջելիս։ Շատ երիտասարդները նրա ցուցմունքով բանտ ընկան և մեծ փրկանքով դուրս եկան, կամ իսպառ թշուառացան։ Լուրերը էին պատում նոյն իսկ, թէ նա իսլամութիւն է ընդունելու՝ մի մեծ գումար ձեռք ձգելու համար։ Քաչալ Սրքէն հեռահեռէ լսեց իր ծնողների մահը, քոյ-

րերին վրայ հասած աղէտները, բայց աշխատեց անգէտ ձևանալ։ Կեանքի հեշտ ճանապարհը նա գտել էր, մառնութիւնը նրա համար լաւ ապրուստի միջոց էր, վաստակը մեծ էր։

Բայց մի անգամ բախտն երեսը շուռ տուեց նրանից։ Մի գիշեր խաւարի մէջ տարճանակի մի զնդակ սողաց նրա դէմքի վրայով, անմեղ գոհերը հաշիւ էին պահանջում գահիճից։ Հարուածը մահացու չ'եղաւ, միայն գոհ գնաց նրա քթի ստորին մասը և վերին շրթունքը։ Սրքէն սարսափեց։ Նա զգաց, որ այս մի փորձին հետևելու է երկրորդը, և նոյն իսկ երրորդը, մինչև վերջ դրուի իր գազիր կեանքին։ Պէտք էր խոյս տալ այդ վտանգաւոր դարձած վայրերից, ուր ամենքը ճանաչում էին նրան։ Բայց ո՞ւր փախչել, ո՞ւր ծածկուել։ Այդ նեղ ժամին նա յանկարծ յիշեց իր հայրենի գիւղը և մի օր անյայտացաւ քաղաքից։ Գ... գիւղի անառակ զաւակը յետ եկաւ իր հոգու առաքինութիւնները վատնելուց յետոյ, եթէ ունեցել էր, բայց առանց ապաշաւանքի, առանց ապաշխարութեան։

Գիւղում նա ամենքին հաւատացնում էր, թէ քաղաքում լաւ արճառան ունի, թէ եկել է մօրն ու քոյրերին տանելու, որոնց հասած դժբախտութեան մասին իբր լինքը տեղեկութիւն չունէր և թէ գիտէր միայն հօր մահը, որին լինքը հակառակ իր բոլոր ջանքերին օգնել չը կարողացաւ։ Առաջի օրերում նա նոյն իսկ իրան խորապէս վշտացած էր ցոյց տալիս, մանաւանդ

քրոջ առևանգուելու համար։ Բայց յետոյ, [illegible]
զարմանս գիւղացիների, նա պատրաստուեց գը-
նալ, ինչպէս ինքն էր ասում, «փեսացին» [illegible]
քրոջը տեսութիւն։ Եւ արդարև նա գնաց, գտաւ
նրանց, մինչև իսկ «ղալան» պահանջեց քրոջ
համար։ Գիւղացւոց զզուանքին ու զայրոյթին
չափ չը ճնաց, երբ լսացան այս բոլորը։

Ամենքն էլ երես դարձրին նրանից։ Սրքէն
այդ զգում էր։ Արդէն գիւղական կեանքը մոտ
էր նրան ձանձրացնելու, երբ մի օր յանկարծ
տեսաւ Մարօին։ Իմանալով, որ հարուստ հօր մի
հասիկ ժառանգն է այդ գեղեցկուհին, նա մտա-
ծեց ամեն ճիգ գործ դնել, ամուսնանալ նրա
հետ և հօր հարստութեան տէր լինել։ Ինչ ա-
նենք, որ ինքը քաչալ Սրքէն է, ողորմելի Յա-
կօի տղան, բայց նա այժմ քաղաքից է գալիս,
լաւ խօսում է տաճկերէն, վրան մարդավարի
շորեր ունի, մի խօսքով էֆէնդի է, մինչև Մա-
րօի ձեռքը կը մերժեն նրան, կամ մինչև Մա-
րօն հէնց ինքը բախտաւոր չի համարի իրան
նրա կինը դառնալով։ Այսպէս էր դատում Սրբ-
քէն և մի օր Սհօի տունը մտաւ, Մարօի ձեռքը
խնդրեց։ Սհօն զայրոյթով դուրս վռնտեց նրան.
նահապետական գիւղացու վրայ զզուելի տպա-
ւորութիւն թողեց քաղաքի խեղկատակը։

Քաչալ Սրքէն չը յուսահատուեց, նա մը-
տածեց աղջկանը հետամուտ լինել, գրաւել նր-
ան իր պլուզով ու ֆէսով, սիրտը վաստակել
և այս ճանապարհով նպատակին հասնել։ Եւ

Սրքէն սկսեց։ Այս բանը պատահեց ճիշտ այն
դէպքից յետոյ, երբ Սհօն Մարօի ձեռքը մեր-
ժեց Մուսօին։

Մուսօն երևակայել անգամ չէր կարող, թէ
այդ քաչալը սիրտ կ'անի աչք բարձրացնել Մա-
րօի վրայ, ուր ճնաց թէ նրան հետամուտ լինի։
Բայց ինչեր չեն պատահում աշխարհում։ Նա
յանկարծ իմացաւ, որ Սրքէն նոյն իսկ Մարօի
ձեռքն է խնդրել։ Թէև նրան մերժել էին, բայց
միմիայն այդ յանդգնութեան համար նա պատ-
րաստ էր կոկորդը ծամելով նրա զզուելի գլուխը
բաժանել մարմնից։ Սակայն այդ դեռ քիչ էր։
Մուսօն շուտով նկատեց, որ Սրքէն յաճախակի
շրջում է ձորակում և յատկապէս այն ժամե-
րում, երբ Մարօն այնտեղ էր լինում, կասկած
չը կար, որ նա հետևում էր Մարօին։ Մի օր
մանաւանդ՝ նա մի այնպիսի բան տեսաւ, որ
այլ ևս համբերել անհնարին էր։ Առաւօտ էր,
Մարօն իր մի ընկերուհու հետ վերադառնում
էր աղբրից. յանկարծ նրանց առաջ յայտնուեց
Սրքէնն, և առաջին աղջկանից անցնելով Մարօի
առաջը կտրեց։ Աղջիկն անծանօթի առաջ շփո-
թուած՝ ինչ անելը չը գիտէր, մինչդեռ Սրքէն
աւելի մօտեցաւ, ինչ-որ փսփսաց և իր ձեռքը
համբուրելով ճակատին դրեց, Մարօն սարսա-
փած վախաւ նրա առաջից։ Նոյն րոպէին Մու-
սօն մի քանի ոստիւնով Սրքէի առաջը կտրեց։

—Էը՛, քաչալ Սրքէ, ինչ ես ամեն օր այս
տեղերում հոատռելով թափառում, ասաց նա

հրացայտ աչքերով և բռունցքները սղմած։

—Էֆենդի՛մ, քեզ բան արի՞, պատասխանեց Սրքէն գոռոզաբար, ես այստեղ գործնում եմ։

—Ես գործնել, բան չը գիտեմ. լսիր քեզ ինչ եմ ասում. եթէ մէկ էլ համարձակուես ես այս տեղերում երևալ, հասատա՛, քաչալ գլուխդ կը կտրեմ, մանաւանդ՝ եթէ քեզ տեսնեմ առաւօտներն ու երեկոները։

—Առաւօտներն էլ կը գամ, կէսօրին էլ, իրիկունն էլ. քեզ ինչ, էֆենդիմ, ձորը խօմ քոնը չէ։

—Ձորը խմը չէ, բայց այստեղ մէկը գալիս գնում է, նա ինձ է, քեզ ասում եմ այստեղ մի՛ արի։

—Ես կը գամ, ինձի Սարգիս էֆենդի կ՚ասեն։

—Կը գա՞ս։

—Կը գամ։

—Դէ, ա՛ռ քեզ «կը գամ», ասաց Մուսօն մի ծանր ապտակ տալով երեսին։

Քաչալ Սրքէն փորձեց պաշտպանուել, բայց առողջ, յաղթանդամ գիւղացու հզօր բազուկնեբին դժուար էր դէմ դնել, ուստի նա փախաւ իր բոլոր զայրոյթն ու անզօր վրէժխնդրութիւնը թուրքերէն մի լսելիք հայհոյանքով դուրս թափելով։

IV.

Քաչալ Սրքէն գնաց սառաւիկ զայրացած, առաւիները կրճտելով։ «Այսպէս էլ բան. մի վայրենի, մի գիւղացի արջ՝ Սարգիս էֆենդու վրայ ձեռք բարձրացնի, անարգի։ «Քաչալ Սրքէ» էր ասում ինձ. կեցիր, անասուն, մրթմրթում էր նա ճանապարհին բռունցքները թափ տալով, կեցիր և տես ինչ կանեմ քեզ»։ Նա սպառնում էր. բայց իրօք ինչ պիտի անէր, այդ ինքն էլ չը գիտէր։ Սեփական պատուի անարգանքի համար իր անձը վտանգի ենթարկելու քաջութիւնից զուրկ էր նա. «այդ չիմարութիւն է, ասում էր, այնպէս պէտք է վրէժխնդիր լինել, որ քեզ ոչինչ չը պատահի և եթէ հնար է, նիւթական շահն էլ ունենաս»։ Օ՛, եթէ այս բոլորը քաղաքում պատահած լինէր, նա ինչ հեշտութեամբ Մուսօին բանտ կը նստացնէր իբր «կօմիտաչի», իսկ ա՛յժմ... այժմ բոլորովին ուրիշ բան պէտք էր մտածել։ Եւ նա մտածում էր։

Մինչ այս, մինչ այն, պառաւ Նուբարը չոքեց քահանայի առաջ, նրա ձեռքը ու ոտքն ընկաւ, որ մի ճար անի Սհօի սիրտը կակղացնելու համար։ Մի քանի օրից յետոյ բարի քահանան օրհնեց երկու սիրահարների նշանը։ Գիւղացիք ուրախացան, Սհօն աւելի լաւ ընտրութիւն անել չէր կարող։ Կատաղեց միայն Սրքէն։ Հակառակորդի այս յաղթութիւնը ևս աւելի բորբոքեց նրա վրէժխնդրութիւնը, հազար ու մի ծրագիրներ անցան նրա փոքրիկ գլխով, բայց ոչ մէկի վրայ կանգ առնել չէր կարողանում և չը կար մէկը, որ նրան խորհուրդ տար, առաջնորդէր իր վտանգաւոր ձեռնարկութեան մէջ։

Այս նեղ ժամին նա յանկարծ յիշեց Ճազօին, իր «փեսային»։ Նա ժպտաց, շփեց նեղ ճակատը, բախտաւոր միտք ծագեց նրա գլխում։ Սրքէն անյապաղ գիւղից։

Ուր գնաց նա, այդ չիմացան գիւղացիք, և չը հետաքրքրուեցին էլ իմանալ, միայն մի օր յետոյ նա Ճազօի վրանումն էր և գիշերն այնտեղ հետևեալ խօսակցութիւնը տեղի ունեցաւ փեսայի և աներձագի մէջ։

—Ճազօ, քո օգնութեանն եմ կարօտ, ես խաթր ունեմ քեզ մօտ, ասաց Սրքէն։

—Ի՞նչ ես ասում, Սրքէ, գլուխս չեմ խնայի քեզ համար, պատասխանեց կեղծաւոր քիւրդը։

—Մեր գիւղի Սհօի աղջկան տեսել ես։

—Հա, տեսել եմ շատ առաջ, մի սիրուն փոքրիկ աղջիկ էր։ Ի՞նչ է, չը լինի թէ ուզում ես առնել, չէն տալիս։

—Ուզեցի, չը տուին, այժմ արդէն ուշ է, ուրիշի վրայ նշան են դրել։

—Ամենևին ուշ չէ. ինչ միտս, որ նշան են դրել, պսակած էլ լինի, կը փախցնենք, եթէ կամենաս։ Ճազօն աչքի մազ կարող է թռցնել։

Սրքէն փախցնելու մասին ամենևին չէր մտածել, ինքը բոլորովին այլ ծրագիր ունէր, Ճազօն աւելի խելացի է... փախցնե՞լ... ինչ սիրուն բան կը լինի։ Մի րոպէ նա մտածմունքի մէջ ընկաւ, երևակայութեան առաջ պատկերացաւ Մարօի սիրուն պատկերը. ինչ և լինի, աչք դառնալ այդ պատկերին... բայց այս բանը նրան

անհնարին թուաց։ Փախցնել... բայց ո՛ւր, ինչպէս ծածկուել, չէ՞ որ իրան հետաքրքրողը միայն Մարօն չէր. հապա նրա հօր հարստութիւնը, ինչպէս կարող էր ձեռք գցել այն, ինչպէս կարող էր գիւղ դառնալ. գիւղացիք, Մուսօն, մանաւանդ Մուսօն, սրանից ամենից աւելի էր վախենում Սրքէն, նրա հարուածները տեսել էր։ Մնում էր փախցնել Մարօին և յաւիտեան քըրդերի մէջ ձնալ, նոյն իսկ քրդանալ, ինչո՛ւ, ինչ օգուտ, երբ հնարաւոր չի լինի Սհօի ժառանգը դառնալ։

—Ո՛չ, Ճազօ, ես փախցնել չեմ ուզում. այդ աղջիկն ինձ հարկաւոր չէ։ Նրա նշանածը Զորանենց Մուսօն, ինձ թակեց, նրանից վրէժխնդիր լինել եմ ուզում, թող այդ աղջիկը նրան բաժին չը լինի, խլենք այդ աղջկանը նրանից, տանք մի այնպիսի մարդու, որից մի բան էլ մենք շահուել կարողանանք։

Մտածելու հերթն այժմ Ճազօինն էր. նա մի քանի րոպէ լուռ մնաց։

—Ապրես Սրքէ, լաւ բան միտս բերիր, այդ աղջիկը մեր Հիւանի բէգին շատ լաւ ընծայ կը լինի. բէգը ձեր երկսից էլ լաւ է, դէ մենք էլ մի բան կը խփենք, երևի մի քանի ոսկի էլ ինձ ու քեզ բաժին կը հանի։

Սրքէի դէմքը պարզուեց, նա ձեռները շփեց, պտրեց, կարծես պատրաստուում էր ոսկիներն ընդունել։ Միւս առաւօտ Ճազօի վրանից երկու հոգի հեռացան, Սրքէն դէպի Գ. գիւղն եկաւ,

իսկ Ճազօն գնաց դէպի Սիպանայ սարը։

—

Այնտեղ՝ ուր բարձրացնում են իրանց մշուշապատ գագաթները Սիպան, Ծաղկեայ և Նեմրուդ սարերը, որոնց հսկայական սառուերները լեռ ու դաշտ ոտնատակ տալով երեկոյեան պահուն ծարաւած վիշապների պէս ձգւում են դէպի ծովակը, ուր բլրակների և լեռների շղթաները քմահաճաբար իրար են փաթաթւում, որպէս կուռի բռնուած գալարուն օձեր և մերթ բաժանուելով կազմում են բիւրաւոր հովաշատ, կանաչազարդ ձորեր ու հովիտներ. այնտեղ՝ ուր լեռնային ջրերը լիզում են լեռների կրծքերը և նրանց սառոռաններում կազմում են կարկաչիւն վտակներ և մռմռացող լեռնային գետակներ, այն տեղերում վազուց է իշխում Հիւանի բեգը իր «էլիաթով», վազուց է՝ ինչ այդ դրախտանման վայրերը մարդասպանների, աւազակների բոյն են դարձել։

Անհոգ և ուրախ է ապրում Հիւանի բեգը, նա մի փոքրիկ, անկախ թագաւոր է։ Սիպան ու Ծաղկեայ լեռների առջևում փռուած, Նեմրուդ լեռան սառոռաններում ձգուած հայ գիւղերը, Արճէշի և Ալջաւազի քրիստոնեայ ժողովուրդը վազուց է, ինչ սովորել է կրկնակի հարկ վճարել—Հիւանի բեգին և պետութեան։ Աշխատասէր ու խաղաղ է այդ ժողովուրդը, հարուստ է երկիրը և Հիւանի բեգը աչք է այդ ժողովրդին, այդ երկրին։ Քանի՛ ձեռներ են աշխատում, որ Հիւանի բեգն իր ամբողջ էլիաթով կուշտ լինի։

Գարուն էր, Արճիշու սարերի փարթամ գառրունը։ Հիւանի բեգն իր օբաներով դուրս էր եկել «եայլաղ»։ Սիպանայ սարն իր հիւրընկալ կրծքին վայրենի գազանի հետ միասին օթևան էր տուել նաև վայրենի մարդին։ Քիւրդերի սևսև մազե վրանների մոայլ շարքերը պատել էին հովիտներն ու դարաւանդները։ Լեռան ամենախոտառատ և ջրաշատ տեղը գրաւել է ինքը բեգը։ Նրա վրանը մի շարք վրանների ծայրումն է և իր մեծութեամբ ու փառահեղութեամբ իշխում է բոլորի վրայ։

Վրանի մուտքը զարդարուած է գոյնզգոյն վինջերով. փայտեայ բարակ սիւները ներկուած են խայտաբղէտ գոյներով։ Ձորս կողմում խիտ ու խիտ գետնին տնկուած մանր ցիցերը, որոնցից կապուած է վրանը, նոյնպէս գունաւոր են։ Վրանի եզրի և գետնի մէջ բաց ձնացած տարածութիւնը շրջապակուած է գոյնզգոյն չղով*)։ Վրանը գեղեցիկ չղերով բաժանուում է մի քանի մասերի. ամեն մի չղէ պատ ներկայացնում է մի տեսակ կանգուն գորգ։ Ամենից շքեղ մասն

*) «Չղը» կազմուած է բարակ, յղկած, համաչափ ճիպոտներից մի արշին և աւելի երկարութեամբ։ Քիւրդ կանայք այդ ճիպոտները վարպետութեամբ շարում են իրար կողքի և հիւսում իրար հետ գոյնզգոյն բրդեայ թելերով, և այս անում են այն ձևով՝ որ ստացւում է մի տեսակ շիրմայ քիւրդ կանանց գործած գորգերի պատկերներով։ Այդ «չղով» մազէ մեծ վրանը բաժանում են մասերի, սրանով են շրջապատում վրանի ստորին մասը։ Որքան հարուստ է վրանի տէրը, նոյնքան էլ ճոխ և շքեղ է լինում «չղը»։

է բէգի ընդունարանը։ Սա ներկայացնում է առաջը բաց մի սրահ, որի յատակը ծածկուած է թանկագին գորգերով և նրանց վրայ փռուած են խաս կտորից մինդարներ և նոյնպիսի բարձեր։ Ընդունարանի պատերը զարդարուած են բազմաթիւ հին և նոր հրացաններով, երկար, ծայրը փինջազարդ նիզակներով, քրդական շըրջանաձև և կենարոնն ուռուցիկ վահաններով, Դամասկոսի հին, կեռ սրերով։

Կէս օր էր։ Կուշտ ճաշից յետոյ՝ բարձերի վրայ թիկն տուած, բէգը ծխում էր իր նարգիլէն և ծուխը քուլայ-քուլայ դէպի վրանի ցածրիկ առաստաղն էր արձակում։ Նա մօտ յիսուն տարեկան մարդ էր, կարճ միրուք ունէր, փոքրիկ, նիհար դէմք, ճպճպան, վաւաշոտ աչքեր։ Բերանի շուրջը և աչքերի տակ դէմքի կաշին դղուելի ծալքերով կախուած էր, սեռական անժուժկալութիւնն իր կնիքը դրել էր նրա դէմքին։ Բէգը շարունակում էր ծխել և միևնոյն ժամանակ կամ նայում էր վրանի առաջ արածող նժոյգներին և կամ դէպի հեռուն, ուր առաջում էր կանաչազարդ և սիրուն լեռնային դարաստափը։ Յանկարծ նա թողեց նարգիլէն, լաւեց իր բոլոր ուշադրութիւնը և ուղղուելով նըստեց. ապա շտապով վերցրեց մօտը դրած դիտակը և նայեց դէպի հորիզոնը, ուր մի մութ շարժուն ստուեր սկսին էր տալիս։

—Մատծ, ձայն տուեց բէգը։

—Բալէ, աղա, պատասխանեց վրանի յետևից մի ձայն և շուտով մի գեղեցկադէմ երիտասարդ քիւրդ յայտնուեց վրանի առաջ. բէգի ծառան էր։

—Մատծ, մէկը դէպի մեր կողմն է գալիս։ Շուտով ձի նատիր, ընդառաջ գնա, տես թէ ով է, հրամայեց բէգը. արդեօք ոտերքից մէկը չէ։

Երեք օր առաջ բէգի էլիաթից մի արշաւախումբ էր հեռացել, այդ խմբի մասին էր խօսում բէգը։

—Աղ խուլ ա մէ տա մա (ծառագ եմ), ասաց Մատծն գլուխ տալով, պատից վերցրեց հրացանը, թռաւ մի մերկ ձիու մէջքին և սրարշաւ հեռացաւ։

Կէս ժամ չանցած Մատծի հետ վրանի առաջ յայտնուեց Ճազոն և խոր գլուխ տալով բէգին՝ մնաց կանգնած։ Բէգը յօնքերի տակից ուշադրութեամբ նայեց Ճազոին և շուտով ճանաչեց. նա իր մարդկանցից էր, իր նախկին հովուի որդին։

—Ախէր հատի, Ճազո (բարի եկար, Ճազո), ասաց բէգը... որ քամին քեզ այստեղ քշեց։

—Աղա, քո սէրն է ծառայիդ բերել քո ոաքը, պատասխանեց Ճազոն քրդական հաճոյախօսութեամբ։

—Տուն, տեղ, մալ, ընտանիք, ողջ, սալամաթ են։

—Քո սայից *), ողջ են, տէր, քո գլուխը ողջ լինի մեզ համար։

*) Քո սայից=քո շնորհիւ։

—Տօ, անիրաւ, ասում են ֆլայ կնիկ ես ճանկէ գցել, ղօչաղ Ճազօ. որ այդպէս շնորհք ունես, ինչո՞ւ մէկն էլ ադայիդ չես բերում ընծայ։

Ճազօի սիրտը թրթռաց, իր նպատակին աւելի յարմար խօսակցութիւն սկսել անհնարին էր։

—Ճազօի պլուխը մատաղ լինի ադային, ադան որ կամենայ, որ մէյն աչքով անի, Ճազօն նրա համար երկնքից հիւրի ցած կը բերի, ուր ճնայ թէ ֆլայ կնիկ։ Բա էլ Աստուած ինչո՞ւ համար է ստեղծել ֆլային, որ մեր աչքի լոյս բէգը մի ֆլայ կնիկ էլ չը կարողանայ ունենալ։ Ադան որ կայ...

—Լաւ, լաւ, Ճազօ, բաւական է ձաւար անես, քո բերանն էլ, որ բանան, էլ փակել չի լինի, հայրդ էլ քո խասեաթին էր։ Դուն այն ասա, ինչո՞ւ ես եկել, թէ չէ դու որ հիւրի-փէրիից խօսել սկսեցիր, էլ չես վերջացնի։

—Տէր, հէնց հիւրի-փէրիի համար եմ եկել, հապա էլ ի՞նչ խօսեմ, բէգը մեր պէսի աէրն է, մենք էլ նրա ծառաներն ենք, նրա շուաքի տակ ապրում ենք, նրան ծառայելու պարտական ենք, աչքեր ունենք, պիտի նայենք, ինչ-որ մի հատիկ է աշխարհում, ինչ-որ աննման է, այն բէգին պիտի հասցնենք, սա պարտք է, տէր։ Դէ Ճազօն էլ աչքեր ունի, կոյր չէ։ Տէր, քանի մի օր առաջ Գ... գիւղով անցնելիս մի աղջիկ տեսայ, ի՞նչ աղջիկ, հրեշտակ, որ շղկուելով երկնքից երկիր է իջել. մի կատարեալ հիւրի։ Ասացի գնամ բէգին ասեմ, ֆլային ի՞նչ սազ կը գայ այնքան գեղեցկութիւն, այն բէգին է վայել։

Բէգի աչքերը վառուեցին վաւաշոտութեան կրակով։ Նա մտածեց մի փոքր։

—Ասացիր սիրո՞ւն է։

—Անման, տէր իմ, չէննաթի հիւրի, իմ աղան դեռ երբէք այնպիսի կին չի ունեցել։

—Տօ, անպիտան, խանումներիդ չե՞ս հաւանում հապա, ասաց բէգը ժպտալով ներողամտաբար։

—Տէր, հաւանում եմ, բայց այն ֆլայ աղջիկն ուրիշ բան է, թոռո՛ւն, թոռո՛ւն։

—Լաւ, Ճազօ, բայց կարո՞ղ ես առանց աղմուկի գործ տեսնել։

—Տէր, որ հրաման անես մեր տղերքից մի քանիսը հետս լինին, մի երկու օրից ֆլայ աղջիկն այստեղ կը լինի։

—Հաւատում եմ քեզ, Ճազօ, բայց եթէ ղալմաղալ հանես և բերածդ աղջիկն էլ ասածիդ չափ սիրուն չը լինի, հոգիդ կը հանեմ։

—Ծառադ եմ, տէր։

—Մնացածը քեզ եմ թողնում, սո՛ւտ հետդ, ում կամենում ես. իսկ քո բախշիշն էլ պարտքս լինի. գնա՛ հանգստացիր։

—

Վարդավառի տօնն էր։ Վաղ առաւօտից գիւղի բոլոր ջահել հարսներն ու աղջիկները ձորակումն էին։ Այսօր նրանց նպատակը մենակ ջուր բերելը չէր, հապա և պէտք է Վարդավառ

անէին, իրար թրջէին։ Ամենքն էլ կուժեր ունէին, ջրով լցրին ու վար դրին այստեղ, այստեղ։ Չէին շտապում վեր բարձրանալ, սպասողական դրութիւն էր։ Դեռ ոչ ոք թրջուած չէր, դեռ չէր յայտնուել մի համարձակը, որ առաջին փորձն անէր։ Այդ ինկ բոպէին ձորի լանջի վրայ յայտնուեց Մարօն։ Ներքևում խմբի մէջ ընդհանուր փսփսուկ բարձրացաւ, ինչոր ծրագիր էր կազմուում։

—Ամենից առաջ Մարօին թրջենք, թող նշանածը նրան ազկուած տեսնի, ասաց Բադօենց Գոհարը, մի փոքրիկ չարաճճի աղջիկ։

—Հա՛, հա՛, Մարօին, ձայն տուին այս ու այն կողմից մի քանի աղջիկներ։

Կազմուած դաւադրութեանն անտեղեակ, Մարօն ցած իջաւ, աղբրին հասաւ, կուժը լցրեց ջրով. հէնց այդ բոպէին Գոհարը մօտեցաւ և երկու բռնով արագ-արագ ջուր ցանեց Մարօի վրայ, գոռալով՝ «Վարդավառ»։ Ընդհանուր քրքիջ բարձրացաւ. «Վարդավառ», լսուեց այս ու այն կողմից։ Մարօն իրան չկորցրեց, նա բարձրացրեց իր կուժը և արագութեամբ դարձրեց Գոհարի գլխին։ Վերջինս այնպէս թրջուեց, որ ասես աւազանի մէջ թաղուեց դուրս եկաւ։ Ծիծաղն ու ուրախաձայն աղաղակները այս անգամ կրկնապատկուեցին։ Ընդհանուր ի-րարանցումն սկսուեց։ Ձորակը թնդում էր, բուն Վարդավառն էր այս։ Թրջում էր, ով ում կարողանում էր։ Մէկը կուժը առած հալածում էր

իրան թրջողին, որ աշխատում էր ձորակի հեռաւոր կողմերն ապաստանել. միւսը փորձում էր միամիտ կանգնած ընկերուհուն հրել, վտակի մէջ ձգել. ոմանք քաշքշում էին իրար, ուրիշները բռնով ջուր ցանում իրար վրայ. աւելի չարաճճիները, մանաւանդ նրանք, որոնք ամենից առաջ թրջուել, մուկ էին դարձել, մտել էին վտակի մէջ և այ ու ձախ ջուր էին շփում և ամենքի ծիծաղն ու աղաղակը, ճիչն ու կանչը ոտոտոցը լցրել էր ձորակն ու շրջակայքը։

Մարօի և Գոհարի վրայ այլ ևս ուշք դարձնող չը կար։ Աղջիկները միայն իրարանցման սկզբում տեսան՝ թէ ինչպէս Գոհարը խլեց ջրով լի մի կուլիկ և ընկաւ Մարօի յետևից, որ փախաւ դէպի ձորակի հակառակ կողմը, դէպի դաշտը։ Այստեղ երկու հակառակորդներն սկսեցին պատրաստներ կազմել. Գոհարն աշխատում էր ջուր ցանել Մարօի վրայ, իսկ սա խոյս էր տալիս։ Միևնոյն ժամանակ մնացած աղջիկներն աղբրի մօտ շարունակում էին իրանց վարդավառը։ Յանկարծ մի զարմանալի բան պատահեց։ Այնտեղից, ուր Մարօն և Գոհարն էին, մի այնպիսի ճիչ լսուեց, որ ուրախ, աղմկուող խումբը սարսափից քար կտրեց և վայրկենապէս լռեց, ինչպէս ճնճղուկների ճռուողող երամը լռում է, երբ յայտնւում է բազէն։

Ամենքի հայեացքներն ուղղուեցան դէպի այն կողմը և նրանց աչքին հետևեալ տեսարանը ներկայացաւ։ Աւազակների մի դինուած խումբ յար-

ձակուեց երկու աղջիկների վրայ, Գոհարն ընկաւ ուշաթափ՝ հազիւ կարողանալով կոչել՝ «Եաման, տարան», մինչդեռ Մարօին բռնեցին մի քանի հոգով և շտապեցին կապոտել ձիու վրայ։ Աղջիկների զարհուրած խումբը քար կտրած՝ պապանձուել էր, նոյն իսկ օգնութիւն չէր գոռում, այն աստիճան արագ կատարուեց բոլորը, այն աստիճան անսպասելի էր դիպուածը։ Երբ Մարօն ձիու վրայից մի անգամ ցած շպրտեց իրան և ծնաց ուշաթափ, այդ ժամանակ միայն խմբի միջից մէկը յանկարծ գոռաց՝ «վայ, տարան Մարօին»։ Պապանձուած խումբը միաձայն ճչաց՝ «տարան, տարան»։ Ուրախութիւնը սուգի, ծիծաղը՝ լացի փոխուեց. էլի մի րօպէ և աղջիկների բոլոր բազմութիւնը վազեց ձորն ի վեր դէպի գիւղը գոռալով՝ «տարան, տարան»։

Ամբողջ գիւղն իրար դիպաւ, մարդ թէ կին, մեծ թէ փոքր միանգամից դուրս թափուեցին տներից և դէպի ձորակը գրոհ տուին։ Ամեն մէկը կարծում էր, թէ իր քոյրը կամ աղջիկը տարան։ «Տարան» լսում էր ամեն բերանից։ Օգնութեան վազեցին գիւղի երիտասարդները՝ որը զինուած, որն անզէն, որը մահակով, որը որ և է կարասի ձեռին բռնած։ Առաջին օգնութեան վազողներից մէկն էր նաև Մուսօն, ձորակի գլխից նա նոյն իսկ աղօտ կերպով նշմարեց, թէ ինչպէս մէկին ասպատակները կապեցին ձիու վրայ և սրարշաւ հեռացան։ Ո՛չ մի կասկած անգամ չունէր, որ տարուածը Մարօն էր. նա

նոյն իսկ չէր հարցնում, թէ ո՞ւմ տարան, այլ խելագարի պէս ձորակի գլխից ցած գլորեց իրան և քանի ոյժ կար ոտներում վազեց դէպի ասպատակների զինուած մի խմբակ, որ աղջկան փախցնելուց յետոյ կանգնել էր՝ հետամուտ լինողների առաջը փակելու համար։ Ինք էլ չմտածելով թէ անզէն ինչ կարող է անել զինուած ասպատակների խմբին, Մուսօն այնուամենայնիւ վազում էր ու վազում. յանկարծ մի քանի հրացաններ որաքեցին և մի գնտակ Մուսօի կողքը ծակեց անցաւ. վիրաւորուած երիտասարդը կողքը բռնեց և սոսկալի մռնչոց արձակելով, գետին ընկաւ։ Միւս գիւղացիները շփոթուած կանգ առան, ոմանք Մուսօին շրջապատեցին. ասպատակները Մարօին տարան անարգել։

Սհօն էլ լսեց հաւարի ձայները։ Երբ առաջին անգամ նրա ականջում հնչուեց «տարան» բառը, սիրտն այնպէս ճմլուեց, որ կարծես մէկը հզօր ձեռքով սղմեց և մի առժամանակ դադարեցրեց նրա թրթռոցը, կարծես մի բան կըտրուեց և կախ ընկաւ նրա կրծքի տակ։ Ոտները թուլացան, ծնկները դողում էին, բայց և այնպէս նա իր վերջին ճիգերը հաւաքեց և դէպի ձորակը վազեց։

«Տարան, տարան», գոչում էին չորս կողմից դէպի ձորակ վազողները։

— Այդ որին տարան, հայ քրիստոնեաները, հարցրեց մահուան գունատութեամբ ծածկուած

Սհօն առաջին պատահած մարդին հէնց ձորակի գլխին։

—Վա՛յ, քո տունն աւերուի, Սհօ, Մարօին տարան քրդերը։

— Մա-րօ-ին, հազիւ կարողացաւ բացականչել ծերունին նուաղած ձայնով և ընկաւ գառխ-վայրի վրայ կիսակենդան։ Մարդիկ վազեցին, նրան ուշքի բերին։ Նա ցնցւում էր բոլոր մարմնով դողոցքով բռնուածի պէս։ Քիչ յետոյ հաւաքելով իր բոլոր ուժերը փորձեց իջնել դէպի ձորակը, բայց դարձեալ ընկաւ, մի փոքր տեղ ձեռների վրայ գնաց, յետոյ կանգնեց, մէկ էլ ընկաւ և այսպէս մերթ գլորուելով և մերթ սողալով՝ նա ձորի յատակին հասաւ։ Նա ոտաբոբիկ էր ու գլխաբաց, ոտնամաններն ու գլխարկը թողել էր ճանապարհին, սպիտակ մազերն ու մէրուքը խճճուած, աչքերը վառւում էին ճերմակ յօնքերի տակից. նա դողդոջուն ձեռները տարածեց օդի մէջ, երկնքին նայեց «Մարօ» կոչեց։ Կարծես աղերսում էր երկնքին յետ տալ իր Մարօն։ Յետոյ նայեց իր շուրջը, մազերը փետելով, գլխին տալով, մօտեցաւ աղբրին, տեսաւ Մարօի կուժը, երկու ձեռքով գրկեց, բարձրացրեց, ինչպէս մայրը գրկում է պատակին. և այդ անշունչ առարկային նա հարցնում էր՝ ո՞ւր է Մարօն, ի՞նչ եղաւ էս սարերի ջէյրանը, ձայն չե՞ս տալիս, «օֆ». և նա թափով գետին գարկելով կուժը փշուր-փշուր արեց։

Նա մի առժամանակ սառած նայեց կժի

կտորներին, յետոյ կամացուկ նստեց, հաւաքեց մի քանի կտոր և դառն-դառն արտասուեց։ Ծորի կաթիլները գլորւում էին նրա ծեր մէրուքի վրայով. այդպէս կ'արտասուէր հին աշխարհի մի ծեր թագաւոր իր գահի և քաղաքի աւերակների մէջ։ Գիւղացիք շրջապատել էին նրան. ոմանք արտասւում էին, բայց ոչ ոք չէր համարձակւում մօտենալ, խանգարել այդ վսեմ ողբը,—մի ամբողջ երկրի սուգն էր կատարւում, ծերունու աչքերով մի ամբողջ ժողովուրդ էր արտասւում։

Քիչ յետոյ յուսահատ ու վշտահար գիւղացիների երկու խմբեր երկու կիսամեռ մարդիկ էին տանում դէպի գիւղ. մէկը վիրաւոր Մուսօն էր, իսկ միւսը՝ ուշաթափուած ու վշտաբեկ Սհօն։ Կարծես յուղարկաւորութիւն լինէր, սրտերի թաղում էր կատարւում։

Անցան օրեր և ոչ ոք չիմացաւ, թէ ո՛վքեր և դէպի ո՛ւր տարան Մարօին։ Ծերունի Սհօն անկողնուայն էր, ծանր վիշաը կամաց-կամաց քաղում էր նրա կենսական ոյժերը, աշխարհն աչքեր փուլ եկել նրա գլխին, նրան այլ ևս ոչինչ չէր հետաքրքրում, կամ աւելի շուտ նա ոչինչ չէր հասկանում։ Ոչ ոքի ոչինչ չէր ասում. կամ մրմնջում էր ինքն իրան, կամ լուռ նայում էր առաստաղին։ Նրան դժուարութեամբ էին կերակրում. խնամողը Նուբարն էր, որ մերթ տուն էր վազում Մուսօին նայելու, մերթ գալիս էր Սհօի մօտ։

Սակայն Մուսօի վէրքն այնքան էլ ծանր չէր, գնտակը շատ խոր չէր մտել, թէև տակաւին վիրաւորը, բայց նա շուտով վեր կացաւ, մինչդեռ Սհօն շարունակում էր ճնշել անկողնում։ Այժմ մայր և որդի սկսեցին խնամել ծերունուն։ Երբ Նուբարը գդալով կերակուրը մօտեցնում էր նրա շրթունքներին, նա յետ էր մղում՝ ասելով՝

—Էլի ապրեմ, որի՞ համար... վախ, Մարօ։

Բունն էլ փախաւ նրա աչքերից, ամբողջ ժամեր աչքերը յառած առաստաղի մի կէտին, նայում էր անթարթ և յանկարծ չորացած մատը դէպի վեր մեկնելով ասում էր.

—Նայիր, Նուբար, էս առաստաղն ինչքան սև է, սեւ, սեւ... Օ՛խ Նուբար, էս վէրան երկրի մէջ ամեն բան սև է. մեր վաթանը սեւ, մեր երկիրը սեւ, մեր օրեր սեւ, մեր արևը սեւ, մեր բախան էլ սև, մեր սիրտն էլ սեւ, մէկ էլ Մարօն էր պայծառ ու խօրօտ, մէկ նրա օրը սև չէր, ա՛յն էլ շատ համարեց Աստուած։ Դէ՛, էդպէս էլ պէտք էր, ախր խօրօտը խեղճն ինչ անի, խօրօտը զալումին է, զալումն էլ եկաւ ու տարաւ, օճ՛ֆ...

Մուսօն էլ լռեց։ Նրա քաղցը երգերի արձագանքն էլ չէր թնդացնում ձորակն ու դաշտերը, ուրախ խմբերի, խնջոյքների մէջ էլ չէր երևում նա։ Գիշեր-ցերեկ անվերջ թափառում էր այն տեղերում, ուր դիպել էր Մարօի ոտքը, նայում էր այն ծաղիկներին ու խոտերին, որոնց նայել էր Մարօն, դիպել էր նրա ձեռքը, նրա-

տում էր այն աղբրի մօտ, որտեղից ջուր էր վերցնում Մարօն, ականջ էր դնում ջրի մի-կերպ քչքչոցին, ասես աշխատելով նրա ձայնից հասկանալ թէ ո՞ւր է Մարօն։ «Ա՛խ, գոնէ իմանայի, թէ ո՞ւր տարան, մրմնջում էին նրա շրթունքները. եթէ աշխարհի ծայրումն էլ լինի, երկաթէ տրեխները կը հագնեմ, պողպատէ գաւազան ձեռք կ՛առնեմ և Մարօին կը բերեմ, կամ պուխս մատաղ կտամ նրան»։ Շատ անգամ յուսահատուած՝ սկսում էր բարձրաձայն հեկեկալ, հակայ տղամարդն իր անզօրութեան մէջ արտասուում էր ինչպէս մի երեխայ, երբ անկարող էր լինում մի հնար գտնել։ Ապա յոգնած գլուխը դնում էր հէնց աղբրի ափին, ջրերի կարկաչիւնը կամաց-կամաց թմրեցնում էր նրան, քունը գալիս էր մի առժամանակ ամոքելու նրա հոգին այրող վշտերը։ Ապա վերջապէս նա վեր էր կենում և գլխիկոր գնում դէպի գիւղ, սիրտը կոտրուած, հոգին վշտահար ներս էր մտնում Սհօի տունը։ Ծերունին սովորաբար քնած չէր լինում։

—Է՛, որդի, եկա՞ր, դառնում էր նա դէպի Մուսօն. տարար Մարօին հա՞... Վա՛յ, Մուսօ, ինչ բեբախտ փեսայ եղար, ինչո՞ւ մի չես բերում տեսնեմ Մարօին... Այտերէդ ձայնը կերկերում էր, սիրտը փղձկում էր, արտասուքները խեղդում էին նրա կոկորդը և ծեր աչքերից թափւում էին կաթիլ-կաթիլ. նրան միանում էր նաև Նուբարը։

Մուսօի սիրտը կտոր-կտոր էր լինում։ Իր

սիրելու կորուստը, այս խղճալի ծերունու անհուն վիշտը ոչ մի բոպե նրան հանգիստ չէին տալիս և նա օր ու գիշեր մտածում էր, թէ ինչ հնարքով գտնի Մարօին։ Ո՛չ մի վտանգ նրան չէր վախեցնում, նա պատրաստ էր Մարօի սիրուն՝ դժոխք իջնել. սարսափելին այն էր նրա համար, որ չը գիտէր, թէ ուր գնայ, ումի հարցնի, որտեղ գտնէ իր տարաբախտ Մարօին։ Երկար մտածեց նա, վերջապէս մի օր Սհօի մօտ եկաւ ու ասաց։

—Ես էլ համբերել չեմ կարող, հայր, կ՛երթամ երկրէ երկիր կը թափառեմ, կամ գլուխս մատաղ կը տամ, կամ կը գտնեմ, կը բերեմ Մարօին։

Նրա ձայնը խիստ էր, խօսքերը վճռական. երևում էր, որ նա մի յանդուգն ձեռնարկութեան վճիռ է կայացրել։

—Թայ հոր, մեռնեմ քեզ, էս մութ աշխարհի մէջ, էս սև օրերին ուրտեղից գտնես Մարօին, գուշումը չորս կողմերս բռնել է։

Նուբարն էլ մէջ ընկաւ. աղաչեց, պաղատեց, որ չ՛երթայ, մինոյն է գտնելու չէ, գտնի էլ, չի կարող յետ բերել. մինչև հիմայ, որ վախցրած հայ աղջիկն է յետ բերուել. գուր ինչու սևացնել իր օրերը. մէկ էլ սև կապի իր մայրը, մեղք չէ... Բայց իզուր...

Մուսօն գնաց ու գնաց. ուր, այդ ոչ ոք չիմացաւ։

V

Ամառ էր։ Արճիշու սարերում մի վայրենի կենդանութիւն էր տիրում. ամեն մի հովտում, ամեն մի լեռան վրայ, ամեն մի ձորում վխտում էին քրդերը։ Սև-սև վրանների մոայլ շարքերը ձգւում էին անընդհատ շղթաներով. մանր ու մեծ լամուկները ոտները մերկ, գլխաբաց, մի հատիկ կտաւէ շապիկ կեղտոտ մարմինների վրայ խաղում էին այդ վրանների առաջ հսկայական գամփռների հետ, ոմանք էլ մագլցում էին լեռների ժայռոտ կատարները և զուարճանում էին մանր քարեր գլորելով վերից վայր։ Մի փոքր աւելի հասակաւորներն իրանց կոպալներով զինավարժութիւն էին անում։ Անմիջապէս վրանների յետևում կամ քիչ հեռու մի հարթութեան վրայ, մի աղբրի գլխին համախմբուած և պար կազմած քրդուհիներն իրանց կաշուէ գոզնոցների վրայ պատացնելով թէշլիկների պոչերը, բրդէ թելեր էին մանում և այս ու այն արիւնալի կռւում ընկած քաջերին երգերով գովաբանում։ Տղամարդիկ սակաւ էին երևում վրաններում, ընդամենը մի քանի հոգի, որոնք արեւելքին յատուկ ծուլութեամբ ձգուել էին գալարաշատ թմբերի վրայ և անհոգ ու լուռ ծխում էին, երբեմն-երբեմն միայն մի-մի բառ ուղղելով մօտը պառկած հարևանին։ Մնացած տղամարդիկ գնացել էին աւարի ու կողոպուտի։

Այդ լեռներում յանկարծ յայտնուեց շատ

հեռու երկրից եկած մի երիտասարդ քիւրդ սքանչելի ձայնով։ Նա սէր ու քաջութիւն էր երգում։ Քրդական իւրաքանչիւր օբայում նրա տխուր, սրտաճմլիկ երգերը դուրս էին քաշում վրաններից քրդուհիներին, որոնք իսկոյն շրջապատում էին անծանօթ երգչին և ձեռներն այտերին դրած, գլուխները օրօրելով լսում էին զարմանալի երգչի վշտոտ երգերը։ Նա երգում էր ազդու, սիրտ պատառող ձայնով, երգում էր այնպէս, որ ասես թէ իր հոգին մաս-մաս դուրս էր գալիս երգի իւրաքանչիւր բառի, իւրաքանչիւր հնչիւնի հետ։ Կ՚ասես վշտերի մի ծով կար ներսում, որ թափւում էր ու թափւում, բայց վերջ չէր առնում։ Վայրենի պօէզիայի սիրահար քրդերի աչքերից նա քամում էր արտասուքի կաթիլներ և այրում, փոթորկում էր նրանց սրտերը։

Մի օբայում նա մի քանի օր էր անցկացնում. նրան պատւում, հիւրասիրում էին, և յանկարծ նա անյայտանում էր, երբ և ուր, այդ նա ոչ ոքի չէր ասում և ոչ ոք չէր իմանում։ Շատ յետոյ միայն լսւում էր, որ նա երգում է յաջորդ օբաներում։ Այնտեղ էլ էր յուզում ամենքին, այնտեղ էլ էր լացացնում իր ցաւոտ երգերով և կրկին անյայտանում։ Ո՛չ ոք չը պիտէր, թէ ո՞վ է նա, ինչո՞ւ է թափառում աշխրէթից աշխրէթ, օբայից օբայ, և այդ ի՞նչ վիշտ է, որ կրծում է այդ զարմանալի երգչի սիրտը։ Նրա խորհրդաւորութիւնն ամենքին ճնշում, կաշկանդում էր, տխուր, մելամաղձոտ երգերի քաղցրութիւնը, գեղեցիկ, գունատ դէմքը, բարձր հասակն ամենքին դիւթում էր և ոչ ոք չէր հարցնում նրանից իր գլխի եկածները, ամենքը համոզուած էին, որ նա մի թշուառ է և այդքանով բաւականանում էին։ Ամեն անգամ երբ քրդուհիները նրան շրջապատում էին կամ վրանների խորքից գաղտագողի աչք էին ածում երգչի վրայ, վերջինս ուշադիր հայեացքով դիտում էր իր շրջապատողներին, ասես թէ փընտրում է մէկին. և երբ չէր գտնում իր ուզածը, երբ յուսահատւում էր իր սպասելիքների մէջ, դադարեցնում էր իր վշտոտ երգերը, և իր անբաժան կոպալը ձեռք առած՝ շարունակում էր իր խորհրդաւոր ճանապարհորդութիւնը դէպի այլ լեռներ, դէպի այլ աշխրէթներ։

Երկար թափառեց նա։ Գրգուռից մինչև Նեմրուդ, Նեմրուդից մինչև Սիպան ու Ծաղկեայ սարերը ոտնատակ տուեց, ամեն տեղ լացացրեց։ Ահա վերջապէս այս վշտի երգիչը Սիպանայ սարի վրայ, Հիւանի բէգի օբայումն է։ Վրանների առաջ մի քարի վրայ նստած, նա երգում էր քրդական հռչակաւոր պօէման՝ «Սարէ-Սիպանէն»։

Քրդուհիները և մեծ ու փոքր լամուվները շրջապատել էին նրան։ Վրանները դատարկ էին։ Միայն ծայրի զարդարուած, մեծ վրանի մէջ միայնակ ու տխուր նստած էր մի հատիկ քըրդուհի և ձեռքը ծնօտին դրած՝ նայում էր դէպի հեռուն, դէպի հորիզոնը, ուր բարձրաբերձ լեռներն իրանց գագաթներն ամպերի մէջ թա-

ղելով՝ կ'ասես չանք էին անում ձգուել, երկնքին հասնել: Նա էլ հեռուից տեսաւ այդ համախմբումը, հասկացաւ, որ այնտեղ ինչ-որ ուշագրաւ և հետաքրքիր բան է կատարւում, քանի որ ամենքը դէպի այնտեղ են վազում, նոյն իսկ նրա ականջին էլ հասաւ ազատաձայն արնդի ձայնը, բայց և այնպէս տեղիցը չը շարժուեց, այլ շարունակում էր յամառ կերպով նայել դէպի հորիզոնը, կ'ասես թէ ապասելով մէկին, որ այդ հորիզոնի վրայ պիտի յայտնուէր, ոչ այդ լեռներից պիտի իջնէր, երկնքից պիտի ցած գլորուէր:

Այդ վշտահար, այդ ազատը քրդուհին Մարօն էր և մեծ, զարդարուած վրանը՝ Հիւանի բէգի վրանն էր, ուր բանտարկուած էր նա, որպէս թռչնակը ոսկեայ վանդակի մէջ:

Ճագօն ու Սրբէն իրանց գլուխի ծրագիրն իրագործեցին: Վարդավառի առնի մասին Սրբէն յայտնեց Ճագօին և սա մի խումբ քրդերի գլուխն անցած՝ փախցրեց Մարօին և Հիւանի բէգին յանձնեց, որ ֆլայ գեղեցկուհուն իր կանանոցի զարդը դարձրեց: Ճագօն չէր խաբել. Մարօն աննման էր, բէգն իր ցնծութիւնն ու գոհակատարութիւնը արտայայտեց այն առատաձեռնութեամբ, որով նա վարձատրեց Ճագօին: Սրբէն էլ իր բաժինն առաց: Վաճառքը վերջացաւ, գոհը յանձնուեց գահճին, որ նրա ազատի գրկի մէջ դանդաղ կերպով փչի իր շունչը:

Ինչպէս միշտ, այսօր էլ նրա սիրտը սև էր

որպէս ագռաւի թև և դէմքը սպաւոր ու թախծապատ: Նրա վառվռուն աչքերը խոր էին ընկել և անվերջ արտասուքից ուռել, կարմրել. նրանց մէջ վառուող նախկին կուսական խանդը մարել էր, տեղի տալով մի անհուն վշտի արտայայտութեան, վշտի՝ որ կաթիլ-կաթիլ քամուելով՝ քանդում էր նրա սիրտը մինչև յատկին թելերը և թափանցում էր նրա հոգու խորքերը գերմարդկային ցաւեր պատճառելով: Նրա երկար, թաւ արտևանունքները մշտական արտասուքից բաժանուել էին, ոլորուել իրար. գեղափթիթ այտերը նիհարել և դունատուել էին, իսկ կարմիր շրթունքները ծածկուել էին հիւանդոտ գեղնութեամբ: Դժուար էր նրան ճանաչել. նա այժմ նմանում էր մեղրամոմի, որ օր օրի վրայ այրուելով մօտ էր մարելու: Եւ սակայն ընդամենը ամիս ու կէս էր, ինչ նրան խլել էին իր հօրից և Մուսօից:

Իր անձնական դժբախտութեան, իր կուսական պատուի անարգանքի վրայ աւելացած էր նաև իր սիրելիների ցաւը. ինչ եղաւ հայրը, մեռաւ արդեօք, թէ դեռ շարունակում է իր արտասուելի կեանքը, և մի՞թէ նա կարող էր տանել այդքան ծանր հարուածը, կարո՞ղ էր առանց իր Մարօի սրև տեսնել, օդ շնչել, կեանք վայելել: Հապա Մուսօն... ինչ է անում այժմ, ինչ է մտածում արդեօք, ո՞ւր է... գուցէ իր յեղափոխականներից վայր գլորեց իրան նրան, թէ յուսահատութիւնից վայր գլորեց իրան

ժայռից և մահ գտաւ Մարօի սիրուն։ Ո՛վ գիտէ, գուցէ և մոռացաւ Մարօին, մոռացաւ իր սէրը և այժմ կապուել է մի ուրիշի հետ, չէ՞ որ ինքը մեռած է և ո՛վ է մեռած սիրելու համար իր գլուխը մատաղ տալիս... Այսպէս էր մտածում Մարօն և օր ու գիշեր հանգիստ չունէր։ Բէգի բոլոր գուրգուրանքները, նրա բոլոր ընծաները ու զարդերը չէր կարողացան մազի չափ անգամ մեղմացնել Մարօի կսկիծը, մի րոպէով ցամաքացնել նրա արտասուքները. ընդհակառակը բէգի ներկայութեամբ նրա տանջանքները կրկնապատկւում էին, նրա զգուելի ու վաւաշոտ դէմքի վրայ փայլող ժպիտը սպանում էր Մարօին, որ պատրաստ էր իր կեանքն անգամ տալ այդ դէմքն ու այդ ժպիտը չէ տեսնելու համար։ Օ՜, ինչ սիրով նա վայր կը գլորուէր այն լերան կատարից, բայց հնար չունէր, հսկում էին նրա վրայ, մենակ չէին թողնում դուրս գնալ։

Այսօր էլ միևնոյն մտքերն էին պաշարել նրան. գոհ էր իր միայնութեամբ, նրա մտքերը խանգարող չէր կար։ Եւ ուր գնար նա, անծանօթ քիւրդ երգչին լսելու. չէ՞ որ դրանով նա միայն իր հին ցաւերը կը նորոգէր, պիտի յիշեր իր Մուսօի երգերը, և կա՛յ աշխարհում մէկը, որ Մուսօի պէս երգել կարողանայ։ Մարօն մի ծանր և երկար ախ քաշեց, հեռւում շարունակում էր հնչուել երգչի արնգի ղողղոջուն ձայնը։ Յանկարծ նրա առաջ կանգնեց բէգը։

—Մարօ, դու էլի տխո՞ւր ես, ասաց բէգը։

Մարօն լուռ էր. նա միշտ այսպէս էր, լռում էր, երբ բէգը խօսում էր, լուռ էր, երբ բան էր հարցնում, երբ գուրգուրում էր. լռում էր, երբ բարկացած ժամանակ անարգում, հայհոյում էր. նա մի գոհ էր, որ իր դահճի բոլոր գործողութիւնները տանում էր մահուան դատապարտուածի անտարբերութեամբ։ Միայն այդպիսի րոպէներում աչքերի մէջ միշտ մի այնպիսի ատելութիւն ու զզուանք էր փայլում, որ բէգն անգամ իր վաւաշոտ աչքերն աշխատում էր հեռացնել նրա հայեացքից, չը տեսնել, չը զգալ իր գոհի այս ծակող զզուանքը, այդ թունտ ատելութիւնը, որպէսզի իր մէջ կիրքը չը թուլանայ, գոհի գրաւիչ մարմնի բուրմունքով արբենալ, թմրիլ կարողանայ։ Բայց Մարօն միշտ նայում էր, փնտրում էր բէգի աչքերը, որ այնտեղ թափի իր ատելութեան թոյնը, այդ անպաշտպան, թոյլ, անզէն գերին յանկարծ գտել էր իր դահճի, հակառակորդի թոյլ կողմը և նրա կրքերը սանձելու հրաշալի հնարը։ Ամեն անգամ երբ բէգը մօտենում էր Մարօին, երկու հակառակորդների մէջ սկսւում էր խուլ, կատաղի մրցութիւն։ Գերին, գոհը իր սպանիչ հայեացքով աշխատում էր չանթահարել նրան, զսպել նրա մէջ նստած գազանը, մինչդեռ վերջինս լաւ զգալով այդ ցուրտ հայեացքի բոլոր ոյժը, աշխատում էր չը նայել իր ճիրանների մէջ թրպրտացող գոհի աչքերին, նրանք սար-

սափեղի էին, նրանց մէջ այնքան ատելութիւն, զզուանք, արհամարհանք կար, որ թոյլ զոհը յաղթում էր: Այդ դէպքերում կատաղած բէգն իր պարտութեան վրէժը լուծում էր անպատկառ հայհոյանքներով և հեռանում էր:

Այսօր էլ սկսուեց նոյն խուլ մրցութիւնը երկու անհաւասար ոյժերի մէջ:

— Ինչո՞ւ չը գնացիր միւսների հետ այնտեղ, շարունակեց բէգն առանց նրա աչքերին նայելու, ցոյց տալով երգչի կողմը և նստեց նրա կողքին, ձեռքը ուսին դնելով: Մարօն պատասխանի փոխարէն նայում էր բէգի դէմքին, նայում էր նրա ցած կախած աչքերին, նայում էր և միայն մի բան էր մտածում, թէ ինչ սիրով նա իր քնքոյշ թուլացած բազուկներով կը խեղդէր այդ զզուելի հրէշին, նոյնիսկ ատամներով կը կրծէր նրա ադամի կոկորդը:

— Մարօ, ինչո՞ւ չես խօսում, կ'ուզես ուղարկեմ երգիչն այստեղ գայ, թէ՞ ուզում ես ինձ հետ մենակ լինել, հա, հա, հասկանում եմ միաքդ, դե՛ ֆլա, ասաց բէգը ժպտալով և սիրտ արեց նրա աչքերին նայել: Այս անգամ դէրերը փոխուեցին, ընկճուող, պարտութիւն կրողը զոհն էր. բէգի այդ ժպիտը հոգեհան էր, Մարօն այդ ժպիտը տանել չէր կարող. բէգի այդ դէնքն անհամեմատ աւելի վտանգաւոր էր ու սուր, քան թէ Մարօի ցուրտ, սպանիչ հայեացքը և եթէ բէգը կարողանար միշտ ժպտալ, Մարօն երբէք այդ մրցութեան մէջ յաղթող չէր հան-

դիսանայ, ինչպէս այս անգամ: Բէգը շարունակում էր ժպտալ և աւելի ու աւելի մօտ նստել Մարօին, վերջինս այդ անտանելի ժպիտը չը տեսնելու համար երկու ձեռքով ծածկեց դէմքը: Այնուհետև երկար ժամանակ բէգը շարունակում էր փայփայել լուռ, սգաւոր զոհին, հազար ու մի խոստումներ էր անում. իզուր, Մարօն ծնաց լուռ, անտարբեր, և ձեռները չը հեռացրեց դէմքից:

Ջանձրացած ու թուլացած բէգը ոտքի կանգնեց:

— Անզգամ ֆլա՛, մոմոաց նա ատամները սրդմած և դուրս գնալով հրամայեց երգչին իր մօտ կանչել:

Քիչ յետոյ բէգին խոր գլուխ տալով ատլչևը կանգ առաւ մի յաղթանդամ և գեղեցկադէմ երիտասարդ քիւրդ: Բէգը նրան նայեց փորձող հայեացքով:

— Անունդ ինչ է, կուռծ, ասաց նա:

— Ավգօ, աէր, ծառադ եմ:

— Ո՞րտեղացի ես:

— Ծառադ Սինակայ սարերից է, աէր:

— Ուրեմն Մոսկօվի երկրի՞ց ես:

— Այո՛, աէր, Մոսկօվի երկրից վախտական եմ:

— Ինչո՞ւ համար ես փախել:

— Արունքի համար, աէր, արունք եմ արել և փախել եմ մշտապես այս կողմերում ճնալու համար:

—Կուգամ, ամօթ չէ՞ քեզ, որ արունքի համար թողել ես տուն ու տեղ և փախել. դու աշխր չե՞ս, որ թշնամուդ առջևից խոյս ես տուել և չօլերն ընկել։

—Տէր, ծառադ ոչ իր թշնամուց է փախել և ոչ նրա վրէժխնդրութիւնից, այլ Մոսկովի օրէնքների երեսից։ Այնտեղի օրէնքներն այս տեղի նման չեն, վատ են, արիւնն արիւնով լուանալ չը կայ այնտեղ, այլ արունքի համար մարդի պատժում են և այն ինչպէս—բռնում են, տանները շրթայ են դնում, քշում են շատ հեռու տեղեր, այնքան հեռու, որտեղ մարդիկ սառոյէ տների մէջ են ապրում. այնտեղ մարդին փակում են գետնափորների մէջ, որ եղունգներով ոսկի և արծաթ հանի հողի միջից։ Մոսկովի այդ օրէնքից եմ փախել, տէր։

—Հա՜, գլխի ընկնելով և համաձայնելով ասաց բէգը. հա՜, այդ օրէնքը լաւ օրէնք չէ, այդ լաւ չէ, կորմանջը *) հաֆս չը պիտի մանի. լաւ ես արել որ փախել ես։ Ասում են լաւ ես երգում, հապա մէկ երգիր լսեմ ձայնդ. նստիր այնտեղ։

Անծանօթը ծունկ չոքեց վրանի առաջ, կապալը դրեց կողքին, սրինգը դուրս քաշեց գօտկից և հնչեցրեց մի տխուր, ոլորուն եղանակ մեղմ ելևէջներով։ Նահապետական այդ պարզ

*) Քիւրդերն իրանք իրանց «կորմանջ» են անուանում։

գործիքից դուրս թափուող դողդոջիւն հնչիւնները նրա վարժ մատների տակ կ'ասես թէ մեղմիկ ողբում, հառաչում էին. նրանք լացացնելու չափ գեղեցիկ էին։ Ապա երգեց այն հոչակաւոր երգը, որ հազարից մէկ քիւրդ հազիւ գիտէ, բայց որ ամենքին էլ սիրելի, ամենքի համար էլ գրաւիչ է. դա քրդական աննման պօէման էր, Սարէ-Սիպանէն, կամ Սիամանդօն և Խըջէզարէն։

Նա սրտառուչ ձայնով և ցաւոտ շեշտերով երգեց ու պատմեց, թէ ինչպէս Խըջէզարէն և Սիամանդօն միևնոյն գիշերը երազով տեսան իրար և մատանիները փոխանակեցին, թէ ինչպէս ապա Սիամանդօն իր հաւատարիմ նժոյգը հեծած՝ գնաց Զուկանցոց էլը և գտաւ իր սիրածին, մի պառաւի միջոցով հաղորդեց նրան իր ով լինելը և սէրը, ուղարկեց նրան իր մատանին ճիշտ Խըջէզարէի հարսանիքի օրը։ Խըջէզարէն առաջարկեց Սիամանդօին՝ իր սիրուն արժանի լինելու համար յաջորդ օրը վախցնել իրան այն ժամանակ, երբ նա ձիաւորներով շրջապատուած՝ իր փեսացուի տունը երթալու կը լինի։

Յաջորդ օրը Սիամանդօն իր նժոյգը հեծած, նետն ու աղեղը ձեռին, կայծակի նման ընկաւ ձիաւորների մէջ, մի ձեռքով բռնեց Խըջէզարէի քնքոյշ մէջքը, դրեց իր կռնակը և ձին շարժեց, սլացաւ դէպի Սիպանայ սարի կատարը, այնտեղ վար իջեցրեց իր սիրածին, նստացրեց իր աբայի վրայ, յետ դարձաւ դէպի ձիա-

ւորները, որոնք թուով չիսուն, հալածում էին նրան: Նա բոլորին էլ իրար վրայ թափեց, կըրկին դէպի Սիպանայ գլուխը դիմեց, ուր Խըջէզարէի ծնկի վրայ գլուխը դրեց և երանութեամբ հանգիստ առաւ:

Այս երգի հէնց առաջին բառերը ցնցեցին Մարօին, նա յիշեց իր և Մուսօի ոէրը, յիշեց որ ինքն էլ այժմ Սիպանայ սարի վրայ է, և ինչ տխուր, ինչ սոսկալի զուգադիպութիւն. փոխանակ իր սիրածի գրկում լինելու, զզուելի բէգի հարեմումն է մաշւում: Մարօն սկսեց սիրով ականջ դնել. երգը նրան հետաքրքրեց:

Երգիչը շարունակեց նկարագրել Սիամանդօի որսը Սիպանայ սարի վրայ:

«Զը համբերից Սիամանդօն, լսեց իր նեան ու աղեղ,
Վայրի եզան վրայ վազեց, զարկեց նետը նա անշեղ,
Եզըն ընկաւ քարից ուժգին, վերից դէպ՝ վայր գլորուեց,
Բայց մեծ ուժով եղջիւրները ցնցեց կատաղած կենդանին,
Եւ անխոհեմ Սիամանդին սարից առաւ վար նետեց:
Սիամանդօն կաղնի մի սուր ցցի վրայ վար ընկաւ,
Եւ սուր ցիցը մէջքը մտաւ, կրծքից մէկ թիզ դուրս եկաւ»:

Մարօն ականջ էր դնում. նրա դէմքի անտարբեր արտայայտութիւնը կամաց-կամաց փոխ-

ւում էր: Խըջէզարէի և Սիամանդօի սիրուն նմանեցնելով իր և Մուսօի սէրը, նա յուզուեց և էլ աւելի սիրով ու տխրութեամբ շարունակեց ականջ դնել: Այդ երգի պատճառած վիշտը որքան հաճելի էր նրա սրտին. իր ներքին հրդեհի վրայ զովացուցիչ կաթիլների պէս ընկնում էին երգչի բերանից դուրս եկող բառերը և տխուր ցաւոտ հնչիւնները: Յանկարծ Մարօն ցնցուեց մէկէն քնից արթնացածի պէս, աչքերը լայն բաց արեց, ուշադրութիւնը սաստիկ լարեց և մոռանալով երգի բառերը, մոռանալով Սիամանդօին և Խըջէզարէին, բոլոր ուշադրութիւնը կենտրոնացրեց միայն երգչի ձայնի վրայ: Նա չը գիտէր՝ ինքը երազո՞ւմ է, թէ արթուն է, բայց նրան թւում էր, թէ Մուսօի ձայնն է լսում, նա կրկին լարեց ուշադրութիւնը, կրկին ականջ դրեց բերանաբաց. ոչ մի կասկած չը կար, Մուսօի ձայնն էր, միայն Մուսօն կարող էր այդքան արտասուք քամել ունկնդիրների աչքերից: Մարօն թողեց ժենարանը, մոռացաւ ամեն ինչ, մոռացաւ իր ցաւերը և շտապեց միացաւ բազմութեանը՝ այս տարօրինակ երգչին տեսնելու, նրա դէմքը դիտելու համար: Մարօն նայեց... հայեացքը յամառ էր, կիպ, կարծես այդ հայեացքից ազդուած, երգիչն էլ գլուխը բարձրացրեց և նրան նայեց... Տէր Աստուած, այն ինչ պատահեց Մարօին, քիչ ՃՆաց թուլացաւ և վայր ընկնէր ուշաթափ:

Մարօն ճանաչեց. նա ինքն էր, իսկ և իսկ

Մուսօն էր քրդի շորերով, ուրիշ ոչ ոք լինել չէը կարող, սա Մարօի Սիամանդօն էր։ Մարօն գերմարդկային ոյժ գործ դրեց իր վրայ, որ չը ճչայ. չը վազի և նրա վզովը ընկնի «Մուսօ» կոչելով. նա դողդողաց, ոտքերի վրայ կանգնել չէը կարողանում, կամացուկ յենուեց վրանի սեանը և մոռացաւ իրան, չը գիտէը ինքը երկնքո՞ւմն է, թէ երկրում, կենդանի՞, թէ մեռած։

Մարօն չը սխալուեց. անծանօթ երգիչը Մուսօն էր, նրա Սիամանդօն, որ փրկիչ հրեշտակի պէս յայտնուել էր յանկարծակի Սիպանայ սարի վրայ իր Մարօին, իր Խըջէզարին անօրէն բէգի ձեռքից ազատելու համար։

Մարօի փրկութեան մասին երկար մտածելուց, զանազան միջոցներ որոնելուց յետոյ, նա կանգ առաւ մի վերին աստիճանի յանդուգն և վտանգաւոր ծրագրի վրայ—նա վճռեց քիւրդ ձևանալ և շրջել սարից սար, ձորից ձոր, թափառել բոլոր քրդերի օբանները, ամեն տեղ երգել իր աննման ձայնով և հզօր երգի հնչիւնների դուրս գրաւել վրաններից քրդուհիներին, յուսալով նրանց մէջ մի տեղ, մի օբայում տեսնել Մարօին։ Ո՛րքան տանջուեց նա, ինչե՛ր կրեց իր կեղծիքը չը յայտնելու համար։ Քանի-քանի անգամ քիչ մնաց յուսահատուէը, քանի՛ օբաններ և էլեր շրջեց, իզո՛ւր, ոչ մի տեղ նա չը տեսաւ իր Մարօին. նա տխուր ու յուսահատ հասաւ Սիպանայ սարին, և եթէ այստեղ էլ չը գտներ, պէտք է տխուր ու ձեռնունայն վերադառնար և իր սև օրերին վերջ տար։ Սիպան սարի անունը յիշեցրեց նրան Սարէ-Սիպանէն. և Մուսօն երգեց այդ վշտոտ երգը, երգեց և նայեց, աչք ածեց շուրջը. և ո՛վ զարմանք, ո՛վ երջանկութիւն, նա տեսաւ Մարօին, նրանք նոյն իսկ նայեցին իրար ցաւի և կարօտի անհուն արտայայտութեամբ, երկու հայեացքները փարուեցին։ Դժբախտ երիտասարդը քիչ մնաց խելքը թռցնէր, նրա ձայնը կերկերաց, արտասուքները խեղդեցին կոկորդը, յանկարծ նրա երգն ընդհատուեց, շարունակել անհնարին էր, հերթը արտասուքին հասաւ, դառն աղի արտասուքներ, որոնք աղբրի պէս դուրս ցայտեցին աչքերից։ Ինչպէս չարտասուէր, ինչ օրի էր ընկել նրա հրեշտակ Մարօն. Մուսօն հազիւ ճանաչեց նրան... և նա արտասուեց, իսկ Մարօն վաղուց էր արտասուքի հեղեղներ թափում։ Երգչի արտասուքներն էլ աւելի յուզեցին ամենքին։

—Խեղճ մարդ, ասացին այս ու այն կողմից, ինչքան ցաւեր ունի, վաթսան է յիշում։

Երկար արտասուեց Մուսօն, ապա երբ մի փոքր սիրտը հովացաւ, նա սրբեց արտասուքները և կրկին շարունակեց ընդհատուած երգը, նկարագրելով այս անգամ Խըջէզարէի սուգը։

«Սիամանդո, էը գնացիր վայրի եղան յետևից,
Ա՜խ, մի տքար, Սիամանդո. Ջան, մի տքար, սիրելիս»։
—Ա՜խ, մի թափիր, Խըջէզարէ, դառն արցունքները քո աչքից։

Հառաչանքդ ու արցունքդ ծանր խոց է սև սրտիս։
Մի լար, իմ Աբջեզարէ, մի լար»։

«Մի լար», այս երկու բառը Մարօի սիրտը քըքրում, կտոր կտոր էին անում։ Նրան թւում էր, որ դա երգ չէ, այլ որ իսկապէս Մուսօն իրան՝ Մարօին է ասում՝ «մի լար»։ Մարօի ոտները կամաց-կամաց թուլացան, նա նուաղում էր, մօտիկ կանգնած քրդուհին գրկեց նրան, Մուսօն երգեց.

Սէդ Սիպանայ սարի գլխին բուք-բորան է, փո-
թորիկ,
Սիամանդօ, տես ղէնքերդ, ազեղ ու նետ պող-
ւատիկ,
Ա՜խ, ինչո՞ւ ինձ ականջ չարիր, չէ՞ ասացի մի
երթար,
Վար դիր ղէնքդ, լսիր դու ինձ, ասի՝ դարձիր,
մի երթար,
Ջար ու անգութ վայրի եղան եաքից դարձիր, մի
երթար։
Ա՜խ, վայրի եզ, չար անասուն, ահաւոր ու ան-
գութ եզ,
Քո եղջիւրներն երկաթէ, դաժան ու սոսկալի եզ,
Իմ սիրուցը ինձ բաժնեցիր էդ Սիպանայ սէդ
գլխին,
Մինչև այսօր ով էր տեսել որսն սպանի որ-
սորդին,
Սիամանդօ, քեզ ասացի լսիր ինձի, մի երթար»։

Մարօն այլ ևս երգի բառերը չէր հասկա-
նում. պատկերները խառնուեցին, շփոթ առաջ

քերին նրա գլխում։ Մարօն տեսաւ, թէ ինչպէս բէդը մեծացաւ, մեծացաւ, մի ահաւոր եզան կերպարանք առաւ. եղջիւրներն ահագին, աչքերն արիւնով լցուած, կատաղի, ամենքը փախան, լերան լանջը դատարկուեց, միացին ինքը, Սիամանդօն և կատաղի եզը, որ ահաւոր մռնչիւնով եղջիւրները դէմ տուած վազեց Սիամանդօի վրայ։ «Փախիր, Սիամանդօ, կոչում էր Մարօն. փախիր», բայց ձայնը կոկորդից դուրս չէր գալիս. եզը վազեց, եղջիւրների վրայ բարձրացրեց Սիամանդօին, Մարօն մէկ էլ ճչաց, թոյլ հազիւ լսելի մի նուաղած ճիչ էր այն, և ընկաւ ուշաթափ։ Մուսօն լսեց այդ ճիչը, դարձեալ ձայնը դողաց, դարձեալ սիրտը փղձկաց. նա տեսաւ նոյն իսկ, թէ ինչպէս մի քանի քրդուհիներ վերցրին Մարօին, տարան վրանի ներսը։ Մարդկային ոյժից վեր չանքեր էր հարկաւոր, որ Մուսօն կարողանայ զսպել իրան, որ չը վեր կենայ վազի օգնութեան, որ չը ճչայ՝ «Մարօ» և նրան գրկի, բայց նա տարաւ այս անասելի փորձութիւնը. չանք արեց, շարունակեց երգը առանց սրբելու արտասուքի կաթիլները, որոնք կախուեցին նրա արտևանունքներից.

«Սև Սիպանայ սարի կատար կարծր ժայռ է ու
մացառ,
Ցուրտ քամի է փչում վերից և անցնում է սա-
րից սար,
Սիամանդօ, տուր ինձ մի ճար, մի ճանապարհ՝
քեզ մօտ գամ,

Ծոյց տուր շուտով ինձ ճանապարհ՝ հասնեմ քեզ հետ հոգի տամ։

Առէք փայտատ և թի բերէք, փորէք խորին գերեզման,

Խըջէզարէն, Սիամանդոն թաղէք մի տեղ անբաժան։

Երգիչը վերջացրեց իր երգը. նոյն իսկ Բէգն զգացուեց. տիրեց ընդհանուր լռութիւն։

—Կուռո Ավգ՛, ասաց վերջապէս բէգը, ինձ այստեղ, լաւ, ինձ իմ. տանը, գիշերային պահապան եղիր վրանիս Մաւօի հետ, քեզ զաւակիս պէս կը պահեմ, դու կը շրջես վրանի շուրջը, կ՛երգես քո սրտառուչ երգերը, և դրանց ձայնով մենք հանգիստ կ՛առնենք։ Համաձա՞յն ես, լաւ։

Այս առաջարկութեան վրայ Մուսօի ուրախութեանը չափ չը մնաց։ Արդէն առաջին րոպէից, երբ նա տեսաւ Մարօին, սկսեց հնարներ մտածել Մարօի մօտ մնալ, որ եթէ չը կարողանայ ազատել նրան, գոնէ տանջուի նրա հետ, եթէ չը խօսի հետը, գոնէ հեռուից տեսնի նրա պատկերը, այրուի նրա սիրով և այստեղ նրան մօտիկ՝ հոգին փչի։ Մուսօն շտապեց յայտնել իր համաձայնութիւնը։

—Ծառադ եմ, տէր, ասաց նա, ինձ մի կտոր հաց է պէտք, այն էլ քո օջաղի յարկի տակ կը ստանամ, էլ ինչո՞ւ չը համաձայնեմ։ Ո՞ւր գնամ այսուհետև, տէր, երբ ամեն բան կորցրի. վաթանից դուրս ամեն տեղ մարդու համար վաթան է, օջաղից դուրս, ամեն օջաղ մարդու համար մի օջաղ է։

Եւ Ավգօ-Մուսօն ճնաց Հիւանի բէգի տանը որպէս նրա վրանի գիշերային պահապան Մըսօին ընկեր։

VI

Քնած է աշխարհը։ Սիպանայ սարի վրայ էլ խաղաղութիւն է տիրում. ախտեղ էլ մարդիկ քնած են։ Գիշեր է. մէկ երկինքն է արթուն, նրա բիւրաւոր փայլուն աչքերն աստղերի ձևով թարթում են և սիրով նայում քնած երկրին։ Գիշերային հովը խաղում է խոտերի և ծաղիկների վրայ այնքան մեղմութեամբ, այնպէս քնքշութեամբ, որ ասես նրանց ականջներին փսփսալով օրօրներ է ասում՝ որ խաղաղ ու հանգիստ քնեն գով գիշերուայ գրկում։ Այս ու այն կողմից, այս ու այն սարալանջից լսւում է խոտոչիւն, այս ու այն սարալանջից լսւում է լեռնային ջրերի կարկաչիւնը, միշտ միևնոյնպէս միշտ դուրեկան։ Հեռուից՝ գիշերային հովի թեւերի վրայով քրդական սրնգի մելամաղձոտ, վշտոտ ձայնն է գալիս. ո՞վ գիտէ, ո՞ր ձորում, ո՞ր դարի վրայ հովիւը հնչում է մակաղած ոչխարներին և իր քունն ու միայնութեան ձանձրոյթը փարատելու համար ածում է իր աղուաձայն շուխին։ Ե՛ւ գիշերային հովիկը, և՛ ջրերի անընդհատ կարկաչիւնը, և՛ սրնգի տխուր հնչիւնները այնքան ներդաշնակ են իրար հետ, այնքան պատշաճ լեռնային գիշերին. դրանք բոլորն էլ վայ-

բենի աշխարհի զաւակները, նրա անբաժան մասերն են։

Հիւանի-բէգի օբան էլ քնած է։ Խաւարի մէջ, ինչպէս մութ կէտեր, հազիւ ծրագրուող սև-սև վրաններից ձայն-ծպտուն չի լսւում, նրանց մէջ իշխում է խաւարն ու խոր քնի լռութիւնը։ Վրանների առաջ շնթռկած ահագին գամփռներից ոմանք մրափած են դունչները թաթերի մէջ առած, ոմանք էլ ուշադիր ականջ են դնում ամեն մի շշուկի, ամեն մի ձայնի, և երբ իրանց տիրասիրական զգացմունքները վիրաւորող որևէ կասկածաւոր ձայն են լսում, միահամուռ հաչոցով վեր են ցատկում և կորչում խաւարի մէջ՝ աղմկելով լեռնային դիշերուայ խաղաղութիւնը. այդ ժամանակ վրանների առաջ հանդարտ ու անշարժ կանգնած կամ պառկած ձիերն ու միւս անասունները բարձրացնում են իրանց գլուխները, սրում են ականջները, որևէ կասկածաւոր ձայն կամ շշուկ որսալու համար, չռում են աչքերը՝ աշխատելով խաւարի մէջ որևէ սուրբ որոշել, որևէ շարժուն, վտանգաւոր կէտ նշմարել։

Նրանց անհանգստութիւնն ի զուր չէ, բնազդը նրանց չի դաւաճանում. ահաւոր է լեռնային դիշերը։ Ո՛վ գիտէ, այնտեղ՝ ձորում, դէպի ուր վազեցին զգոյշ շները, կամ այն ժայռերի մէջ, այն լեռան կատարին ինչ գազան է թափառում՝ յարմար ժամանակի սպասելով իր որսը ճանկելու համար։

Մազէ վրանը դիշերային չարիքի դէմ կռուելու միջոց չունի, նա հազիւ է կարողանում իր տիրոջը պաշտպանել անձրևից. մարդն այդտեղ իր ու իրայինների կեանքը ճակատագրի խնամքին և իր շների զգաստութեանն է յանձնում։ Բայց Հիւանի-բէգն աւելի զգաստ է և աւելի զգոյշ, քան սովորական մահկանացուները, և ահա խաւարն իջնելուն պէս, բացի բազմաթիւ շներից, նրա թանկագին կեանքի վրայ հսկում են նաև երկու մարդ պահապանները։ Նրանցից մինը դաղաքայլ պտոյտներ է գործում վրանի շուրջը, մեղքի ընդ մեղքի պոռալով՝ «հայ-հօյ»։ Դա Մըսմօն է։ Վրանի առաջ՝ բէգի ննջարանին բոլորովին մօտիկ նստած է մի վայելչահասակ քիւրդ, որ ոտքից ցգլուխ զինուած է. նա երգում է քաղցր ձայնով, որպէսզի իր տէրը և նրա քնքոյշ խանումները հանգիստ քուն առնեն վրանի տակ. այդ երգիչ պահապանը Աւդօ-Մուսօն է։ Նա ժամանակ առ ժամանակ ընդհատում է իր երգն ու ցած ձայնով հարցնում.

— Աղա, տիւ ռազայի՞ (տէր, դու քնած ես)։

—Նա, լաօ, նա. բեժա, բեժա—(ոչ գաւակս, ոչ, տսա տսա)։

Եւ Մուսօն շարունակում է իր երգը. անցնում է դարձեալ մի քառորդ և աւելի ժամ, պահապանը կրկին ընդհատում է իր երգը և հարցնում.

—Աղա, տիւ ռազայի՞։

Բայց այս անգամ պատասխանի փոխարէն

երգիչը լռում է վրանի խորքից իր տիրոջ խրոխտ ձայնը: Եւ արդարև բէդը քնեց ահորժելի երգերի ազդեցութեան տակ: Երգիչ պահապանը վերկացաւ դէպի իր ընկերը դիմեց: Նրանք սկսեցին միասին դանդաղ քայլերով պտոյտներ գործել վրանի շուրջը: Լուռ էին. լուռ էր և շրջակայքը: Յանկարծ ընդհանուր խաղաղութիւնը վրդովուեց մի սուր, երկար ու անախորժ ձայնից. դա մի գայլ էր, որի չարագուշակ, սարսեցուցիչ ոռնոցը անցաւ քնած լեռների և ձորերի վրայով. շների ամբողջ մի վոհմակ կատաղի հաչոցով դէպի նոյն կողմը դիմեց. «հայ-հօյ» ձայն տուեց Մուսաօն: Կրկին լռեցին ամենքը, կրկին խաղաղութիւն տիրեց. պահապանները շարունակեցին իրանց միակերպ պտոյտները: Մսաօն սկսեց ինչ-որ ուրախ եղանակ մռմռալ. Մուսաօն լուռ էր: Ընկերը նրա երեսին նայեց փորձող հայեացքով, խաւարը չէր թողնում տեսնել ընկերոջ դէմքը, բայց համոզուած էր, որ նա չափազանց տխուր է, այդքան վշտոտ, տխուր երգեր, անշուշտ նա մի շատ մեծ ցաւ ունի: Բարի քիւրդը ցաւակցաբար էր նայում իր ընկերոջը: Նա վճռեց խօսեցնել և այդպիսով հանել նրան ծանր մտատանջութիւնից.

—Լսեցիր այն ձայնը, բրա, ասաց Մսաօն:

—Ինչ ձայն, Մսաօ:

—Այն՝ որ քիչ առաջ լսուեց դիմացի լեռան վրայից:

—Գայլի ոռնոցը:

—Այո, գայլի ոռնոցը. դա մի զարմանալի գայլ է, շարունակեց Մսաօն, մի շաբաթ առաջ նրա ընկերոջը մենք գնդակահար արինք հէնց այնտեղ, և ահա այդ անիծածը ամեն գիշեր որոշ ժամին գալիս, կանգնում է ընկերոջ սպանուած տեղը և ոռնում այդպէս զարհուրելի ձայնով: Ուղիղն ասեմ՝ ես վախ ասած բանը չը գիտեմ, գայլից, գազանից որ ամենևին երկիւղ չունեմ, բայց այդ գայլի ոռնոցը սարսափեցնում է ինձ: Ինչ է ուզում մեզանից այդ գազանը:

—Վրէժ:

—Վրէժ:

—Այո, վրէժ, իր ընկերոջ վրէժը:

—Ինչ ես ասում, Աւգօ. գայլ ու վրէժ, ով է լսել այդպիսի բան. նա խօմ մարդ չէ:

—Նա մարդից լաւ է, Մսաօ, գայլը մարդից լաւ է, ասաց Աւգօն յուզուած ձայնով և լռեց:

Մսաօն էլ լռեց: Ընկերը տարօրինակ էր: Այն ինչ ասաց. «գայլը մարդից լաւ է». ինչո՞ւ... Դարձեալ նրանք շարունակեցին պտոյտներ գործել, դարձեալ լսուեց գայլի ոռնոցն ու նրան յաջորդեց շների միահամուռ հաչոցը, ապա կրկին լռութիւն տիրեց: Լուռ էին ընկերները. առաջինը նորէն խօսեց Մսաօն.

—Լսիր, Աւգօ. ինչո՞ւ դու այդքան տխուր ես, բրա, այդ ինչ զարմանալի, ինչ ծանր վիշտ է քրքրում քո սիրտը:

—Բրա, ինչո՞ւ ես զարմանում. մի՞թէ մարդ կարող է ուրախ լինել, երբ իր անից տեղից

փախստական լինի և օտար աշխարհ ընկնի։ Ինչ-չի՞ս վրայ ուրախ լինեմ. տեսածը ինչպես էր ոռնում գայլը. սրտի ցավը կրակ է, Մստո, թող Աստուած թշնամուս չը տայ։

—Բայց քո վիշտն աւելի մեծ է թուում ինձ, քան թէ կարող է պատճառել մարդիս դաւիւրութիւնը. դու սիրած ունես։

—Հապա չունե՞մ. արունքը նրա համար եմ արել, Մստո. ընկերներիս հետ նրան փախցնելու գնացի, կռուի բռնուեցանք նրա ազգականների հետ և իմ գնդակը նրա եղբօրն սպանեց։ Կատրուէր ձեռքս, որ այդ գնդակը չարձակէի, այդ գնդակն եղաւ իմ դժբախտութեան պատճառը, օֆ, օֆ...

—Օ՛, Աւդօ, ցաւում եմ քեզ վրայ, բրա՛, սիրածիդ բաժանուելը ծանր բան է։ Խեղճ Մարօ. տեսնելիր ինչ էր անում, երբ նրան մենք փախցրինք։

—Ո՞ւմը, Մստո, ինչ Մարօ։

—Մարօին, ո՛ւմը, չե՞ս իմանում. չը տեսա՞ր բէգի սիրուն, չահել կնոջը, որ ուշաթափուեց, երբ դու երգում էիր «Սարէ-Սիպանէն». ախր նա ֆլայ է։ Անիծուի ճագօն, նա եկաւ լուր բերեց բէգին, թէ մի շատ սիրուն աղջկայ տեղ գիտե։ Ախ, Աւդօ, ես ինչքան ցաւեցի, երբ փախցնելու օրը ճագօն գնդակով տուեց մի ե-րիտասարդի վայր ձգեց. ասում էին որ Մարօի նշանածն էր, գժի պէս անգէն վազում էր մեղ վրայ։ Խեղճ աղջիկն ինչպես էր լալիս։ Օ՛, ա-

ոաջ այնքան սիրուն էր, հիմա շատ է մաշուել, գիշեր ցերեկ արտասո...

Մստօն խօսքը չը վերջացրեց և լռեց. Նա նկատեց, որ ընկերն սկսեց հեկեկալով լայ լինել, նա զգաց, որ իր նկարագրութեամբ ցաւեցրեց ընկերոջ սիրտը, ուստի փորձեց մխիթարել նրան.

—Գիտեմ, բրա՛, դու էլի քո սիրածին յիշեցիր, ինչ արած, երևի Աստծու կամքն է այդպէս եղել. ով գիտէ, գուցէ Նա նորէն ողորմի քեզ և դու կրկին տեսնես քո սրտի սիրածին։ Բաւական է արտասուես, եղբայր, լաւն այն է պահիր դու քնիր, մի փոքր հանգստացիր, ես մենակ կը հսկեմ, յետոյ կէս գիշերին քեզ կը զարթեցնեմ և ես կը պահեմ հանգստանալու։

Առաջարկութիւնը վատ չէր։

Մուսօն գլուխը մի քարի վրայ դրեց և աչքերը փակեց. բայց քունը չէր մօտենում։ Ինչպէս քնել... նրանից այնքան մօտիկ, միայն մի թափանցիկ պատի յետևում գտնուում էր նրա սիրոյ առարկան, այն սիրոյ, որի անարգանքն այժմ տեսնում էր իր աչքերով։ Նրա սրտում եռում էր վրէժխնդրութեան զայրոյթը։ Նա առաջ միայն երևակայում էր իր սիրելուն հասած անծայր թշուառութիւնը, նա երևակայում էր նրան որևէ գազանի պիղծ գրկի մէջ և այդ երևակայութիւնն անգամ նրա սիրտը կտոր-կտոր էր անում, իսկ հիմա... այժմ նա իր աչքերով տեսնում էր նախկին երևակայական սարսափելին։ Այնտեղ՝

այն վրանի մէջ այժմ տանջւում է իր Մարօն, իսկ ինքն տիպուած է նրան չօգնել և տանել այս բոլորը՛... Այդ մտքերը նրա հոգին ցաւեցնում էին, նրա գլուխը վառւում էր, փակած աչքերի կոպերն այրում էին իրար, նա օձից խայթուածի պէս թաւալւում էր սառն գետնի վրայ։ Անցան յաւիտենականութեան չափ երկար ժամեր։ Մատոն բազմաթիւ պատյանները գործեց և ամեն անգամ պառկած Մուսօի մօտից անցնելիս զգուշութեամբ ականջ էր դնում նրա շընչառութեանը, ասես համոզուելու համար՝ քնած է նա արդեօք, թէ արթուն։ Մուսօն իր ընկերոջ այդ հետաքրքրութիւնը նկատեց, նա զգաց որ ընկերն ինչ-որ անելիք ունի, ուստի վճռեց քնած ձևանալ և գաղտագողի կերպով հետևել նրան։ Բայց կամաց-կամաց թմրութեան նման մի բան եկաւ վրան, կոպերը ծանրացան. նա հազիւ էր լսում իր ընկերոջ՝ «հայ-հօյը» և ոռնաձայնը. Մուսօն կէս քուն՝ կէս արթուն էր։ Ահա նա լսում է վրանից մի խորհրդաւոր փրփրոցի ձայն, ահա ձայնը կամաց-կամաց սաստկանում է. մէկն ինչ-որ աղերսում, աղաչում է, արտասուում, դիմադրում է։ Օ՛, Մուսօն նոյն իսկ տեսնում է, թէ ինչպէս զգուելի բէգն իր աղտեղի շրթունքները մօտեցնում է Մարօի գունատ այտերին, մինչդեռ վերջինս Մուսօին կանչում է և ինչպէս է կանչում։ Ապա Մուսօն տեսնում է, թէ ինչպէս բէգը ձեռքը մեկնում և գրկում է Մարօին, իր գարշելի կրծքին սեղմում

այնպէս պինդ, այնպէս սաստիկ, որ թշուառ Մարօն թուլանում, ուշաթափւում է։ Սակայն այդքանով չի բաւականանում գազան բէգը. Մուսօն տեսնում է թէ նա ինչպէս... բայց նա այլևս չը կարողացաւ իրան զսպել և յանկարծ վեր ցատկեց տեղից կատաղած։

Նրա կիսաբուն աչքերին մի զարմանալի երևոյթ հանդիսացաւ, ինչպէս իր երազի շարունակութիւն. խաւարի մէջ նա նկատեց երկու մարդկային ստուերներ, որոնցից մէկը կին էր. նրան թուաց, որ այդ գոյզը ոչ այլ ոք է, բայց եթէ բէգն ու Մարօն. ուստի մերկացրեց իր սուրը և վազեց դէպի այն երկու ստուերները, որոնք մի վոքը խոյս տալով վրաններից կանգ առան նրա առաջ հէնց այն րոպէին, երբ Մուսօն պատրաստւեց հզօր ձեռքով իր սուրն իջեցնել նրանցից մէկի՝ տղամարդի գլխին։ Բայց նրա ձեռքը թուլացաւ, ցած ընկաւ, երբ յանկարծ լսեց սարսափած Մատօի հազիւ լսելի ձայնը.

—Եաման, Աւգօ, ի սէր Աստուծոյ, քո բախտն եմ ընկել, ես եմ, Մատօն եմ։

Ապշած Մուսօն իր ոտքերի տակ տեսաւ աղերսող Մատօին և մէկ էլ մի ուրիշին՝ մի կնոջ։

—Դո՛ւ ես, Մատօ. այս ինչ է նշանակում, ով է այս կինը, հարցրեց Մուսօն։

—Ձեմ աթի, Աւգօ. նախ երդուիր քո բախտով, երդուիր քո սիրուհու արևով, որ դու ծածուկ կը պահես լսածդ, այն ժամանակ ես քեզ

կ'ասեմ, թէ ով է այս կինը, ապա թէ ոչ, հարիւր տուր էլ սիրտս մխես, մի բառ չես լսի։

Մուսօն երդուեց։

Այն ժամանակ Մատօն ցած ձայնով նրան յայտնեց, թէ այդ կինը բէգի կանանցից մէկն է, որ վաղուց է, իրան է պատկանում, բէգին առելով առում է, և որ ամեն գիշեր այդ կնոջ հետ ինքը երանութեամբ լի ժամեր է անցկացնում և աւելացրեց.

—Աւդօ, ես էլ գիտեմ, որ շատ վտանգաւոր բան է, բայց ի՞նչ անեմ, չեմ կարողանում կատուել։ Ինչ էլ պատահելու լինի, ես իմ Յագալին չեմ թողնի։ Դու էլ սէր ունես և իմ սրտի ցաւը հասկանում ես։ Աւդօ, վտանգ եղիր ինձ վրայ և հաւատա ինձ, շարունակեց Մատօն, երբ կինը գաղտագողի կրկին վրանը մտաւ։ Քո լուութեան փոխարէն ամենածանր պարագաներում յոյս դիր իմ կատարեալ անձնուիրութեան վրայ. ես այսուհետև գլուխս անգամ չեմ խնայի քո հաւատարմութեան համար, եթէ ծածկես իմ գաղտնիքը։

Մուսօն կրկին և կրկին հանդիսաւոր խոստումն տուեց։ Հուսահատ էր։

Անցան այնուհետև մի քանի օրեր ու գիշերներ, երկիւղի և անհանգստութեան, յուսոյ և վտանգութեան երկար ու ձիգ ժամեր։ Մուսօն ու Մարօն տեսնուելու և փախուստի ծրագիրը կազմելու ոչ մի հնար չունեցան։ Երկուսն էլ գիշերներն անքուն, ցերեկները մտատանջութեամբ էին անցկացնում։ Յանկարծ մի անսպասելի և յաջող դիպուած պատահեց—Մատօն հիւանդացաւ և տուն դնաց։ Մուսօն մնաց մենակ վրանի պահապան։ Այս հանգամանքը գործի յաջողութեան համար յուսոյ մի նշոյլ փայլեցրեց Մուսօի սրտում. այժմ գոնէ առանց վկայի կարող էր գուցէ Մարօին տեսնել գիշերը։ Այդ դէպքի յաջորդ գիշերը Մուսօն երկար մտածեց։ Ուշ գիշեր էր, երբ նա հրացանին յենուած՝ նիրհեց։ Նրան արթնացրեց մի ձայն, որ իր իսկական անունն էր տալիս։ Մուսօն բոլոր մարմնով դողաց։ Ո՞վ կարող էր նրան կանչել իր իսկական անունով, եթէ ոչ Մարօն։ Նա ցատկեց և խելագարի պէս առաջ վազեց ձեռները տարածած, երբ տեսաւ իր առաջ մի կանացի կերպարանք։

—Մարօ...

—Սո՛ւս, խիստ կերպով շշնջաց խորհրդաւոր անձը, ես Մարօն չեմ, Յագալն եմ։ Լսի՛ր. Մուսօ, աւելորդ է ինձանից ծածկել, շարունակեց Յագալը, տեսնելով թէ ինչպէս Մուսօն շփոթուեց և յետ-յետ քաշուեց. ես ամեն ինչ գիտեմ, Մարօն պատմեց ինձ, մեր գաղտնիքը դու և Մարօն գիտէք, ձերն էլ՝ ես ու Մատօն. Մարօն իմ քոյրն է, Մատօն՝ քո եղբայրը։ Մի վախենար, վտանգ եղիր մեզ վրայ. Մատօն դիտմամբ է հիւանդ ձևացել ու հեռացել այստեղից։ Նա կամեցել է քեզ մենակ թողնել. վաղը գիշեր պատրաստ եղիր Մարօի հետ փախչելու համար, Մատօն այս սարի յետևում ձեզ սպասելիս կը

լինի. նա ձեզ կը տանի մեր սահմաններէն դուրս կը հեռացնի և կը վերադառնայ։

Ծագալն այս բոլորը շշուկով ասաց ու շտապով անյայտացաւ։ Մուսօն ճնաց ապշած ու շուարած. նա չը գիտէր հաւատալ իր աչքերին ու ականջներին, թէ այս բոլորը համարել մի խաբուսիկ երազ։ Բայց կամաց-կամաց նրա շփոթուած միտքը խաղաղուեց, իրերն ու պատահարները իրանց սովորական կերպարանքով ներկայացան նրան, կատարուածն իրողութիւն էր։ Ապա նա սկսեց նայել երկնքին. դիտել աստղերի ընթացքը անհանգստութեամբ ու անհամբերութեամբ։ Միակ բանը, որ այժմ նրան զբաղեցնում էր, դա այն էր, թէ ե՞րբ կը լուսանայ, որպէսզի հանի վերջապէս յաջորդ գիշերը։

Հասաւ վերջապէս ցանկալի և սարսափելի գիշերը։ Մուսօն հէնց նոր քնացրեց բէգին, վերկացաւ և սկսեց դանդաղ շրջաններ կատարել վրանի շուրջը։ Ժամանակ առ ժամանակ նա կանգ էր առնում և ուշադրութեամբ ականջ դնում. խոտերի խշխշոցը, քամու սօսափիւնը, անասունների փնչոցը, շների մռմռոցը, ձիերի դոփիւնը՝ բոլորը, բոլորը նրան ոտնաձայն էին թուում. նա սպասում էր Մարօին։ Նրա սիրտն այնպէս էր բաբախում, որ կարծես ուզում էր կրծքից դուրս թռչել. յուզմունքից ու անհամբերութիւնից հոգին այրւում էր։ Երկար սպասեց. յանկարծ նրա մէջ մի ծանր կասկած առաջ եկաւ, թէ մի գուցէ բէգը գիտէ իր դիտաւորութիւնը և դիտմամբ

է քնած ձեւանում, որ աւելի սարսափելի լինի պատրաստուած թակարդը, թէ Ծագալը մի նենգաւոր դաւաճան է, որ խաբել է Մարօին և մի զարհուրելի դաւադրութիւն կազմել։ Գայլը լեռան վրայ կրկին ոռնաց. Մուսօն ցնցուեց. «վրէժ», մտածեց նա, ինչ որ երէկ ասել էր Մատօին. վրէժ է կանչում գայլը. չը մոռնա՞լ արդեօք վրանը, մի-մի հարուածով խողխողել և՛ բէգին, և՛ դաւաճան Ծագալին, և՛ Մարօին, որ ազատուի այս դժոխային վիճակից, և ապա վերջ տալ նաև իր սեփական կեանքին...։ Նա համարեա մօտ էր իրագործելու իր սարսափելի մտադրութիւնը, նա նոյնիսկ մօտեցաւ վրանի դռանը, բայց կանգ առաւ, սառաւռւ անցաւ մարմնով. խողխողել Մարօին... ձեռքը կը բարձրանա՞յ... Նա մի փոքր մտածեց, մէկ էլ ուշադրութեամբ ականջ դրեց, բէգի խռմփոցը շարունակւում էր. ո՛չ մի կասկած չը կար, որ նա քնած է։ Ո՛չ, դաւադրութիւն լինել չի կարող, իր երևակայութիւնն է վախեցնում իրան։ Եւ Մուսօն վճռեց էլի սպասել... Նրան թւում էր, թէ գիշերուայ շատ մասն անցկացաւ, թէ այլևս հապիւ կարելի լինի հեռանալ վտանգաւոր վայրերից մինչև լուսաբաց, նա կարծում էր թէ տասնեակ ժամեր անցկացան. անհամբերութեամբ երկնքին նայեց, յայտնի աստղերն ու աստեղախմբերը դեռ արևելքումն էին։ Մի րոպէ նա նոյնիսկ մտածեց, թէ մի գուցէ Մարօի քունը տանի և թանկագին ժամանակն անցնի. բայց իսկոյն զգաց այդ են-

թագրութեան բոլոր անհեթեթութիւնը. ազատութեան սպասող թուչնակը բաց վանդակի դռան առաջ կը քնի՞... Մարօն այդ դիշեր քնել չէը կարող։

Մինչ այդ մտքերը պաշարել էին նրան, յանկարծ վրանի մի եզրը բարձրացաւ, երկու ստուեր դուրս սողացին այնտեղից օձի զգուշութեամբ։ Շատ ժամանակ հարկաւոր չեղաւ, որ Մուսօն ճանաչէը Խազալին ու Մարօին։ Երկու սիրահարները անկարող եղան նոյնիսկ մի բառ արտասանել. չափազանց յուզմունքը նրանց լեզուները կաշկանդեց, նրանք միայն գրկախառնուեցին և մարեցին։ Եթէ մօտները կանգնած Խազալը նրանց ուշքի չը բերէը, ով գիտէ, որքան ժամանակ այդպէս պիտի մնային։

—Շո՛ւտ արէք, ասաց բարի քրդուհին, իրար սիրելու ժամանակ կ՛ունենաք, այժմ շտապել է հարկաւոր։

Մարօն թողեց Մուսօին, Խազալի գիրկն ընկաւ, նրանք համբուրուեցին քոյրերի պէս։ Նրանք որքան մխիթարել, սփոփել էին իրար փոխադարձաբար։ Երկու սիրահարները փորձեցին շարժուել, յանկարծ լսուեց գայլի ոռնոցը, Մուսօն կանգ առաւ. «վրէժ», անցաւ նրա գլխով։

—Խազա՛լ, ասաց նա, բայց իմ այսքան անարգանքը ես թողնում եմ առանց վրէժխնդրութեան և այդ միմիայն քեզ համար։

—Վրէժը սուրբ է և ազամարդի գործ, դու ազամարդ ես, պատասխանեց Խազալը և նրա աչքերը վառուեցին խաւարի մէջ կատաղութեան կրակով։

—Բայց նա քո ամուսինն է և ես քեզ պարտական եմ։

—Նա մուսուլման է, իսկ ես եզիդի. նա իմ հօրն ու եղբօրն սպանեց, նա խլեց ինձ իմ սիրականից, նա իմ ամուսինը չէ, իմ դահիճն է. իմ ամուսինը Մատօն է, իսկ բէգը իմ արնպարտն է. օ, եթէ իմ այս ձեռքը չը դողար...

Մուսօին էլ հէնց այդ խոստովանութիւնն էր հարկաւոր. բէգը Խազալի արնպարտն էր, չէ որ նա իր էլ արնպարտն էր. չէ՞ որ նոյնիսկ գայլը ահաւոր ոռնոցով վրէժ է գոռում. մի՞թէ ինքն աւելի վատ է, քան գայլը, որ այս գազանին հանգիստ թողնի, իր կրած անարգանքը՝ անպատիժ։ Այս մտքերը վայրկենապէս անցան նրա գլխով և նա մերկացրած սուրը ձեռքին վրանը մտաւ։ Բէգը շարունակում էր խռմփոցով քնել։ Վրանում թեթև, հազիւ լսելի շշուկ բարձրացաւ, պաղ երկաթի քսուց լսուեց, կարուած կոկորդը խռռաց, բէգը մի քանի ցնցում գործեց, թրջերոտաց իր արեան մէջ և ամեն ինչ վերջացաւ։

—Վերջացա՛ւ, հարցրեց Խազալը, երբ Մուսօն դուրս եկաւ։

—Վերջացաւ, կարճ կերպով պատասխանեց Մուսօն։

Վայրենի քրդուհին մօտեցաւ և համբուրեց այն ձեռքը, որով լուծուեց իր վրէժը։

—Գնանք, ասաց Խազալը, այժմ մենք էլ

ձեզ հետ. մենք էլ չենք կարող այստեղ մնալ, Մատօն էլ ինձ հետ կը վախչի։

Փախստականները անյայտացան խաւարի մէջ։ Մատօն ու Խազալը դէպի Բարդողեան լեռները, դէպի Ռուսաստան դիմեցին, իսկ Մարօն ու Մուսօն դէպի Գ... գիւղը։

Լուսացաւ։ Իրարանցումն ընկաւ ամբողջ էլիաթի մէջ. այսպիսի յանդգնութիւն մինչև այժմ ոչ ոք չէր լսել, բեգի երկու պահապանները փախցրել էին նրա երկու կանանցը՝ սպանելով բեգին։ Ամբողջ էլիաթը մի մարդի պէս ոտքի կանգնեց, ասես թէ ամենի ընտանեկան պատիւն էր անարգուած։ Աւարի գնացած ձիաւորները ամենքն էլ յետ եկան. հասաւ նաև բեգի եղբայրը՝ Բահլուլ-բեգը։ Ամենքն էլ գինուեցին և որսկան շների պէս լեռներն ընկան իրանց ազատի վրէժը լուծելու համար։ Էլիաթի պատիւը պէտք էր փրկել և այդ՝ միայն և եթ յանդուգն փախստականների արիւնով։ Ամենքն էլ համոզուած էին որ նրանք դէպի Ռուսաստան են դիմել, քանի որ անծանօթ երգիչն իրան անուանել էր Մօսկովի երկրից, ուսաի բոլորն էլ դէպի սահմանը, դէպի Բարդողեան լեռները դիմեցին։ Այս հանգամանքը փրկիչ հանդիսացաւ Մուսօի և Մարօի համար, բայց Խազալի և Մատօի կոտորեան պատճառ դարձաւ։ Հալածողները մի օր յետոյ կարողացան վերջիններին հասնել Բարդողեան լեռների ստորոտներում, Զար-Սալա սարից ոչ հեռու։ Մատօն յետ նայեց և տեսաւ

թշնամիների բազմութիւնը, կանգ առաւ, փախչելն անօգուտ համարելով։ Այժմ հարկաւոր էր կեանքը թանգ ծախել, որքան հնարաւոր է։ Եւ նա ճանապարհից դուրս գալով Խազալի հետ միասին մի ժայռի յետևում կանգնեց։ Սկսուեց մի անհաւասար կռիւ։ Մի կողմից թափւում էին տասնեակ գնդակներ և միւս կողմից միայն մի-մի հատ։ Խազալը տալիս էր փամփուշտը և Մըստօն անդադար կրակում էր։ Յանկարծ Մատօն գունատուեց, հրացանը ձեռքից վայր թողեց և կախուեց Խազալի ուսից։ Թշնամու մի գնդակ նրան կրծքից մահացու հարուած տուեց։ Խազալը գրկեց նրան, հանդարտ պառկեցրեց իր ոտների առաջ, հրացանը վերցրեց և առանց արիւնթիւնը կորցնելու՝ շարունակեց կրակել։ Վայրենի քրդուհին իր կատաղութեան մէջ կուում էր սերածի դիակի վրայ ինչպէս ընկերը կորցրած էգ վագր։ Նրա գնդակները զուր չէին անցնում։ Թշնամիները, երևում էր, նրան ողջ բռնելու ցանկութիւն ունէին, որովհետև խնայում էին, իսկ Խազալն անողոք էր։ Վերջապէս նրա ձեռքում մնաց միայն մի փամփուշտ. չը կամենալով ողջ-ողջ թշնամու ձեռքն ընկնել, նա վերջին փամփուշտով լցուած հրացանն իր կրծքին ուղղեց, հրացանը պայթեց և նա ընկաւ իր սիրածի դիակի վրայ անկենդան...

Այնտեղ, մենաւոր լեռների մէջ մինչև այժմ էլ անցաւորականը կարող է տեսնել երկու հողաթումբ, որոնց վրայ բուսել են վայրի վարդենու

անպաճոյճ թիւերը։ Ամայի է տեղը, մոռացուած, վայրենի՝ կանաչը քիչ է, աղբիւրներ չը կան։ Գարնան անձրևները միայն շրջակայքում բուսցնում են քանի մի խղճուկ խոտերի ծիլեր և վաղանցուկ ծաղիկներ։ Այդ ժամանակ հողաթմբերի վարդենիներն էլ կանաչում, կոկոնում են և առաջին արևի հետ բաց են անում մի քանի դուննատ վարդեր, որոնք սակայն ամրան առաջին շոգ օրերին թառամում են, կախուում և երեկոյեան թեթև հովը խլում է նրանց թերթիկները և քշում ցանում լեռներում ու ձորերում, ինչպէս մի անյայտ կեանքի տխուր պատմութիւն, կամ մոռացուած մի աւանդութիւն։ Մենաւոր վարդենիները ՚ին են դարձեալ անզարդ, դարձեալ սգաւոր ամայութեան մէջ՝ սպասելով յաջորդ գարնանը, որ նորից մի քանի խղճուկ կոկոններով զարդարեն իրանց ոստերը։ Այդ թիւերի ամեն մի ոստիկը, սակայն, ծածկուած է հնոտիների փաթոյթներով. ամեն մի անցուրդական սրբազան պարտք է համարում իր զգեստի որևէ մասը պոկել և աւելացնել այդ փաթոյթների վրայ։

Ո՞վքեր են պառկած այդ մոռացուած հողաթմբերի տակ, այդ տխուր, սգաւոր վարդենիների ստուերում, այդ չը գիտէ անցուրդականը, նրան այդ հարկաւոր էլ չէ. նա գիտէ միայն, որ սիրահարուած և իրանց բուռն սիրուն զոհ գնացած երկու վաստակաւորների գերեզմաններ են դրանք, որոնց պատմութիւնը ծածկուել է

ժամանակի հնութեան մէջ... Ինչ փոյթ, նրանց սիրոյ յիշատակը ապրում է տակաւին և այդ սիրոյ պաշտամունքն է, որ կատարում է անցուրդականը՝ իր զգեստի մի կտորը երկիւղածութեամբ վարդի թփի մի ոտին կապելով։

Այնտեղ են պառկած Մատօն ու Խազալը։

VII

Գիշեր էր։ Գ... գիւղը վաղուց ընկղմուել էր խոր քնի մէջ, խրճիթներում թագաւորում էր անթափանցիկ խաւարը։ Ատածուն միայն ապաւինած այդ ժողովուրդը մի կարճ հանգիստ էր վայելում, բայց վախեցած մանկան պէս կծկուած, կուչ եկած։ Միայն մի խրճիթում տակաւին պլպլում էր ձէթի ճրագը. աղօտ լոյս սփռելով իր չորս կողմը։ Այնտեղ մարդիկ էին երևում ուրուականների պէս։

Ծերունի Սհօն պառկած էր անկողնում պլուխն անզգայ կերպով բարձին ձգած, պաղած աչքերը դռանը յառած, ասես թէ սպասելով մէկին։ Նա հազիւ էր շունչ առնում։ Նրա գլխավերևը նոտած էր պառաւ Նուբարը և ժամանակ առ ժամանակ կանացի խնամոտ ձեռքով ուղղում էր հիւանդի վերմակը։ Սհօն կուռւում էր մահուան հետ. ինչ որ Մուսօն գնացել էր, կարծես թէ նրա սրտում յուսոյ մի չնչին նշոյլ էր ծագել, որ պահպանում էր նրա կեանքի վերջին զարկերը։ Ծանր էր բաժանուել այս աշխարհից՝ առանց

վերջին անգամ տեսնելու նրան, որ իր ամբողջ կեանքի խորհուրդը, էութիւնն էր կազմում:

Հեռու, գիւղի մի ծայրից լսուեց շան չարագուշակ ոռնոցը. Նուբարը երկիւղած նախապաշարմունքով խաչակնքեց իր երեսն ու հիւանդին. նա համոզուած էր, որ այդ ժամին գրողները թռչում են կոլի վրայ և շները տեսնում են նրանց և ոռնում: Նա անհանգստութեամբ և երկիւղով նայեց հերդկին և ապա հիւանդին, կարծես կամենալով որոշել, թէ որքան մօտ է վախճանը: Հիւանդն առաջուայ պէս անշարժ էր և աչքերն անթարթ յառել էր դռանը: Հաւը խօսեց, բակում ինչ-որ ոռնաձայները լսուեցին. շուտով դուռը ճռռալով բացուեց և շէմքի վրայ յայտնուեցին երկու մարդկային կերպարանքներ. պառաւը սաստիկ վախեցաւ: Ներս մտնողները մի փոքր էլ առաջացան. ճրագի լոյսը որքան և աղօտ էր, բայց և այնպէս պառաւը կարողացաւ ճանաչել Մուսօին և Մարօին: Նա վեր կացաւ և ճչալով դիմեց դէպի նրանց. չհմանալով նախ որին որին համբուրելի: Մարօն շտապով ազատուեց Նուբարի գըրկից և ընկաւ հօր անկողնի վրայ, լացը, սուգն ու աղմուկը լցրեց խրճիթը:

—Կուրանան աչքերս, գոչում էր Մարօն հօրը համբուրելով և ծնկներն ու կուրծքը ծեծելով, այս ինչ օրում եմ տեսնում քեզ. սև լիներ իմ ծնունդը. ես պէտք էի, ես...

Հիւանդն այս աղմուկից ու իրարանցումից

մի փոքր ուշքի եկաւ, քնից արթնացածի պէս աչքերն այս ու այն կողմը դարձրեց, ապա յառեց Մարօի դէմքին, յետոյ Մուսօին նայեց երկար, երկար, ասես աշխատելով իր թուլացած յիշողութեան մէջ զարթեցնել հին, թանկագին պատկերներ: Ճանաչեց նա արդեօք իր սիրելիներին, զգաց նրանց ներկայութիւնը թէ ոչ, այդ դժուար էր իմանալ, մի-այն նրա խոր ընկած աչքերը խոնաւացան, շրթունքները խաղացին. օրհնութի՞ւն, թէ՞ աղօթք էր մրմնջում իր սիրելիների համար, գուցէ և նզո՞վք՝ իր դահիճներին, որ թռաւ նրա այրուած սրտից դէպի երկինք, յետոյ նա աչքերը փակեց և ծնաց անշարժ:

—Ձեր ոռներին մատաղ, ասում էր Նուբարն արտասուելով. եկաք էլիլ. էս ջրատար հալիւորը վաղուց մեռած կը լիներ, եթէ աչքը ճանապարհին չը լիներ: Քանի՜-քանի անգամ հոգեվարձ եղաւ: Փառք Քեզ, Աստուած. եկաք հասաք, էս ջրատարն էլ իր փափագն առաւ, եկաք, որ իմ չորացած գլուխն էլ ձեր ձեռքով հողի մէջ դնէք:

Մարօն շարունակում էր անիծել իր օրը, շարունակում էր արտասուել և համբուրել հօր ճակատը:

Բայց Սհօն էլ չէր զգում. նրա վշտահար հոգին թռաւ դէպի երկինք՝ Ամենակալի աթոռի մօտ դնելու մարդկային վայրագութեան դէմ իր բողոքն ու արտի ցաւերը:

Մուսօն այդ ժամին բոլորովին այլ հոգով

էր բռնուած. շուտով կը լուսանար, հարևանները կը գան իրանց յարգանքը մատուցանելու հանգուցեալ Սհօին, Մարօին կը տեսնեն, նրա փախստեան լուրը կը տարածուի և կը հասնի քըրդերի ականջին: Պէտք էր այդ բանի առաջն առնել: Նուբարը հանգամանքներին անծանօթ էր, ուստի անհոգ էր, իսկ Մարօն այնպէս էր բռնուած սգով, որ նրա սրտում ուրիշ ոչ մի ըզգացմունքի տեղ չէր մնացել: Այդ ժամին եթէ նոյնիսկ նրան գային խողխողելու, նա զարձեալ մի ճիչ չէր արձակի և սիրով կը մեռնէր հօր թանկագին դիակի վրայ: Ինչ յոյսերով էր գալիս. հօրը ժամ առաջ տեսնելու ցանկութիւնը նրա մէջ այնքան հզօր էր, որ ամբողջ ճանապարհին այդ քնքոյշ էակը լռութեամբ տարաբոլոր դժուարութիւնները, վախ չը զգաց, չը դողաց այն մարդից, թէ իրանց յետևից անշուշտ ընկած կը լինեն և կարող են հասնել խողխողել: Այժմ հազիւ հասած, նա հօր սառը դիակն էր գրկում: Նրա վիշտն անապին էր:

Երկնակամարը պատող խաւարը կամաց-կամաց քաշւում էր. արշալոյսը մօտենում էր, նրա հետ միասին աճում էր նաև Մուսօի անհանգստութիւնը: Արդէն հովիւները դուրս քշեցին իրանց հօտերը դէպի դաշտ և սրինգների ձայներով թնդացրին շրջակայքը. անմ աքաղաղների ձայները աղմկալի ու յաճախակի դարձան: Այսօր՝ սովորականին հակառակ, լոյս աւետող այդ ձայները Մուսօին սարսափ էին պատճառում: Նա

կամացուկ դուրս եկաւ բակը. արևելքը մօտ էր շառագունելու, լուսոյ աստղը բարձրացել էր մի քանի հարիւր կանգուն, արշալոյսի հազիւ նկատելի նուրբ շողերը քնքոյշ գոյներով նոր ներկում էին արևելքը, էլի մի քանի րոպէ և կը հնչէր դիւղի եկեղեցու զանգակների ձայնը և բարեպաշտ դիւղացիք կը դիմէին Աստծու տունը:

Պէտք էր շտապել Մարօին մի տեղ թագցնել, մինչև որ Սհօի թաղումը կատարուէր. այնուհետև երկսով միասին պիտի սահմանն անցնէին և Ռուսաստան դիմէին: Ծրագիրը կազմուած էր դեռ ճանապարհին: Մուսօն կամացուկ ներս մտաւ, մօրը դուրս կանչեց. նրան յայտնեց իր անհանգստութիւնը և Մարօին թագցնելու անհրաժեշտութիւնը: Մօրը կարելի է ամեն ինչ հաւատալ: Նրանք ներս գնացին:

—Մարօ, ասաց պառաւը, նրա ուսին դիպչելով, լացով բան չի դառնայ, զաւակս, Աստծու կամքն էր, եղաւ, անցաւ: Վեր կաց մեր տուն գնանք, լոյսը բացւում է. այստեղ ախր մարդիկ կը գան...

Պառաւը միայն ակնարկեց վտանգի մասին: Մարօն բարձրացրեց գլուխը, նայեց երկար ու անորոշ հայեացքով իր արտասուաթոր աչքերով, կարծես չէր հասկանում թէ բանն ինչումն է. յանկարծ ծանր իրականութիւնն ըմբռնելով՝ նա իր հայեացքը դարձրեց դէպի Մուսօն հարցական եղանակով, նրանից էր սպասում վճռական խօսքը:

—Վէր կաց, Մարօ, ուրիշ ճար չը կայ. վրայ բերեց Մուսօն վճռական ձևով։

Մարօն համբուրեց հօրը, վերկացաւ և արտասուելով հետևեց Մուսօին։

Լոյսը բացուեց։ Հարևանները հաւաքուեցին Սհօենց տունն. ցաւակցութիւնն ընդհանուր էր։ Ամենքը գիտէին, որ խեղճ ծերունին աղջկայ կսկծից մեռաւ, բայց և այնպէս նրանց այդ համոզմունքը գայրոյթի արտայայտութեան պատճառ չէր դառնում։

—Ինչ սև օրեր քաշեց խեղճ Ջրատարը, ասաց մի ծերունի։

—Ջրատար... եանի նա՞ էր Ջրատարը, որ մեռաւ պրծաւ, թէ՞ մենք, որ շարունակում ենք ապրել, վրայ բերեց մի ուրիշ ծերունի։

—Մեր ճակատագիրն է, մի արտնջացէք. Աստուած կամեցել է, որ մենք սևով ծնունենք, լացով ապրենք, սգով գերեզման իջնենք, ասաց քահանան. ինչ անենք, թէ բեռը ծանր է, աւելի կը կռանանք, որ չընկնենք, հարուածը խիստ է՝ կը կծկենք մեր մարմինները, կը ձգձգենք մեր ջղերը, որ դիմանանք։ Մենք չենք բողոքի, այլ կ'արտասուենք, չենք նզովի, այլ կ'աղօթենք։ Ինչ որ այնտեղ՝ վերևում վճռուած է, այստեղ ներքևում փոխել չի կարելի։

«Հապար երանի քեզ», ասացին յուղարկաւորները մի-մի բուռը հող ձգելով Սհօի վրայ։ Ապա տուն վերադարձան, հոգու հացը կերան, ողորմին տուին. աէրտէրն էլ խօսեց հանդերձեալ կեանքի մասին, յորդորեց իր հօտին համբերել, տանել՝ վարձքը, հատուցումը երկնքում ստանալու համար։

«Երանի՛ սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին. երանի՛ որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից», ասաց տէրտէրը, և մարդիկ ցրուեցին այս սև աշխարհում, սև երկնքի տակ իրանց սև օրերը քաշելու համար՝ որ հանդերձեալ կեանքում վարձատրուեն։

VIII

Երեկոյ էր. արևը ծածկուեց. մի սովորական օր էր, այդ էլ անցաւ, միայն առաջին մառախուղի հետ Գ... գիւղի արևմուտքում մի հատիկ ամպ խառնուեց և ծնաց կանգնած։ Գիւղացիք այդպիսի ամպեր շատ էին տեսել, նոյնիսկ աւելի ահաւորներն ու մռայլները շատ էին պատել նրանց երկնակամարը, բայց և այնպէս այդ օրուայ ամպն ընդհանուրի ուշադրութիւնը գրաւեց։ Դա սարսափելի էր, և այն ոչ թէ իր մեծութեամբ կամ անօրինակութեամբ, այլ մի այնպիսի բանով, որ մարդիկ իրանց սրբոտերի խորքերում զգում, հասկանում էին, բայց բացատրել չէին կարող. «այդ ամպը չարագուշակ է», ահա թէ ինչ կարող էին ասել նրա մասին։

Եւ յիրաւի դա մի շանթալից ամպ էր, որ բնութեան մի մօտալուտ և ահաւոր խաղի համար էր բերում. վոթորկի նշաններ կային։

Կենդանական բնազդը փրկարար է։ Բնութեան սպառնալից պատրաստութիւնները մարդիկ շուտով հասկացան. այդ երեկոյ գիւղացիք սովորականից աւելի շուտ տուն քշեցին իրանց հօտերն ու նախիրները։ Հովիւները վտանգաւոր համարեցին բացօթեայ գիշերել, դաշտը վաղ դատարկուեց և ամենքն շտապեցին թռչունների պէս ժամ առաջ ծուառել իրանց խղճուկ խըրճիթներում։

Այդ օրը երեկոն վերջալոյս չունեցաւ, խաւարը շատ շուտ կոխեց երկիրը, կարծես բնութիւնն շտապում էր։ Փութկոտ խաւարի հետ եկաւ նաև մի սպառողական դրութիւն։ Ամեն մի արարած, ամեն մի տերև, ծաղկի իւրաքանչիւր թերթիկ, փոքրիկ միջատից սկսած մինչև մեծ կենդանիները, մինչև մարդը, նոյնիսկ աղբիւր ու առուակ, դաշտեր ու ձորեր, լեռներ, բլուրներ, ամենքը, ամենքը կարծես շունչները բռնած լուռ սպասում էին, թէ ինչ է լինելու, և ինչ որ լինելու էր սովորական չէր, ահաւոր էր։ Մութը բոլորովին իջաւ, վրայ հասաւ այն խաւար, շատ խաւար գիշերներից մէկը, որ բնութիւնն առանձին սիրով ընտրում է, որպէս իր անսանձ ոյժերի, իր սասանեցուցիչ տարերքների խօլական մրցութիւնների համար յարմարագոյն ժամանակ։

Համատարած լռութիւն էր, ոչ մի աղմուկ չէր խռովում բնութեան հանդիսաւոր խաղաղութիւնը, միայն հեռուհեռ սաստկացող քամին

էր, որ կարծես լեռների կուսական կատարներից շղթայազերծ եղած՝ փչում էր գիւղի խըրճիթների վրայ, աւելում, լիզում էր նրանց կոճղեղների վրայ, ցրիւ էր բերում նրա վրայ նաձև կառուրները, ցրիւ էր բերում նրա վրայ շարուած խոտերի դէզերը, և առաջ արշաւում մերթ կատաղի գազանի պէս մռնչալով, մերթ ցաւից տանջուող հսկայի պէս ահաւոր հառաչներ արձակելով և մերթ լալով ինչպէս անճար, անտիրական ազաւոր։

Ողջ երկնակամարը ծածկուեց, ոչ մի աստղ չէր պլպլում, կարծես նրանք էլ սարսափած փախան տուին անհունութեան խորքերը. միայն խոյս տուին անհունութեան խորքերը. միայն խաւարը ամպային քօղի տակ անհամակարգ խաւարը ամպային քօղի տակ անհամակարգ նալի խնամքով ծածկում էր այն ամենը, ինչ որ լուսոյ մի չնչին նշոյլ կարող էր կաթեցնել խաւար երկրի վրայ։ Միակ լոյսը՝ որ երբեմն մի վայրկենով յետ էր քաշում խաւարի մռայլ քօղը, կայծակն էր։ Ամբողջ բնութիւնը լցուած էր ինչ-որ անորոշ, սիրտ պատառող մռմռոցով, սաստկանում էին։

Գ... գիւղի փողոցներում ոչ ոք չէր երեւում. շներն անգամ լռել, կուչ են եկել այս ու այն դէզի տակ, այս ու այն դռան շէմքում։ Դրսում կենդանի շունչ չը կայ բացի երկու հոգուց, որոնք անձայն ու վշտաբեկ, թափառում են Գ... գիւղի գեղեցկութեան ու սարսափելի ժամին ինչ են փնտրում մեռելների աշխարհում. արդեօք ուշացած ճանապարհորդներ են, թէ

անտուն, անապաստան թշուառները, որոնք կենդանի մարդկանցից մերժուած, մեռելների մէջ են ապաստան վնտռում բնութեան արհաւիրքից. միզուցէ զայրացած ուրուականներ են, որոնք կենդանի ժամանակ անիրաւ աշխարհում իրանց նմանների ձեռքից խմել են դառնութեան բաժակը և վշտահար ու չարաչանչ փչել են իրանց վերջին շունչը՝ նզովքը շրթունքներին, իսկ այժմ վրէժխնդիր հոգով դուրս են սողացել իրանց յաւիտենական բնակարանից՝ չար աշխարհի սարսափն ու աւերածը հրճուանքով դիտելու համար։ Ո՛չ այս և ոչ այն, երկու կենդանի թշուառներ են նրանք, Մարօն ու Մուսօն, որոնք այդ դարհուրելի գիշերը փախչում են իրանց հայրենի աշխարհից՝ օտար երկնքի տակ ժամանակաւոր հանգիստ վնտռելու համար։

Նրանք դուրս եկան գիւղից խաւարն իջնելուն պէս, փոթորիկը նոր էր սկսուած. ճար չը կար, պէտք էր շտապել։ Նախորդ գիշեր Մարօն կարի վրայ ոտնաձայներ էր լսել. ով գիտէր, թէ ով էր և ինչեր կարող էին պատահել։ Նրանք չէին էլ վախենում փոթորկից, չէ որ թշուառները բնութեան արհաւիրք չը գիտեն։ Նրանք մարդկանցից էին վախենում, մարդկային չարութիւնը միշտ աւելի սոսկալի է, քան բնութեան արհաւիրքը։ Այսպիսի գիշերը ամենայարմարն էր մարդի չը հանդիպելու համար։ Եւ ինչ կար սարսափելու. երկնքի սևութիւնը, քամու կատաղութիւնը մի տխուր զուգադիպութիւն էր միայն

նրանց սրտերի վիճակի հետ։ Աւելի հեշտ է տարուում ցաւն ու վիշտը, երբ բնութիւնն էլ է սև հագնում, երբ նա էլ է սուգ անում։ Մաւարն էլ չարգելեց նրանց. Մուսօն ճանաչում էր ամեն մի քարը, ամեն մի թուփը, ամեն մի փոսն ու ժայռը. կայծակն էլ երբեմն լուսաւորում էր փախստականների ուղին, այդքանը բաւական էր Մուսօին։

Նրանք գերեզմանատուն մտան վերջին անգամ համբուրելու Սհօի գերեզմանը։ Մաւարի մէջ իր հեծկլտանքներն ու հառաչանքը քամու կատաղի ոռնոցին խառնելով՝ երկար արտասուում էր Մարօն, մինչդեռ Մուսօն նրա կողքին նրսած, մէկ նրան էր նայում և մէկ սև երկնքին՝ սպասելով փոթորկի մեղմանալուն, որ ճանապարհ ընկնեն։ Բայց փոթորիկը հէնց այսօր ասես դիտմամբ դադարելու միտք չունէր, բնութեան քաօսը շարունակւում էր. կատաղի քամին փչում էր անասելի թափով ու մռնչիւնով, իսկ սև երկինքը պատառ-պատառ էր լինում անընդհատ կայծակներով և ամպրոպի որոտը խլացնում էր տիեզերքը։

Գերեզմանատնից մի փոքր այն կողմը ձգտում էր վ... ծովակը իր ժայռոտ ափերի մէջ, որոնք յայտնի էին «Արնքար» անունով։ Ծովն էլ էր կատաղած, դողում էին Արնքարի ժայռերը։ Մաւարի մէջ լսւում էր ալիքների գոռոցը։ Ոչինչ չէր երևում, բայց կարծես բիւրաւոր ձև հսկաներ ծովի արձակ տարածութեան վրայ մրցու-

թիւն էին սկսել, խեղդուում էին իրար օրհասական այնպիսի հռնչիւն արձակելով, որից լեռները իրանց ժայռերով քիչ էր մնում պատռուէին, փուլ գային։

Մուսօն բնութեան այս բոլոր սարսափների տակ ճնշուած, մոռացել էր թէ ինչ է կատարուում շուրջը։ Յանկարծ անընդհատ որոտ ու կայծակի հետ սկսուեց անձրև։ Մուսօն նայեց Մարօին, որ հօր հողաթումբը գրկած, վեր չէր բարձրացնում գլուխը և կարծես նրա փոյթը չէր ոչ փոթորիկը և ոչ անձրևը։

—Վեր կաց, Մարօ ջան, ասաց Մուսօն անհանգիստ ձայնով. անձրևը թափուում է, գնանք այ այն ժայռերի տակ պատսպարուենք, թէ՛ անցնի անձրևը. ճանապարհ ընկնենք։

Մարօն լուռ էր և անշարժ։ Մուսօն մօտեցաւ, բռնեց նրա ձեռքից, բարձրացրեց և համարեա քաշ տուեց իր հետ։ Անձրևը սաստկանում էր։

Հազիւ մի քանի քայլ արած, նրանք երկրսով էլ սարսափած կանգ առան. նրանց թուաց, որ քամու ոռնոցի, ծովի շառաչի հետ միասին նաև մարդկային ձայներ են լսուում։ Ոչինչ չէր երեւում, բայց և՛ փոթորիկը, և՛ կայծակներն ու թափուող անձրևը, և՛ իրանց ծանր կացութիւնը մոռացած, նրանք մնացին սառած իրանց տեղերում, աշխատելով թանձր խաւարի մէջ որևէ ուուէր որոշել, կամ որևէ հասկանալի ձայն լսել. բայց լսուող աղաղակներն անորոշ և խաւարն

անթափանցիկ էր։ Մարօն թրջուած ու դողալով կպաւ Մուսօին։ Անցան էլի մի քանի սարսափելի րոպէներ և ահա ձայներն աւելի որոշ և աւելի հասկանալի դարձան—վայի և յուսահատ ողբի աղաղակներ էին դրանք։ Շուտով բոլորովին մօտիկ երևացին բազմաթիւ սուուերներ և քիչ յետոյ փախստականները տեսան իրանց շուրջը հաբևանների խառնիճաղանճ մի բազմութիւն՝ որ մերկ, որ ոտաբոբիկ, որ գլխաբաց, որն իր զաւակների հետ, որն առանց զաւակների, որն իր ամուսնուն կոչելիս, որն իր քրոջը, որը եղբօրը և ամենն էլ միասին անհնարին սարսափից խելագար վիճակի մէջ, առանց արածները քննելու՝ վազում էին դէպի ծովը։

—Փախէք, եկէն, գոռում էին այս ու այն կողմից։

—Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել, հարցրեց զարհուրած Մուսօն։

—Գեղը կարեցին։

Մուսօն ամեն ինչ հասկացաւ, ուրիշ հարցեր աւելորդ էին։

Գաղտնիքներ կան, որոնց ծածկելու համար ծովի անդունդներն անգամ քիչ են. եթէ սարերը փուլ բերես նրանց վրայ, ժայռերը կը ճչան, կը յայտնեն։ Հիւանի-բէգի սպանութեան և Մարօի ու Մուսօի փախստեան գաղտնիքն այդպիսինեբից էր։ Թափուած արիւնն այնքան թանգ էր Սիպանայ վրանաբնակ վայրենիների համար, որ նրանք դադար առնել չէին կարող, մինչև որ

նրա ամեն մի կաթիլի փոխարէն տասնեակ ան-
ձինք զոհ չը բերէին, փոյթ չէր նոյն իսկ, եթէ
զոհուողները անմեղներ էին. արիւն էր հարկա-
ւոր, տաք, կարմիր արիւն, առատ արիւն... Բէգն
էր սպանուած... Ինչ ասել էր Խազալի և
Մատօի մահը բէգի արեան թէկուզ մի կաթիլի
առաջ: Էլիաթը չէր սգում. այլ մոմռում էր
ինչպէս վիրաւոր գազան: Բէգի եղբայր Բահ-
լուլ-բէգը, որ այժմ էլիաթի պետն էր, մտածում
էր Մարօին և Աւգօին գտնել: Նա կատաղած էր
նաև Ճազօի դէմ. այդ անպիտանն էր սկիզբ դրել
այդ արիւնոտ գործին և բէգը հրամայեց կան-
չել Ճազօին:

—Լսիր, Ճազօ, քո բերած ֆլայ աղջիկը իմ
եղբօր մահուան պատճառ դարձաւ. եթէ շուտով
չը գտնես Մարօին և Աւգօին և իմ ձեռքը չը
յանձնես, քո արիւնը պիտի թափուի, ուղիղն
ասած՝ ես հէնց այժմ կը հրամայէի քեզ շնասա-
տակ անել, բայց դու դեռ ինձ հարկաւոր ես,
դու պէտք է գտնես նրանց:

—Տէր, Մարօն ֆլայ էր, մէթէ նրանց ամ-
բողջ գիւղը մի Մարօ չարժէ...

Ակնարկը հասկանալի էր. բայց այդ բէգն
արդէն մտածել էր, վրէժխնդրութեան ծրագրի
մի մասն էր այդ:

—Դա իմ բանն է, որոտաց բէգը, նախ Մա-
րօն ու Աւգօն:

Եւ Ճազօն դողալով հեռացաւ, որ կամ կա-
տարի բէգի պահանջը կամ, հակառակ դէպքում,

պղպեն առնի կորչի և էլ երբէք յետ չը դառնայ:

Բէգը որոշեց մինչև Ճազօի վերադարձը ան-
ձամբ գնալ և պատժել Գ... գիւղի ֆլաներին այն
պարզ, հասկանալի պատճառով՝ որ Մարօն, բէգի
սպանութեան այդ պատճառը ֆլայ էր և Գ...
գիւղացի. նա այնտեղ ազգականներ կ'ունենար:

Մարօի և Մուսօի դուրս գնալուց անմիջա-
պէս յետոյ Գ... գիւղը յարձակման ենթարկուեց:
Բահլուլ-բէգի հրոսակային խումբը յատկապէս
այսպիսի գիշեր էր ընտրել իր յարձակման
համար, որ բնակիչները փախուստ տալ չը կա-
րողանան: Աւազակները չորս կողմից գիւղը շըր-
ջապատեցին և կրակ տուին: Փոթորիկն օգնեց
նրանց արագ կատարելու պժգալի գործը. մինչև
որ անձրևը վրայ կը հասնէր, բոցերը քամու շնչով
բորբոքուած՝ կարճ ժամանակում լափեցին գիւղի
տների մեծ մասը, բնակիչները մասամբ կոտո-
րուեցին և մասամբ իրանց քնաթաթախ, մերկ
զաւակների ձեռքից բռնած փախան լեռները, մի
խումբ էլ դէպի ծովակը վազեց: Ահա այդ խմբին
պատահեցին Մուսօն ու Մարօն:

Դէպի ծովը վազող փախստականները յոյս
ունէին նաւակներով խոյս տալ, մի ազատարար
անկիւն հասնել. նրանց սարսափած միտքն ան-
կարող էր եղել հասկանալ, որ այս սարսափելի
փոթորկի ժամանակ անհնարին է ծով իջնել: Եւ
ոչ մի նաւակ էլ չը կար, քամին նրանց խլել էր
ափերից: Բազմութիւնը հաւաքուելով կանգ առաւ
Արնքարի վրայ սաստիկ անձրևի տակ: Իսկ նրանց

առաջ շարունակում էին շառաչել ծովի ալիքները, որոնք լեռնանում, բարձրանում էին վեր, ասես կամենալով երկնքին հասնել, ապա փուլ գալով վազում էին դէպի Արնքարի վրայ կծկուած թշուառները։ Եթէ էլի մի կէս ժամ երկարէր այդ սարսափելի կացութիւնը, երևի բազմութիւնը կամաւ ծովը կը թափուէր, բաւական էր միայն որ մի յուսահատ՝ առաջին օրինակը տար, կամ թշնամու ձիու առաջին դոփիւնը լսուէր։ Յանկարծ լսուեց մի զարմանալի ձայն այս բոլոր հառաչանքների, այս բոլոր վայերի մէջ, և այդ ձայնն ասում էր՝

—Մի վախեցէք։

Ամենքն էլ լսեցին, բայց ով կը հաւատար իր ականջներին. այնպիսի ձայն այդ սարսափելի ժամին... Ախր ինչպէս չը վախենան, փրկութիւն կա՛յ, ով է փրկիչը. երկինքը նրանց համար վատուց է ամուլ, ողորմութիւն չը կայ, մի՞թէ որևէ մահկանացու կարող էր փրկել նրանց, երբ բնութիւնն անգամ նրանց դէմ էր։ Ծովը և միմիայն ծովը կարող էր այնպէս որոտալ, միայն նա կարող էր ասել՝ «մի վախեցէք», որովհետև միայն նա բոլորի համար տեղ ունէր իր ատրը ծոցում։ Այսպէս էին մտածում վախատականները. սակայն ձայնը կրկնուեց և այս անգամ աւելի համարձակ, աւելի բարձր.

—Մի վախեցէք, չուան շինեցէք, չուան տուէք, գոռում էր Մուսօն. այ մարդիկ, դուք ինչ էք սառել, ողամարդ չէք. կապեցէք իրար՝

ինչ որ ունէք վրաներդ և մի չուան տուէք, ի սէր Աստուծոյ, համարեա յուսահատ կատաղութեամբ գոռում էր Մուսօն, տեսնելով որ թանկագին ժամանակն անցնում է, իսկ շշկլուած ու սարսափած բազմութիւնը չի էլ մտածում իր փրկութեան համար որևէ բան ձեռնարկել. Մուսօն համոզուած էր, որ քրդերը ուր որ է՝ վրայ կը հասնեն, իսկ փախչել անհնարին է, ուստի աղերսում էր մի չուան տալ իրան։

Բարեբախտաբար Մուսօի վերջին կանչն այնպէս հզօր էր ու համոզիչ, որ ողամարդիկ առանց նրա նպատակն իմանալու սկսեցին իրանց զգեստներից ու գօտիներից մի պարան կազմել։ Մուսօն ինչ պիտի անէր պարանը։

Ծովափնեայ ժայռերի մէջ խաչերով ու յիշատակարաններով քանդակուած բազմաթիւ այրեր կային։ Դրանք նախնի դարերի քրիստոնէութեան հալածանքների ժամանակ ծառայել էին իբրև քրիստոնեաների ապաստարաններ և ազօթատեղեր, ուր Փրկչի առաքեալների առաջին հետևողները պաշտել էին իրանց Յիսուսին և Նրա խաչը. իսկ այնուհետև աւելի ազատ դարերում աշխարհից խոյս տուած կուսակրօնները այդտեղ էին ապաստանել և այդտեղից դէպի երկինք ուղղել աշխարհի խաղաղութեան և շինութեան համար իրանց աղօթքներն ու մրմունջները։ Դարերի ընթացքում ծովի ջուրը կամաց կամաց սրանցից շատերն իսպառ ծածկել էր, շատերն էլ դեռ երևում էին ջրին մօտիկ, կամ

կիսով չափ ջրով լցուած։ Այսպիսի մի այր էլ գտնուում էր հէնց Արնքաբի տակ, որի վրայ խմբուել էին փախստականները. այդ գիտէին համարեա ամենքը, բայց Մուսօն չիշեց առաջինը։ Մի ժայռ ծովափի ընդհանուր մակերևոյթից դուրս ցցուելով կազմել էր մի հսկայական պատշգամբ հէնց այրի անցքի վրայ, այնպէս որ վերից անցքը չէր երևում և անհնարին էր կարծել անգամ թէ այնտեղ՝ ժայռի տակ այրի մուտք կայ։ Ջուրը հաւասարուել էր համարեա այրի բերանին և այնտեղ ներս մտնելու համար անհրաժեշտ էր գոնէ միքանի քայլ ջրի մէջ գնալ։ Այրի ներքին աւելի բարձր էր, քան թէ անցքը, ջուրն այնտեղ թափանցել չէր կարողանում։ Նաւակով միայն կարելի էր մօտենալ այդ այրին, բայց անծանօթ մարդը հեռուից կը դժուարանար որոշել այրի մուտքը, իսկ վերի ժայռերի միջից իջնել համարեա անհնարին էր։ Գ...եցի երիտասարդները բազմաթիւ փորձեր էին արել, և միայն ճարպիկ ու դիւրաշարժ Մուսօին էր յաջողուել ժայռերը չանգռելով իջնել և այրին հասնել։ Եւ ահա այժմ Մուսօն չիշեց նոյն այրը և որոշեց փախստականներին այնտեղ պատսպարել։

Փոթորիկը դեռ շարունակւում էր. ծովն ու երկինքը իրար հետ միացան անձրևի ջրով։ Բայց Մուսօն չը կար, միայն Մարօն նկատեց, թէ նա ինչպէս ծածկուեց ժայռերի մէջ։ Քիչ յետոյ Արնքաբի տակից լսուեց Մուսօի հզօր ձայնը.

—Պարանով կախեցէք մէկին։

Այժմ միայն ամենքն էլ հասկացան, թէ ինչու էր Մուսօն պարան ուզում։ Ամենքն էլ սրբատապնդուեցին, երբ առաջինը մօտեցաւ Մարօն և ցած կախուեց։ Այնուհետև սկսեցին կախուել և ուրիշները, աշխատելով նոյնիսկ մէկը միւսից առաջ ընկնել. պարանը փրկում էր նրանց։ Եւ այսպէս մէկիկ-մէկիկ կախուեցին մինչև վերջին մարդը, ապա Մուսօն վեր բարձրանալով ցած իջեցրեց վերջինին և ինքն էլ պարանը հաւաքելով նոյն ճանապարհով ցած գնաց այրը։

Արշալոյսը մօտ էր. փոթորիկը դադարում էր։

IX

Լուսացաւ. ծովը խաղաղուեց. երկինքը պարզուեց. արեգակը կրկին հաշտ կերպով թափեց երկրի վրայ իր կենսատու շողերը, ջրանցից միքանիսն էլ ջրի խաղաղ մակերևոյթի վրայից անդրադառնալով, կարծես կարեկցութիւնից դրդուած, այրի նեղ անցքից մտան և լուսաւորեցին այրը։ Այնտեղ ապաստանածները միայն այժմ իրար նայեցին, իրար ճանաչեցին։ Այստեղ էր Մուսօն, Մարօն, Կուզիկենց Մխօն, Ջրատարենց Գալօն, Ջուլհակենց Մարտօն, Խողկոտենց Մանօն, Բոզօենց Շաւէշը, Մխիկենց Յովակը, այստեղ էր և քաչալ Սրքէն։ Ամանք իրանց ամբողջ ընտանիքով, ամանք ընտանիքի մի մասով միայն, մանր ու մեծ ընդամենը երեսուն հոգի։ Բոլորի հառաչանքներից ու լացից այրն

ասես անքուն էր ժայռերի տակ: Մարօն այժմ վիճակակից էր բոլորին. նա պատմեց իր գըլխի անցքը: Սրքէն գաղտագողի հայեացքներ էր գցում Մարօի վրայ, նրան թւում էր, թէ զոհը գիտէ, թէ ո՛վ էր իր դահիճը: Այժմ Սրքէն հասկացաւ, թէ ինչո՛ւ այնքան ժամանակ Մուսօն բացակայ էր գիւղից. բայց ինչպէս էր յաջողեցրել նրան խլել բէգի ձեռքից. այդ էր նրան անյայտ: Մարօն մանրամասնութիւնները չը հաղորդեց, նա ասաց միայն, որ ինքը փախաւ:

Պաշարուածները դրսից ոչ մի տեղեկութիւն չունէին, նրանք զուրկ էին նաև պաշարից: Մուսօի առաջարկութեամբ տղամարդիկ մի կարճ խորհրդակցութիւն կատարեցին և վճռեցին գիշերը հասնելուն պէս երկու հոգի վիճակով ընտրել, որ այրից դուրս գան և թէկուզ մահու գնով դրսից պաշար և տեղեկութիւն բերեն: Հաց ճարելու մասին մտածելն աւելորդ էր, գնացողները պիտի աշխատէին հորերից ցորեն կամ նոյն իսկ գարի, կորեկ հանել բերել, որպէսզի պաշարուածները մի կերպ գոյութիւնները քաշ տան, մինչև որ թշնամիները հեռանան շրջակայքից և նրանք կարողանան դուրս գալ: Պաշարի գնալու պարագից ազատ պիտի մնար միայն Մուսօն, որովհետև եթէ նրան որևէ վտանգ պատահելու լինէր, պաշարուածներն անկարող պիտի լինէին այրից դուրս գալ:

Հասաւ գիշերը: Վիճակը ձգուեց և ընկաւ Զրատարենց Գալօին և քաչալ Սրքէին. Մուսօն

մօտեցաւ և ձեռքը Սրքէի ուսին դնելով՝ ասաց.

—Հը՛, Սրքէ, պատրաստուիր, որ շուտով պաշարի պիտի գնաս:

—Պաշարի՛... ասաց Սրքէն ծործորակը քրքելով, երթալուն՝ կ'երթամ, բայց երբ վերադառնամ, ինչպէս իմանեմ այրը:

—Ես կը բարձրանամ և ձեզ ցած կը կախեմ, հէնց որ դուք երեք քար ձգեք ծովը:

—Ախր ես գիւղում ցորնի հորի տեղ չը գիտեմ, շարունակեց պատճառաբանել Սրքէն:

—Գալօն գիտէ, նա ցոյց կը տայ, պատասխանեցին այս ու այն կողմից:

—Աստուած է վկայ, թէ փախչելու լինինք, ես չեմ ազատուի, ուրբս ցաւում է:

—Հը՛, մեռի հաճ, քաչալ նզովուած, որոտաց այս անգամ Գալօն այրի մի մութ անկիւնից. երևում էր որ նա հետևում էր այս խօսակցութեանը առանձին սրտնեղութեամբ, որ յաստուկ է վշտերի տէր մարդկանց:

Սրքէն զգաց, որ եթէ էլի մի րոպէ շարունակի իր երկչոտ պատճառաբանութիւնները, այդ մռայլ Գալօն նրան ծովը կը գցի, ուստի լռեց: Երբ Մուսօն ժայռի կատարից ցած կախեց պարանը, Սրքէն մահու դատապարտուածի պէս կախ ընկաւ պարանից և վեր բարձրացաւ: Բարձրացաւ նաև Գալօն: Մուսօն ցած իջաւ, իսկ նրանք գնացին:

Սկզբում նրանք արագ-արագ էին գնում, բայց երբ մօտեցան գիւղին, աւելի ծանրացրին իրանց քայլերը և վերջապէս կանգ առան: Հեռու

երևում էր մի լուսաւորուած վրան, երևի Բահլուլ-բէգի վրանն էր. բարբարոսները դեռ չէին վերջացրել թալանը: Գալօն ու Սրքէն զգուշութեամբ ականջ դնելով՝ մի փոքր էլ առաջ անցան և այս անգամ կանգ առան կալերի մէջ: Նորից ականջ դրին. մօտերքում ոտնաձայներ չը կային: Մի փոքր էլ առաջացան և այս անգամ Յովկոտենց տան առաջն էին: Գալօն պիտէր՝ ուր պիտի լինի ցորնի հորը. նա սկսեց փորել, Սրքէնն խաուխ պատուիրելով՝ ի հարկին անպայման քրդերէն խօսել: Հազիւ հորը բացել էին, երբ մօտեցան չորս ձիաւորներ:

—Ո՞վ էք, կոչեց պէխաւորը:

—Մենք ենք, դարի ենք հանում ձիերի համար, պատասխանեց Գալօն առհարկի վստահութեամբ: Սրքէնն փորձեց փախչել, Գալօն զգուշութեամբ բռնեց նրա փէշը:

Ձիաւորներն անցան, բայց մի քանի քայլ արած, նրանք յանկարծ կանգ առան, ինչ-որ փափագին. երևում էր նրանք իրանց խաբուած զգացին, կամ գուցէ հայ մարդի քրդերէն խօսելը նրանց կասկածելու տեղիք տուեց. նրանք շտապով յետ դարձան:

Գալօն զգաց վտանգը, ուստի վճռեց օգտուել խաւարից և խոյս տալ առանց սակայն փախուստ ձևացնելու, բայց Սրքէնն քանի ոտներում ոյժ կար, փախաւ. մի քանի հրացանների մի անգամից ճայթեցին իրար յետևից և Գալօն գետին գլորուեց սպանուած, մինչդեռ Սրքէն

հրացանների ձայնից սարսափած ճչաց և գետին ընկաւ առանց վիրաւորուելու անգամ: Ձիաւորները մօտեցան. Սրքէն ծնկների վրայ նրանց առաջը գուրս եկաւ:

—Խնայեցէք, ի սէր Աստուծոյ, աղերսում էր նա ձիերի ոտներին փարելով: Ներան բռնեցին: Քիչ յետոյ Բահլուլ-բէգի վրանի առաջ կանգնած էր նա քրդերով շրջապատուած: Բէգը հրամայեց նրան իր առաջ բերել:

—Ո՞վ ես դու, փլայ, հարցրեց բէգը:

Սրքէն լուռ էր:

—Ինչո՞ւ չես խօսում, մուռտառ, որոտաց բէգը կատաղած:

—Խնայիր, տէր, հազիւ հազ շշնջաց Սրքէն:

—Խնայել, մռնչաց բէգը, մի փլայ քաճի համար սարի նման եղբօրս սպանեցիք, դեռ խնայել... Ո՞ւր է Մարօն, շուն փլայ. ո՞ւր փախցրիք նրան, ո՞ւր է նրա փախցնողը... Սպասեցէք... տեսէք թէ ինչ կը նշանակէ բէգին սպանել և կինը փախցնել: Կուռօներ, ճանապարհ պրէք:

Այդ հրամանը սպանել էր նշանակում: Քրդերը քաշ տուին Սրքէնին դէպի մի կողմ և առաջը խարոյկ վառեցին, որ հեռուից դէմքն երևայ: Դա էլ մի առանձին զուարճութիւն էր, նրբանք ուզում էին նշան բռնել հեռու խաւարի միջից: Սրքէնն կանգնած էր հազիւ կենդանի, ինչ-որ բան սաստիկ սղմում էր նրա կոկորդը, շնչել չէր կարողանում, բերանը չորանում էր անդա-

դար, լեզուն քմքին էր կպչում։ Ամեն անգամ երբ նրա առաջը խարույկի բոցը բորբոքւում էր և լուսաւորում նրան, այն ժամանակ հեռուից երևում էր անհնարին սարսափից ծամածռած դէմքը, բայց նրա հայեացքն անորոշ չէր, այլ ուղղուած էր կրակի բոցերին, ուր կարդում էր կարծես իր դատավճիռը, փաքրիկ ճակատը կնճռուած էր, յօնքերը կիտուած. պարզ էր թէ մի ինչ-որ միտք այդ օրհասական ժամին նրան զբաղեցրել էր։ Նա համոզուած էր, որ եթէ Մարօին ու Մուսօին մատնի, ինքը կը փրկուի, բայց հաստատ չը գիտէր՝ կը փրկուի՞ն արդեօք նաև այլի մնացած փախստականները. չէ՞ որ շատ հեշտութեամբ այս կատաղած բէգը նրանց էլ կարող է ծուղակ ածել։ Ահա այդ մասին էր մտածում։ Մարօին և Մուսօին մատնելը նրա համար շատ հեշտ գործ էր, չէ՞ որ նրանց պատճառով էր գիւղը թալանի և կոտորածի մատնուել։ Բայց Սրքէն ամենևին չէր մտածում, որ այդ չարիքի սկիզբն ինքն էր դրել։ Նա մտածում էր մնացածների մասին. գոհել նրանց էլ՝ իր կեանքը փրկելու համար, թէ՞ ոչ։ Բայց չէ՞ որ վերևում Աստուած կայ. ասում են, որ այդ Աստուածը պատժում է չարագործութիւնը։ Եթէ այդպէս է, ինչու՞ համար Աստուած թոյլ տուեց, որ Մուսօն երէկ նրան էլ, ամենքի հետ միասին փրկի, այրն իջեցնի, ինչու՞ Նա թոյլ տուեց, որ գոհն իր դահճին կեանք չնորհի. մթթէ դժուար էր այնպէս անել, որ պարանը կտրուի և չարա-

գործը անդունդներին կուլ գնայ։ Չէ, Աստուած չի խառնւում մարդկային գործերին։ Նա թողել է, որ մարդիկ ապրեն, ինչպէս կարող են. ով զօրեղ է, թող չարդի, գռփի, կեղեքի, ով թոյլ է, անկարող է, թող ոչնչանայ։ Չէ՞ որ գիւղը կրակ տուին. քանի՛ մարդ սպանուեց... իսկ սպանողնե՞րը... ի՞նչ եղաւ նրանց. պատժուեցի՞ն... ուր էր Աստուած։ Ուրեմն էլ ինչու՞ համար չը փրկուել՝ ինչ գնով և լինի։

Սրքէի համար խիստ ծանր էր աշխարհից բաժանուել թէկուզ մի շատ լաւ գործ կատարած լինելու երջանիկ գիտակցութեամբ. փչացած, ապականուած հոգիները գոհի ընդունակ չեն։ «Ես մեղաւոր չեմ, շարունակում էր դատել Սրքէն, ասացի ինձ մի ուղարկէք, ես փախչել չեմ կարող, ես պաշարի գնալու անընդունակ եմ, նրանք ինձ չը լսեցին, ամենքն էլ ուզում էին, որ անպատճառ ես գնամ, նրանք իմ մահն էին կամենում, թող այժմ տուժեն»... «Դաւաճանութի՛ւն», լսուեց ներքին ձայնը։

—Իսկ Գալօն, պատասխանեց Սրքէն, նա՞ էլ դաւաճանեց... Հապա ինչու՞ սպանուեց։

Հէնց այդ ժամանակ հրացանաւորները տեղ բռնեցին նրա հանդէպ յիսուն քայլի վրայ։ Բէգը դուրս եկաւ վրանից նայելու։ Էլի մի րոպէ և Սրքէն այլևս չէր լինի աշխարհում. նա այդ հասկացաւ։ Երբ քրդերը հրացաններն ուղղեցին, նա մի յուսահատ աղաղակ բարձրացրեց, խնդրելով

մի խօսք, միայն մի խօսք ասել։ Բէգը նշան ա-
րեց, որ սպասեն։

—Տէր, Մարօին քո ձեռքը կը յանձնեմ, խնայիր կեանքս, ասաց Սրքէն։

—Ինչպէ՞ս, զարմացած կոչեց բէգը. եթէ ասածդ ճիշտ լինի, ֆլա՛ն, ես ո՛չ միայն կեանքդ, այլև շատ բան կը պարգևեմ քեզ։

—Տէր, ծառադ չի համարձակուի իր տիրոջը խաբել. ես Մարօի տեղը կ'ասեմ, ինչացածը դու գիտես։

Եւ Սրքէն յայտնեց Արնքաբի այրում պատսպարուածների գաղտնիքը։

Սև դաւաճանութիւնը կատարուեց. վրանի շուրջը մի վայրենի շարժողութիւն սկսուեց և շուտով մի ստուար բանակ, առաջնորդ ունենալով Սրքէնին, Արնքաբի վրայ կանգ առաւ։ Սրքէնին կախեցին, որ պաշարուածներին համոզի դուրս գալ։ Այրում սարսափը տիրեց ամենքին, երբ կարողացան որոշել խաւարի մէջ Սրքէնին, անյայտ ձեռներով կախուած։ Մուսօն առաջանալով դէպի դուռը, առանց կախածին բռնելու, հարցրեց կատաղած.

—Ֆաչա՛լ, այդ ո՞վ կախեց քեզ։

—«Նրանք», ասաց Սրքէն։

«Նրանք» բառը լսելով՝ այրի ներսում կանայք ու երեխաները ընդհանուր ճիչ բարձրացրին, աւելի հասկանալի և աւելի զարհուրելի բառ լինել չէր կարող։

—Բայց նրանք ի՞նչպէս իմացան մեր տեղը։

—Չը գիտեմ... հաւատա՛, չը գիտեմ, ես չեմ ասել. իրանք գիտէին, ինձ բռնեցին հետները բերին. կարո՞ղ էի չը գալ։

—Սուտ է խօսում, դաւաճան է, ձայն տուէն այս ու այն կողմից. պարանը կտրեցէ՛ք, թո՛ղ վայր գլորուի... կտրեցէ՛ք, կտրեցէ՛ք։ Մի՛ խօսիր, Մուսօ. դաւաճան է։

—Ձեզ մատաղ, մի՛ արէք, ես անմեղ եմ, խեղճ եմ, աղերսում էր Սրքէն. հաւատացէ՛ք, նրանք գիտէին մեր տեղը, իրանք եկան։

—Ո՞ւր է Գալօն, հարցրեց Մուսօն։

—Սպանեցին։

—Ինչո՞ւ քեզ էլ չսպանեցին, անզգամ, կըրկին ձայն տուին այս ու այն կողմից։

—Դաւաճան է, կտրենք պարանը, և միքանի ձեռներ միանգամից մեկնուեցին դէպի պարանը. Սրքէն ճօճուեց, անդունդների վրայ զարհուրելի պտոյտներ գործեց և կրկին առաջուայ տեղում կանգ առաւ։ Վերից կախողները պատրաստ էին նրան, յուսալով՝ որ նա բանակցութիւններ է անում։

—Լսեցէ՛ք, գոչեց վերջապէս յուսահատուր ձայնով Սրքէն, լսեցէ՛ք իմ վերջին խօսքը։ Ես ասում եմ, որ նրանք մեր տեղը գիտէին, դուք չէք հաւատում ինձ, բայց բանն այժմ այլևս դրանում չէ. կ'ուզէք կտրեցէ՛ք պարանը, թո՛ղ ես ընկնեմ շանսատակ լինեմ. այժմ ձեզ եմ հարցնում. իմ մահով կարո՞ղ էք դուք փրկուել։ Ի հարկէ ոչ։ Նրանք ձեր տեղը գիտեն արդէն,

կը պաշարեն ձեզ և դուք սոխպուած կը լինէք սովից անձնատուր լինել և այն ժամանակ աւելի վատ կը լինի ձեզ համար, որովհետև դուք ձեր յամառութեամբ նրանց աւելի կը զայրացնէք։ Իսկ այժմ նրանք խօսք են տալիս, որ մեզ անվնաս կը թողնեն։ Նրանք ժամի զարդ անօթեղէններն են վնտրում և կարծում են որ այստեղ թագցրել ենք։ Դուրս եկէք, թող իմանան, որ այստեղ ոչինչ չը կայ, և մենք կը փրկուենք։ Լսեցէք ինձ ի սէր Աստուծոյ, մի յամառէք, իմ մահը ձեզ չի փրկի։

Ներքևում այրի մէջ մի փոքր լռութիւն տիրեց, մարդիկ խօսում էին փըսփըսալով։ Սըրքէի պատճառաբանութիւնն ըստ երևոյթին հզօր հաստատուն հիմքեր ունէր. արդարև նա էլ մտանել, թէ մի ուրիշը, այդ այլ խնդիր էր, բաւական էր որ գաղտնիքը բացուած էր և անհնարին էր առանց պաշարի դիմանալ պաշարմանը։

Մնում էր կամայ ակամայ դուրս գալ և անձնատուր լինել՝ դահիճներից գթութիւն հայցելով, ով գիտէ, գուցէ այժմ նրանք այնքան անգթաբար չը վարուեն, գուցէ խղճան, գուցէ... Անել վիճակի մէջ ամեն մի «գուցէն»... մի փրկութիւն է թւում. դա յոյս է, իսկ յոյսը՝ կեանք։

Մուսօն այս բոլորից անջատ իր առանձին հոգսերն ու մտմտուքն ունէր. իսկ եթէ վերի կանգնողները Հիւանի-բէգի մարդիկը լինեն։ Թալանի և կոտորածի ժամանակ սարսափած գիւղացիք ոչ ոքի չեն ճանաչել խաւարի մէջ, իսկ

Մուսօի համար դա իսկապէս կեանքի և մահու խնդիր էր։ Նա մօտեցաւ Սրքէին։

—Լսիր, Սրքէ, ասաց Մուսօն խորհուրդը վերջանալուց յետոյ. երդուիր Աստծու անունով, երդուիր այս այրի մէջ ոգնած ճգնաւորների սուրբ աղօթքով, որ վերի կանգնողները Հիւանի-բէգի մարդիկը չեն։

Սրքէն և միայն Սրքէն հասկացաւ Մուսօի անհանգստութիւնը։ Սրքէն այն մարդկանցից չէր, որ ոճրի կիսում կանգ առնէր թուլացած։

—Երդւում եմ Աստծու անունով, ասաց նա խաբեբայի անսիրտ վճռականութեամբ, երդւում եմ բոլոր ճգնաւորների սուրբ աղօթքով՝ որ վերի կանգնողները Հիւանի-բէգի մարդիկը չեն, սրանք Բուռլիցի են։

Աւաւրը ծածկեց այս զարհուրելի կեղծիքը. եթէ այդ րոպէին գոնէ երկու հակառակորդների ղէմքերը լուսաւորուած լինէին, եթէ Մուսօն կարողանար գէթ մի անգամ նայել դաւաճանի աչքերին, գուցէ ստութեան սովոր շրթունքներն անգամ անկարող լինէին արտասանել այդ զանգամ ղիր երդումը։

Բայց զարհուրելի երդումն արտասանուեց խաւարի մէջ և դաւաճանի շրթունքները չ'այրուեցին։

Հաւատաց արդեօք Մուսօն, դժուար էր իմանալ, նա դեռ մտածում էր։ Ապա նա գլուխը բարձրացրեց և ասաց.

—Դէհ, Սրքէ, այս բոլորի մեղքը քո վզին,

ահաւոր դատաստանին պարտական մնաս, նզո-
վուած լինես Յուդայի պէս, եթէ խաբում ես
մեզ։ Մենք դուրս կը գանք։

Այրը դատարկւում էր։

Արնքարի վրայ վառուեց մի մեծ խարոյկ՝
դուրս եկողներին դիտելու համար։ Գլխաւորն
իսկոյն մօտենում էր նայում, հէնց որ մէկը
բարձրանում էր։ Իոլորը դուրս եկան, մնացին
Մարօն ու Մուսօն։ Պարանը մէկ էլ կախեցին,
երկար ժամանակ ոչ ոք չը կար. վերևում ան-
հանգստութիւն տիրեց, իսկ ներքևում, այրի
մէջ դեռ տատանւում էին։ Սարսափելի վայր-
կեան էր։ Վերջապէս պարանը շարժուեց, բարձ-
րացողն այս անգամ Մարօն էր. վայրենիների
մէջ փսփսուկ ընկաւ։ Ամենքը կռացան դէպի
ծովը։ Քանի բարձրանում էր, այնքան նրա դէմքն
աւելի էր լուսաւորւում. արդէն մօտ էր ժայ-
ռերի շրթունքին, երբ Մարօն գլուխը բարձրաց-
նելով՝ տեսաւ կրակի լուսով լուսաւորուած մի-
քանի ծանօթ դէմքեր։ Հիւանի-բէգի մարդիկն
էին, նոյն գազանները, որոնք իրան փախցրին.
նա լաւ ճանաչեց։ Եւ այն վայրկենին՝ երբ նա
ճանաչեց այդ զարհուրելի դէմքերը, մի սըր-
տաճմլիկ ճիչ արձակեց. «Նզո՛վք քեզ, Սրբէ՛»։
գոչեց և օրհասական ցնցումով ոտները դէմ
տուեց ժայռին. քաշողի ձեռքից պարանը յան-
կարծ դուրս պրծաւ և մինչև որ վերի կանգնող-
ները կը կարողանային նոյնիսկ մի փոքր հաշիւ
տալ իրանց այդ անակնկալ և զարմանալի դի-

պուածի մասին, Մարօն անդունդների վրայ
զարհուրելի պատյանները կազմելով՝ ծովն ընկաւ
սարսեցուցիչ ճղփիւնն առաջ բերելով։ Վերևում
սկսուեց գոռում-գոչում, հայհոյանք, աղաղակ.
բայց այդ անասելի ոռնոցներն անկարող եղան
խլացնել այն սպանիչ ճիչը, որ լսուեց այրի ա-
ռաջից և ջրերի երկրորդ ճղփիւնը ցոյց տուեց
մի երկրորդ մարմնի ծովն ընկնելը։ Արդեօք
Մարօին փրկելո՞ւ, թէ նրա հետ միասին ալիք-
ների սառն ծոցում գերեզման գտնելու համար
էր, որ Մուսօն իրան ծովը նետեց, այդ ոչ ոք
չիմացաւ, միայն մի առժամանակ ներքևից դեռ
լսւում էին երկու խեղդուողների օրհասական
հռնդիւնները ջրերի աղմուկին խառնուած. շու-
տով այդ էլ դադարեց։

Դահիճների կատաղութեանը չափ չը մնաց։
Գլխաւոր որսերը նրանց ձեռքից ճողոպրել էին,
բայց վրէժխնդրութիւնը մնացածների վրայ թա-
փեցին։ Խաւարի մէջ Արնքարի վրայ սկսուեց
մի պժգալի գործ. արիւն էր հոսում։ Կիսակեն-
դան վիրաւորները ծովն էին նետւում «Նզո՛վք
քեզ, դա՛ւաճան» գոռալով։ Ներքևում, խաւարի
մէջ ոչինչ չէր երևում, միայն ջրերն աղմկւում
էին խեղդուողների օրհասական շարժումներից
և լսւում էին՝ «Նզո՛վք քեզ, դա՛ւաճան» աղա-
ղակները։ Ոչ ոք չը կարողացաւ խաւարից օգ-
նել և խոյս տալ ազատուել. չը կար միայն
Սրբէն. իր սև դաւաճանութեան այսպիսի ելքը

սոսկումով պատեց նոյնիսկ դաւաճանին, և նա ժամ առաջ փախաւ, կորաւ խաւարի մէջ։

X

Անցան տարիներ. չարը չը հեռացաւ այն աշխարհից. նա այն աշխարհի մասն էր, նրա հարազատ զաւակն էր. նրա միսն ու արիւնն էր։ Թշուառների և խեղճերի աշխարհ էր դա, որոնք չարիքի հետ, խեղճութեան հետ վարժուց, շատ վաղուց եղբայրացած ապրում էին։ Բայց չարը զոհ չէր, նա արեան ծարաւ ունէր. խեղճերն այդ էլ տուին, յուսալով թէ երբ ծարաւը յագենայ կը հեռանայ իրանցից. բայց ո՛չ, չարիքը կուշտ խմեց և մնաց նոյն աշխարհում. նա հանգիստ էր առնում միայն։ Վայրենի մարդի մէջ նստած գազանը յոգնեց, ինչ զարմանք, երբ դաշտի գազաններն էլ մարդի մսով յղփացան։

Սարերի և այրերի ծածկուածներից ոմանք չեկան այլևս, յաւիտենական քնով քնեցին ձիւների սառչէ ծոցի մէջ, ուրիշներն էլ գնացին պատմելու աշխարհին իրանց ցաւերը. իսկ մի խումբ խեղճեր էլ, որոնց համար մահու հաւասար էր հեռանալ իրանց պապերի հողից, իրանց հայրերի գերեզմաններից, վճռեցին չարիքի և խեղճութեան հետ կրկին դաշն կապել՝ որ իրանք ապրելու, օդ շնչելու իրաւունք ունենան, իսկ նրանք էլ կուշտ լինեն։ Պայմանն ընդու-

նեցաւ, խեղճերին ներուեց՝ մոռնալ իրանց յանդգնութիւնը և նրանք կրկին մտան իրանց տակաւին ծխացող աւերակները. պէտք էր ամեն բան նորից սկսել...

Գ... գիւղն էլ իջան միքանի հոգի, այդ դիւղի աւերակների մէջ էլ բահեր և մուրճեր երևացին։ Ուրճիներ էին շինում, կամաց-կամաց դիւղում ձայն ու աղաղակ էլ լսուեց, դաշտից դիւղում ձայն ու աղաղակ էլ լսուեց, Սատծու տունն էլ հետզհետէ մշակուեցին, Սատծու տունն էլ նորոգուեց։ Հրաշքով փրկուած ծերունի հոգևորականը վիճն իր հօտի մնացորդն անտէր, անմխիթար չը թողեց, նա էլ եկաւ. Սատծու խօսքով պէտք էր զովացնել մխիթարութեան կարօտ սրտերը։ Եւ մարդիկ աղօթում և աշխատում էին, աշխատում և աղօթում էին։

Ո՞ւր էր մինչև այդ ժամանակ քաշել Սերքէն, այդ ոչ ոք չը գիտէր. միայն նա էլ յայտնուեց մաշուած, ծերացած, խոր ընկած աչքերով, մռայլ ու անհանգիստ հոգով։ Անտէր տներ, անմշակ արտեր շատ կային. ինչո՞ւ մի խրճիթ էլ նա չը նորոգի, արտի տէր դառնայ, ապրի։ Եւ սկսեց. բայց բահի առաջին հարուածի հետ մոխրակոյտի տակից դուրս ցցուեց մի խանձուած գլխակ, աչքերը ճմթռուած, շրթունքները քաշքշուած և ատամների սղմուած շարքերը բացուած և ատամների սղմուած շարքերը բացուած դարհուրելի էր... Սրբքէին գուշաց թէ նոյն ինքը վրէժխնդրութիւնն է այդպէս մարմին առել. վաղուց էր ինչ այդ պատկերը գիշեր ցերեկ հալածում էր նրան։ Նա բահը սոսկումով վայր

գցեց ձեռքից և փախաւ։ Նրա ականջներում հընչում էր՝ «Նզովք քեզ» բառը։ Նա փախչում էր առանց յետ նայելու, վախենալով՝ մի գուցէ յետևում տեսնի դիակի դէմքը, փախչում էր առանց հաշիւ տալու, միայն մի անյաղթելի պահանջից դրդուած։ Վերջապէս նա դուրս եկաւ դաշտը, թափառեց սար ու ձոր, թափառեց ամբողջ գիշեր։ Այդ ժամանակ նա միայն մի բան էր մտածում. փախչել որքան կարելի է հեռու ծովափի ժայռերից, հեռու արիւնոտ Արնքարից։ Բայց որքան մեծ եղաւ նրա սարսափը, երբ յանկարծ իրան գտաւ հէնց Արնքարի ժայռերի վրայ։ Ինչո՞ւ էր եկել այնտեղ, այդ ինչպէս էր պատահել, նա չը գիտէր. միայն խաւարի մէջ ցցուած ժայռերը սարսափելի էին. դիակները, դիակները, շարան-շարան կանգնած, մէկը միւսից աւելի մեծ, մէկը միւսից աւելի զարհուրելի, դարձեալ ճօթռուած աչքեր, բաց առանձներ, այրուած, խանձուած դէմքեր, բոլորն էլ սարսափելի, բոլորն էլ ահաւոր։ Սրքէն շտապով ծածկեց աչքերը, շուռ եկաւ, շտապեց հեռանալ. բայց հէնց նոյն րոպէին ալիքները զարկուեցին ժայռերին և բոլորը միասին քարերն ու ջրերը մի հսկայական հառաչանքի հետ՝ «Նզովք քեզ» ասացին։ Սրքէն դողաց, նա այժմ փակեց նաև ականջները, իզուր. ձայնը չէր դադարում, ուստի նա փախաւ կրկին, փախաւ դէպի հեռաւոր դաշտերը, հեռո՛ւ, հեռո՛ւ ծովափից, որպէս զի մոլորուելով ակամայ կրկին ծովափը դառնայ,

Արնքարի ժայռի վրայ յայտնուի, ծովին նայի, ալիքների «Նզովքը» լսի, դողայ, սարսռի և կըրկին, քանի ոյժ ունի, փախչի դէպի դաշտերը։ Քանի՜-քանի անգամ նա փախաւ այդ սարսափելի տեղերից, բայց ամեն անգամ մի աներևոյթ զօրութիւն, հակառակ իր կամքին, անգիտակցաբար, նրան դէպի ծովափը քշեց. նա կրկին ու կրկին լսեց ալիքների «Նզովքը» և զարհուրելի ճիչ արձակելով՝ աչքերն ու ականջները փակած, դիպցած մազերով յետ դարձաւ ու փախաւ անյայտացաւ խաւարի մէջ։

Մօտ էր լուսաբացը, երբ տանջուած և ուժասպառ Սրքէն բաղխեց Ծերունի քահանայի դուռը։ Քահանան դուրս եկաւ. իր առաջ կանգնած էր Սրքէն դողդողալով. նրա առանձներն իրար էին զարկւում. նա երերում էր, լուռ էր։ Զարմացած քահանան կասկածով նրան նայեց և հարցրեց.

—Ի՞նչ կայ, որդի։

— Տէր հայր, առաւօտեան ժամը չը պիտի ասես, լուսաբացը մօտ է, գնանք ժամ։

—Կ'ասեմ, ապա չեմ ասի։ Բայց ինչո՞ւ ես դողում. ի՞նչը քեզ սոխեց այսօր գալ ինձ արթնացնել։

—Աղօթել եմ ուզում, տէր հայր։ Աղօթեմ էլի, եկայ դուռը թակեցի. աղօթել եմ ուզում, գնանք... ժամ ասելու ժամանակ չէ՞. գնանք էլի։

Քահանան շուարած էր. Սրքէն ու այսպիսի

բան. ինչ էր պատահել: Բայց և այնպէս նա դուրս եկաւ, թէև դեռ առաւօտեան ժամերգութեան համար վաղ էր: Երբ եկեղեցուն հասան, Սրբէն չը թողեց քահանային դուռը բանալ:

—Կեցէ՛ր, տէրտէ՛ր, ասաց նա, քահանայի աջը բռնելով, ժամ ասելու դեռ ժամանակ կ'ունենաս, մի՛քիչ վաղ է, այնպէս չէ՞... Գնանք հանդստարան, գերեզման ունեմ օրհնել տալու:

Սրբէի դէմքը սարսափելի էր, աչքերը խաւարի մէջ վառուում էին, պահանջը տարօրինակ էր, գիշերուայ այդ ժամին գերեզման չեն օրհնուում: Քահանան երկչոտներից չէր, բայց այս մարդի վարմունքը չափից դուրս կասկածելի թուաց նրան. Սրբէն նրան ոչ թէ երկիւղ, այլ արգահատանք էր ներշնչում. քահանան զգում էր, որ մի ինչ-որ ծանր վիշտ կրծում էր նրա սիրտը:

—Որդիս, Սրբէ, ասա ինձ, ի՞նչ է պատահել քեզ. դու տանջուում ես, քո հոգին խռովուած է, ախր ինչ գերեզման օրհնելու ժամանակ է. թող մնայ ցերեկով, իսկ այժմ ներս մանանք եկեղեցի և պատմիր ինձ քո ցաւերը:

—Մեռնեմ քո աչքին, տէրտէր ջան, աղաչում եմ, օգնի՛ր, փրկի՛ր ինձ, փրկի՛ր... Ո՞ւր փախչեմ, ինձ ուտում են, խեղդում են, հալածում են, ես չեմ կարող այլ ևս, դա իմ ուժից վեր է. հայր. դու գոնէ մի՛ թող ինձ. գնանք, գնանք օրհնի՛ր գերեզմանները. ոտքերդ ընկած աղերսում եմ:

Սրբէն ծունկ չոքեց, գրկեց քահանայի ոտները և սկսեց դառնապէն արտասուել: Քահանան ապշած էր զարմանքից, բայց և սաստիկ զգացուեց: Այս մարդի անծանօթ վիշտը նրան ահագին թուաց և նա վճռեց գնալ նրա հետ՝ ինչ և պատահելու լինի: Հասան գերեզմանատուն, բայց Սրբէն շարունակում էր գնալ:

—Ո՞ւր ես տանում ինձ այսպէս կէս գիշերով, կոչեց այս անգամ սարսափած քահանան, կանգ առնելով գերեզմանատանը:

—Այնտեղ, տէրտէր ջան, այնտեղ է գերեզմանը. արի՛ աղաչում եմ, արի՛, դու չը գիտես, դու չես տեսել այդ գերեզմանները: Օ՜, ոչ ոք, ոչ ոք չի տեսել բացի ինձանից, արի կը տեսնես քանի՛սն են...

Քահանան դարձեալ գնաց: Հասան ծովափին և կանգ առան Արնքարի վրայ: Դարձեալ քամի էր, դարձեալ ալիքները զարկւում էին ափերին, գոռում, որոտում, ոռնում ու հառաչելով ներքև պղտրւում: «Նզո՛վք, նզո՛վք քեզ» լսեց Սրբէն ալիքների որոտի միջից, Նրա դողը սաստկացաւ, երերաց ու սարսափով բռնեց քահանայի աջը և միւս ձեռքը դէպի ծովը մեկնելով ասաց.

—Լսո՞ւմ ես, տէրտէր, այ նրանք են, գոռում են. այստեղ բոլորը գերեզման է, նա ցոյց տուեց Արնքարի տակ աղմկուող ալիքները. լսո՞ւմ ես... Օ՜օ, գիշերն այսպէս միշտ դուրս են գալիս և «Նզովք» են գոռում: Ախր առանց քահանայի են թաղուել, սուրբ աղօթք չեն լսել...

Ես թաղեցի, մենակ ես... նրանք էլ դուրս են գալիս... նրանք էլ...

Բայց այդ րոպէին կրկին եկան դիպացած ալիքները, կրկին զարկուեցին ափերին ահռելի շրփոցով։

—Օ՜, էլի գոռացին, լսեցիր, տէրտէր, գոռում են, գոռում են, լալիս են, աղօթք են ուզում, սուրբ աղօթք, քահանայի աղօթք,—ասաց Սրքէն սիրտ պատառող ձայնով և ականջներն ու աչքերը ծածկեց վերարկուի ծալքերի մէջ։ Քահանան սկսում էր վախենալ. նա չը գիտէր ինչ անել այս խելագարութեան հասած մարդի հետ. իսկ ալիքները շարունակում էին աղմկուել, շարունակում էին «Նզովք» գոռալ։

—Աղօթիր, ճչում էր Սրքէն, թաղման աղօթք ասա, թող լռեն, թող չը գոռան, չը նզովեն, այնպէս չէ՞. ախր որ թաղես, էլ չեն գոռայ, խօսիր էլ... վայ, աղօթիր, աղօթիր էլ... դէ աղօթք ասա, թող հանգստանան, յուսահատ կերպով գոչում էր Սրքէն։

Քահանան այս անգամ սարսափեց. նա ոչինչ չէր հասկանում, բայց զգում էր, որ մի զարհուրելի գաղտնիք կար այս մարդի խօսքերի մէջ։

—Որդիս, Սրքէ, տուն դառնանք, դու հիւանդ ես, գնանք քնիր հանգստացիր...

Դարձեալ ալիքները զարկուեցին, դարձեալ Սրքէն լսեց՝ «Նզովք քեզ, նզովք»։

—Ա՜ղօ-թիր, ճչաց Սրքէն... հոգւոյց ասա, հոգւոյց ասա։

—Ո՞ւմ համար հոգւոյց ասեմ, որդի, չէ՞ որ այստեղ գերեզման չը կայ։

—Գերեզմաններ կան, շատ կան այստեղ, այ հէնց այստեղ... Դու չես իմանում, դէհ լսիր, ես ասեմ էէ՜, որ ասեմ կը ներքո... Տէրտէր, Յուդային չը ներեցին, հաա...

—Չէ՛, որդի, Յուդային ինչպէս կարելի էր ներել. նա մատնիչ էր։

—Իսկ ինձ կը ներես, այնպէս չէ՞...

—Կը ներեմ, զաւակս, Թողութիւն կը տամ. ասա, պատմիր յանցանքդ։

—Հապա եկաք, տեղաւորուեցիք. շէնցաք, նստեցիք, հէչ չը հարցրիք, թէ ուր են Զօբանեանց Մուսօն, Սհօի Մարօն, Կուզիկենց Մխօն, Նենց Մուսօն, Զուլհակենց Մարտօն, Խողկոտենց Մանօն, ուրիշ մանր ու պետ, ուր են, գիտե՞ս... Ա՛յ, այս քարի տակ այր կայ, այն օրը նրանք այստեղ էին ծածկուած, ես իմացայ, ես տեղերը յայտնեցի, ես *մատնեցի*, խաբեցի... դուրս եկան տաղից և նրանք կոտորեցին բոլորին, ծոշը ածեցին, այստեղ, այս քարի տակ ձգեցին. Թողութիւն կը տա՞ս, տէրտէր... Յուդային կը ներե՞ն, Թողութիւն կա՞յ մատնիչին...

—Ո՛չ, մատնիչին Թողութիւն չը կայ, ասաց քահանան վշտացած։

—Չը կա՞յ...

—Չը կայ։

Ալիքները նորից գարկուեցին «Նգո՛վք քեզ, նգո՛վք» գոռացին. Սրքէն լսեց, էլ չսպասեց, նա մի սրտապատառ ճիչ արձակեց և ահագին թափով ժայռի կատարից վայր նետուեց ծովի անդունդների մէջ։ Զոհերին ընդունող ալիքները դահճին էլ ընդունեցին իրանց ցուրտ ծոցում։

Բահանան այս անգամ մօտեցաւ ծովափի շրթունքին, վշտացած հոգով բարձրացրեց դողդողջուն ձեռքը, խաչակնքեց ալիքների տակ թաղուած նահատակների մարմինները և «հոգւոց» ասաց։ Միքանի կաթիլ արցունքներ թափուեցին նրա ծեր աչքերից ալեզարդ միրուքի վրայ, ապա նա յետ դարձաւ և առաւօտեան ժամն սկսեց։ Նրա ձայնն այդ առաւօտ աւելի էր դողում և բառերը դուրս էին գալիս բերանից վշտոտ հընչիւններով։

—

Ասում են, որ մինչև այժմ էլ ծովում, այնտեղ՝ ուր ընկած է դաւաճանի մարմինը, ջրերը՝ խաղաղ թէ խռոված ժամանակ, պատյա են գալիս, եռում, աղմկւում, ասես թէ դժգոհ են, որ իրանց սուրբ ծոցի մէջ թաղուած է դաւաճանի մարմինը նահատակներին մօտիկ։

Եւ մինչև այժմ էլ նրանց ահաւոր գոռոցի մէջ լսւում են՝ «Նգո՛վք քեզ, նգո՛վք աղաղակները։

1897 թ.

ՄԱՍԻՍԸ

(Աւանդութիւն)

I

Մռայլ ու անհամբոյր է Մասիս սարը։ Կատարը յաւերժական ձիւնի հաստ շերտով ծածկուած, դարերից ի վեր ծաղրում է արևի անզօր ջերմութիւնը։ Յաւիտենական ձմեռն է իշխում այնտեղ, որ իր սառոյէ զրահով անդադար յետ է մղում արևի շողերը և այդ ժամանակ ասես ժպտում է վեհութեամբ երկնքի լուսատուի անմիտ յամառութեան վրայ, որ անհուն ժամանակներից ի վեր իր փորձերի անզօրութիւնը տեսնելով հանդերձ, տակաւին շարունակում է իր շիկացած նետերն ուղղել դէպի մռայլ ծերուկ ալեզարդ գլուխը։ Նա փորձում է խորտակել վայրը հսկայի կատարին իշխող ձմրան թագաւորութիւնը, ձիւներից կազմել ջրի հեղեղներ և վայր գլորել նրա ժայռոտ, այլանդակ կողերից դէպի ներքև, ուր ձգուած են ջրի կարօտ դաշտավայրերը։

Ի զուր. Մասիսն ասես ուխտել է իր խրոխտ կատարն անմատչելի պահել։ Ամարային կիզիչ շոգերին անգամ արևի ամենաբուռն ջանքերը հազիւ են կարողանում ձեան հաստ շերտի սառ-

րին փէշերը փոքր ինչ քամել, կարկաչուն, անշան վտակներ կազմել դէպի վայր գլորելու համար։ Բայց ագահ, յամառ ծերունին անմիջապէս այն էլ է խափանում. նա ներս է ծծում այդ ջրերն իր անյատակ անդունդների մէջ և կրկին ժպտում արևի երեսին, կրկին ծաղրում նրա թուլութիւնը։

Սակայն կռիւը վերջ չէ առնում այդքանով. որքան հզօր է ալեզարդ Մասիսը, նոյնքան էլ յամառ է արեգակը։ Սա առաւամանակ կուլ է տալիս իր անարգանքը, շարժւում է դէպի արևմուտք և մի քանի ժամից իր բոլոր կատաղութիւնը թափում է Մասսի մերկ կրծքի, կողերի, ոտների վրայ և այրում, խանձում է ամեն ինչ։ Ժայռերը ճարճատում են սարսափելի տաքից, գետինը մրկւում, թրձւում է և ճաքճաքում. ծլած խոտերն ու ծաղիկները խանձւում են ու փշրւում. կենդանութիւնը մեռնում է կամ խոյս տալիս սարսափով, ուշացած բզեզները կոտորւում են. լռում է նրանց միակերպ տաղակալի բզզոցը։ Ֆաշւում են նաև վայրի գազանները, ճնում են միայն ահագին, թունաւոր օձերը, որոնք շտապով ծածկւում են ժայռերի տակ, որքան կարելի է խոր. ողջ ցերեկը հևում են այնտեղ, զալարւում են տօթից ու ծարաւից, իսկ գիշերները դուրս են թափւում խմբերով, տափակ, զզուելի գլուխները վեր ցցում, կարծես նզովում են արևն ու իր ջերմութիւնն և լիզում են գիշերային ցօղով խոնաւացած չոր

խոտերի ցօղունները։ Թիթեռնիկը չէ համարձակւում Մասսի կրծքին հիւթ փնտրել, թռչունը չէ շինում այնտեղ իր բոյնը, հովիւը չէ քշում այնտեղ իր հօտը, արօրն ու գութանը չեն գալիս պատառելու նրա տոչորուած կուրծքը։ Ժայռեր լուռ ու մռայլ, ինչպէս խոհերով պաշարուած գլուխներ, և մեծ, կատաղի օձեր, թոյն և ամայութիւն, ահա թէ ինչ է բաժին ճնում Մասսին։

Դարեր են գլորւում դարերի յետևից և երկու հակառակորդների կռիւը շարունակւում է անընդհատ։ Մասիսը վաղուց է, որ պատմութիւն չունի, աիեզերական օրէնքները նրա ճակատին սառել, ճնացել են անշարժ, ժամանակից դուրս։

Այսպէս չէ սակայն Մասսի ներսը։ Կատաղի վտակները կորչում են նրա ներսից վայր հոսող հակայական փորի մէջ։ Դրսի աշխարհի բանբերներ լինեն կարծես, որոնք գնում են անդունդները լինեն կարծես, որոնք գնում են անդունդներում բազմած հսկաներին իրանց տեսած ու լսածները պատմելու։ Եւ այդ ժամին անդունդները ադմկւում, որոտում են խուլ, հսկայական ղրնդիւնով, երկիրը դողում է ինչպէս ուռի տերև. լեռան այրերը ձայնակցում են ներսից հընչուղ այդ որոտմունքին, նրանք էլ են թնդում հազար ու մի ձայներով, կարծես դևերի երկու ահագին բանակները զարկւում են իրար։ Ինչ է կատարւում այդ լեռան ներսում, այդ ինչ անհասկանալի կեանք է, որով ապրում է դարաւոր

հսկան. հին աստուածներն են արդեօք հաւաքուած այնտեղ և իրանց անպօր զայրոյթը յայտնում այն բոլորի համար, ինչ որ կատարւում է աշխարհում. որտեղից իրանք հալածուած են ընդմիշտ, թէ դժոխքն է այնտեղ, ուր դևերն իրանց պետերի հետ խորհրդի նստած, ցնծում են: Միայն ուրախ կարկաչով դէպի անդունդները վազող վտակներն իրար գրկած դուրս են ժայթքում Մասի աւորոտից, բայց սևացած, մռայլ դանդաղ ու ծեծուած, առանց աղմուկի, լուռ ինչպէս սգաւոր, կամ ինչպէս դերեզմանից հրաշքով դուրս եկած մեռել: Ալիքներն էլ քնքշութեամբ չեն փարում իրար, նրանք էլ սիրով չեն շոյում իրանց ափերը, չեն կարկաչում, այլ մեղմիւ փսփսում են ինչպէս դաւադիրներ, կամ ինչպէս զարհուրելի գաղտնիքի գիտակ անձեր: Նրանք շտապում են խոյս տալ արևի լոյսից, շտապում են ձգել իրանց Մայր Արաքսի գիրկը: Ի՞նչ են տեսել այդ վտակները սև անդունդներում. ինչո՞ւ են սևանում լոյս աշխարհ գալով, այդ դժուար է իմանալ: Բայց հին դարերից մարդիկ սովորել են Սև-Ջուր կոչել Մասի փորից դուրս ժայթքող այդ տարօրինակ գետակը:

Երբ և իցէ Սև-Ջուրը հոսել է վճիտ ալիքներով. Մասի կուրծքն արդեօք մի ժամանակ ծածկուած եղել է թաւ կանաչներով ու բուրաստէտ ծաղիկներով. օձերից դուրս ուրիշ կենդանիներ երբ և իցէ բնակութիւն փնտրել են այնտեղ: Լուռ ու անխօս են հսկայ ժայռերը, չար օձերն աւանդութիւն չունեն, Սև-Ջուրը հազիւ փսփսում է՝ իր սև ալիքները եղէգներին քսելով. այրերում հնչուղ յարատև աղմուկն անհասկանալի է մահկանացուներին: Բայց մի հին, շատ հին աւանդութիւն ձեր գլուխների մէջ ապրելով կտակուել է սերունդից սերունդ, խուսափել է ժամանակի՝ այդ լուռ հնձւորի աւերիչ ոյժից և եկել հասել է մինչև մեր օրերը:

II

Ալևոր հսկան միշտ այդպէս մռայլ ու ամայի չէ եղել, ասում է այդ աւանդութիւնը: Շատ հին ժամանակում, որի պատմութիւնը անցեալի խաւար ծոցի մէջ կորել, անյայտացել է, խիտ անտառները ծածկում էին Մասի կուրծքն ու փէշերը, որի կենդանիները վխտում էին այնտեղ: Հազարաւոր վտակներ վերից վայր էին ղողրում իրանց ականակիտ ջրերը, ոռոգելով լայնածաւալ, հարուստ դարաւոսփերը. կենդանութիւնը չէր փախչում այնտեղից, ամեն կողմ աղմուկ, կեանք, թռչունների երգ, ջրերի խոխոջիւն, հօտերի բառաչ, հովուի սրնգի քաղցր ելևէջներ, հնձւորի երգ, հօտաղների պար անպատկաս էին այնտեղ: Սև-Ջուրը չէր հոսում այդպէս մռայլ ու պղտոր. նա թաւալում էր ակալ ջրեր և կարկաչում էր կանաչազարդ ափերի մէջ. այդ ժամանակ նա Սև կոչուելու տեղ Սպիտակ-Ջուր էր կոչւում:

Այդ մոռացուած ժամանակում մի ծեր նահապետ էր իշխում այնտեղ իր բազմամարդ ընտանիքով, որ անբաւ հարստութիւն ունէր, անհամար հօտեր, ընդարձակածաւալ արտեր, այգիներ, աշխարհի ամենատեսակ բարիքներ։ Ութ որդիները և բազմաթիւ թոռներն անդադար աշխատում էին և նրանց ազնիւ ճիգերի արդիւնք էր այդ ահագին հարստութիւնը, որ վայելում էր նահապետի ընտանիքը։ Այրիի արտասուքի, որբերի հառաչանքի, խեղճերի անէծքի գինը երբէք չէր խառնուել նրանց արդար վաստակին։ Երջանկութեան և արդարութեան այդ յարկի տակ ամենքն ապրում էին առաքինի կեանքով և երկինքն օրհնում էր այդ օջախը։ Առաքինութիւնն այդ ընտանիքի կրօնն էր ու նրա գերագոյն մարմնացումը՝ համայն տիեզերքը։ Տիեզերական օրէնքների սքանչելի ներդաշնակութեան մէջ փնտռում էին նրանք անսահման և անսկիզբ նիւթի հրաշագործ, ամենազօր Ոգին։ Սպիտակութիւնն էր ծառայում իբրև առաքինութեան խորհրդանշան երկրի վրայ, իբրև մաքրութիւն, սրբութիւն։ Առաքինութիւնն ու սրբութիւնը այդ ընտանիքի համար մարմնանում էին այն ձիւնի պէս սպիտակ թռչունների մէջ, որոնցով լիքն էին Մասսի անտառներն ու ձորերը։ Կոյսերի բարքն այնքան մաքուր, ճերմակ պիտի լինէր, որպէս այդ թռչունների ձիւնափայլ թևերը, եբիտասարդների հոգին նոյնքան անբիծ, նոյնքան պարզ, պայծառ պիտի լինէր, որպէս այդ թռչունների անմեղութիւնը։

Տարիներ էին սահում տարիների յետեւից և ծեր նահապետի ընտանիքն ապրում էր առաքինի կեանքով, բարօրութեան և երջանկութեան մէջ։ Ճերմակ թռչուններն իրանց յարատև ուրախ ճռւողիւնով քաջալերում էին մարդկանց այդ ընթացքը և ասես ուրախ էին, որ բախտաւորութիւնը իշխում է իրանց շուրջը։ Սուրբ էին համարւում այդ թռչունները. ոչ ոք նրանց չէր դիպչում, ոչ մի մանուկի ձեռքից անգամ փոքրիկ խիճ չէր ուղղւում դէպի առաքինութեան այդ մարմնացումները, նրանց խնայում, նրանց սիրում էին. կարծես ընտանի թռչուններ լինէին, մարդկանցից այլ ևս չէին էլ փախչում։

Բայց լինչ կայ երկնքի տակ կայուն և անփոփոխ։ Հին իմաստասէրն իրաւամբ է նկատել, թէ աստուածներն սկզբում կամեցան չարն ու բարին, բախտն ու երջանկութիւնն իրար խառնել, միացնել և մի հատիկ երևոյթ դարձնել, բայց այդ անկարելի եղաւ. այն ժամանակ նրանք կապեցին իրար այդ երկու հակադիր երևոյթներն այնպէս, որ մէկը միշտ հետևի միւսին անխափան և իրար ոչնչով չը նմանող այդ ճանապարհները տնօրինող քոյրերին անուանեցին կատագիրներ։ Այն ժամանակից աշխարհում չարն ու բարին յաջորդում են իրար և մարդկային կացութիւնից վեր է նրանց ընթացքին ուղղութիւն տալ կամ արգելք լինել մէկին ու մէկին։

Այսպէս նահապետական ընտանիքի երջանկութեան կողքին յանկարծ անսպասելի կերպով տնկուեց Չարիքը։ Մասի այրերում բուն դրեց մի աւազակային ցեղ և իր սարսափը սփռեց ամեն կողմ։ Չէնքի, ոյժի և արեան ծարաւի մի բանակ էր այդ։ Իրաւունքն ու արդարութիւնը նրանց անհասկանալի էր, թուլութիւնը՝ ամօթ, խեղճութիւնը՝ արատ, աղաչանքը՝ գթութեան փոխարէն վայրենի զբքիչ էր բարձրացնում։ Տիեզերական Մեծ Ոգու ոյժը նրանք համարում էին խեղճերին ու թոյլերին մխիթարող հեքիաթներ. ոճիրը քաղաքացիական պարտքերի շարքն էր անցել և փառաբանւում էր։

Դաշտավայրի վրայ, Մասի ստորոտներում իրաւունք չէր մնացել, որ ոտնակոխ չը լինէր, սրբութիւն չէր մնացել, որ չանարգուէր, մարդիկ խմբերով գաղթում էին անհիւրընկալ դարձած այդ երկրից։ Չարը յաղթանակում էր, չարն իշխում էր։

Ծերունի նահապետն օր օրի վրայ լսում էր, թէ ինչ ահաւոր անցքեր են կատարւում իր շուրջը և մնացել էր զարմացած, որ աշխարհում կան մարդիկ, որոնք գազաններից ոչնչով չեն զանազանւում։ Իր անմեղութեան մէջ նա մինչև այժմ կարծում էր, թէ աշխարհում ամենքն առաքինի են իր ընտանիքի պէս, թէ ամենքի հոգին և գործերը այն չքնաղ թռչունների ճերմակ, ձիւնանման թևերի մաքրութիւնն ունեն։ Առաքինութիւնը նրան թւում էր այնքան

հեշտ, այնքան հասկանալի մի պարտականութիւն, որ զարմանում էր մարդկանց չարութեան վրայ, զարմանում էր, որ մարդիկ բարի չեն։ Չարիքի բացատրութիւնը նա բնութեան մէջ գտնել չէր կարողանում. բնութեան երևոյթների միայն ներդաշնակութիւնն էր տեսնում և այդ ներդաշնակութիւնից քաղում էր սէր դէպի ամենքը. դէմ է գրկում բնութիւնը. ո՛ր արարածը կարող է գանգատուել նրանից։ Ո՞ւր է կռիւը, ո՞ւր է չարը. ինչո՞ւ ուրեմն միայն մարդը չար պիտի լինի, — մտածում էր ծերունին և այդ ծանրալինի, — մտածում էր ծերունին և այդ ծանրակշիռ հարցերին ոչ մի պատասխան գտնել չէր կարողանում։

Եւ չարիքը շարունակւում էր։

Մի երեկոյ խաշնարած որդիները հօտերը տուն բերին ուշ ու տրտում, համարեա արտասուելով։ Աւազակները քշել տարել էին հօտի մի մեծ բաժինը։ Հայրն առանց հարցնելու հասկացաւ բոլորը և լուռ կացաւ. քիչ յետոյ գլուխը բարձրացրեց և ասաց որդիներին.

— Տարան. փոյթ չէ, որդիք, մի վհատուիք, թող տանեն, այնուամենայնիւ ձեր ընթացքը թող չը փոխուի. մի մոռացէք առաքինութիւնը և նրա շուտով ընթացէք։ Եթէ նորից պահանջեն, տուէք առանց կռուի։

— Հայր, ասաց որդիներից մէկը, բայց այդ պէս չէ մտածում մեր մեծ եղբայրը։ Երբ չարը մօտենայ, նա մեզ հրաւիրում էր կռուել, դիմադրել, և թոյլ չը տալ, որ ոչխարները տա-

նեն։ Երբ մենք ականջ չարինք, նա ուզում էր մենակ կռուի բռնուել և մենք հազիւ հազ կարողացանք նրա դայրոյթն ու կատաղութիւնը զսպել այսօր։

Հայրը յանդիմանական հայեացք ուղղեց դէպի մեծ որդին։ Նա մի գեղեցիկ աղամարդ էր, հուժկու, ջլոտ մարմնակազմով, կորովի դէմքով, կենդանի աչքերով, որոնք այդ ժամին պատած էին տխրութեան մռայլ քօղով։

—Մի՛թէ ճշմարիտ է, որդի. երբ և ոչ սովրեցրեց քեզ չարին հակառակ կենալ։

Որդին հեզութեամբ լսեց հօր ասածը, բայց ճակատի կնճիռները չը բացուեցին, դէմքի թախիծը չը հեռացաւ։

—Հայր, ասաց նա,—քո ցոյց տուած առաքինութեան ճանապարհից ես երբէք չեմ դուրս եկել. քո իւրաքանչիւր խօսքը սուրբ է ինձ համար, միայն թէ ես առաքինութիւնը մինչև այսօր այլ կերպ եմ հասկացել, բնութեան գրքում ուրիշ մտքեր եմ կարդացել։ Հայր, էլ դժուար է ինձ այսքան տարուց յետոյ հակառակը սովրել։ Որ ուրիշի ունեցածը, սեփականութիւնը մենք չը պիտի յափշտակենք, որ թշուառութիւնը դուր չը պիտի թակի մեր դուռը, այս առաքինութիւն է։ Բայց երբ անօրէն մարդիկ գալիս են մեր արդար վաստակի արդիւնքը մեզանից խլելու, մեր օջախն անարգելու, և մենք նայում ենք անտարբեր, ես այս առաքինութիւն չեմ համարում։

—Ուրեմն կռիւն ու արիւնհեղութիւնն է առաքինութիւն։

—Մինչև այսօր, երբ մենք միայն բարիք ենք արել, մենք առաքինի ենք եղել, բայց եթէ այսօր մենք թոյլ տանք, որ չարերն անպատիժ տանեն մեր հօտերը, մեր առաքինութիւնը կիսատ, անկատար կը լինի։

—Այդ առաքինութիւնն ինձ հարկաւոր չէ։

—Դժբախտ է այդ որդին, որ ատիպուած է իր հօր կամքին հակառակ ընթանալ, բայց թող երկինքը դատէ։

—Երկինքը միշտ խօսել է հայրերի բերանով. վայ նրանց, որ չեն լսի ծեր շրթունքներից լսուող խորհրդին։ Եթէ քո առաքինութիւնն այդքան տարբեր է քո հօր և քո ընտանիքի, քո պապերի առաքինութիւնից, այս արդարութեան յարկի տակ դու այլ ևս տեղ չունես։ Լաւ է քեզ չունենամ, քան թէ այս բոլորին։ Գնա այդ նոր առաքինութեան դասերը քարոզիր ուրիշներին, իսկ ես իմ վիշտը կը յանձնեմ Մեծ-Ոգուն։

Հայց ու կոծը բարձրացաւ տանը. առաջին անգամն էր, որ այս յարկի տակ այսչափ ծանր խօսքեր էին լսւում, առաջին անգամն էր, որ այս ընտանիքի մի անդամը ըմբոստանում էր իր նահապետի դէմ։

Եւ որդին գնաց, տանելով իր հետ իր կինն ու զաւակը։

—

III

Օրեր և ամիսներ անցան։ Եւ ամեն մի օր բերում էր իր հետ նոր և աւելի ծանր փորձութիւններ։ Ծեր նահապետի խաշներն առաջուայ պէս դաշտ էին գնում որդիների հսկողութեամբ, բայց իւրաքանչիւր երեկոյ նուազած էին վերադառնում։ Արտերը ցանւում, խնամւում էին, բայց մեծամասնութիւնը հունձի չը հասած ձիւրի ոտների տակ կոխան էր լինում։ Աւազակները օր աւուր աւելի անպատկառ էին դառնում. սակայն ծեր նահապետը շարունակում էր խրատել իր որդիներին, որ խաղաղ և առաքինի մնան։ «Մեր աշխատանքի, մեր ստացուածքի մի մասից զրկուելով մենք չենք մահանայ, կրկնում էր նա յաճախ, բայց առանց առաքինութեան կեանքը ժահ է. Մեծ-Ոգին կ'օգնի մեզ»։

Դարձեալ անցան ամիսներ ու տարիներ։ Նիւթական զրկանքին յաջորդեց բարոյականը. կամաց-կամաց ծերունու որդիները դարձան մի տեսակ տարուկներ, աւազակների համար ձրի աշխատողներ։ Այդ բաւական չէ, օրհնուած ընտանիքի դռանը յայտնուեց աղքատութիւնը։ Վերջապէս երկինքն էլ կարծես զինուեց ծերունու դէմ։ Մինչև այդ ժամանակ անյայտ, անծանօթ միջատներ յանկարծ լոյս ընկան անհամար բազմութեամբ։ Նրանք ծածկեցին ողջ շրջակայքը և սկսեցին ապտուտեամբ ոչնչացնել ցորենի արտերը։ Մի արտ ոչնչացնելուց յետոյ նրանք

խմբերով թռչում էին դէպի յաջորդը և իսկոյն առաջինի վիճակին վերածում նրան։ Մահը և այն սովի մահը անխուսափելի էր երևում ծերի ընտանիքի համար։ Առաքինութիւնն անզօր էր փրկելու նրան։ Եւ ծերունին ճնացել էր ապշած. նա նայում էր հնձուելու մօտ արտերի մէկիկ-մէկիկ ոչնչանալուն, նայում էր այդ զարմանալի միջատներին, և չը գիտէր ո՞ւր փնտրի օգնութիւն։ Իրանից վեր անտառների ծառերի վրայ թառած սպիտակ թռչունները նոյնպէս դիտում էին այդ տխուր տեսարանը և չէին ճռուողում. նրանք էլ ասես տխուր էին, առաքինութիւնը սպում էր կարծես։ Եւ ծերունին նայում էր մերթ միջատներին, մերթ արտերին և մերթ այս թռչուններին։

Անցան ժամեր։ Յանկարծ թռչունները միաժամանակ և միաձայն մի տարօրինակ ճիչ արձակեցին և բոլորը միասին թռան դէպի ցած, դէպի հարթավայրը, ուր ձգուած էին արտերը։

Ծերունին դիտում էր։ Եւ նրա աչքերին ներկայացաւ մի զարմանալի տեսարան։ Առքինութեան թռչունները հասան միջատներին և սկսեցին կատաղի կերպով կտտորել նրանց։ Անողորմ ջարդը երկար աւեց, թռչունների նորանոր խմբեր հասան կռուի տեղը և կտտորածը կրկին և կրկին նորոգուեց. դաշտերը ողջ ծածկուեցին միջատների դիակներով և երեկոյեան կուեցին միջատների դիակներով և երեկոյեան մօտ արտերի ճնացորդը փրկուած էր՝ միջատների խաղաղ ոչնչանալով։

Յոգնած, ուժասպառ թռչունները յետ եկան դէպի Մասսի անտառներն ու ժայռերը, կառուցները քսեցին ծառերի ճիւղերին և ուրախ ճրուողիւնով լցրին շրջակայքը, կարծես նրանք էլ ախուր չէին։

Ծերունին տեսաւ այս բոլորը և խոր մտածմունքների մէջ ընկղմուեց։ Սա ինչ տարօրինակ երևոյթ էր. անբան թռչունները կուռում էին, առաքինութեան նշան համարուող այդ անմեղ թռչունները կոտորած արին, ասել է թէ հէնց ինքը առաքինութիւնը կռուեց և վրկեց նրա ընտանիքը։ Սա նոր բան էր։ Ծերունին նստեց մի քարի վրայ և երկար, երկար մտածում էր։ Նա յիշեց իր որդու խօսքերը։ Մի՞թէ նա իրաւունք ունէր և ինքը անարդար տեղը տուն ու տեղից հալածական արեց իր հարազատ զաւակին։ Այս միտքը ծերունու սիրտը պատեց անհնարին ցաւով։ Քանի՜-քանի գարուն էր բոլորել նրա գլխով, բայց նա մինչև այժմ այնպիսի ծանր հոգեկան վիճակի մէջ չէր եղել։

Երկար մտածեց ծերը, բայց անկարող լինելով լուծել այդ հանելուկը, նա դառնագին արտասուեց անզօրութեան, յուսահատութեան յուզիչ արտասուքներով, վշտացած ծերի արտասուքներով, որոնք այնքան դառնութիւն ունեն իրանց մէջ։

Առաջից անցնում էր մի ճանապարհորդ օտարական. քայլուածքից երևում էր, որ նա շատ երկար է քայլել։ Գաւազանը, որ նա բռնած ունէր իր ձեռքին, հին էր ու մաշուած ծայրով։ Նա երիտասարդ էր, բայց երևում էր, որ շատ է ապրել, շատ չար ու բարի է տեսել աշխարհում, շատ է տանջուել, շատ ցաւեր կրել։ Նա մուրացկան չէր և ոչ էլ երգիչ, որովհետև ոչ մաղախ ունէր և ոչ էլ սազ։ Թաւ ու գեղեցիկ մազերը իջնում էին մինչև ուսերը հարուստ խոպոպներով, անխնամ բայց փարթամ մորուքը ոլոր-մոլոր փռուած էր նրա լայն կրծքի վրայ, աչքերը խելացի էին և արտայայտիչ։ Արդեօք նրա դէմքի խորին տխրութիւնն էր պատճառ, թէ՞ մի ուրիշ բան, միայն նրա ամբողջ դէմքն առնացի կորովի հետ միասին մի ինչ-որ գրաւիչ, ինչ-որ վեհ արտայայտութիւն ունէր։

Օտարականը տեսնելով արտասուող ծերունուն, կանգ առաւ և հառաչելով ասաց.

—Դարձեալ արցունք. ախ ե՞րբ վերջ կառնի արտասուքն աշխարհից, ե՞րբ հանգիստ կ'առնի իմ տանջուած մարմինը, և ե՞րբ քո ոտուերը կը դադարի թափառելուց, հայր, և դու խաղաղ կը քնես քո յաւիտենական բնակարանում։

Զարմացած ծերունին բարձրացրեց գլուխը և ուշադրութեամբ նայեց անցորդին։

—Ո՞վ ես դու, ասաց, ով օտարական, և ինչո՞ւ ես հառաչում իմ արցունքի համար։

—Ես հառաչում եմ, որովհետև աշխարհում չը կայ մի կաթիլ արցունք, որ իմը չը լինի։

—Եւ ովվ է քեզ տուել այդքան արցունք, ով է,

որ հզօր ձեռքով կապել է քո բախտը աշխարհի ցաւի հետ։

—Իմ հօր անէծքը, որ օր ու գիշեր ինձ հալածում է, մղում է ինձ երկրից երկիր և ամեն տեղ բաժին հանում ինձ միայն արցունքներ։ Լսիր, Ծերունի, դադարիր լալուց, պատմիր ինձ քո գլխի անցքը. ով գիտէ, գուցէ կարողանամ օգնել քեզ։ Ես մի թշուառ մարդ եմ, թափառական և անտուն, չունեմ նոյն իսկ գլուխ դնելու տեղ, բայց իմ անվերջ ճանապարհի վրայ ես տեղ-տեղ բախտաւորութիւն եմ թողել ինձանից յետոյ։

Ծերը դադարեց լալուց, պատմեց անցորդին իր թշուառութիւնը, պատմեց աւազակների մասին, պատմեց այդ օրն իր տեսած տարօրինակ կռուի մասին։ Օտարականը լսեց ուշադրութեամբ և վերջում ասաց.

—Հիւր ընդունիր ինձ մի առ ժամանակ քո յարկի տակ։

Ծերունին նրան սիրով առաջնորդեց դէպի տուն։

Դարձեալ օրեր և շաբաթներ անցան։ Ծեր նահապետի տան տեսքը վերափոխուեց շնորհիւ օտարականի իմաստուն խորհուրդների։ Նա սովորեցրեց խաշնարածներին դէմ դնել աւազակների յարձակմանը, չը տալ սեփական բարիքը, գլուխ չը ծռել չարիքի առաջ։ Ծերունին այլևս դէմ չէր այդ միջոցներին, թռչունների օրինակը և օտարականի պատմութիւնները նրան համոզել էին։

Ամեն առաւօտ օտարականը ծերի որդիների հետ միասին դուրս էր տանում հօտն արածացնելու և երեկոյեան բերում անվնաս։ Օր չէր անցնում, որ դաշտում կռիւ տեղի չունենար, բայց հովիւներն ամեն անգամ հալածում էին աւազակներին։

Հասաւ նաև հնձի ժամանակը։ Արտերը լեռան փէշերի վրայ էին փռուած։ Գիշերները ամեն մէկը մի արտի պահպանութիւնն էր յանձն առնում, մինչև որ կարողանան բոլոր դէզերը տուն բերել։ Ամեն մի պահապան մի մեծ խարոյկ էր պատրաստում իր արտի կողքին և վտանգի րոպէին կրակ էր տալիս։ Միւսները չորս կողմից օգնութեան էին հասնում և հալածում աւազակներին։ Յուսահատուած էին աւազակները, նրանք այդ տարին ապրելու միջոցները չունէին։

Նահապետի յարկի տակ այժմ երջանկութիւն էր թագաւորում։ Հին, լաւ օրերը կրկին վրայ հասան, խաշները նորից բազմացան, շահմարանները վերսին լցուեցին, երկիւղն ու յուսահատութիւնը հալածուեց, վրայ հասաւ գործի, աշխատանքի և վայելքի շրջանը. մարդիկ աշխատում էին, կռւում էին և վայելում։

—

VI

Վերջապէս մի առաւօտ օտարականը ձեռք առաւ իր պանդխտութեան գաւազանը և ասաց ծերունուն.

—Ես գնում եմ այսօր: Շնորհակալ եմ քո հիւրասիրութեան համար. դու արտասուում էիր, երբ մենք պատահեցինք. այժմ ուրախ են ամենքը քո յարկի տակ: Քո որդիքն այսուհետև առանց ինձ կարող են ապրել. ես նրանց ուսուցի աշխարհի իմաստութիւնը: Այժմ գնում են շարունակելու իմ գործը, գնում եմ սրբելու ուրիշ նոր արցունքներ, ամոքելու ուրիշ ցաւեր: Մնաս բարով:

—Ո՜հ ո՛չ, զաւակս, պատասխանեց ծերունին, մի անիր այդ, վա՛ր դիր այդ պանդխտութեան գաւազանը և հանգի՛ստ առ վերջապէս այս յարկի տակ: Մեր թշուառութեան, մեր ցաւերի օրերի մէջ ընկեր եղար, ծա՛ռ վայելելու քո ջանքերի արդիւնքը. ծա՛ռ և եղի՛ր իմ որդիներիցմէկը:

Ժպտաց օտարականը, ուրախութեան մի փայլ անցաւ նրա գեղեցիկ դէմքի վրայով. քանի՛ տարի էր, որ նա չէր ժպտացել:

—Այս ի՞նչ եմ լսում, ողորմած երկինք, բացականչեց նա. մի՞թէ յիրաւի իմ տառապանքները վերջանում են այստեղ: Այս քանի տարի է, որ թափառում եմ այսպէս արար-աշխարհում և այս ականջներս դեռ չէին լսել այսպիսի սիրոյ և գթութեան խօսքեր: Ոչ ոք չէ իմացել իմ

դլխի անցքը, տա՛ք սիրտ չեմ գտել երբէք՝ թափելու նրա առաջ իմ ծով ցաւերը. դու առաջինն ես, որ բաց արիր իմ լեզուն, և քո առաջ կը բանամ հոգւոյս վշտերը:

—Պատմի՛ր, զաւակս. իմացիր, ո՛վ և լինիս, դու իմ զաւակն ես:

—«Ինձ հալածում է իմ հօր անէծքը, այսպէս սկսեց օտարականը: Օ՜, հօր անէծք. մի՛ անիծիր ծերունի, երբէք մի անիծիր: Արիւնաբերուչարագործն անգամ արժանի չէ հօր անէծքի: Զը կայ աւելի մեծ ոճիր, քան թէ առաքինութեան հակառակ ընթանալը, բայց և չը կայ աւելի ահաւոր պատիժ, քան հօր շրթունքներից դուրս թռած անէծքը:

«Միակ որդին էի ես իմ հարուստ հօր. բարի էր նա և արդարասէր, առաքինի բայց և խստասիրտ: Անճարի արցունքն իր ձեռքով էր սրբում, վիրաւորի վէրքն իր ձեռքով կապում, հիւանդի շրթունքին իր ձեռքով մօտեցնում դարմանը: Բայց նոյն այդ հեզ, բարի մարդը դարհուրելի էր չարագործների համար:

«Արդար դատաստի ժամերին բարի աչքերից շանթեր էր արձակում. ձայնը դառնում էր ամպերի որոտ: Անարդարութիւնը հալածուած էր մեր գիւղում և միայն հօրս անունը բաւական էր, որ չարագործութիւնը հեռու փախչէր մեր սահմաններից: Մարդիկ ապրում էին խաղաղ, երջանիկ, օրհնելով հօրս կեանքն ու յիշատակը, որի առաքինութեան պտուղները վայելում էին:

Նա խրատում էր ինձ նոյն շաւղով ընթանալ, բարիք գործել և կուռել չարի դէմ։ Որպէս զի լաւ տպաւորուէին իմ սրտում խրատները, քաջալերում էր իր օրինակներով, տանում էր իր հետ ամեն տեղ, ուր հարկաւոր էր կռիւ մղել մի չար ոյժի դէմ։

«Մի տարի բուք ձմեռ էր։ Ձիւնը թափւում էր հիւսերով. կատաղած քամին իր անճոռնի ոռնոցով սարսափ էր ազդում. նոյն իսկ վայրի գազանները սիրտ չէին անիլ դուրսը մնալ։ Եւ այդ սարսափելի ժամին հայրս ինձ ասաց.

—Վեր կաց՝ որդի, վեր կաց դուրս գնանք դէպի մեր լեռների նեղ շաւիղները, անցնենք, նայենք մեր վտանգաւոր ձորերը։ Գիտեմ, չարքիքն ընտրում է հեռաւոր վայրեր և այսպիսի չար, անհամբոյր եղանակ։ Ուշացած ճամբորդը կարող է գոհ գնալ կատաղած բքին, օտարականը ձիւնի ձեռքից կարող է մոլորուել, կորչել, իր սև օրուայ համար դուրսը մնացող մէկը կարող է գազանների ճանկն ընկնել։ Ժամը չար է, սրան են սպասում աւազակները ճանապարհների վրայ, գայլերը խմբով այսպիսի ժամին դուրս են թափւում իրանց որջերից, բնութեան արհաւիրքի հետ ամեն բան շրջակայքում ահաւոր է դառնում։ Մեր պարտքն է այսպիսի ժամերին զգոյշ ու արթուն կենալ։ Պէտք է գնալ, շրջել այնտեղ, ուր հոսում է արտասուքը, ուր հնչւում է օգնութեան աղաղակը։

«Ես սոսկացի. այս ձիւն ու ձմրանը, այս

բուք ու բորանին ինչպէս սիրտ անել, դիւղից դուրս գնալ։ Բայց գիտէի, որ հօրս ասածը՝ օրէնք է։

«Եւ մենք գնացինք։

«Թափւում էր ձիւնը, վչում էր քամին. հայրս շարունակ առաջ էր գնում և ես հետեւում էի նրան մինչև ծնկներս ձիւնի մէջ թաղուած։ Ո՛չ մի ձայն չէր լսւում, բացի քամու կատաղի ոռնոցից։ Ես դողում էի ցրտից, դողում էի նաև երկիւղից. ես դեռ փոքր էի, ես վախենում էի գայլերից, արջերից և աւազակներից, բայց սիրտ չէի անում հօրս խնդրել վերադառնալ։ Մի քանի ձորեր թափառելուց յետոյ, նա յետ դարձաւ վերջապէս և սկսեց դէպի տուն քայլել։ Հազիւ մի քանի քայլ արած, յանկարծ մեր ականջին մի մարդկային աղաղակ հասաւ, աղեխարշ, ցաւոտ աղաղակ, որ մերթ հանւում էր մեզ քամու թափով և մերթ ընդհատւում։ Հայրս կանգ առաւ, նա պատրաստ էր յետ դառնալ և վազել դէպի այդ ձայնը, իսկ ես ոյժ չունէի այլ ևս քայլելու, պէտք էր մի ճար անել և տուն գնալ։

—Լսի՛ր որդի, ասաց նա ինձ. արդեօք դու էլ լսո՞ւմ ես այդ սարսափելի ձայնը. դու լաւ կը լսես ինձանից։

—Հայր, պատասխանեցի, դա քամին է այդպէս հառաչում լեռներում, ուրիշ ձայն չը կայ։

«Նա հանգստացած՝ մի քանի քայլ արեց, բայց յանկարծ նորից քամու մռնչիւնի հետ լը-

սուեց նոյն զարհուրելի ձայնը, այս անգամ աւելի բարձր, աւելի ազեխարշ։

—Դարձեալ. օ՜, այնտեղ, այն միւս ձորակում մի սարսափելի բան է կատարուում. որդի, ականջ դիր, մարդու ձայն չէ՞ այդ։

—Չէ, հայր, չէ, քաղցած մի գայլի ոռնոց է այդ, որ դուրս է եկել, որս է փնտրում։ Հայր, շարժուենք շուտով, գուցէ շատ են գայլերը, և մենք կը վտանգուենք։

«Երևի իմ կեանքի համար վախեցաւ. սա առաջին անգամն էր, որ այսպիսի վտանգի էր ենթարկուում նա ինձ, ուրիշ շատ դէպքերում ես ընկերացել էի նրան, բայց երբէք այսպիսի սարսափելի ժամին նա ինձ դեռ դուրս չէր տարել։ Իմ խօսքերի վրայ նա արագացրեց քայլերը դէպի տուն։ Յանկարծ մէկ էլ նա կանգ առաւ սարսափած։ Սպանիչ ձայնը զարձեալ լսուեց, բայց այս անգամ այն ասպիճան յուզիչ, այն ասպիճան ազիողորմ, որ իմ երակների մէջ արիւնը կանգ առաւ, երկիւղը պաշարեց ինձ։

—Որդի, մի՞թէ այս անգամ էլ դու ոչինչ չես լսում, չէ՞ որ դու լաւ լսողութիւն ունես։

—Հայր, լսում եմ, բայց մարդու չէ այդ ձայնը. ոմն գիտէ, որ այրում ազուէսն է սրտացաւ կպել, կաղկանձում է ցաւից. չէ՞ որ ազուէսները յաճախ են սրտացաւ լինում։ Շտապենք, հայր, քամին է ոռնում, գուցէ գայլերն են մռնչում, ազուէսն է կաղկանձում, ոչ մի մարդ-

կային շունչ չը կայ այն կողմերում. շտապենք տուն հասնենք, բուքը գառնում է ահաւոր մեզ համար։

«Եւ ես խաբեցի իմ հարազատ ծնողին և մենք յետ դարձանք տուն։ Միւս օրը յայտնի եղաւ, որ այնտեղ ձորակում գայլերի կատաղութեանը զոհ է գնացել մի ուշացած ճանապարհորդ։

«Սարսափելի լուրը շանթահարեց իմ հօրը և նա գայրոյթից ու վշտից անկողին մտաւ։ Երկար տևեց այդ հիւանդութիւնը, երբ մահը մօտ տենում էր, այն ժամանակ նա կանչեց ինձ և ասաց.

—Ես մեռնում եմ, լսիր, այսքան գարուն էր բոլորել իմ գլխով, դեռ երբէք իմ ականջին հասած թշուառի ձայնն անօգուտ չէր անցել. և որովհետև իմ կեանքի վերջալուսին դու ինձ պարտք տուիր այս մեծ ոճիրը, որովհետև ակամայ մեղսակից դարձրիր ինձ չարին, որպէսզի մի անմեղ զոհ գնայ, ուստի ես նզովում եմ քեզ։ Ապրիր դարեր, եթէ հնար է, բայց թափառական և անհանգիստ շրջիր աշխարհի վրայ՝ ոչ մի տեղ կայան, հանգիստ չը գտնելով։ Զար է աշխարհը և արցունքն առատ, թափառիր անվերջ արցունքների ու թշուառութեան մէջ և երբ դանես մի դժբախտ, արտասուող, մնա նրա մօտ, սրբիր արցունքը և առաջ անցիր, փնտրիր նոր թշուառներ, ուրիշ արտասուողներ և դարձեալ սրբիր։ Այսպէս շարունակիր քո՝ ընթացքն

անվերջ, մինչև որ աշխարհը խղճայ քեզ, մինչև որ մի գթասիրտ քեզ իր յարկի տակ ապաստան շնորհի։ Իսկ մինչև այդ իմ ստուերն էլ թափառական և անհանգիստ կը մնայ երկրի վրայ և իմ ոսկորներն էլ կը դողան գերեզմանում։ Ես կը հանգստանամ, երբ որ կը կատարուի իմ բոլոր ասածը։

«Ինչ օրից յետոյ հայրս վախճանուեց և ես իմ մեծ յանցանքը քաւելու համար այն օրից մինչև այսօր թափառում եմ երկրից երկիր։

«Օ՜, չար է աշխարհը, ծերունի։ Շատ սրտեր տեսայ վէրքերով պատած, սպեղանի դրի այդ վէրքերի վրայ։ Արտասուք տեսայ, դառն արտասուքներ հեղեղի պէս, մնացի, իմ ձեռքով սրբեցի այդ արտասուքները։ Թշուառներ տեսայ, խեղճ անզօրներ տեսայ հալածուած հզօրներից, իմ բազուկը տուի նրանց։ Այրիներ տեսայ անտէր մնացած իրանց որբերի հետ, նրանց համար աշխատեցի և սովից փրկեցի։ Եւ ինչ, ամեն տեղ մարդիկ երբ այլևս ինձ կարօտ չէին, երբ ապաստում էին ծանր վիճակից, դարձնում էին ինձանից երեսները և ես հալածւում էի անվերջ, ապաստան չը գտնելով և ոչ մի յարկի տակ։ Հօրս անէծքն ինձ ուղեկցում էր, ոչ ոք չէր ասում՝ կխնայ այս թշուառի բեռի ծանրութիւնը, մասնակից կլինենք նրա ցաւերին, հարցնենք, թէ ինչո՞ւ է այս տառապանքների թանձր քօղը նրա երեսին, ինչո՞ւ ժպիտն ու ցնծութիւնը նրան երբէք բաժին չեն դառնում. ո՞վ է սա, ո՞րտեղից է գալիս և ինչո՞ւ

է յանձն առել այս անաւոր պարտքը՝ սրբելու օտարի արցունքը, ամոքելու ուրիշի ցաւերը։

«Ո՜հ, ոչ ոք, ոչ ոք. ընդհակառակն ամեն տեղ ես գտնում էի օգնութեան կարօտ խեղճեր և կամ մոռացկոտ աներախտապէտ երջանիկներ։ Քանի-քանի տեղ իրանց համար իմ կրած տանջանքներից յետոյ մարդիկ գտնում էին, որ ես աւելորդ հաց եմ ուտում։ Ա՛յսքան տարիներից յետոյ առաջին անգամն է, որ մի մարդ խղճում է ինձ, առաջին անգամն է, որ ինձ վերջապէս մի ապաստան է առաջարկւում։ Ուրեմն ես կարող եմ մնալ։ Այսպէս է եղել հօրս վերջին կամքը, այսօր նրա ստուերն ու՛ոսկորներն էլ հանգիստ կը ստանան։ Ես մնում եմ»։

V

Ծեր նահապետը ստատիկ ուրախացաւ։ Կանչեց իր բոլոր որդիներին և ասաց նրանց.

—Լսեցէ՛ք, որդիք, ես ծեր եմ և իմ օրերը համարուած են արդէն, կ՛ուզէի մահիցս առաջ յայտնել ձեզ իմ վերջին կամքը։ Այս օտարականն այսուհետև ձեր եղբայրն է և այն ձեր աւագ եղբայրը. փոխանակ իր այնքան ծառայութիւնների կը տաք նրան ձեզ հաւասար բաժին իմ մահից յետոյ։ Նրան լսեցէք, նրան հնազանդուեցէք, ինչպէս ձեր եղբօրը, որ գնաց կորաւ։

Որդիները լսեցին լռութեամբ, բայց նրանց սրտերում խուլ դժգոհութիւն բարձրացաւ։ Նրանք

սիրում էին օտարականին, քանի համոզուած էին, որ նա վերջ ի վերջոյ պէտք է հեռանայ, գնայ, բայց երբ հայրը նրան որդեգրեց, երբ իրանց բաժինին նոր ընկեր յայտնուեց ամեն մէկը բուռն ատելութեամբ լցուեց դէպի օտարականը. ոչ ոք չէր կամենում նրան հաւասար ընկեր ճանաչել: Նեղ օրերից ազատուած էին, և այդ օրերը մոռացութեան էին տրուած:

Եւ նոյն գիշերը շահախնդրութեամբ կուրացած, նրանք խեղդեցին իրանց մէջ առաքինութեան ձայնը և սև ապերախտութեան գարշելի գործ կատարեցին:

Կէս գիշեր էր. իւրաքանչիւրն իր պահպանութեան յանձնուած արտի մօտ նստած, հսկում էր դէզերին: Յանկարծ օտարականը վառեց իր խարոյկը՝ իբր վտանգի նշան: Աւազակների մի ստուար խումբ յատկապէս նրա վրայ էր գալիս: Բոցերը բարձրացան, շրջակայքը լուսաւորուեց, բայց այս անգամ ոչ ոք տեղից չը շարժուեց: Մենակ միայն նա, ով այնքան ժամանակ իր կեանքի գնով պաշտպանել էր նրանց: Թշնամիները մօտենում էին բայց օգնութեան եկող չը կար: Օտարականը ձգեց խարոյկի մէջ ցորենի խրձերը, դարձեալ մարդ չեկաւ. աւազակները այժմ արդէն խիստ մօտ էին: Նա այն ժամանակ յուսահատուած կրակ տուեց մի ամբողջ դէզ և ահագին հրդեհը լուսաւորեց ողջ շրջակայքը: Նրա ճառագայթները հասան մինչև տուն և ծերունին ապշած դուրս եկաւ նայելու ահա-

ւոր հրդեհը, որ այնքան չարագուշակ էր: Սակայն դէպի ահագին հրդեհն էլ չօգնեց. եղբայրներից ոչ ոք տեղից չը շարժուեց:

Աւազակներին էլ հէնց այդ էր հարկաւոր. նրանք վաղուց էին աշխատում մէջտեղից վերցնել այս վտանգաւոր հակառակորդին, յուսալով՝ այնուհետև կրկին տէր լինել երկրին: Նրանք խմբով վրայ հասան ու բռնեցին նրան, կապտեցին ու տարան: Զարմանալի բան, անմիջապէս դէպքից յետոյ եղբայրները զգացին, թէ ինչ ծանր սխալ գործեցին, նրանք զգացին իրանց միայնութիւնն ու անզօրութիւնը, զգացին, որ այսուհետև էլ չեն կարող առաջուայ պէս դէմ դնել թշնամիներին, այս բոլորն զգացին, բայց արդէն ուշ էր: Ձարնները կտրած, նրանք որոշեցին անմիջապէս գաղթել, հեռանալ վտանգաւոր վայրերից, քանի ուշ չէ, քանի չեն կողոպտուել: Առաւօտեան նրանք հաղորդեցին իրանց հօրը, աւելացնելով՝ թէ ինչպէս իրանց պաշտպան օտարականը գոհ գնաց թշնամիներին շնորհիւ իր անհոգութեան, որովհետև կրակը չէր վառել: Բայց ծերունին տեսել էր կրակը. նա զգաց, որ որդիները խաբում են և որ մի ծանր ոճիր են գործել, ուստի կոչեց պայրացած.

—Էլ որդի չունեմ. սևահոգի դաւաճաններ, դուք էք մատնել նրան աւազակների ձեռքը, որովհետև դժգոհ էիք, որ նա ձեր բաժնին ընկեր դարձաւ: Հեռու ինձանից: Ուզում էք գաղ-

թել, գաղթեցէք. ես, միայն ես կը մնամ այս-տեղ. մինչև երկինք ճչալով ձեր ոճիրի մասին և թող ժայռերը ձեր փոխարէն ամօթից ճաքեն: Ես կը մնամ այստեղ, ուր ապրել են իմ նախնիքը, ուր նրանց գերեզմաններն են, եթէ մինչև իսկ այս լեռը գլխիս փուլ գայ: Իսկ հիմա ես կ'երթամ վնտրելու ձեր գոհին, մեռած կամ կենդանի, գայլերի, գազանների մէջ կը վնտրեմ. գուցէ նրանք ձեղանից ողորմած լինեն: Ես կերթամ աւազակների ոտները կ'ընկնեմ, կ'աղերսեմ, որ յետ տան ինձ իմ իսկական զաւակին, որ խղճան իմ ծերուԹեանը, խնայեն այս ճերմակ մազերին, որոնց դուք չը խնայեցիք: Անիծուիք դուք, հազար անգամ անիծուիք: Փուլ արի, տուն, վար իջիր, յարկ, դու պղծուեցիր, դու չարուԹեան, զաւաճանուԹեան բունն դարձար, էլ դժուար է ապրել քո տակ:

Եւ նա Թողեց տուն ու ընտանիքը և դողդողուն քայլերով դուրս գնաց դէպի Մասի ժայռերն ու ձորերը: Սպիտակ-Ջրի ափին հասնելով, նա կանգնեց ու կանչեց.

—Գէտ, ասա, ո՞ւր է իմ որդին, ո՞ր այրի մէջ է, չէ՞ դու նրանց տակից ես հոսում: Շատ տարի առաջ քո այս ափերով գնաց մէկը, դու տեսար և լուռ կացար, այն օրը հոսում էիր հանդարտ ու խորհրդաւոր. այն Թող քեզ լինի, ասա ո՞ւր է իմ այս երկրորդ որդին: Ժայռեր, ձորեր, դո՛ւք խօսեցէք, պատմեցէք, պատմեցէք

լինձ, ո՞ւր է իմ կարիճը, զաւաճանուԹեան, ապերախտուԹեան այդ անմեղ գոհը:

Լուռ էր լեռը, լուռ էին ժայռերն ու ձորերը, լուռ հոսում էր գետակը հանդարտ ճղփացնելով իր վճիտ ջրերը: Քամին փչում էր լեռան կատարից, հոդմահարում ծերի ճերմակ մազերն ու միրուքը, բայց նա շարունակում էր գնալ անընդհատ, փնտրել անդադար: Վրայ հասաւ գիշերը, սև, սրտաճաք գիշեր. ամեն մի ժայռը, ամեն մի ծառը մի-մի հրէշի կերպարանք առան, բայց ծերը շարունակում էր իր ընթացքը, անդադար կոչելով՝ «որդի՛ս, որդի՛ս» և արձագանքը հազար ձայներով կրկնում էր «որդի՛ս»:

Նա բարձրացաւ դէպի սարը. վերելքը ծանր էր, բայց այնտեղ վերևում նա այրեր գիտէր, այնտեղ էր գնում: Մերթ չանգռտում էր, մերթ սողում, մերթ գլորւում ընկնում էր կրկին, բարձրանում, դարձեալ շարունակում և անդադար կոչում՝ «որդի՛ս, որդի՛ս»: Յանկարծ իրանից ոչ հեռու մի ձայն պատասխանեց.

—Այստեղ եմ, հայր:

Ծերը գտաւ իր վնտրածը, մի ժայռի եզրին յենուած՝ կանգնած էր օտարականը:

—Է՛հ, որդիս, ե՛կ, իմ միակ հարազատը. ուրեմն դու կենդանի ես, ուրեմն աւազակներն աւելի գթոտ են եղել, քան իմ որդիները, որոնց դու այնքան ժամանակ եղբայր եղար:

Սակայն տեսնելով՝ որ նա չէ շարժւում

տեղից, լինքը ծերը առաջացաւ և փարեց նրա պարանոցով։

—Գնանք, որդի, գնանք հեռանանք այս տեղից շուտով։

—Չեմ կարող, հայր, ոհ, էլ չեմ կարող. իմը վերջացաւ, ես այլ ևս ոչինչ չունեմ աշխարհի հետ, ես էլ այս աշխարհից չեմ։

Ծերունին զարմացած լսում էր, բայց չէր հասկանում։

—Դու զայրացած ես, ես այդ հասկանում եմ, թող այդ, իսկ այժմ բռնիր ինձ և իջնենք շուտով։

—Խեղճ հայր. դիշեր է և դու երևի չես տեսնում, թէ աւազակները ինչ գնով են խնայել իմ կեանքը։ Ես կոյր եմ, հայր, յաւիտենական խաւարն է պատել աչքերս։

—Երկինք, ճչաց ծերունին, կուրացրել են իմ զաւակին և Մեծ-Ոգին այդ թոյլ է տուել։ Նա նայել է վերից, երբ կուրանում է առաքինութիւնը։

—Էլ մի՛ վրդովուիր, հայր, իզուր է այդ բոլորը։ Աւազակները մեղաւոր չեն. շատ տարիներ է, ինչ ես հալածում էի նրանց. աշխարհը կռիւ է, ամեն կենդանի իր ապրուստի, իր գըլխի ճարն է տեսնում, աւազակներն էլ իրանց հոգսը հոգացին։ Ես նրանց ձեռն ընկայ շնորհիւ քո որդիների, որոնք ինձ մենակ թողին, չարը յաղթանակեց։ Նրանք տարան ինձ, պատուհասեցին, գիտես, չարերն էլ իրանց

պատասխանն ունեն, և որոշեցին ինձ կուրացնել։ Երկու փայտերի խանձուած ծայրերը բաւական էին երկու լոյս յաւիտեան մարելու համար։ Չէ, հայր, ես այժմ զղում եմ, հզօր է չարը, քանի նա իր աջակիցներն ունի նոյն իսկ իր զոհերի մէջ։

—Անէծք, անէծք իմ որդիներին։ Ծերունեան օրերում երբ մէկը պիտի ինձ առաջնորդեր, ես եմ ստիպուած առաջնորդ լինել այդ մէկին։ Բռնիր իմ ձեռքից և ես այսուհետև կը լինեմ քեզ առաջնորդ։ Եթէ քո վրայ ծանրանում էր հօրդ անէծքը, դու այն քաւեցիր զարհուրելի զոհով, բայց ինձ վրայ տակաւին ծանրանում է որդուս դէմ գործած յանցանքի ծանրութիւնը, այն իմ ազնիւ, կարիճ որդու, իմ արժանաւոր զաւակի, որի կորաեան ես պատճառ եղայ շատ տարիներ առաջ. երևի այդ մեղքն է, որ այժմ քաւում եմ։ Ո՜հ, ես հալածեցի նրան իմ տնից իր երեխայի և կնոջ հետ, որովհետև նա առաջինն էր, որ ինձանից գործի, կուռի առաքինութիւն պահանջեց։

—Խեղճ ծերունի, պինդ գրկիր այժմ քո թոռանը, այդ թշուառ որդիդ իմ հայրն է եղել, նրա անէծքն էր ծանրանում վրաս։ Ո՜հ, նա ինձ պատմել էր քանի-քանի անգամ, որ ինքը հայրենի տնից աքսորուած, հօրից հալածուած մէկն է Մեծ Լեռան ստորոտից շատ տարիներ առաջ։ Առաջին օրից իմ սիրտը վկայում էր, որ ես իմ հայրենի տանն եմ, բայց լուռ էի։

—Ա՜հ, խլացէք ականջներ, այս ինչ եմ լսում, իմ թոռը, իմ զաւակը կոյր. կոյր դարձած իմ իսկ որդինելի ձեռքով. ահ, որքան սև եղաւ իմ ճակատագիրը: Էլ որդի չունեմ, այս մի հատիկն է, այն էլ կոյր: Դէհ, բռնիր, որդի, այս թուլացած ձեռքս դեռ այնքան ոյժ ունի և հետևիր ինձ: Մենք կը շրջենք երկրից երկիր և կը պատմենք, եթէ կարող ենք, մեր անպատմելի ցաւը: Թող խեղճութիւնն ու սև ապերախտութիւնը մեզ հետ միասին աշխարհին ի տես գնան և թող նրանց զարհուրելի պատկերից չար աշխարհը դողայ, սարսռի: Առաքինութիւնը կուրացած՝ ոճրագործ և ապերախտ ձեռներով, ծեր ալիքներն անարգուած զաւակներից. թող այս մեծ ոճիրի պատմութիւնն աշխարհի սեփականութիւն դառնայ: Գնանք, հեռանանք այս տխուր վայրերից, և թող չոր անապատ դառնայ այս լեռը, օձերի և գազանների բնակարան լինի, քանի որ այստեղ այսքան ծանր ոճիրներ գործուեցին:

—Չէ, հայր, ներիր ինձ, ես էլ չեմ կարող աշխարհում շրջել, արդէն ես անպէտք եմ նրա համար: Էլ չեմ կարող աշխարհի ոչ մի ցաւին դարման տանել. չար է աշխարհը, բայց և թշուառ է, ապերախտ է, բայց կարօտ գթութեան: Սէր ու գութ է հարկաւոր անգութ աշխարհին, զոհեր են հարկաւոր նրան փրկելու. միայն բարով:

Եւ նա ձգեց իրան լեռան բարձրութիւնից

դէպի վար, դէպի անդունդը: Թշուառ ծերունին մեկնեց ձեռները, առաջ ձգուեց նրան բռնելու. բայց սարսափից քար կտրուեց, միայց երկու ձեռները տարածած, բերանը լայն բացած, դէմքին սարսափի արտայայտութիւնը պաղած, միացած յաւիտեան: Իսկ թոռը անդունդի վրայ մի պտոյտ գործեց, բայց չընկաւ վար, այլ մի կտոր սպիտակ ամպ դարձաւ և բարձրացաւ նստեց Մասիսի կատարին՝ ձերմակ, քնքոյշ, թափանցիկ:

Լուսանում էր: Թռչունները տեսան այդ բոլորը: Նոյն ժամին նրանք իրանց ձերմակ թեւերը թափ տուին, ձգուեցին դէպի վեր, ասես ուզում էին ձերմակ ամպի հետ գնալ դէպի լեռան կատարը և այնտեղից էլ դէպի անհունութիւն: Սակայն կարճ ժամանակից յետոյ նրանք ցած եկան այնտեղ, որտեղից բարձրացել էին. բայց էլ սպիտակ չէին, նրանց թևերն այժմ սև էր, ինչպէս մռայլ գիշեր, մէջքերն ու կուրծքը բաց-արնագոյն և իրանք տխուր, մռայլ: Նրանք սև հագան այն օրուանից յետոյ:

Ծերի որդիները, որոնք հետևել էին իրանց հօրը հեռուից, տեսան այդ բոլորը և սարսափով բռնուած յետ փախան և տուն ու տեղ թողնելով իրանց ընտանիքներով գաղթեցին և ցրուեկան զանազան երկիրներ:

Մասիսն էլ մէկէն անապատ կտրուեց, ասես պլիթական գաւազանի շարժումով. կեանքն ու բուսականութիւնը յանկարծ դադարեց այնտեղ: Լռեց ջրերի կարկաչիւնը, վտակները կո-

բան լեռան անդունդներում, խուլ դղրդիւն բարձրացնելով, ժայռերը ճեպցին մերկ ու խանձուած, կէսօրուայ տօթը մի քանի օրում չորացրեց խոտերն ու ծաղիկները, և վարից հոսող Սպիտակ-Ջուրը սևացաւ, մոայլուեց և այն օրուանից նրան Սև-Ջուր կոչեցին։

Այդ չարաբաստիկ օրից սկսած դարեր են գլորւում դարերի հետից և անաւորը, ամայի ու մոայլ է ճնում Մասիս սարը։

Երբ չարը խիստ է զօրանում աշխարհում, երաշտը խանձում, ոչնչացնում է ցանքսերը՝ սով սպառնալով, երբ հազարաւոր չորացած բազուկներ երկինք են ուղղւում՝ ցօղի կաթիլներ աղերսելով, մարած աչքերը Մասի կատարին են նայում՝ ամպի մի պատառ փնտրելով, այն ժամանակ նոյն ճերմակ ամպիկը յանկարծ լոյս է ընկնում կապոյտ եթերից և հովի թևերի վրայով մեղմիկ սահում է և քնքշաբար նստում լեռան կատարին, գլուխ հայեացք է ձգում տառապող, պապակուած երկրի վրայ և նրանից յետոյ մի՛ այն գալիս են խոշոր ամպերը, թափւում է անձրևը, ոռոգում դաշտերը։ Ճերմակ ամպիկը երկնքի ողորմութեան բանբերն է։

Բայց երբ մորեխն է իջնում երկրի վրայ, ոչնչացնում է ցորենի արտերը, այն ժամանակ սգաւոր թռչուններն են ցած գալիս սարից և կոտրում ոչնչացնում, մորեխներին և երկիրն ազատում սովից։ Նրանց թևերը տակաւին սև են, նրանց կուրծքն ու թիկունքը դեռ բոսորային է։

նրանք տակաւին սգաւոր են։

Եւ քանի իշխում է չարիքն աշխարհում, ասում են, նրանք սգաւոր կը ճնան և Մասիս սարը մոայլ, անհամբոյր ու չոր, իսկ Սև-Ջուրը կը հոսի սև ու պղտոր։

1899 թ.

«ԽԱԽԱՐԵ՛Ն, ԼՈ՛ՒՍԻՆ»

Այդպիսի բան դեռ չէր տեսել Ա... գիւղը։ Պղտոր, արիւնոտ հեղեղ էր արդեօք, որ եւ կաւ անցաւ գիւղի վրայով, թէ մի չը տեսնուած հրեղէն փոթորիկ. շշկլուած գիւղացիները այդ չ'իմացան, միայն երբ նրանք իրանց անհնարին սարսափից ուշքի եկան, գիւղում էլ ջահել-ջիւան չը կար։

Հօտաղները օր օրի վրայ սև լուրեր էին բերում դաշտերից. այստեղ, այնտեղ, մի ժայռի տակ, մի ձորակում, խոռոչում տակաւին դիակներ կային անթաղ, գազաններին կուր դարձած։ Ո՞վ կարող էր իր մեռելին տէր կենալ, թաղել. ցերեկը զինուած պահապաններն էին արգելում այդ, իսկ գիշերները տանից ոտք դուրս դնելու հնար չը կար, սար ու ձոր, քար ու բլուր մահ էին որձակում։ Եւ ընկածներն անթաղ էին մնում, այդպիսի ժամանակ էր, մի բուռն հողն էլ էր մերժւում դիակին, իսկ անմեղ սպանուածին տէր կենալը՝ յանցանք էր... Քանի՛ մայրեր էին լալիս, քանի՛ զուլխներ սև կապեցին։ Բազմաթիւ դժբախտների մէջ երջանիկ էր համարւում նոյն իսկ նա, ով իր ջահելից լուր չունէր, որի դիակը ոչ ոք տեսած չէր. ով գիտէ, գուցէ փախել ազատուել է, գուցէ մի տեղ

թագնուել է, «գուցէն» յոյս էր, անորոշ հեռաւոր յոյս, բայց էլի յոյս էր։

Ծովինարն էլ յոյս ունէր։ Մի շաբաթ անցաւ այն սև օրից և դեռ ոչ ոք չէր տեսել նրա Սէփօի դիակը։ Թող չը տեսնի, յաւիտեան չը տեսնի, նոյն իսկ կուրանայ, միայն թէ իմանայ, որ իր աչքի լոյս զաւակը, իր Սէփօն ազատուել է, ապրում է։ Ա՛յսպէս էր մտածում մայրը և մեղմիկ օրօրում էր խնոցին իրանց բակում։ Յանկարծ նա խնոցին թողեց, կանգ առաւ. հարևան բակից լսուեց մի մեղմ, կանացի ձայն, որ երգում էր դառն, ողբաձայն շեշտով.

«Դուման բռնեց մեր սարերին,
Ջորեր ղըմմէն սուգ արին,
Սևիկ կապէք, կուրնաք, մէրեր,
Թող չը տեսնեն ձեր աչքեր.
Մառմառ քարեր մըռմռուռ կ'ուլան,
Ապառաժներ կը տքան»։

—Ա՛խ, Սօնա, էլի դու վառեցիր հոգիս, մըրմնջաց Ծովինարը, հեկեկաց և գոգնոցը դէպի աչքերը տարաւ։

Սօնա՜... միայն այդ անունը որքան շատ բան էր ասում Ծովինարին։ Իր Սէփօի սիրածն էր նա։ Մի օր—հազար երնեկ էն օրին—ինքը էր նա։ Մի օր Ծովինարն իր աչքով տեսաւ, թէ ինչպէս Սէփօն ու Սօնան փափուկով խօսում են իրար հետ այն պատի ճեղքից։ Ով մայր է մի աղամարդի, մի սարի պէս աղամարդի, որ սիրում

է մի սևաչեայ գեղեցկուհի, նա միայն կը զգայ այն, ինչ որ զգաց Ծովինարն այդ ժամին։ Երկու սիրահարները վախկոտ այծեամների պէս վախան այս ու այն կողմ, իսկ մայրը... ծ, նա միայն ժպտաց երանութեան ժպտով, նա երջանիկ էր։ Իսկ ա՜յժմ... ամեն երեկոյ դուրս է գալիս Սօնան, նստում իրանց սրահում և կամացուկ երգում է այդ ցաւոտ երգը, որ ծվ գիտէ երբ և ինչ առթիւ շարադրել են ֆ... գիւղի աղջիկները և որը սակայն երբեք չի հնանում։ Ծովինարն աչքերը սրբեց, կամացուկ մօտեցաւ բակի պատին, աչքը դրեց նրա համար նուիրական դարձած պատի ճեղքին և նայում էր։ Սօնան նստած էր, գլուխը քաշ ձգած գուլպայ էր գործում և արցունքները կաթիլ կաթիլ թափւում էին աչքերից թրջելով ձեռքի գործը։ Նա շարունակեց իր երգը, բայց այնպէս մեղմ, այնպէս աղեկաուր, որ կարծես ոչ թէ երգում էր, այլ մըմընջում էր ցաւից, բոցոտ սրտի ցաւից։

«Էն ինչ հով էր իջաւ մեկէն
Էդ սև սարի կատարէն,
Ջիւան-կարիճ չը խնայեց,
Սրտեր ցաւի ծով կապեց.
Մառմառ քարեր կուց-կուց կուլան,
Չէչոտ ժայռեր կը տրքան։

Դաշտն էլնենք էլ ինչ քաղենք,
Ծաղիկները կը խառնենք.
Շուշան, նարգիզ, կանաչ խոտեր,
Ամեն կարմիր են հագեր.
Ապառաժներ մրմռուռ կ'ուլան,
Սարեր ձորեր կը տրքան։

Կանաչ կարմրի ուխտ արեցինք,
Սև ու կարմիր կապեցինք.
Մեր արցունքը թէ ծով դառնայ,
Բոց սրտերը չեն հովնայ.
Քարոտ սարը մրմռուռ կուլայ,
Սև ապառաժ կը տրքայ»։

Ծովինարի սիրտը փղձկաց, նրա հեկեկոցն աւելի բարձր դարձաւ. աղջիկը երկչոտ հայեացք ձգեց պատի կողմը և լռեց, երևի նա լսեց և հասկացաւ, թէ ինչ է կատարւում պատի այս կողմում։ Ծովինարը ինչ սիրով կը գրկէր այդ սիրունիկ գլուխը և կը սղմէր իր մայրական կրծքին Սէփօի փոխարէն. այդ րոպէին Սօնան նրա համար դարձաւ իր կորցրած զաւակը։ Նա կուշտ, կուշտ արտասուեց, սիրտը հովացաւ։ Այժմ նա սկսեց խղճալ նաև Սօնային, որ այդպէս ողբում էր իր կորցրած սէրը։

— Ը գիտեմ, որքա՜ն ցաւն է մեծ, խեղճ Սօնա, մրմնջում էին նրա շրթունքները, բայց թող Աստուած քո ձայնը լսի, քեզ խղճայ, քո սուգը բաւական համարի, դուցէ ես մեղաւոր եմ։ Ապա նա կամացուկ հեռացաւ պատից, ձեռք առաւ խնոցին և շարունակեց հարել։

Արդէն երեկոյ էր։ Արևը կախուեց դէպի արևմուտք։ Պէտք էր խնոցին հարել, վերջացնել, շուտով Սերոպը դաշտից տաւարը կը բերէր։ Եւ նա արագ-արագ տարուբերեց խնոցին։

Բակի դուռը ճռռալով բացուեց, շէմքի վրայ յայտնուեց եօթ-ուրթ տարեկան մի մանուկ։

Սերոպն էր և արտասուում էր...

Մայրը խնոցին թողեց և դողալով առաջ վազեց։

—Սերոպ ջան, քէ մատաղ, տաւարը...

Երեխան չը պատասխանեց, նա հեկեկում էր։

—Ախեցիր... տարին...

—Չէ, հազիւ ձայն տուեց Սերոպը արտասուքի միջից։

—Հապա ուր են։

—Դաշտում թողի... մարէ, ես վազելով եկայ... Սէփօին տեսայ... քարի տակ ընկած...

Նա էլ չը կարողացաւ շարունակել, արտասուքները խեղդեցին ձայնը։ Բայց այդքանն էլ բաւական էր, որ մօր սիրտը զգայ տարտափելի իրողութիւնը. երեխան դաշտում տեսել էր իր եղբօր դիակը, էլ ինչ հարցնէր թշուառ մայրը, բերանը փակուեց. միայն կրծքի տակ մի բան կտրուեց, արցունքը չորացաւ աչքերում։ Նա յետ-յետ գնաց, մէջքը պատին տուեց, ապա թուլացած կամացուկ նստեց պատի երեսից սողալով, գլուխը կախուեց կրծքին և մնաց անշարժ...

Սրևը մայր մտաւ. անասուններն իրանք տուն եկան և ցրուեցին բակում. խնոցին մնաց

առանց հարել իր տեղում. խաւարն իջաւ, իջաւ տարերից և ծածկեց գիւղը. Ծովինարը դեռ նըստած էր մեևնոյն դիրքով, միևնոյն տեղում լուռ, անշարժ։ Դժուար էր իմանալ, մտածում է նա արդեօք, թէ սառել է, քար կտրել. աչքերը մի կէտի վրայ ուղղած՝ նա նայում էր այն անմիտ հայեացքով՝ որ մեծ վշտի տարտափն ունի իր մէջ։ Սերոպն էլ կծկուեց մօր կողքին և մնաց լուռ։ Վիշտ մարմնացող արձաններ լինէին կ'ասես այս մայրն ու որդին, որոնք հազիւ երևում էին մթութեան մէջ։ Ժամեր անցան։

Գիւղը լռեց։ Ծովինարը վերկացաւ, ներս մտաւ խրճիթը, դուրս բերեց այնտեղից մի բահ և մի մաֆրաշ։ Նրա քայլուածքն ու շարժումները այժմ վճռական էին և հաստատ։ Զաւակի դիակը թաղել էր հարկաւոր և նա կը թաղի, թէկուզ երկինք ու երկիր իրար խառնուեն և դաշտը ողջ հրէշներով լցուի։ Մայրն ինչ կը հարցնի, երբ իր Սէփօի դիակը գազանների ճանկերի մէջ է։ Բայց ինչպէս գտնել, մենակ, տարտափելի խաւարի մէջ, չորս կողմում մահ ու դժոխք։ Նա մի փոքր մտածեց։

—Սերոպ ջան, տեղը կը ճանաչե՞ս։

—Հա, մայրիկ, կը ճանաչեմ, հեռու է, շատ հեռու գիւղից։

—Դէ վեր կաց, քէ մատաղ, վեր կաց երթանք։

Զարմացած երեխան մօրը նայեց հարցական հայեացքով։

—Ո՞ւր, մայրիկ։

—Երթանք, թաղենք Սէվօին։

—Մայրիկ, վախում եմ, ախր մութ է ևրանք էնտեղ կը լինեն, մայրիկ...

—Ես քեզ հետ չեմ, քե մեռնեմ, գնանք, մատաղ. չէ՞ քո ախպէրն է, մեղք է որ ճնայ։

Մայրը նրա հետ է, մայրը նրան կը պաշտպանի. չէ՞ իւրաքանչիւր մայր ամենակարող է իր զաւակի համար։ Սերոպը սիրտ առաւ, և նրանք դուրս եկան դռնից։

Լուսին չը կար, խաւար էր դուրսը։ Նրանք կամացուկ դուրս եկան գիւղից և բռնեցին խոտոր ճանապարհը։ Քայլում էին ուշիկ-ուշիկ. երեխան նայում էր մերթ մօրը և մերթ խաւարի մէջ ծրագրուող առարկաներին, որոնք հազար ու մի ձևեր էին ընդունում։

—Մայրիկ, վախում եմ. տես մէկը գալիս է մեր յետևից։

—Սուս, մատաղ, սուս կաց, մարդ չը կայ, սիրտ էր տալիս մայրը, բայց իրօք ինքն էլ ոտնաձայն լսեց. երկուսով էլ յետ նայեցին, բայց մարդ չերևաց։

Քանի հեռանում էին գիւղից, Սերոպին թըւում էր, որ խաւարն աւելի և աւելի թանձրանում է։ Բայց այդ չէր, որ սարսափեցնում էր երեխային, այլ այն, որ նրանք շուտով պիտի անցնէին ընկնաւոր, Ծուռ-Զուլօենց այգու մօտով։ Սերոպը ցերեկով էլ այդտեղից դժուարութեամբ էր անցնում, իսկ գիշերը... Ի՜նչքան բա-

ներ էին պատմել նրան. ասում էին, որ Ծուռ-Զուլօն միշտ այնտեղ, այն այգում է թափառել, որ այնտեղից շատ անգամ դուրս է եկել, հօտաղների յետևից ընկել. ասում էին, որ նրա մազերն այդ ժամանակ ճիճան էին, աչքերը չար, բերանը մեծ ու փրփրուն, ձայնը սարսափելի, որ վերջ ի վերջոյ այնտեղ մի պատ է փլել, Զուլօն տակն է ճնացել, բայց գիշերները նորէն դուրս է գալիս և վազվզում է այն տեղերում։ Արդեօք հիմա էլ այնտեղ չէ՞, դուրս չի՞ գայ, չի՞ վազի, չի՞ ճչայ։ Հասան այգուն. ահա փլած պատը։

—Մայրիկ, վախում եմ. տե՛ս, մէկը գալիս է, Զուլօն է... մազերը, մայրիկ, աչքերը...

—Մի՛ վախիր, քե մեռնեմ, բռնիր ձեռքս, ա՛յ այսպէս։

Յիրաւի Ծովինարն էլ վախեցաւ, նրան թըւաց, որ մէկը կար այնտեղ, ուր ուղղուած էր երեխայի վախկոտ հայեացքը և որ նա ծածկուեց շատ մօտիկ։ Մայրը և որդի աւելի մօտ կպան իրար, շտապեցրին քայլերը, որ շուտով ազատուեն այս չարագուշակ տեղերից։

—Սերոպ ջան, դեռ հեռու ենք էնտեղից։

—Զը գիտեմ, մայրիկ, էն մեծ առուն, որ խաչքարին մօտ է, ա՛յ էն առուն պիտի անցնենք, յետոյ էլի կ'երթանք, էլի կ'երթանք սև քարի կողմը, էնտեղ է։

Նրանք գնում էին անընդհատ։ Լուռ էր շրջակայքը, երկինքը պայծառ, ուր աստղերը պաղ պլպլում էին և բնութիւնը կարծես ուշ գի-

շերին ծոյլ-ծոյլ յօրանջում էր ճնշող քնի ձեռքից, և վառ աստղերի քնքոյշ ցոլքերը անկարող էին խանգարել աշխարհի քունն ու խաղաղութիւնը: Մի բուի չարագուշակ վուլ-վուլը հնչուեց և անցաւ քնած շրջակայքի վրայով:

—Մայրիկ, «բայդուշից» ես վախենում եմ, վուլ-վուլ է անում. լաւ չէ նրա ձայնը, այնպէս չէ՞ մայրիկ: Մայրը լուռ կացաւ, ինքն էլ էր վախենում այդ վայրիւնից: Ահա լսուեց մի այլ թռչնի ճիչ, յուսահատ, անօգնական ճիչ խաւարի ամայութեան մէջ. դժբախտ թռչունը երևի բուի ճանկն ընկաւ և թրպրտում էր նրա ճիրանների մէջ: Ծովինարի հոգին ցաւեց, ճիշտ այդպէս նրա զաւակն անտէր, անտիրական մնացել է գազանների ձեռքը: Երեխան զգաց իր ձեռքի վրայ երկու տաք կաթիլ. նա նայեց մօրը, բայց խաւարը չը թողեց, որ տեսնի դէմքը, սակայն մանկական սիրտը ճմլուեց ցաւից, նա ըզգաց, որ այդ իր մօր արտասուքներն են: Արդարև յուսահատ վշտի, անօգնական անտէրութեան արտասուքներ էին, որ քամուեցին Ծովինարի աչքերից, իսկ երեխան կարծեց, թէ իր անվերջ գանգատներով վշտացնում է մօրը, և մի սիրալիր մանկական խորամանկութեամբ փորձեց ուղղել իր սխալը, մօր սիրտն առնել:

—Մայրիկ ջան, գիտեմ. ես էլ չեմ վախենում, ախր դու ինձ հետ ես. որ Զուլօն գայ, դու չես թողնի, բահ էլ ունես. իսկ եթէ նրանք

գան, մենք կը տափենք արտերի մէջ, մեզ չեն տեսնի. հա, մայրիկ:

—Հա, մեռնեմ քեզ, սուս կաց, որ մեր ձայնը չը լսեն:

Մանուկը լռեց և քայլեց: Հասան առուին: Ուշ գիշեր էր արդէն: Նրանք կանգ առան: Յանկարծ մի ոռնաձայն լսուեց, երկուսով էլ մէկէն յետ նայեցին, մի առուեր երևաց ու անյայտացաւ, կարծես մէկը նրանցից աւելի քարծր շտապով անցաւ առուից:

—Ո՞վ է այն, մայրիկ, խօմ Զուլօն չի՞:

—Մարդ չը կայ, հոգիս, այդ առուի ձայնն է:

Առուից այն կողմը հեռու և հեռու թանձր խաւարն էր առաջները, միայն մռայլ ուրուագծերով՝ որպէս այլանդակ հրէշներ հազիւ ծրագրուում էին այն ժայռոտ բլրակները, որոնք երկերում էին Ա... գիւղի դաշտերը: Խաւարի մէջ ասես ամեն րոպէ փոփոխում էին իրանց ձևերը, բարձրանում, իջնում, ոլորուում, ձգւում և մայր ու որդի դժուարանում էին առանց սարսափի նայել այն կողմը:

—Էնտեղ է, մայրիկ, ա՛յ, էնտեղ է:

Երեխան դէպի բլրակները էր ցոյց տալիս:

Ծովինարը տակաւին կանգնել էր առուի ափին և խորհում էր. նրա մտքերը, սև էին, որպէս այդ գեշերուայ խաւարը. այլանդակ ու ահաւոր, ինչպէս այն գալարուող ժայռերը:

Գնա՛լ արդեօք, թէ՞ յետ դառնալ:

Նա սարսափում էր ո՛չ իր համար, Սէփօհն

կորցնելուց յետոյ, ինչ արժէր իր կեանքը. իսկ եթէ Սերոպին մի բան պատահի. դիշերը չար, խաւարն անթափանցիկ, մեռելը սարսափելի: Մայրն զգում էր, թէ ինչպէս է դողում երեխայի փոքրիկ թաթն իր ձեռքի մէջ: Քանի մօտ էին գիւղին, քանի լսում էր շների հաչոցը, շըրջակայքի սպանիչ մեռելութիւնն այնքան ծանր չէր: Այժմ... այս ինչ պատահեց, ամեն ինչ մահ է, ամեն ինչ սարսափ. նրանք զգում էին իրանց մենակ ձգուած մի ամայի անապատի և խաւարի մէջ. գոնէ մի անմեղ ձայն, գոնէ մի քաջալերիչ շշուկ: Ծովինարը նայեց առուին, այդ աւելի լաւ էր. ջուրը շարժուն էր, դա կեանքի պէս մի բան էր: Կոհակները քսւում էին ափերին, թեթև շշուկ հանում և հազիւ լսելի ճղփիւնով հեռանում, գնում: Այդ շշուկին, այդ փսփսուկին էր ականջ դնում Ծովինարը: Առուն հոսում էր այն բլրակների ոտքից, որտեղ պառկած էր իր Սէփօն անտէր, անտիրական: Արդեօք նրա շունչը չէ՞, որ փսփսում է այդ ջրերի մէջ, արդեօք նա չէ՞, որ մի բուռն հող, մի փոքրիկ փոս է աղերսում իր մօրից, որովհետև աշխարհում նա էլ ոչ ոք չունի: Ոչ, ոչ, մայրը նրան այնպէս չի թողնի:

—Սերոպ ջան, բարձրացիր շալակս, առուն անցնենք:

Երեխան բարձրացաւ մօր ուսին, մայրը ջուրը մտաւ և նրանք անցան: Հազիւ մի քանի քայլ ձգած, երեխան կրկին ասաց հազիւ լսելի ձայնով:

—Մայրիկ, Ծուռ-Զուլօյին ես տեսայ, այ անցաւ էն կողմը. մայրիկ վախենում եմ:

Երեխայի սրատես աչքերը խաւարի թանձր քօղի մէջ որոշեցին մի սառուեր, որ մայրը տեսնել չէր կարողանում: Նա զարմացած էր, երեխաճն էր սխալւում, թէ ինքը:

—Ձը կայ, քե մեռնեմ, հանգստացրեց մայրը, Զուլօն չը կայ, պինդ բռնիր ձեռքս, չէ՞ դու ասացիր էլ չեմ վախենում:

Նրանք շարունակեցին ճանապարհը: Ահա և բլրակները: Երեխան կանգ առաւ:

—Ա՛յ էն քարի տակն է, մայրիկ, ես վախենում են մեռելից:

—Ֆո եղբայրն է, մատաղ, ես քեզ հետ եմ, մի՛ վախիր:

Մի մեծ ժայռի տակ ընկած էր Սէփօի դիակը: Մայրը ծունկ չոքեց, գրկեց, լուռ ծնաց մի քանի րոպէ, ուղղուեց, իր կուրծքը տրորեց, կրկին կռացաւ, քսեց իր երեսը որդու սառը դէմքին և ծնաց անշարժ: Մի քանի րոպէից յետոյ նա վեր թռաւ տեղից, ձեռք առաւ բահը և շտապ-շտապ փորել սկսեց: Սերոպն իր փոքրիկ ձեռներով, ինչքան կարող էր, քաշում էր հողը փորուածքի ափերից: Վիհը խորացաւ, մայրը դեռ փորում էր:

—Մայրիկ, Զուլօն, յանկարծ ճչաց երեխան և բոլոր ուժով ձգեց իրան փոսի մէջ. սարսափած մայրը գրկեց նրան և վերև նայեց. նրանց

գլխավերևը կանգնած էր մեկը, ինչպես խաւարի ոգի։

—Զուլօն չի, մատաղ, խօսեց խորհրդաւոր անձը։ Ծովինարը զարմանքից քար կտրեց, այս գիշերային ոգին ինքը Սօնան էր։

—Չը կարողացայ, մերիկ, չը կարողացայ համբերել, ներիր ինձ. իմ խուլ ականջներն էլ լսեցին Սերոպի բերած սև լուրը. ես իմացայ, որ դու թաղելու ես գալիս. գողտուկ դուրս եկայ ձեր եահից, որ միայն իմանամ, թէ որտեղ ես թաղում նրան։ Սերոպը միշտ տեսաւ ինձ ճանապարհին, նա միշտ ինձ Զուլօի տեղ դրեց, ես ծածկուեցի. հասայ վերջապէս այնտեղ, այն քարի տակ թագ կացայ, սպասեցի, բայց համբերել չը կարողացայ. ներիր ինձ, մերիկ։ Սրտի երկիւղի հետ ես դէն եմ ձգել կոյսի ամօթը, մանն աչքս առած, չօլերն ընկած սարերում կորցրած ջէյրանն եմ փնտռում։ Թող մերիկ, թող որ այս կուրացած աչքերս թեկուզ այս խաւարի մէջ մի անգամ էլ նրան տեսնեն, թող որ այս թուլացած ձեռներս քոնի հետ միասին հողը չանպռելով նրան մի տապան շինեն։

Նրա այրուած շրթունքներից բառերը թափուում էին ու թափուում՝ ասես երբէք վերջ չառնելու համար։ Մի րոպէ ամենքն էլ մոռացան, թէ ուր են գտնուում իրանք և ինչ են անում. վտանգը, խաւարը, երկիւղը բոլորը չքացան կուռական բուռն սիրոյ առաջ։

Ծովինարը փոսի մէջ լուռ հեկեկում էր։

Աղջիկը մօտեցաւ իր սիրելու դիակին, ծունկ չոքեց, կռացաւ նրա վրայ և առաջին անգամ իր կեանքում համբուրեց նրա սառն ճակատը, կուսական տաք համբոյր, որով կարծես նա աշխատում էր ջերմութիւն տալ իր սիրելու սառած դիակին, ինչպէս մի յարաւէտ ոգի, որ փորձում է լիզելով կեանքի բերել կուռում ընկած իր սիրելի հերոսին։ Սակայն ի զուր. մահը խլեց այդ ջերմ համբոյրը կուսական շրթունքներից և յանձնեց յաւիտենականութեանն ու խաւարին։

Վերջապէս Սօնան վերկացաւ, ցած իջաւ գերեզմանի մէջ, բանն առաւ և փորել սկսեց։ Ծովինարը հողն էր դուրս տալիս, Սերոպը նայում էր զարմացած՝ բայց աւելի հանգիստ, ուրովհետև այժմ երեքով էին. փոսը հետզհետէ խորանում էր։ Դեռ երբէք խաւարի մէջ աւելի վսեմ գործ չէր կատարուել. երկու սրտեր մըրցում էին իրար հետ, մայրը գերեզմանն էր չանպռում իր զաւակի համար, աղջիկը փորում էր սիրելու համար, բայց իրօք իւրաքանչիւրն իր սեփական սրտի գերեզմանն էր փորում, և յուղարկաւորը մանկութիւնն էր, որի անմեղութիւնը կարծես հովանաւորում էր նուիրական գործը որպէս պահապան հրեշտակ։

Լուսինը բարձրացաւ. նրա գունատ, պաղ շողերը բլրի կատարից սողալով ընկան նաև նահատակի գունատ դէմքի վրայ։ Վտանգը մեծացաւ, թշնամի աչքն այժմ հեռուից տեսնել կարող էր քարի տակ շարժուող սուսերները։ Գերեզմանն

արդէն պատրաստ էր։ Նրանք պատրաստւում էին դուրս գալ, երբ դիշերուայ հովը ձիերի ոտնաձայն հասցրեց նրանց ականջին. շնչերը պահած, երեքով էլ կծկուեցին.

—Ո՞վ էք, ձայն տուին հեռուից։

Պատասխան չը կար։ Յանկարծ մի գնտակ սուլելով եկաւ դէպի դերեզմանը։ Ջիաւորները անցան երևի ենթադրելով՝ թէ իրանց նկատած տուները գազաններ են, որոնք դիակները պատռտում և հէնց այնպէս արձակեցին մի գնտակ ու գնացին։

Ծովինարն ու Սօնան դուրս եկան փոսից։ Սերոպն իր տեղումն էր, դերեզմանի շրթանը կծկուած, լուռ։ Նրանք երկսով մաֆրաշի մէջ փաթթեցին դիակը, դերեզմանի մօտ բերին, իջեցրին փոսի մէջ և ապա շտապ-շտապ հողով ծածկեցին։ Պարտքերից վսեմագոյնը կատարած էր, սիրելու և զաւակի դիակն անթաղ չը ձգաց, նրա հետ էլ թաղուեցին յուղարկաւորների սըրտերը։ Ծովինարն ու Սօնան ծունկ չոքեցին, վերջին անգամ համբուրեցին նուիրական հողաթումբը և աղջիկն իրրև թաղման աղօթք կամացուկ մրմնջաց՝

«Կանաչ կարմիր ուխտ արեցինք,
Սև ու կարմիր կապեցինք.
Ադատաժները մըռմռուռ կուլան,
Սարեր, ձորեր կը տքան»։

Վերկացան. մայրը մօտեցաւ Սերոպին.

—Վեր կաց, Սերոպ ջան, վեր կաց, տուն գնանք։

Երեխան լուռ էր և անշարժ, նա քնած էր խորը քնով. մայրը կանչեց կրկին, նա լուռ մնաց, բռնեց, շարժեց և... սարսափած յետ քաշեց ձեռքը, նայեց, արիւնոտ էր։ Դաւաճան ձեռքով ձգուած գնտակն ի զուր չէր անցել. Սերոպի կրծքի վրայ լայն վէրք էր բացուած և արիւնը պատել էր շորերը. նա փչել էր իր շունչը առանց նոյն-իսկ մի փոքրիկ ճիչ արձակելու։ Մայրը ճչաց աղեկտուր, գրկեց, բարձրացրեց այդ փոքրիկ, արիւնոտ դիակը, լուսնի շողերն ընկան երեխայի գունատ ճակատին ու այտերին. նա կարծես քնած էր։ Գլուխը թոյլ-թոյլ կախուեց ինչպէս իր ցօղունի վրայ թառամած ծաղիկ։ Զարհուրելի վշտից իրան կորցրած, մայրը չը դիտէր թէ ինչ է անում, նա բարձրացրեց դիակը վեր, վեր, կարծես ցոյց էր տալիս անգութ երկնքին և դատ ու արդարութիւն էր պահանջում։

—Աստուած, լսեցին, ճչաց նա, անիծուին քո շողերը, արար-աշխարհում հէնց սրտին տեսար, լուսաւորեցիր։ Ելէք, ելէք, գայլեր, բորենիներ, գազաններ, դուրս թափուէք ձեր որջերից, դուք աւելի գութ կ'ունենաք քան մարդիկ, եկէք, լացէք ինձ հետ. մեկին հազիւ թաղեցի, միւսին դերեզման չը կայ. գազաններ, լացէք, կամ պատռեցէք էս էրուած կուրծս, դուրս քաշէք

այնտեղից բոցոտ սիրտս, տաք-տաք լափեցեք, որ դուք էլ բոց կարէք ինձ պէս, ոռնաք սարերում, ձորերում և ձեր շնչով հրդեհէք էս չար աշխարհը։

Ասաց Ծովինարը, ինչպէս հնձուած բոյս գետին ընկաւ երեխան գրկում և լռեց։ Սօնան վրայ վազեց օգնելու. բայց նրա ջանքերն անօգուտ էին. այդքան ահաւոր վիշտը չը կարողացաւ տանել մօր ջարդուած սիրտը. նա արդէն անշնչացած էր։

Միւս առաւօտ Ա... գիւղացիք զարմանքով տեսան, որ Սօնայի մազերը ճերմակել էին։

1899 թ.

ԴԱՐԱՒՈՐ ԿԱՂՆԻՆ

Գիւղում ոչ ով չէր ճանաչում «Մէլիքենց կաղնին». դա մի զարմանալի բան էր, այդպիսի ծառեր էլ չեն լինում։ Նա բարձրանում էր բակի հէնց կենտրոնում և իր լայնատարած հովանու տակ ծածկում էր և՛ տունը և՛ գոմը և՛ սրահն ամբողջապէս։ Ամառը, երբ գիւղը խանձւում էր խեղդող շոգերից, երբ խրճիթներն ասես թրձւում էին արևի կիզիչ շողերի տակ և գործ ու աշխատանք դադարում էր կալերում ու դաշտերում, մարդիկ մի փոքր զով օդ էին վնտռում շնչելու համար. երբ շները լեզուները կախ, հևալով խոնաւ գետինն էին չանգռում փոսի մէջ թաղուելու, անասունները ջուրն էին թափւում և թռչունները խիտ տերևների տակ թագնւում, այդ ժամանակ Մէլիքենց կաղնին իր կանաչ, թանձր տերևների տակ պարարիչ զովութիւն էր պահպանում և Մէլիք Քեալաշը սիրում էր նրա տունկի տակ հանգիստ առնել ճաշերից յետոյ։

Զարմանալի զոյգ էին կազմում այդ ծառն ու Մէլիք Քեալաշը, երկուսն էլ ծեր ու հոյակապ, երկուսն էլ պատկառելի ու խրոխտ։ Կարծես թէ այդ ծառն աճել էր այնտեղ յատկապէս նրա համար, որ Մէլիքը միշտ նրա տակը

նստած լինի։ Շոգ օրերին դուրս էր գալիս նա տնից, նայում հեռուն, ուր գիւղն իր խրճիթներով, դէզերով, աթարի բրգաձև կոյտերով աւեւս թէ հեռում էր մի հսկայական հնոցի մէջ՝ — «Օ, ինչ շոք է» — բացականչում էր նա և առաջանալով նստում էր ծառի տակ յատկապէս շինուած հողաթմբի վրայ։ Քիչ յետոյ նա վերցնում էր գլխարկը, շուրջանակի ածիլած գլխի վրայ փռում էր ճերմակ քեաքիւլը՝ գագաթի վրայ թողած մազերի շքեղ փունջը, ինքնաբաւական կերպով շակում և ձգում էր իր թարձր ու երկայն բեխերը, որոնց ոլորուն ծայրերը մինչև ականջներն էին հասնում և մի առանձին վեհ արտայայտութիւն տալիս նրա միշտ ածիլած և առոյգ դէմքին։ Յետոյ նա հանդիսաւոր դանդաղութեամբ դուրս էր քաշում բարձից իր երկայն չիբուխը, կոտրած ծխախոտով լցնում, վառում էր և ծուխը քուլայ քուլայ բարձրանում էր դէպի ծառի վրանաձև սաղարթը։ Այդ ժամանակ երջանիկ էր Մելիք-Բեալաշը։

Ո՞վ և ե՞րբ էր տնկել այդ ծառը, գիւղում այդ հաստատապէս ոչ ոք ասել չէր կարող, չը գիտէր նոյն իսկ ինքը Մելիքը, սակայն մի աւանդութիւն կար, որ Մելիքենց օջախի բաղդը կապում էր այդ ծառի հետ. ասում էին, որ երբ առաջին անգամ այդ տան վրայ փայլեց յաջողութեան աստղը, երբ մելիք ախտոսը շնորհուեց այդ տան նահապետին, նոյն օրն այդ ծառը տնկուել է մի ճգնաւորի սուրբ ձեռքով, և քանի կանգուն է այդ դարաւոր վիթխարին, կանգուն և շէն պիտի ճնայ օջաղը։ Եւ դարեր էին պղպջում նրա վեհ կատարի վրայից, բայց նա շարունակում էր խրոխտաբար խաղալ ամպերի և մրրիկների հետ։ Այսպէս էր հաւատացած գիւղը, նոյն հաւատն ունէր նաև Մելիքենց տան իւրաքանչիւր անդամ, ահա թէ ինչու, երբ ճաշից յետոյ Մելիք-Բեալաշը գալիս էր բազմելու նրա տակը, նախ մի ուշադիր հայեացք էր ձգում դարաւոր ծառի հսկայ բնի և ճիւղերի վրայ, յետոյ, կարծես համոզուելով, որ իր օջաղի այդ հովանին հաստատ է և աննկուն ինչպէս միշտ, ժպտում էր գոհունակութեամբ, լայն կրծքով շնչում էր գով օդը, կրկնելով՝ «Հոգիդ լոյս դառնայ, ծառ անկող»։

Եւ Մելիքն իրաւունք ունէր գոհ լինել։ Դարերի ընթացքում շատ չար ու բարի էին անցել Մելիքենց օջաղի վրայով, բայց նա դեռ շէն էր ու պայծառ, ծուխն՝ անպակաս, դուռը՝ բաց, չռեմարանը՝ լիքը, սեղանն՝ առատ։ Շատ և շատ փոթորիկներ էին սահել, անցել ծառի վրայով, շատ կայծակներ ճայթել նրա երկնաբերձ կատարին, բայց նա կայ դեռ, հաստատուն ու անշարժ և բարձրից վեհութեամբ նայում է Մելիքենց տանը, որ ապրում է իր հովանու տակ, իր թաւիսմանի զօրութեամբ։ Քանի՛ քանի մելիքներ էին բազմել նրա տակ, հէնց այն թմբի վրայ, ուր այժմ Մելիք-Բեալաշն է բազմած, և դեռ նրանցից ոչ ոք այնտեղ արտասուք չէր թափել,

ոչ մէկի հառաչանքը չէր թողնեցրել ծառի և ոչ մի աերև. հացի առատութեամբ փակել էին չարի բերանը, և կանգուն ծառը հազուագիւտ ծանր օրերին լաւ ապագայի հաւատն էր ներշնչել իր հաստատուն արմատներով, իր յաղթ բնով և ճակատագրի խստութիւնը չէր կարողացել ջնջել աւանդական հաւատը։ Եւ Մէլիքենց օջաղը դեռ շէն էր ու պայծառ։

Մի օր դարձեալ Մէլիքն ըստ սովորականին նստել էր ծառի տակ, դարձեալ չիբուխը քուլայ քուլայ ծուխ էր արձակում դէպի սաղարթների հովանին, երբ նրան մօտեցաւ մի անցուդարձական և կանգ առաւ ծառի տակ։ Մի մարդ էր նա, գուցէ և մի թափառական, յոգնած ու տանջուած ճանապարհորդ, որ չը գիտես ինչ մի գաղտնիք էր թագցնում իր սովորական արտաքինի տակ, այդ երեւում էր նրա զգոյշ քայլուածքից, նրա վարանոտ հայեացքից, որ սակայն յանցաւորի չէր, այլ ապաստան փնտրող հալածականի։ Նա մի մարդ էր կարծես, որի ոտքին կապուած են շատ անակնկալները, չար ու բարի, որ իր կնճիռներով ծածկուած ճակատի տակ թագցնում է մի յանդուգն, բայց գեղեցիկ բան, ահաւոր ու վսեմ։ Այդպէս են լինում համարեա բոլոր նրբանք, որոնք ինքնակամ ձգւում են տառապանքների ծովի մէջ և երջանիկ են, թէ կարողանան իսկ պայքարով ալիքները պատռել և նաւել մինչև միւս ափը. իսկ թէ փոթորիկների բերանն ընկած խորտակւում է նաւը, նրանք մի վեհ

շարժումով խորտակուելու աքանչելի հպարտութիւնն ունեն։ Մարդիկ հեռուից նրանց սիրում են, մօտիկից՝ սարսափում, անունները արտասանում են սիրով, դէմքերից դողում, որովհետև նրանք իրանց հետ ճակատագրապէս մահ են ածում մի բեռ, որի տակ սովորական մէջքերը ծռւում են ճարճատելով։ Մէլիքն անխելք մարդ չէր, նա ուշադրութեամբ դիտում էր այս անծանօթին, որ մուրացկան չէր և ոչ աղերսող և որի բոլոր շարժուձեւերի, անգամ ձեռնափայտը բռնելու եղանակի մէջ մի անսովոր բան կար, իսկ աչքերում, այդ խորը և մռայլ աչքերում, մի այնպիսի բան, որից դիմացինը ճնշում էր շփոթուած ու մտահոգ։ Մէլիքի խորաթափանց հայեացքն առաջ անծանօթը չը շփոթուեց, նոյն քայլուածքով, ձեռնափայտի նոյն անօրինակ շարժումով առաջացաւ և կանգ առաւ ծառի տակ ու քաղցրօրէն ասաց.

—Բարի օր, Մէլիք։

Մի քանի վայրկեան լռութիւն տիրեց. Մէլիքը շարունակում էր դիտել և կարծես չը լսեց օտարականի ողջոյնը, և յանկարծ ուշքի եկածի պէս պատասխանեց.

—Բարի եկար, ով ես ախպէր և ինչ ես ուզում. բայց իսկոյն զգալով որ իր հարցը ամօթալի է մի մեծ օջաղի համար, որի դուռը միշտ բաց պիտի լինի, շտապեց աւելացնել՝ ով և լինես, նստիր այնտեղ։

Մարդը նստեց թմբի միւս ծայրին և լռեց։

Լուռ էր և Մելիքը: Նրանք փորձող հայեացքով իրար էին նայում միմեանց հոգիները կարդալու ակներև ցանկութեամբ: Օտարականն իր շուրջը նայեց զգուշութեամբ, մի փոքր կռացաւ առաջ գաղտնիք հաղորդողի ղրութեամբ և կամացուկ մի բան էր փսփսում Մելիքին, որ ըստ երևոյթին լսում էր ծայրայեղ ուշադրութեամբ ու յուզմունքով: Երբ վերջացրեց, Մելիքը յօնքերը կիտեց, ճակատը կնճռեց, նստած տեղում բարձրացաւ ծնկների վրայ, դողդոջուն ձեռքով սկսեց ձգձգել երկայն բեխերը և ճչաց կատաղաբար:

—Ո՛չ, ո՛չ և ոչ իսկ մի ժամ:

—Մի գիշեր, Մելիք, միայն մի գիշեր, ասաց անծանօթը կամացուկ:

—Եւ ոչ իսկ մի վայրկեան:

—Մելիք, վիրաւոր ունենք, մեծ ճանապարհների վիրաւոր աւազակին էլ մի գիշեր ապաստան են տալիս վէրքերը կապելու. մենք...

—Դուրս, դուրս իմ գիւղից այս իսկ վայրկեանին. արիւնն ու վիրաւորը մեզ համար չեն, մեր ցաւը մենք կը քաշենք, հեռու մեզանից, այս ծառի տակից, այս գիւղից, մեր սարերից, մեր երկնքի տակից, հեռո՛ւ, աւազակների համար մեր դռները փակ են, մեր օջաղները կրակ, մեր տները յարկ չունեն:

Անծանօթը իր ձեռնափայտը վերցրեց և ոտքի կանգնեց. առանց այլևս մի բառ ասելու նա մի քանի քայլ ձգեց առաջ, ապա յանկարծ յետ նայեց ինչպէս մի վրդովուած առաքեալ, որ իր

ոտների փոշին է թօթափում մի անհիւրընկալ, նզովուած օջաղում: Այդ հայեացքը՝ ցաւակցական ու հպարտ, յանդիմանողական ու դառն, Մելիքի հոգու խորքը թափանցեց. օտարականը ձեռքի մի խրոխտ շարժումով ցոյց տուեց ծառը և բացականչեց.

—Լսիր, ծառ, ասում են, որ դու այս օջաղի պահապանն ես, ես իմ արիւնը հեռու եմ տանում, իսկ դու պահպանիր այս տունն առանց արիւն-արցունքի թէ կարող ես. Մելիք, երանի թէ դու երբէք չը փոշմանես:

Եւ գնաց...

Ծառը շարունակում էր օրօրել իր հպարտ կատարը անհոգ դէպի ամենքն ու ամեն ինչ, իսկ Մելիքը նայում էր վեր նրա սաղարթներին, երկար ու մտահոգ, ապա նայեց հեռացող անծանօթի թիկունքին, որ յոգնած, օրօրուելով առաջ էր շարժւում և քիչ յետոյ կորաւ գիւղի փողոցներում: Մելիքը նստեց առաջուայ պէս, չիբուխը պատրաստեց, ծուխն այս անգամ աւելի առատ էր, մաքերն աւելի ծանր, հոգին աւելի ապրկուած: Նա զգում էր որ մի վատ, շատ վատ բան կատարուեց. բայց իրօք—ինչ, այդ հասկանալ չէր կարողանում և մտածում էր, մտածում:

Անցան օրեր և ամիսներ, էլի մի ձմեռ և մի գարուն շրջան արին հինաւուրց կաղնու կատարով, էլի նրա ոտները ծածկուեցին թաւ, զովաշատ սաղարթներով, էլի թռչունները վերսկսե-

ցին այնտեղ իրանց քաղցրահնչիւն դայլայլիկ-
ները, բայց Մէլիք-Բեալաշի դէմքից ժպիտը
կորաւ, և հոգին մնաց խռովուած, սիրտը անո-
րոշ երկիւղով ու մութ կասկածներով լի։ Ամրան
հետ վրայ հասան սեւ և արեան օրեր։ Շրջա-
կայքից լուրեր էին գալիս, մէկը միւսից անա-
ւոր լուրեր և, ինչպէս աշնանային կռնչող ագ-
ռաւները ծառերի վրայ, այնպէս էին ծանրա-
նում Մէլիքի շփոթուած մտքի վրայ։ Մի չար
ձեռք, մի չար աստուածութիւն մահ ու արիւն
էր սփռում ամեն կողմ՝ ինչպէս յանկարծակի
շղթայազերծ եղած մահաշունչ մրրիկ։ Սար ու
ձոր ոճիրներով յղի՝ անքուն էին և ոռնում հրէ-
շաւոր երկունքից այդ չարաստանչ աշխարհում,
որի երկնքից անձրևի և ցօղի փոխարէն ասես ամ-
պերը կաթիլ կաթիլ տառապանքներ էին մա-
ղում։ Զարհուրանքի և արհաւիրքի չը տեսնուած
ժամանակներ էին։ Մէլիք-Բեալաշը, հեռուից
լսուող ցաւագին արձագանքներից սգաւոր, լալիս
էր իր հոգու խորքում և սիրտը անդադար եփւում
էր ինչպէս մի եռուն կաթսայ և կսկծում էր իր
ալեկոծ կրծքի տակ։ Նա այժմ էլ աւելի մտածե-
կոտ էր դարձել, յաճախ չէր երևում ծառի
տակ, կարծես վախենում էր, թէ հասել է ժա-
մանակը, երբ դարաւոր վիթխարին մի չը տես-
նուած փոթորկով արմատախիլ պիտի ցած գլո-
րուի և իր տակ թաղի իրան էլ, իր օջաղն էլ։
Ծորհրդաւոր ու տանջուած օտարականի պատ-
կերն էլ մի վայրկեան նրա աչքից չէր հեռա-

նում, իր մռայլ րոպէներում նրան հետևում էր
քայլ առ քայլ, նրա ականջին փսփսում էր այն
զարհուրելի խօսքը՝ «Երանի՛ թէ չը փոշմանես»։
Ինչո՞ւ փոշմանել, ինչ բանի համար, մի՞թէ նա իրա-
ւունք չունէր մի աւազակ իր անից, իր գիւղից հե-
ռացնել, արիւնը երբ է հաճելի եղել Աստծուն։ Ա-
ւազակ էր արդեօք նա, աւազակնե՞ր էին նրանք,
հապա այն ինչո՞ւ այնպէս տարօրինակ էր այն
մարդը, խեղճ, բայց հպարտ, անապատական, բայց
յանդուգն, չը լինի՞ թէ երկնքի առաջ ինքը յան-
ցանք գործեց մի գիշերուայ ապաստան մեր-
ժելով իր դուռը բաղխող արդարներին։ Մտքերը
մի խելագար, այլանդակ պարով դառնում էին
նրա գլխում վրէժխնդիր ոգիների պէս, չանգ-
ռում, բզկտում էին նրա ուղեղը անասելի ցա-
ւեր պատճառելով և սև լուրերը գալիս էին շըր-
ջակայքից և արիւնը ծով բռնած իր լայն ծը-
փանքներում խեղդում էր այնքան յոյսեր, այն-
քան կեանքեր։ Ծառը սակայն, դարձեալ իր տե-
ղումն էր, նա դարձեալ հաստատուն էր և ան-
նկուն, կատարը յաղթ էր ու հպարտ, բունը՝
վիթխարի ու անսասան։ Մէլիքը նայում էր այդ
բոլորին, բայց էլ նախկին հաւատը չը կար,
մի վատ, շատ վատ բան էր կատարւում իր
շուրջը, իր երկրում, և նա հասկանալ չէր
կարողանում, թէ ինչո՞ւ. նա գիտէր միայն, որ
առաջ այդպէս չէր, որ առաջ ուտում էին, խը-
լում, քանդում, բայց արիւնը ծով չէր, խակ

ամիժամ... ինչեր են պատմում, ինչեր են լսում, երկինք ու երկիր ասես էլ իրար չեն ճանաչում, մեկում կատարուածը միւսին անհասանելի է դարձել։

Այս տագնապալից օրերից մեկում նա յիշեց իր հին բարեկամ քիւրդ ցեղապետ Ամար աղային, որի հետ աղ ու հաց էր կերել, որի առաջ իր դուռը միշտ բաց է եղել վայելելու և տանելու համար ինչ բարիք և կամենայ։ Նա հեծաւ իր գեղեցիկ կապոյտ ձին և գնաց բէգի դուռը՝

—Լսիր բէգ, ասաց նա, դու էլ երևի գիտես, որ մեր չորս կողմը զուլում է բռնել, աւազակներով, գայլ ու գազաններով շրջապատուած՝ էլ գլուխ դուրս հանել չենք կարողանում։ Մեր բարեկամութեան, մեր աղ ու հացի սիրուն արի մեր գլուխն ազատութիւն արա, համարիր քո առնը՝ քո սեփականութիւնը։ Բէգը լսեց ուշադրութեամբ, ապա հարցրեց։

—Ո՞վ է ձեր կողմերում թալան անողը։

—Համիդ բէգը։

—Համիդ... բէ՛գը, կրկնեց Ամար աղան մտահոգ շեշտով ու գլուխը քաշ գցեց։ Նրանք ճնշին լուռ։ Մէլիքը գիտում էր իր հին բարեկամին ուշադրութեամբ և նրա մտահոգ լռութեան վրայ սաստիկ զարմացած էր։ Երբ նա վճռեց դիմել Ամար աղայի պաշտպանութեան, նա համոզուած էր, որ վերջինս սիրով յանձն կ՚առնի, առանց մի վայրկեան տատանուելու. քանի՞ տարիներ իր անով էր ապրել. մեկ էլ ծառը կանգուն է ու հաստատուն, մի՞թէ աշխարհում չը պիտի ճարուէր մի զօրեղ ձեռք, որ պաշտպաներ օջաղը՝ ինչպէս հին ժամանակներում։ Սակայն բէգը շարունակում էր լռել, Մէլիքի խռովութիւնն աճում էր։

—Մէլիք, ասաց վերջապէս Ամար աղան, աղ ու հաց ենք կերել, ի հարկէ, դու կարող էիր, իրաւունք ունէիր իմ դուռը գալու, բայց լսի՛ր ես ճանապարհորդի առածը. ասում են ճանապարհորդն անցնում էր, երկու կատաղի շներ վրան յարձակուեցին, պաշտպանուել անկարող էր, հանեց պարկից իր հացի պաշարը և գցեց նրանց առաջ, շները ճանապարհորդին թողին հանգիստ և իրար խեղդռտել սկսեցին, վարպետ ճանապարհորդը թողեց, գնաց անվնաս։ Մէլիք, հայը, խեղճ ճանապարհորդ է, այդ գիտեմ, բայց քիւրդն էլ ո՛չ յիմար է և ո՛չ շուն։

Հասկանալի էր։

Մէլիքը գունատուեց. նա լռութեամբ ոտքի կանգնեց և իր ձին պատրաստեց։

—Դու կարող ես քո ընտանիքով մեզ մօտ տեղափոխուել ապահովութեան համար, աւելացրեց Ամար աղան իբրև վերջին շնորհ, գիւղն էլ... դէ՛ ինչ արած, ժամանակներն այսպէս են, ով կարող է, թող իր գլխի ճարը տեսնի։

Մէլիքը ձին հեծաւ և առանց պատասխանելու, առանց յետ նայելու առաջ անցաւ։

Ճանապարհը հեռու էր և երկիւղալի, բայց այդ կարծես Մէլիքի փոյթը չէր, նա սանձը

գցել էր իր ձիու պարանոցին, կենդանին դանդաղութեամբ քայլում էր լեռնային արահետով, իսկ նրա տէրը հոգեմաշ ու սև մաքերով պաշարուած՝ շուրջն էլ չէր նայում: Նա գլուխը քաշ էր գցել կրծքին, ջարդուած տաբուում էր առաջ ինչպէս մի վճռական ճակատամարտ կորցրած ծեր արքայ, որ զրկուել էր իր ընտիր բանակից, և այլ ևս գլուխ դնելու տեղ չունի, կամ ինչպէս մի ուխտաւոր, որ էլ չի հաւատում և թաղուած միակ հաւատի գերեզմանի վրայ սրտի խորքերում լուռ լալիս է, ագում: Ահա և գիւղի դաշտերը, ահա և՛ դեղնած արտերը, ոլոր մոլոր ճանապարհները, որոնք քրտինք և աշխատանքի համար են ձգուած և որոնցով այժմ սարսափն է սողում հազար գլխանի մի հրէշի պէս: Նա նորէն յիշեց այն զարմանալի օտարականին, որ ուղիղ մի տարի առաջ այս իսկ ճանապարհներով եկաւ և անցաւ և որից յետոյ ամեն ինչ փոխուեց. յիշեց նրա տանջուած դէմքը, այն աչքերը, որոնք այնքան շատ բան էին ասում: Մէլիքը կ'ուզէր այժմ մէկ էլ նրան տեսնել, խօսել, շատ խօսել հետը և մանաւանդ հարցնել, անպատճառ հարցնել, թէ ինչ էին նշանակում նրա խօսքերը՝ «Երանի թէ չը փոշմանես»:

Արդէն երեկոյ էր. արևը գնաց. կախուեց դէպի հորիզոնը և նրա տեղ դէպի երկինք բարձրացան բարդ բարդ սև ամպեր. թեթև հով էր փչում, որ կամաց կամաց մեծանում էր ուժեղ քամի դառնալու համար: Զորակի մացառների մէջ մի բան խշխշաց. Մէլիքը սթափուեց և ձեռքը դէպի իր կէս սուրը տարաւ, միակ զէնքը, որ սերնդէ սերունդ պահում էր մէլիքենց օջաղում և որ հեռու տեղ գնալիս Մէլիք Բեալաշը սովորութիւն ունէր ձախ կողքից քաշ անել: Երեկոյեան մշուշի միջից հեռում երևում էր գիւղը միգապատ, իսկ նրա շուրջը մի անորոշ, մի սև զանգուած: Մէլիքը լարեց իր ծեր աչքերի բոլոր տեսողութիւնն իմանալու համար թէ ինչ է այն, բայց իզուր, նա տեսնում էր միայն մի մութ, խոշոր բան, որ շարժուում, օրօրուում էր և անդադար ձևափոխուում: Տխուր նախապագուճն էլ աւելի զօրացաւ նրա սրտում, նա շարժեց ձիու սպանդակները, սանձը ձեռք առաւ և շտապեց: Բայց նրանից աւելի արագ սև զանգուածը ձգուեց, երկարացաւ և իր առաջ դուրս եկաւ. Մէլիքը կանգ առաւ ձիու վրայ արձանացած, տեսարանը ողբալի էր—իր գիւղն էր փախչում: Մարդ, կին, ծեր, երեխայ իրար խառնուած, ցրիւ էին գալիս լայնատարած դաշտում՝ ով ուր կարող էր. Մէլիքին ասացին, որ Թալանողը Համիդ բէգն է, իր տան և օջաղի թալանողը Համիդ բէգն է, իր տան և օջաղի թալանողը Համիդ բէգն է, իր տան և օջաղի

ինչպէս մի վաղուց դաստիարակուած յանցաւոր և գունատ ու խիստ դէմքով նայում էր փախչողներին, ապա գլուխը քաշ գցեց, ճակատը ձեռքերի մէջ առաւ, կարծես ամաչելով տեսնել այս խելակորոյս հօտանման բազմութիւնը, որ պատիւ, ստացուածք, հայրենական օջախ թշնամու ոտքերի տակ ղրած՝ իր անարգ գոյութիւնը տանում է քաշ տալու երկրէ երկիր։ Մէլիքն ամաչում էր և իր համար, իր անցեալի համար, իր հօր, իր պապերի համար, որոնք ամենքն էլ հնազանդութիւնից, ամօթալի հպատակութիւնից դուրս ուրիշ օրինակ և խորհուրդ չեն տուել այս ոչխարանման բազմութեանը։ Նա այժմ ատում էր ամենքին, ատում էր իր ժողովրդին, իրան, իր գիւղը, իր ծառը, իր օջախի դարաւոր նուիրական ծառը։ «Սուտ է, ամեն ինչ սուտ է, մոմոում էր նա, աղ ու հացն էլ սուտ է, ճգնաւորն էլ, սուրբն էլ, հաւատն էլ, օրէնքն էլ»։

Եւ բազմութիւնը շարունակում էր փախչել, և Մէլիքը շարունակում էր նայել ցաւով, ամօթով, կսկիծով։

Շներն էլ փախան, թէ դեռ հաչում են կատուների վրայ, մոնչաց նա կծու հեգնութեամբ։

Պատասխան չը կար. փախչում էին.

—Փախէք, իրաւունք ունիք, թշուառականներ, յանցաւորը ես եմ, իմ պապերն են, և ես միայնակ, մեն միայնակ պիտի քաւեմ դարաւոր յանցանքը։

Եւ դա դուրս քաշեց հին օրերի սուրը, որ

վաղուց էր քնել իր պատեանի մէջ, կատաղի թափով խփեց ձիու կողերին և ապուշ կտրած բազմութեան միջից սլացաւ դէպի գիւղ։

—Մէլիք, Մէլիք...

Մէլիքն էլ չէր լսում. կապոյտը փոշու ամպեր բարձրացնելով՝ նետի պէս ձգւում էր դէպի մռայլ, չարաբաստիկ գիւղը, ուր սարսափն ու արիւնն էին իշխում։ Երկար ժամանակ հեռուից երևում էր այդ տարօրինակ պատկերը՝ այդ խրոխտ ծերունին, որ կատաղի ձիու վրայ նստած սուրը ճօճելով տարուում էր կանաչ լեռնապաշտի միջով, արշաւում էր ինչպէս մի ծեր արծիւ, որ ամպերի տակից տեսել է իր բնի աւերումը, իր ձագերի կոտորածը։ Ճանապարհը վաղուց էր խուսափել նրա աչքերից, նա տարուում էր առանց ուշը դարձնելու դաշտերի, արտերի, մարգագետինների միջով. ձին փռնչալով ցատկում էր փոսեր, շրփոցով անցնում էր վտակներ, ոտիւններ էր գործում քարերի և թումբերի վրայից, քրտինքի, ցեխի, փոշու մէջ կորած, սլանում էր ինչպէս մի մըրրիկ։ Այդ անօրինակ ձիաւորը մերթ ծածկւում էր մի թմբի, մի ժայռի, մի բլրակի յետևում, յանկարծ ցցւում էր կատարում և արշաւում անպատճառ, սուրը միշտ օդի մէջ սպառնալի ճօճելով, սանձը բաց ձգած և սպանդակները ձիու կողերին խթած։

Ո՞ւր էր գնում այսպէս մենակ Մէլիք-Ֆեաղաշը և ի՞նչ անելու, այդ ինքն էլ չը գիտէր,

այդ մասին դադարել էր մտածելուց, միայն երբ տեսաւ իր վատասիրտ անպատիւ ժողովրդի փախուստը, զգաց՝ որ ինքը հատուցանելու գերադոյն պարտք ունի, որ երբ ամենքը փախչում են, ինքը պարտական է մնալ սարսափի ու արեան վայրը, պարտական է չանել այն, ինչ ամենքն են անում. ինքը տէր է, առաջնորդ: Նա գնում էր ծծելու դառնութեան բաժակը մինչև յատակը, գնում էր տեսնելու իր գիւղի, իր օջաղի աւերածը, գնում էր տեսնելու, թէ կանդուն է արդեօք ծառը, երբ աւերում են, չէ որ նա էլ պիտի խորտակուի. գնում էր նայելու Համիդ բէգի՝ իր արիւնարբու թշնամու աչքերի մէջ այնպէս, որ այդ գազանն էլ դողայ. իսկ այնուհետև ինչ լինելու է թող լինի, թող երկինք ու երկիր իրար խառնուեն, թող վերից վար թափուի իր գլխին, կամ գետինը պատռուի և ներս տանի նրան:

Եւ թռչում էր կապոյտը անընդհատ և տարուում էր ծերունին իր ծով զայրոյթով, իր ծով կսկիծով: Նա հասաւ գիւղին. ձին շրջունակում էր արշաւել այժմ նեղ, ոլորուն փողոցների մէջ. Մելիքը չէր նայում աջ ու ձախ, ծուխը բռնել էր ամեն կողմ, բոցերը լափում էին տները, իշխողը մահն էր ու չարիքը: Պատահող աւազակներն այս կատաղի ձիաւորի առաջից յետ յետ էին քաշւում. մի վայրկեան վայր էին դնում իրանց աւարը, բանաբաց ու ապուշ կտրած նայում էին այն

անօրինակ արշաւանքին, իսկ ծերը ծուխն ու մառախուղը պատռելով՝ գնում էր, հա գնում, նրան Համիդ բէգն էր հարկաւոր: Ահա և իր սեփական տունը: Ծառը կանգուն էր, օջաղն էր աւեր: Մելիքը հասաւ սրարշաւ և մինչև որ թրմբի վրայ նստած Համիդ բէգն ու իր հետևորդներն ուշքի կը գային, նա ցած նետուեց ձիուց ինչպէս մի կատաղած խենթ և սուրը ճօճելով աւազակների խմբի մէջ բէգին վրայ պրծաւ:

—Շներ, որոտաց նա, Մելիք-Բեալաշը դեռ կենդանի է: Բազմութիւնը ոտքի ելաւ մի մարդի պէս, սրերը մերկացան և մի վայրկեան կարելի էր տեսնել մենակ ծերունուն վայրենիների ահագին խմբի մէջ: Նրա գլխին փայլում էին պաղ զէնքերը, նրան շրջապատել էին, քաշքշում, հարուածում էին, իսկ ծերունին աչքերն արիւնով լցուած, գլուխը բաց, մազերը ցաք ցրիւ, շարունակում էր հարուածել ինչպէս կարող էր, ում կարող էր: վերջապէս նրան կաշկանդեցին վիրաւոր ու արիւնաթաթախ և բէգի հրամանով կապեցին ծառից, դարաւոր նուիրական ծառից:

Թշնամիների սրերով պատռուած արիւնաշաղախ գլուխը կրծքին քաշ ձգած՝ նախկին խրոխտ, երջանիկ Մելիքն այժմ ընկճուած, չարդուած էր: Նա լուռ էր: Էլ ոչինչ չունէր անելու, էլ ոչինչ չունէր կորցնելու: Եւ ծառը, հնաւուրց սուրբ ծառը կանգուն էր: Էլի մի անգամ նրա շրթունքները մրմնջացին՝ «Սուտ է, սուտ է»: Ամեն բան կորաւ. նա իր աչքով տե-

սաւ, թէ ինչպէս թալանում են իր տունը, ինչպէս տանում են իր անմման նժոյգը, ինչպէս կրում են կապերտները և այլ կարասիները, կողոպտում են հարս ու աղջիկների զգեստները, վիրաւորում են պատիւ, սրբութիւն, նայում են իր վրայ լկտի հռհռոցներով։ Եւ ծառը կանգուն է։ Ինչո՞ւ, հարցնում էր ինքն իրան Մէլիքը։ Էլ ոչինչ չը ճնաց. ո՛չ պատիւ, ո՛չ ստացուածք, ո՛չ հաւատ, ինչո՞ւ է կանգուն այս ծառը, ինչո՞ւ անօրէնները չեն կտրում, որ նա էլ ընկնի և իր տակ թաղի թէ իրան, և թէ իր օջաղը։ գոնէ դարաւոր աւանդութիւնը ճշմարիտ կը լինի, գոնէ հաւատը կը ճնայ, մարդ հաւատով կը մեռնի։

—Սո՛ւտ է, սուտ է, ամեն ինչ սուտ է, վերսին մռմռաց նա, ճշմարիտը միայն չարիքն ու արիւնն է. վա՛յ նրան՝ ով թոյլ է, խեղճ է, անզօր է։

Ծերունին յանկարծ ցնցուեց, արիւնոտ գլուխը վեր բարձրացրեց, հեռուից լսւում էր մի շան հաչոց, իրանց շան հաչոցը։

—Շները չեն փախել, մրմնջաց նա դառն հեգնութեամբ և շրթունքների վրայ մի սպանիչ ժպիտ ձևացաւ։ Նոյն վայրկեանին մի վիթխարի, սև շուն կաղկանձելով վազեց և նրա ոտների փաթաթուեց։ Վաղուց էր կենդանին մեն մենակ մաքառում աւազակների դէմ, կատաղի ոստիւններով սրա նրա վրայ էր յարձակւում, սրան նրան կծոտում, իր տիրոջ օջաղը պաշտպանելու

համար. սրերի բազմաթիւ հարուածներ նրա մորթին պատռտել, քրքրել էին, բայց նա դեռ շարունակում էր կատաղի յարձակումները, փախչում էր դէպի մի կողմ, յայտնւում էր միւս կողմում։ Տեսնելով իր տիրոջը կապուած ծառից, նա եկաւ արիւնաքամ, ուժասպառ և նրա ոտների տակ ընկաւ կիսամեռ, նայում էր Մէլիք-Քեալաշի դէմքին և կարծես հարցնում էր, թէ ինչո՞ւ այս բոլորն այսպէս եղաւ։ Աւերակ, ծխացող օջաղի առաջ, նուիրական ծառի տակ գազաններով շրջապատուած՝ ճնացել էին միայն այս շունն ու իր տէրը, երկուսն էլ վիրաւոր ու արիւնաքամ, երկուսն անյոյս ու ընկճուած և նայում էին իրար։

Մէլիքի ծեր աչքերից արցունքները թափուեցին և գլորուեցին գունատ, ոսկրացած այտերի վրայով, էլ ոչինչ չունէր նա, բացի այս մեռնող շունը։

Այժմ նա էլի յիշեց այն օտարականին, յիշեց նրա չարագուշակ խօսքերը՝ «երանի՛ թէ չը փոշմանես». մարգարէ էր նա, թէ՞ առաքեալ. ո՞րտեղից գիտէր, թէ լինելու է այն, ինչ որ եղաւ։

Ծաւարն իջաւ, իջաւ երկրի վրայ, գիւղի թալանը վերջացաւ. աւազակներն աւարը բաժանելու նեցին հէնց ծառի տակ, այժմ հերթը Մէլիքին հասաւ։ Բէգի հրամանով մի խումբ հրացանաւորներ տեղ բռնեցին ծերունու դէմ ու դէմ։ Մէլիքը անօրինակ անտարբերութեամբ իր տանբոցերի լուսաւորութեամբ տեսաւ այդ ահաւոր

պատրաստութիւնները, այլ ևս ոչինչ չը կար, որ նրան կապէր աշխարհի հետ։ Երբ աւազակները պատրաստեցին հրացանները և իրանց զոհի կրծքին ուղղեցին, յանկարծ հեռու պիւղի ծայրից մի պայթիւն լսուեց և նոյն վայրկեանին մի քիւրդ վազեվազ հասաւ, շնչարգել ու սրտապատառ ճչաց.

—Բէգ, շրջապատուած ենք։ Աւազակները իրար խառնուեցին, բէգը զունատուեց և ոտքի կանգնեց, ինչ որ հրամաններ արձակեց։

Ամար աղան է, մտածեց Մէլիք Քեալաշը, ուրիշ ով կարող է լինել, երևի փոշմանել է, մարդ է, յիշել է այնքան տարիների բարեկամութիւնը, հին աղ ու հացը, և եկել է իր օջաղն ու գիւղը փրկելու։ Այժմ, միայն այժմ Մէլիքը կ'ուզէր ապրել, տեսնել երկու խմբի իրար մորթոտելը, տեսնել մանաւանդ Համիդ բէգին իր արեան մէջ շաղախուած, և յետոյ մեռնել։ Հրացանների պայթիւնը մեծացաւ հեռուում, էլի նոր գուժկաններ եկան բէգին հաղորդելու անխուսափելի վտանգը. նա իր ձիու ականջին թռաւ և Մէլիքի առջևը կանգնած հրացանաւորներին դիմելով՝ կրակելու նշան տուեց ձեռքով։ Հրացանները պայթեցին, և Մէլիքը թուլացած ու արիւնլուայ քաշ ընկաւ ծառից։ Նոյն վայրկեանին մի այլ խմբի հրացանների գոչիւնը լսուեց և ծառի տակ մի շարք դիակներ փռուեցին. Համիդ բէգն շտապով կորաւ խաւարի մէջ, թողնելով իր հակառակորդների ձեռքին գիւղի կողոպուտն ու հա-

բստութիւնը։ Ինչ որ անծանօթները շտապով Մէլիք-Քեալաշին արձակեցին ծառից, բայց նա մեռնում էր. վերջին ճիգ գործ դրեց, վերջին յուժերը հաւաքեց, բացեց աչքերը, և կ'ուզէր երախտագիտական մի յետին հայեացք գցել Ամար աղայի վրայ, որ եկաւ օգնութեան, աղ ու հաց չը մոռացաւ։ Նայեց երկար ու պաղ հայեացքով, դէմքը զարմանքի և հիացմունքի արտայայտութիւն առաւ։ Նա տեսնում էր ոչ Ամար աղային, այլ նրան, այն զարմանալի անծանօթին, որին մի տարի առաջ իր դռնից, իր յարկի տակից, իր գիւղից դուրս վռնդեց։ Մէլիքը փորձեց ձեռքը մեկնել՝ բռնել իր փրկչի ձեռքը, բայց անկարող եղաւ և միայն շրթունքները վերջին անգամ մրմնջացին.

—Ներիր, շնորհակալ եմ։ Եւ նա մեռաւ նախապաշարմունքների ծառի վրայ խաչուած։

Եւ ծառը շարունակում էր օրօրուել այս դիակի վրայ. էլի անհոգ դէպի ամեն ինչ, որ կատարուեց իրանից ներքև, իր շուրջը, գիւղում, շրջակայքում։ Աւերածը կատարեալ էր, մի ամբողջ սերունդ էր մեռնում աւեր հայրենիքի մոխիրների տակ։

Պէտք էր ամեն բան նորից սկսել։

1902 թ.

ԴԱՐՁԸ

Աչքից հեռացած, մտքից մոռացուած,
Իրանք անլեզու, աշխարհս անիրաւ։
(Ռ. Աբովեան. ՎԷՐՔ-ՀԱՅԱՍՏԱՆԻ).

I.

Դեռ ձմեռ էր, ցուրտ, ձիւնաշատ ձմեռ. խստասիրտ, մռայլ երկնքից մի հատիկ ջերմացնող շող անգամ չէր իջնում անճար թշուառի դողդոջուն մերկութեան վրայ։ Ինչ որ մարդկային էակները, լուռ ու գոնատ, ինչպէս սառուերները, որոնք կրում էին իրանց վրայ աշխարհի գձուձ գիտասրտութեան ամենատեսակ նմուշները, խայտաբղետ ցնցոտիների մի նողկալի կոյտ, արագ-արագ անցնում էին այս ու այն պատի տակից և շտապով ծածկւում ամենատեսակ բերների մէջ, ուր Թանձր խաւարում անշարժացած գաղջ օդը տալիս էր նրանց այն, ինչ որ մերժում էր ժլատ, անկարեկից երկինքը—գոմերը տաք էին։ Բայց միայն գոմը չէր, ուր թշուառութիւնն ապաստան էր գտել. այն բոլոր աւերակները, բոլոր «բէխէր» համարուած և ե-

բեսի վրայ ձգուած խրճիթները, կիսածածկ մարքները, հին գետնափոր մառանները, մի խօսքով այն բոլոր անկիւնները, որ խաւար, երկչոտ գիւղն իր սանձարձակ, բայց մռայլ երևակայութեամբ չար ոգիների բնակութեան է յատկացնում, այդ դաժան ձմրանը մարդկանց բնակարան էր դարձել։ Բոլոր այդ գարշելի բների մէջ, ուր անասուններից աւելի վատթար վիճակում անարգւում էր մարդ արարածը, թշուառութեան հետ միասին ներս էր թափանցել երկչոտ կերպով նաև մարդկային ողորմածութիւնը, թէև սա շատ աւելի թոյլ էր քան զարհուրելի չարիքը, նոյնպէս ցնցոտիների մէջ էր կոլոլուած, նոյնպէս խեղճ էր ու երկչոտ, որպէս այդ մերկ դողդոջուն մարմինները, բայց և այնպէս՝ դա ողորմածութիւնն էր, այն յաւիտենական գուռնատ ճամբորդը, որ դարերի հետ միաժամանակ անվերջ վազում է ցաւոտ աշխարհի անսահմանութեան մէջ, վազում է չարիքից առաջ անցնելու, նրա ճանապարհը փակելու համար, սակայն ի դէր... Դեռ հզօր և արագընթաց է չարիքը և ողորմածութեան հրաշագործ ձեռները դեռ չեն կարողացել բուժել չարիքի բացած բոլոր վէրքերը, սփոփել բոլոր վշտահար, վիրաւոր սրտերը, սրբել բոլոր արտասուքները։ Ո՜ւշ, նա միշտ ուշ է հասնում. այն ժամանակ միայն, երբ թշուառները չարիքի ծանրութեան տակ մռնչում են ցաւից, գալարւում, տապակւում են դժոխային բոցերի մէջ, նզովում են անողորմ

երկինքը, որ վերջ չի տալիս իրանց թշուառ գոյութեանը. օ, միայն այդ ժամանակ է հասնում այդ խղճալի ողորմածութիւնը ու մի քանի կաթիլ ջուր քամում կիսախանձ, ճենճերոտ շրթունքների մէջ։

Այս անգամ էլ նա ուշացաւ, չափից դուրս ուշացաւ, բայց էլի եկաւ, մաւ թշուառութեան բոլոր որջերը, դարձեալ ուժասպառ, դարձեալ խեղճ և գունատ էր նա, ինչպէս միշտ, բայց և այնպէս կարողացաւ խաւարում հնչուող հեծեծանքների վրայ մի առժամանակեայ լռութիւն տարածել, որ սակայն այնքան նման էր գերեզմանական լռութեան, մեռելային խաղաղութեան։ Այդքանով էլ գոհ եղան թշուառները. լուռ էին և համբերութեամբ կրում էին իրանց սև ճակատագիրը. չէ որ խեղճութիւնը խստապահանջ չէ, մի կաթիլ ջուր, մի փշուր հաց, մի տաք անկիւն, մի ցնցոտի և քանի-քանի շրթունքներ օրհնութիւն են մրմնջում։ Այսպէս էին այդ խաւար որջերը, այնտեղ ծուարած խեղճերը վայելում էին այն հանգիստը, որ տալիս է վիրաւորին իր կսկիծը մի քանի վայրկեան մեղմացնող սպեղանին և օրհնում էին։ Թշուառութեան անապատում մոլորուած մի կարաւան էր այն, որին պատում զարհուրելի փոթորիկն ստիպել էր գետին փրռւել, պինդ բռնել իրարից, կծկուել սպասելով թէ երբ կը պարզուի հորիզոնը, ուր կը հասնի ճակատագրի այդ անսիրտ խաղի վախճանը և երբ կը գայ փրկութիւնը։ Սպասում էին աչքերը

մռայլ հորիզոնին ուղղած. բայց չարիքի աշխարհաւեր, զարհուրելի փոթորիկը շարունակւում էր դեռ, վերկութիւնը չը կար ու չը կար։ Եւ յանկարծ բոլոր այդ մռայլ որջերի մէջ անցաւ մի շշուկ, մի հատիկ բառ էր լսւում ամեն մի բերանից. «վերադարձնո՛ւմ են, վերադարձնո՛ւմ են», կրկնում էին ամենքը։ Շարունակուող փոթորիկի միջից այդ թափառական դժբախտ կարաւանը յետ պիտի տաներ իր ցաւերի հակայական բեռը, որ այնքան յոյսերով բերել էր աշխարհին ցոյց տալու, դարման խնդրելու. և որքան հեռուից և ինչ գնով էր բերել... ո՛վ է վերադարձնում, ե՛րբ, և ինչու համար. այդ համարեա ոչ ոք չը գիտէր. մարդիկ վաղուց մոռացել էին, թէ ո՛վ է տնօրինում իրանց բախտը. ցաւերի մէջ անզգայացած՝ նրանք դարձել էին ոչխարների մի հօտ, որ շարժւում էր, ուր նրան տանում էին, իսկ երբ ձգում էին մենակ իր կամքին, միակ առաջնորդը մնում էր երկիւղը, յարատև, յարաճուն երկիւղը։ «Վերադարձնո՛ւմ են», բայց ո՛ւր. այդ գիտէին նրանք, միայն այդ —վերադարձնում են այնտեղ, որտեղից եկել են, վերադարձնում են դէպի «երկիր», դէպի վաթան։ Բոլոր անկիւններում, ուր բոյն էին դրել խեղճերը, խօսում էին երկրից, վաթանից. ո՛ւհ, վաթան. նրանք չը գիտէին օրհնե՛ն, թէ անիծե՛ն այդ անունը։ Վերադարձի միտքը նրանց երևակայութեան մէջ զարթեցնում էր երկու պատկեր. մինը հայրենիքի անզուգական պատկերն

էր, իր չքնաղ տեսքով, գրաւիչ այդ բոլոր քաղցրիկ վայելքներով՝ որ տալիս է մարդուն սեփական խրճիթը, սեփական օջաղը, արտը, այգին, սեփական ջուրն ու հողը, լեռն ու ձորը, արևն ու երկինքը։ Այդ դիւթիչ պատկերին անբաժան նրանց երևակայութեան մէջ ցցւում էր մի ուրիշը, սարսափելին, արիւնոտուշտը, դա չարիքի դժոխային պատկերն էր իր բոլոր ահաւորութեամբ. անհնարին էր յիշել մէկն առանց միւսի, անհնարին էր նրանց զատել իրարից։ Բայց պանդուխտների համար վաթանն այնքան քաղցր էր, նրա պատկերն այնքան գրաւիչ էր, որ խեղճերն աշխատում էին չը մտածել միւս արիւնոտ պատկերի մասին, չը յիշել չարիքը, վայելել մոռացութեան պարգևած անգիտակից երջանկութիւնը, որ բոլոր թշուառների միակ մխիթարութիւնն է կեանքի ծանր օրերում։ Ինչքեր էին տայ, որ այդ մոռացութիւնը յարատևէ, յաւիտեան լինի, որ իրանք կարողանան թև առնել, թռչել, գնալ և հայրենիքի դիւթիչ պատկերին փարել, նրա սուրբ հողը համբուրել։ Բայց հնարաւոր էր մոռանալ, ինչ որ տեսել էին, ինչ որ կրել էին, քարերը կ'աղաղակէին նրանց չորս կողմում, չէ՞ որ ճանապարհի հէնց սկզբից նրանք պիտի տեսնէին իրանց ահաւոր անցեալի և նոյնքան ահաւոր մօտիկ ապագայի իսկական պատկերն իր անողորմ իրականութեամբ, չէ՞ որ հէնց սահմանից էր սկսւում այն հսկայ գերեզմանատունը, որ նրանց վաթանն էր համարւում։ Դժուար

էր մոռանալ, բայց վերադարձնում են, ինչ պէտք էր անել։

Ամեն տեղ հասաւ. ամեն տեղ լսուեց այդ միաժամանակ և տխուր և ուրախ լուրը, թէ վերադարձնում են։ Այստեղ էլ էին խօսում այդ մասին. այ, այս առանձնացած խրճիթում, ուր ամբողջ տարի էր, ինչ բոյն էր դրել մի վատաբախտ ընտանիք։

Երեկոյ էր, ձմեռային այն ցուրտ երեկոներից մէկը, որոնք իրանց յանկարծահաս խաւարով ուշ գիշերն են յիշեցնում։ Խրճիթի ժէջ առատ ծուխ արձակելով՝ պլպլում էր ճրագը. թիթեղեայ մի փոքրիկ, մրոտ աման, որի նեղ կոկորդից դուրս ցցուած պատրոյգը դանդաղութեամբ ծծում էր ամանի ներսի նաւթը և իր պղտոր բոցով մըի մանրիկ հատիկներ կազմելով՝ փռում էր խրճիթում սև փոշու անձրև և խեղդող խանձրահոտ։ Խրճիթում մարդիկ էին ապրում, բայց ձայն չը կար, ասես թէ կեանք չը կար։ Հիւանդ էլ կար, նա էլ լուռ էր, չէր տընքում. այսպէս են նրանք, միշտ հնազանդ ու համբերատար. չարիքը կարող է հազար կերպարանք առնել, հազար ձևով հարուածել, բայց մշտատև ցաւերին սովոր մարմինը կրում է լուռ, դժբախտները չեն հառաչում, չեն գալարւում իրանց անկողնի մէջ։

Ոսկօի գլխավերևում նստած էր Մարգրիտը և խնամոտ ձեռքով անդադար յարդարում էր աղտոտ ծածկոյթի ու փալասների ծուէնները, որ մի կերպ պատսպարի հիւանդի վտիտ մարմինը։ Վաղուց էր հիւանդ Ոսկօն. ճանապարհին մրսեց և Ն... գիւղը հասնելով՝ պառկեց ու այլ ևս չը վերկացաւ։ Այսօր նրա դրութիւնն առանձնապէս ծանր էր երևում. շնչառութիւնն անկանոն էր, աչքերը բորբոքուած, այտերը ծածկուած տենդային չարագուշակ կարմրութեամբ։ Նա այրւում էր և անդադար ջուր էր խնդրում։ Այս բոլոր նշանները վհատեցնում էին Մարգարտին. նա զգում էր, որ հեռու չէ սարսափելի ժամը, երբ ինքը մենակ կը ձգուի աշխարհի երեսին իր անպաշտպան որբերի հետ. ահա թէ ինչու նա երկչոտ կերպով հետևում էր հիւանդի դէմքի արտայայտութիւններին, հետևում էր նրա խոր ընկած, չոռած աչքերի անգիտակից, թափառական հայեացքին, որով կարծես նա ինչ որ բան էր փնտրում, վախենում էր մանաւանդ, երբ հիւանդն իր ոսկրոտ, դեղնած ձեռքը դուրս քաշելով փալասի տակից՝ օդի մէջ ինչ որ շարժուձևեր էր անում, ինչ որ համարում, ցոյց տալիս։ Կինը ժամանակ առ ժամանակ ջուր է մօտեցնում Ոսկօի այրած շրթունքներին և ապա գլուխը ծնկան վրայ կըռացրած օրօրւում էր մեղմիկ և արտասւում երեխաներից գաղտնի։ Թոնրի շրթանը նստած էր տասներկու տարեկան Գալօն, սա էլ էր լուռ. մօր անհանգստութիւնը, ներքին տագնապը չէր խուսափում նրա անժամանակ հասուննութիւն արտայայտող աչքերի հայեացքից. նրա

մանկական զգայուն սիրտը ճմլուում էր ցաւից, երբ նկատում էր թէ ինչպէս մայրը օրօրում է գլուխը, ինչպէս լուռ է նա, և Գալօն նայում էր մօրը և մտածում... երկու ուրիշ փոքրիկներ՝ հինգ տարեկան Ուսկօն և եօթ տարեկան Սիմօնն աւելի անհոգ էին. նրանք մինչև իսկ ընթրում էին այն չոր հացի պատառներով, որ այդ օրը երկսով միասին հաւաքել էին դրուռներից:

Երկու փոքրիկներից մեծը՝ Սիմօնը կամացուկ քաշեց Գալօի թեւը.

—Գալօ, այ Գալօ. վերջինս նայեց եղբօրը հարցական եղանակով:

—Գալօ, ախր ամենքին էլ ուղարկում են երկիր, գիտես:

Գալօն գլխով դրական պատասխանի նշան արեց ու լռեց. մայրը պատուիրել էր նրան հօր ներկայութեամբ այդ մասին բարձրաձայն չը խօսել. բայց փոքրիկի հոգսը չէր. նա շարունակեց.

—Մենք էլ կերթանք հա, Գալօ:

—Հա, հա, սուս կաց, Սիմօն ջան, կ'երթանք. կամացուկ ասաւ Գալօն ու կրկին լռեց:

—Բա ինչի չար Սրբչն էսօր ասում էր, թէ դուք չէք երթայ երկիր, քո ափօն հիւանդ է, ասաց՝ որ դուք կը մնաք էստեղ, միշտ հաց հաւաքելով կ'ապրէք:

—Չէ, չէ, Սիմօն ջան, Սրբչն սուտ է ասել, ափօն կը լաւանայ, մենք էլ կ'երթանք.

սուս կաց, թող ափոն քնի, որ շուտ լաւանայ:

—Ուսկօ, Ուսկօ, մենք էլ կ'երթանք, հէ, հէ, մենք կերթանք մեր երկիր, ափոն կը լաւանայ, կ'երթանք: Գալօն ասաց, սուս մնանք, որ լաւանայ:

—Ես էլ կը գամ, կոչեց փոքրիկ աղջիկն այնպիսի բողոքող եղանակով՝ ասես որոշուած լինէր նրան չը տանել. Սիմօնն այդ հասկացաւ, և քրոջն աւելի վախեցնելու համար վրայ բերեց.

—Քեզ չենք տանի, Ուսկօ, քեզ չենք տանի. քեզ կը թողնենք էստեղ, մենք կերթանք մեր խորոտ երկիրը:

Ուսկօն իրաւ որ վշտացաւ. նա դադարեց ծամելուց, իր փոքրիկ շրթունքներն ու այտերն ուռեցնելով՝ վեր ցատկեց տեղից, վազեց դէպի հիւանդ հօր անկողինը և լացակամած կանչեց.

—Ափօ, ափօ, Սիմօնը չի թողնում, որ ես էլ երթամ մեր երկիր, ամենքը գնում են, ինձ չեն տանում:

Հիւանդը տխրութեամբ նայեց այդ փոքրիկին, որ բռնուած էր հայրենիք դառնալու տենչով, «ախ» ասաց ու լռեց, աչքերը փակեց, ասես ինչ որ մտածելով. երևում էր, նրա գլխում խռնուած յիշողութիւնները շատ ծանր էին, որպէս զի նա խօսել կարողանար: Փոքրիկն անպատասխան ձեռքով կանգ առաւ երկար, նայեց հօրը, նայեց մօրը, որ օրօրում էր իր գլուխը. և կարծես հասկացաւ իր հօր վիճակը, յանցաւորի պէս կոտրուած յետ գնաց և բռնեց իր նախկին տեղը, սուս կացաւ: Ընդհանուր լռու-

թեան մէջ յանկարծ լսուեց Ոսկօի նուազ ձայնը.

—Մարգարիտ։

Լսեցէք եմ, ասա Ոսկօ։

—Երկիր կերթաք հմա... ինձանից ծածկում էիր... վախ, երկիր, վախ Աստուած։

Մանուկների վէճից հիւանդը հասկացել էր բոլորը։

—Չէ, Ոսկօ, ո՛վ ասաց, թէ կ'երթանք, առանց քեզ ի՞նչպէս գնանք։

—Առանց ի՞նձ... ի՞մն էլ չի լինի... գնացէք, Տէրը ձեզ հետ...

—Չէ, Ոսկօ, չէ, կը լաւանաս, կը վերկենաս, Աստուած ողորմած է, լայն օրեր կը գան, կերթանք մեր հող ու ջրին կը հասնենք։ Մարգարիտն ասաց այս բոլորը, աշխատելով թագցնել իր յուզմունքը։

—Ի՞մն էլ չի լինի. կրկնեց հիւանդը... գնացէ՛ք...

Նա մի րոպէ լռեց։

—Մարգարի՛տ. կինը պարձեալ կռացաւ հիւանդի երեսին։

—Կնիկ, դու քո Աստուած, ճժերին լաւ տար տեղ հասցրու, ուֆ. Նա նորէն լռեց։

—Մարգարի՛տ, մեր երկիրն էլ «էնպէս» չի հմա...

—Չէ, Ոսկօ, էլ «էնպէս» չի։

—Դէհ, Տէրը ձեզ հետ, գնացէ՛ք...

—Կնիկ, ձմեռ է, թէ գարուն։

—Ձմեռ է, Ոսկօ, ձմեռ է։

—Մեր երկիրն էլ ձմեռ է հիմա. էնպէս չի՞։

—Հապա, մեր երկիրն էլ հիմա ձմեռ է։

—Հը՛ւ, կնիկ, մեր սարերի ձիւնը... շատ է, չէ՞... սարերը բարձր են։

—Շա՜տ-շատ, Ոսկօ, մեր սարերը բարձր են նրա համար։

—Շա՞տ կայ մինչև գարուն։

—Չէ, Ոսկօ, գարունը մօտ է։

—Հա՛, դուք գարնանը կ'երթաք, մեր երկիրն էլ «էնպէս» չի, գնացէ՛ք, իմն էլ չի լինի, ինձ էլ գարուն պէտք չի... էս երկրում գարուն էլ չը կայ, ծաղիկ էլ չը կայ, մեր երկիրը ծաղիկ շա՜տ է, չէ՞, կնիկ։

—Հա, Ոսկօ, մեր երկիրը խօրոտ է, սուս կաց, որ քունդ տանի, լաւանաս, գնանք մեր երկիր։

—Իմն էլ չի լինի, իմը պրծաւ. լսիր, կնիկ, Գալօին չը թողնես մենակ երթայ Բազրգեան բուլաղները, էն կողմերը խօ գիտես, չարի բընակ է, ահ է։

—Չեմ թողնի, Ոսկօ, դու հանգիստ կաց։

—Էն երբ է մեր չայը [1]) վարարում. կաթնովին [2]) չէ՞...

—Հա՛, կաթնովին, Համբարձմանը։

—Հօ, կնիկ, մեր չայը գիժ է, գարնանն ինչեր է անում. նա ժպտաց էլ մտածելով իրանց գեաղ գժութեան մասին. Մարգարիտ,

---

[1]) Գետ. [2]) կաթնով—Համբարձման տօնն է կոչւում, դուցէ, որովհետև կաթնով բրինձ են ուտում։

շարունակեց նա. թող Սիմոնն ու Ուսկօն այդ ժամանակ տնից դուրս չերթան, կը խեղդուեն, գիտես ինչպէս կը պատահի, մեր դռնից որ դուրս գան... էն կանաչ դարն է... դարի տակ չայն է, կը վազեն դարի գլուխը, ջուրը տակից հողը կերած կը լինի, դարը կը փլի և երեխաները կ'ընկնեն կը խեղդուեն. չը թողնես երթան դէպի կանաչ դարը:

—Հա, հա, չեն երթայ, դու հանգիստ կաց:

Հիւանդը լռեց, փակեց աչքերը:

Մտածում էր արդեօք իր վաթանի մասին, անցեալ յիշողութիւններ էր փնտրում, թէ խօսելուց յոգնած, ուժասպառուած լռեց. իրօք և՛ մէկն էր և՛ միւսը: Խօսելու ժամանակ նկատուում էր, որ նա առանձին ջանքեր է գործ դնում մէկիկ-մէկիկ յիշել իր վաթանի բոլոր անկիւնները. նոյն իսկ աննշան առարկաներն այդ ժամին նրա համար դարձել էին հետաքրքիր, գրաւիչ, քաղցր, նրանք խօսում էին նրա սրտին. նրանք մի առանձին փայլ ստեղծած էին ներկայանում նրա աչքին: Մահամերձ հիւանդի պղտոր երեւակայութիւնը յուզուած էր ոչ այնքան զաւակների ապագայի հոգսով, որքան վաթանի յիշողութիւններով: Օրհասական րոպէն դուրս էր մղել նրա մտքից այն բոլորը, ինչ որ այնպէս մթագնում էր հայրենիքի պայծառ գաղափարը, արեան բնատորային քօղ ձգելով նրա չքնաղ պատկերի վրայ. միացել էր ինքը, հայրենիքը իր դիւթիչ տեսքով, իր ամենանուիրական յիշողութիւններով,

և հիւանդն աշխատում էր վայելել այդ պատկերի պատճառած գերագոյն հաճոյքը, աշխատում էր երեւակայել այն իր ամբողջութեամբ՝ միայն կատարեալ գեղեցկութեան մէջ, երջանիկ, լուսաւոր, առանց ցաւի, առանց սևերի, առանց արեան. աշխատում էր որքան կարելի է շատ անուններ տալ, կրկնել, երեքկնել ծանօթ անկիւնների, ծանօթ առարկաների, արտի, դաշտի, սարի, ձորի, ջրի, քարի, գետի անունները, արտասանել այնպէս, որ ինքը լսի, կամ կինն ստիպուած լինի կրկնել: Դժուար էր նրա համար այսքան խօսել, այսքան բան ասել. շրթունքները չորանում էին, կուրծքը ճնշւում էր, ձայնը կտրւում էր, կոկորդը նեղւում էր, բայց նա խօսում էր, զրաւուած իր վաթանով մինչև ուժասպառուիլը. այդ ժամանակ միայն նա մի փոքր լռում էր, որպէս զի կրկին սկսի խօսել նոյն նիւթի վրայ, մինչև հարցերը տայ կնոջը, մինչև պատասխաններն առնայ: Վերահաս, անխուսափելի մահուան առաջ, նրա մէջ զարթել էր հեռաւոր հայրենիքի սէրն իր բոլոր զրաւչութեամբ, և զարթել էր բուռն, անզուսպ կերպով: Այն միտքը, թէ նա այլ ևս չի կարող տեսնել իր սիրուն վաթանը, թէ նրա ոսկորները պիտի մնան օտար երկրում մոռացուած, անտէր-անտիրական, գուցէ և անյիշատակարան, նրան ստիպում էր դէթ երևակայութեամբ մի քանի րոպէ մահից առաջ ապրել այդ քաղցը վաթանում, վերջին անգամ մտքով սրանալ այն

սուրբ տեղերը, ուր անցել էր նրա մանկութիւնը, ուր սև ու կարմիր օրեր էր տեսել. և նա խօսում էր անվերջ։

Շատ դիշեր անցաւ, ճրագի լոյսը կամաց-կամաց նուազում էր, երկու փոքրիկներն իրանց տեղերում վաղուց քնել էին, հացի պատառները փոքրիկ ձեռներով կրծքերին սղմած. Գալօն նըստած տեղում նիրհում էր, թէև աշխատում էր չը քնել բոլորովին. ամեն անգամ երբ ծանրացած գլուխը կռանում էր կրծքին, նա ցնցւում էր. գլուխը բարձրացնում, աչքերը ճպճպացնում, բաց անում, աշխատելով քունը փախցնել, իզուր. հայրն ու մայրը աղօտ կերպով նկարւում էին նրա աչքերին, և քունը կրկին ընկճում էր նրան, քնոտ աչքերը փակւում էին։

Հետզհետէ հիւանդի տենդոտ շնչառութիւնն աւելի և աւելի նուազում էր։ Դուրսը լուռ էր. միայն ցուրտ քամին խաղում էր նեղ պատուհանի պատառուած թղթի հետ աւելի և աւելի մեծացնելով բացուած անցքը ներս մտնելու համար, ասես թէ նա էլ էր մրսում, նա էլ էր ապաստան փնտրում ինչպէս ուզացած, մոլորուած ճանապարհորդ, որ ամեն տեղից մերժուած, եկել էր բաղխելու այս թըշուառների դուռը։ Ամեն անգամ, երբ լուսամուտում խշխշում էր պատառուած մրոտ թուղթը, Մարգարիտը բարձրացնում էր գլուխը, նայում էր դէպի այն կողմը, ապա զգուշութեամբ յարդարում էր հիւանդի ծածկոյթը, որ չը մրսի։

«Ա՛խ, գոնէ մի կենդանի ձայն, մի աղմուկ, մի շշուկ լսուէր, մտածում էր նա. մի ծանօթ, մի հարևան բաց անէր դուռը». սակայն ոչ ոք չը կար, լուռ էր չորս կողմը և միայնութիւնը կամաց-կամաց աւելի ճնշող էր դառնում։ Եւ յանկարծ այդ սպանիչ լռութիւնը վրդովուեց մի շան չարագուշակ ոռնոցով, ղիլ, երկար ոռնոցով. քամին ուժգին թափով խփեց լուսամուտին և թուղթը միանգամից պատռուելով՝ քաշ ընկաւ, բաց թողնելով մի անցք, որտեղից փչում էր ցուրտը. Մարգարիտն այժմ վախենում էր, նա չորս կողմը նայեց.

—Լսեցիր, Մարգարիտ. ասաց յանկարծ Ոսկօն, գալիս են, թող գան, ժամանակն է։

Նա խօսում էր հոգեառ հրեշտակների մասին. Մարգարիտն այս անգամ ևս առաւել սարսափեց. կրկին լռութիւն տիրեց։

—Ջուր, կանչեց հիւանդը. կինը չուրը նրա շրթունքներին մօտեցրեց։

—Կնիկ, մեր Զուիկ աղբրի չուրը շատ սառն է չէ, ամառը շատ սառն է լինում. Գալօն որ մեծանայ, հունձ անի, քրտնած լինի, թող շուտով չը խմի աղբրի չրից, կը մրսի, կը հիւանդանայ։

—Հա, չի խմի, Ոսկօ, չի խմի։

—Մէկ էլ, մաքից էլաւ, կնիկ, էն ո՞րտեղ է, ուր շատ զոխ ու բոխ, խաւրծիլ կայ, կնիկներն քաղում են գարնանը. էն ո՞րտեղ է, կնիկ։

—Սև քարի ձորը, Ոսկօ, Սև քարի։

—Հա, հա, Սև քարի ձորը։ Խաւրծիլ ու բոխ

շատ կայ չէ՞... հիմա ինչքան կաւ... չէ կնիկ. հիմա շատ կայ խաւրծիլ։

—Սխը դեռ ձմեռ է, Ոսկո։

—Ձմեռ է, ձմեռ է. գարնանը կը լինի, էնպես չէ՞... կնիկ, դիտես, գարնանը մենակ չերթաս Սև քարի ձորը խաւրծիլի, հեռու է, լաւ չի. մենակ մի գնա։

—Մենակ չեմ գնայ, Ոսկո, միասին կ'երթանք, քեզ հետ կ'երթամ։

—Հո՛ւ, իմն էլ չի լինի, իմը պրծաւ։

Հաւը խօսեց, ուժասպառ հիւանդը դեռ փորփրում էր իր թուլացած մառախլապատ միտքը, դեռ գտում էր իր պղտոր երևակայութիւնը, իր յիշողութիւնը, որքան կարելի է աւելի մանրամասնութիւններ մտաբերելու համար, որպէս զի կարողանայ վառ պատկերացնել իր վաթանի սիրուն տեսքը, որ արագ-արագ ծածկւում էր խաւարի անթափանցիկ քօղով, հեռանում, փախչում էր նրանից, կորչում էր աննահմանութեան մէջ և այն յաւիտեան, անդարձ. ի զուր էր նա աշխատում բռնել, պահել այդ պատկերը, կեանքն էր փախչում, խոյս տալիս նրանից, տանելով իր հետ ամեն ինչ, և՛ անցեալ, և՛ յիշողութիւնները, և՛ վաթան։

Ճրագի լոյսն այնքան նուազեց, որ առարկաները խրճիթում քօղապատ էին երևում Մարգարտի աչքին. հիւանդի ձայնը նոյնպէս խսպառ նուազեց, բայց և այնպէս նա կարողացաւ նորէն խօսել թոթովելով.

—Կնիկ, էն ո՞ր կողմից եկանք մենք։

—Էս կողմից եկանք այ, էս կողմից. կինը ձեռքով ցոյց տուեց դէպի հարաւ։

—Էդ կողմից եկանք. դե որ էդպէս է, շուռ տուր իմ անկողինը, թող երեսս դէպի էն կողմը դառնայ։ կինը կատարեց նրա ցանկութիւնը կրօնական երկիւղածութեամբ. նա ըզգում էր մահամերձ ամուսնու այդ վերջին ցանկութեան բոլոր վսեմ խորհրդաւորութիւնը. զգում էր խորապէս վայրկեանի բոլոր վեհութիւնը. նա գիտէր մինչև այժմ, որ մեռնողի վերջին ցանկութիւնն է լինում երեսը դէպի աղօթարան դարձրած իր շունչը փչել, բայց ահա մէկը՝ որ փոխում էր իր աղօթքի վերջին մրմունջները արտասանում էր երեսը դէպի վաթանը դարձրած, որ ուզում էր իր վերջին հայեացքը հայրենիքի վրայ հանգչի, դէպի հայրենիքն ուղղած ծնայ ժամանակի և տարածութեան մէջ սառած, անշարժացած յաւիտեան։

—Էս էլ աղօթարան է, կնիկ, քաղցր աղօթարան է, էսպէս լաւ է, ասաց Ոսկօն, երբ կինը կատարեց նրա ցանկութիւնը։

Ճիշտ այդ կողմն էր պատուհանը. հիւանդն աչքերը չռեց դէպի այդ նեղլիկ անցքը, նայում էր, նայում էր դէպի դրսի խաւարը, նայում էր դէպի երկինք անյագ, անդադար։ Պատուհանի անցքից երևում էր մի հատիկ աստղ վառ ու պլպլուն, նրան էր նայում մեռնողը, և ա-

սես գրաւուած նրա փայլով, էլ չէր խօսում, այլ միայն նայում էր. ո՛վ կարող էր իմանալ թէ երկրի և երկնքի մէջ կախուած այդ հոգին ինչ էր խորհում այդ րոպէին, արդեօք իր մըտքերը, իր այրուած սրտի կարօտն էր հաղորդում երկնքի լուսատուին, որ իր վաթանին հասցնի, թէ վերջին ալօթքներն էր մրմնջում իր թշուառ հայրենիքի վերակենդանութեան համար: Երկար նայեց. ի վերջոյ շրթունքները մեղմիկ մրմնջացին.

—Ի՞նչ խօրոտ է.

—Ի՞նչը: Ոսկո, ինչն է խօրոտ:

—Վաթանն ինչ խօրոտ է: Կնիկ, վաթանը չՓս տեսնում, այ:—Նա զառանցում էր—կնիկ, եկաւ ինձ էլ տանի, ես էլ կը գամ, քիչ էլ կաց, վերևից կը գամ, էնտեղից կ'երթանք, էնտեղից, վերևից լաւ է, հեշտ է, էնպէս չէ, ներքևն ահ է. արիւն է. ինչքան արիւն կայ. ծով է ծով, վրայից կը թռչենք...

Աստղիկը շարունակում էր ցուրտ-ցուրտ պլպլալ. մեռնողի աչքերը բորբոքուած հետևում էին նրա փայլին. շնչառութիւնը թուլացաւ այնպէս, որ հազիւ մի թեթև շշուկ էր լսւում. նա այժմ բոլորովին լռեց, սես տարուած աստղիկի փայլով. հեռաւոր վաթանի սիրուն պատկերը նրա համար կարծես մարմնացել էր այդ աստղիկի մէջ. նա վառ էր ու պայծառ, հայրենիքը գրաւիչ ու քաղցր: Մէկ էլ յանկարծ նա դուրս հանեց ծածկոյթի տակից իր վիրաւոր ձեռները, ինչքան կարող էր դէպի երկնքի լուսատուն մեկնեց, շրթունքները շարժւում էին, նա բաներ էր ասում, բայց խօսքերը կոկորդից դուրս չէին գալիս, թէև նա ջանք էր անում ասել ինչ որ բան: Յանկարծ վերջին ոյժերը հաւաքեց, բարձրացաւ տեղից, ձգուեց դէպի աստղիկը յետին թափով, ապա նոյն թափով էլ յետ ընկաւ բարձի վրայ և միայ անշարժ, աչքերը չռած աստղիկի վրայ, որ շարունակում էր պլպլալ խաւար անսահմանութեան մէջ և կարծես կարեկցութեամբ դիտում էր հոգսալից աշխարհի մի մռայլուած անկիւնում, խաւարի մէջ բուն դրած այս մեծ ցաւը: Ճրագը մարեց, խրճիթը կորաւ թանձր խաւարի մէջ, հեռուում դարձեալ լսուեց շների այլանդակ ոռնոցը: Մարգարիտը սարսափեց, նրան թուաց՝ թէ խրճիթը լցուեց ոգիներով. մեռելի մերձաւորութիւնը, իր միայնութիւնը և հոգեմաշ խաւարը սոսկումով պատեցին նրան, նա դողում էր ամբողջ մարմնով. ճաքը կտրած՝ շօշափելով գաւ Գալօին, ցնցեց, արթնացրեց, իր մօտ քաշեց մի կենդանի շունչ լսելու համար: Երեխան հասկացաւ սարսափելի իրողութիւնը. նրանք մօտ կպան իրար և մենաւոր խրճթի ճնշող լռութիւնը վրդովուեց այրի մօր և որբ զաւակի մեղմիկ հեծկլտանքներով:

Խրճիթում ցուրտ էր ու խաւար, դուրսն էլ էր խաւար, դուրսն էլ էր ցուրտ. խաւար ու ցուրտ էր նաև երկու սգաւորների սրտերը. մէկ աստղիկն էր վերևից պլպլում իր մեղմիկ լոյսով,

բայց նրա շրթերն էլ ցուրտ էին, ինչպէս ամբողջ աշխարհը։

II

Լոյսը բացուեց, վրայ հասաւ մի ամպամած ու թխպոտ օր. ձիւն էր գալիս։ Մայր ու որդի սգաւոր խրճթից դուրս գալով զանազան կողմեր գնացին. որդին խանութներից պատանք պիտի մուրար, մայրը՝ քահանայից հոգևոր աբարողութիւն. մէկը մամոնայի և միւսն Աստուծոյ պաշտօնեայի դուռը պիտի թակէը. դժուար էր որոշել, թէ մուրացկանութեան այս երկու տեսակից ո՞րն էր աւելի անօրինակ, պատճ՞նը, թէ՞ ծիսակատարութիւն մուրալը։ Խանութները բազմաթիւ էին. շուկան ընդարձակ. երեխան չը գիտէր ո՛ր խանութի դուռը բանայ, որ չը մերժեն, նա անցնում էր կամացուկ մեծ ապակիներով դռների առաջից և զգուշութեամբ նայում էր մարդկանց դէմքերին. ասում են, որ երեխաները մարդկանց հոգին ճանաչելու ընդունակութիւն ունեն, որ բնութիւնը տուել է նրանց այդ կարողութիւնը որպէս զօրավիզ իրանց թուլութեան, որպէս միջոց ինքնապաշտպանութեան ընդդէմ չարերի։ Խեղճութիւնն ու անմեղութիւնը եղբայր դարձած՝ այդ առաւօտ անցնում էին խանութների շարքերի առաջից առանց համարձակուելու բացել որ և է դուռ. մռայլ ու անհամբոյր չէին շուկայի բոլոր դէմքերը. կային դէմքեր, որոնց ից ասես նոյն իսկ անմեղութիւն էր կաթկթում, բայց մանկական անմեղութիւնը վախենում էր առաջինից. նրանք նման չէին. դէմքեր կային, որոնց վրայ ժպիտը ոչ թէ խաղում էր, այլ ասես թէ տպուել, ճնացել էր պատրաստ ամեն մէկի ծառայութեան, սակայն խղճութիւնը փախչում էր այդ ժպտից էլ. նրա մէջ մի սարսափելի բան կար։ Սիրուն աչքեր կային, վառ, պայծառ, մանուկը նայում էր այդ աչքերին. նրան թւում էր, թէ գետ է փնարածը, բայց երբ այդ սիրուն աչքերը թարթում էին, երբ բիբերը շարժւում էին այս ու այն կողմը, նա սարսափած փախչում էր. չը կար, չը կար մի դէմք, որ մանկանը վստահութիւն ներշնչէր. չը կար մէկը, որ ժպտար այնպէս՝ ինչպէս իր հայրը կը ժպտար, նայէր այնպէս, ինչպէս իր հայրը կը նայէր. թունաւոր էին ժպիտները, սպանիչ, շանթող էին հայեացքները և մանուկը փախչում էր դրանցից։ Խեղճ երեխայ, աշխարհի «խեր ու շահին» անտեղեակ, նա չը գիտէը դեռ ևս, որ փախչելով դժուար է ազատուել, որ ամեն կողմ ուր բոյն է դրել մարդը, իշխողը այդ ժպիտն է, դրանով է կառավարւում աշխարհը, դա է ծառայում մարդկանց յարաբերութեան իբր հիմնաքար. ժպի՛ր, ժպի՛ր, կեղծ թէ անկեղծ, ո՞վ է հարցնում. ժպտով է շարժում վաճառականն իր արշինը, ժպտով է կողոպտում աւազակն իր զոհին, ժպտով է գրում պաշտօնեան իր խորհրդաւոր թուղթը. ժպտով է ստորագրել տալիս

վաշխառուն իր մուրհակը, ժպտով է արտասանում վկան իր կեղծ ցուցմունքները, ժպտով են դատապարտում անմեղ անձարին, և այդ բոլոր ժպիտների մեջ խեղդւում է անմեղութիւնն ու խեղճութիւնն առանց հասկանալ կարողանալու, թէ ինչպէս միևնոյն մարդը և՛ ժպտում է և՛ սպանում։ Գալօն էլ այդ առաւօտ հասկանալ չէր կարողանում, թէ ինչու ինքը չի համարձակւում այդ ժպտացող դէմքերից մէկն ու մէկին դիմել և նա շարունակում էր գնալ։ Շուկան վերջանալու վրայ էր. նա արդէն միւս ծայրումն էր. էլ ճար չը կար, պէտք էր մտնել վերջապէս, պէտք էր խնդրել, աղաչել. հայրը պատան չուներ։ Ահա նա բացեց մի խանութի դուռ. երկչոտ կերպով ներս մտաւ և կանգնեց։ Երկար ժամանակ նրա վրայ ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում. առևտուրը շարունակւում էր, արշինը շարժւում էր։ Երեխան երկար սպասեց...

—Ափօս մեռաւ. ասաց նա վերջապէս հազիւ լսելի ձայնով և արտասուքները կախուեցին թերթերունքներից։ Նրան չը լսեցին, նրա վրայ ուշք չը դարձրին, զբաղուած էին։ Մանուկը մի քիչ էլ լուռ մնաց. կանգնած տեղում շարժուեց, հազաց. իյ գոռը։

—Ափօս մեռաւ, կրկնեց նա մի փոքր աւելի բարձր ձայնով։

—Աստուած հոգին լուսաւորի, գնա, գնա, «Աստուած տայ», պատասխանեց խանութպանը

կարծելով՝ որ երեխան հօր մահը՝ ճիշտ կամ կեղծ, պատրուակ բռնած՝ դրամ է հաւաքում։

Մերժումը շատ էր անողորմ որպէս զի երեխան սիրտ անէր ասել, որ դրամ չէ ուզում, այլ պատան իր հօր համար։ Ո՛վ գիտէ, գուցէ պատան չը մերժէին, թէև դա աւելի արժէ քան մի քանի կոպէկ ողորմութիւնը։

Դա զարմանալի էլ չէր լինի, որ ունեւորը չի կամենայ, որ աղքատի խնդրածը միշտ պատան լինի. դա ողորմութեան վերջաբանն է. էլ նա ստիպուած չէր լինի կրկնել այն սարսափելի երկու խօսքը, թէ՝ «Աստուած տայ», որոնք շրթունքներ են այրում, որովհետև արտասանողն զգում է, թէ հայհոյում է Աստծուն՝ ուրանալով նրա տուածը, որ խեղճութիւնը գուրկ մնայ. դողութեան ամենաստոր ձևն է այդ։ Ջարագործը միշտ կը դողայ, զարմանալի է, որ ունևորը առանց ներքին տագնապի, առանց մի առանձին դժուարութեան չի կարողանում այդ երկու գուրա բառերը շպրտել խեղճերի երեսին։ Երբ դռան ճեղքից ներս է սողոսկում մի չորացած վտիտ ձեռք, երբ ականջը լսում է այն դողդողուն ձայնը, որ ողորմութիւն է հայցում, գիտէ ունևորի առաջին հոգսն է լինում, թէ ինչպէս պիտի արտասանի այն երկու սարսափելի բառերը, որոնք չը նայելով յաճախակի գործածութեան, երբեք, երբեք սովորական չեն դառնում. բարոյական օրէնքներ կան, որոնք գտնւում են տիեզերքի անսահման ոգու ձեռքը վճռ, վճռ աշխար-

հից, և մարդն անկարող է խախտել այդ օրէնքներն անպատիժ։ Ահա թէ ինչու սարսափելի բառերի արտասանելու ամեն մի առիթ նրան զայրացնում է, հեշտ չէ՛ ասել «Աստուած տայ», երբ նա արդէն տուել է։ Հարուստը զայրանում է ոչ թէ նրա համար, որ իրան անհանգիստ են անում յաճախակի, այլ որ ինքն ստիպուած է լինում ստել ամեն անգամ և ստել զարհուրելի տանջանքներով։ Ով երբ և իցէ լսել է մի բախտաւոր բերանից այդ երկու բառերը, որոնք այնպէս վիրաւորում են և՛ մարդուն և՛ Աստծուն, նա անշուշտ նկատած կը լինի, թէ ինչպէս այնուհետև մի քանի րոպէ այդ մարդը ծնում է սառած, մտածմունքի մէջ ընկղմած, ասես թէ մի անուղղելի ոճիր գործած լինի և այն՝ Աստուծոյ դէմ. թէև նա այնուհետև էլ շարունակում է գործել միևնոյն ոճիրը, բայց միշտ ստանում է պատիժը, միշտ խղճի սուր խայթոցները տանջում են նրան։ Եթէ գձուձ հարուստներ կան, որոնք դողում են ամեն մի կոպէկի առաջ, դա անխորհուրդ չէ. ամեն մի առարկայ գնահատուում է համաձայն այն աշխատանքի, որով այդ առարկան ձեռք է բերուել. իսկ գձուձ, անսիրտ հարստի ամեն մի կոպէկը ձեռք է բերուել բոլոյական զարհուրելի տանջանքների գնով. նա իրաւունք ունի դողալ իր դրամի առաջ. դրանց համար նա «հոգի է այրել»։ Այս խանութում «հոգի էին այրում» ժպտալով, և Գալօին ասացին «Աստուած տայ». երեխան դուրս գնաց·

կրկին սկսեց դիտել խանութների դռները։ Ահա մի ուրիշ խանութ. Գալօն կանգ առաւ, մի փոքր դիտեց և ներս մտաւ։

—Ափսօս մեռաւ, պատան չը կայ, որ թաղենք. ասաց նա կամացուկ։

Մի քանի արշին կտաւ կտրեցին և տուին նրան. զարհուրելի բան կը լինէր, եթէ մարդիկ սովորէին ասել, թէ՝ «պատանն էլ Աստուած տայ»։ Այդ ժամանակը դեռ չէր հասել. այդ անողորմ բառերը չարտասանեցին և Գալօն դուրս եկաւ խանութից հօր պատանը թևի տակ. նա շտապով տուն գնաց։ Մի քանի ժամից յետոյ քահանայի պատուէրով ժամհարը փորեց մի գերեզման. Գալօն այնտեղ էր և ձեռքերով քաշում էր հողը, մինչդեռ վերևից ձիւնը թափւում էր ու թափւում։ Դագաղ վերցնող էլ ճարուեց և քիչ յետոյ Ոսկօի դիակը փոսի առաջն էր. բաց էին աչքերը, սառած հայեացքը ուղղուած դէպի երկինք, ուր նա կարծես փնտռում էր տակաւին այն աստղիկը, որի մէջ տեսաւ նա վերջին անգամ իր վաթանի պատկերը, որի միջոցով վաթանը կանչում էր նրան։ Սակայն աստղիկն էլ չը կար երկնքում. նրա լոյսի փոխարէն ցած էին թափւում ձիւնի թերթիկները, և սպիտակ շերտով ծածկում պանդխտի դիակը, ծածկում նրա բաց բիբերը, մինչդեռ քահանան կարդում էր աղօթքը։ Քիչ յետոյ իր յաւիտենական բնակարանում սառն հողաթմբի տակ ծածկուեց պանդուխտն իր վաթանի կարօտով, իր այրուած սըր-

տով, իր անհուն ցաւերով և ծածկուեց յաւիտեան: Երբ Գալօն մօտեցաւ համբուրելու աւետարանը, նրա շրթունքները կամացուկ մըրմնջացին՝

—Տէրտէր, Աստուածծ տայ:

Դեռ երբէք այս երկու բառն այսքան ի դէպ, այսքան արդար կերպով չէին արտասանուել:

III

Օրեր անցան, հասաւ գարունը. թշուառներին վերադարձնում էին. նրանք խմբեր էին կազմում մի «աչքուժ արջունք, միւսում խնդութիւն», դէպի վաթան ճանապարհ ընկնելու համար: Այդպէս են չէում աշնանը թռչունները:

Երեկոյեան Մարգարտի մօտ եկաւ իրանց գիւղացիներից մէկը.

—Մարգարիտ, ասաց. գիշերը պատրաստուիր, էգուց առաւօտ շուտով ճանապարհ ենք ընկնում. աշխատիր, պատրաստ լինես, որ «էլից» յետ չը ձնաս, թէ չէ մենակ կը ձնաս, շուարած ու խեղճ:

Մարգարիտը խոստացաւ պատրաստ լինել. ինչ ունէր պատրաստելու, բաւական էր երեխաներին զարթեցնել և ձեռքերից բռնել:

Առաւօտեան լուսաբացից դեռ շատ առաջ նրա դուռը թակեցին. ներս մտաւ նոյն հարեւանը:

—Դէ, շուտ Մարգարիտ, երեխաներին վերկացրու, ճանապարհ ենք ընկնում.

—Ես չեմ գնում երկիր. եղաւ Մարգարտի պատասխանը:

Մարդն ապշած ձնաց:

—Ի՞նչպէս թէ չես գնում, չէ՞ որ ուղարկում են:

—Ես յետոյ կը գամ:

—Յետո՞յ... մենա՛կ... ի՞նչ պատահեց քեզ, այ կին, գժուեցիր, ի՞նչ է, երեխաներիդ յետևն ես ընկել. խելքի արի, մեղք ես, խեղճ ես, քեզ չես խղճում, գոնէ այս որբերի մասին մտածիր:

—Ես յետոյ կը գամ. կրկնեց Մարգարիտը:

—Տէր Աստուածծ, ի՞նչդու. ի՞նչ պատահեց մի գիշերուայ մէջ:

—Ոչինչ, ես յետոյ կը գամ, Աստուածծ ողորմած է, էլի գնացող կը լինի:

Զարմացած ու շուարած հարևանը գլուխն օրօրելով թողեց, գնաց:

Իրաւ որ զարմանալի էր. ի՞նչ էր Մարգարիտի այս յանկարծական որոշման պատճառը. ի՞նչ էր պատահել մի գիշերուայ մէջ:

Մի գիշե՞ր... հեշտ է ասել. օ, նա երբէք, երբէք մոռանալ չի կարող այդ սարսափելի գիշերը: Ահա թէ ինչ էր պատահել:

Երբ բոլորովին մթնեց, երեխաները այս ու այն կողմում իրանց անկիւններում կծկուեցին, քնեցին: Մարգարիտը ձնաց նստած թոնրի շրթին. ճրագի խղճուկ լոյսը շարունակում էր պըլ-

պըլալ։ Երկու ձեռքերով գրկած ծնկները, Մարգարիտը քաշ էր ձգել գլուխը կրծքի վրայ և հայեացքը ճրագի բոցին ուղղած՝ մտածում էր։ որչա՞փ բան կար մտածելու... մինը միւսից սարսափելի էին այդ մաքերը—երեք մանր երեխայ, լեռներ, լեռներ լի հարամիներով, երկար, տաժանելի ճանապարհ, ամեն քայլում արիւն, մահ, վերջն էլ ո՛վ գիտէ, ի՞նչ է սպասում... էլ գիւղ կա՛յ... էլ տուն ու տեղ ճնացե՛լ է... գոնէ Ոսկօն կենդանի լինէր. չի գիտէ երանի ասի նրան, թէ խղճայ. ի՞նչ ցաւերով մեռաւ խեղճը, ինչպէս էր ուզում տուն դառնալ, վաթանը տեսնել, պիտի ճնայ օտար հողում, անտէր, անքար, մոռացուած դերեզմանում. նա սկսեց ցաւել Ոսկօի վրայ, ո՛վ խունկ կը ծխի վրան. անխունկ, անաղօթք մեռելը մի ցաւ է տիրոջ համար։ Այսպէս էր մտածում Մարգարիտը. շատ գիշեր անցաւ. դուրսը լուռ էր, խաւար. ներսում պլպլում էր ճրագը և նրա դողդոջուն բոցին նայում էր Մարգարիտը երկար-երկար։ Մէկ էլ յանկարծ այդ բոցն սկսեց ձգուել վեր, բարձրացաւ, լայնացաւ և զարհուրած Մարգարիտը բոցի փոխարէն իր առաջը տեսաւ մի մարդ, մի հիւանդ, գզգզուած մարդ, որի գունատ ու մռայլ դէմքը կրում էր անհուն ցաւերի կնիք. եղանակը ցուրտ չէր. բայց նա դողդողում էր ամբողջ մարմնով, ցնցոտիները չէին ծածկում նրա մերկութիւնը, ուսի վրայ ձգուած էր մի սպիտակ կտաւ, որ երկու կողմից մինչև գետին էր հասնում. բայց նա այդ

կտաւով չէր ուզում ծածկել իր մերկութիւնը, նրան ձեռք չէր տալիս և դողում էր, դողում. թշուառութեան ու վշտի մի սպանիչ մարմնացումն էր այդ պատկերը։ Մարգարիտը նայում էր. յանկարծ նրա մազերը դիզացան գլխին. սարսափի դող անցաւ բոլոր մարմնով, նա ճանաչեց Ոսկօին. իսկ և իսկ Ոսկօին, նոյնպէս հիւանդ, նոյնպէս տանջուած, ինչպէս էր նա մահուան անկողնում։ Մարգարիտը փորձեց ձչալ, բայց ձայնը խեղդուեց կոկորդում. ուզեց փախչել, անկարող եղաւ մի քայլ անգամ անել. ուստի նա փակեց աչքերը, որ գոնէ չը տեսնի մեռելի պատկերը. սակայն այդ էլ չօգնեց. նա լսում էր Ոսկօի ատամների շկշկոցը, զգում էր, թէ ինչպէս նա դողում է։ Երկար ժամ այդպէս, ապա կամացուկ գլուխը բարձրացրեց, որ տեսնի, թէ չը հեռացա՞ւ արդեօք ուրուականը. և այդ վայրկենին աչքերը մեռելի աչքերին հանդիպեցին. էլ չը կարողացաւ երեսը ծածկել, չը կարողացաւ փակել աչքերը, խոյս տալ ուրուականի տեսքից, նրա ցուրտ հայեացքից, որ սակայն այնքան ցաւ, այնքան կսկիծ ունէր իր մէջ։ Նրանք նայում էին իրար լուռ թեամբ։ Ոսկօն անշարժ էր իր տեղում։

—Ի՞նչ ես ուզում, Ոսկօ, ասաց վերջապէս Մարգարիտը. ի՞նչու չես թողնում որ իմ ցաւերի մէջ տապակուեմ գոնէ։

—Երկի՛ր էք գնում։

—Գնում ենք դժոխք, գնում ենք ցաւերի

աշխարհ, գնում ենք բոց ու կրակի մէջ. երանի՛ քեզ, գնացիր պրծար, թո՛ղ մեզ դոնէ հանգիստ։

—Երանի՛ ինձ... ի՞նչու չես ասում՝ վա՛յ ինձ. տե՛ս... և նա ցոյց տուեց իր մերկ մսերը. վերից, կապտած, սարսափելի. կնի՛կ, ցուրտ է, մրսում եմ, մրսում, քնել չեմ կարողանում. ա՛խ, կնի՛կ, ինչքան սառն է էս երկրի հողը. իմ ոսկորները չեն տաքանում, տեղս հանգիստ չէ, մենա՛կ եմ, օտա՛ր եմ, պատան էլ չունեմ. անաստուած կնի՛կ, անպատան մեռել ո՛վ էր տեսել աշխարհում. հողն ինձ դրա համար տեղ չի տալիս, ամենքը պատան ունին, մէկ ես չունեմ. ես դողում եմ, օ՛, ինչքան սառն է էս երկրի հողը, մերը տա՛ք է. կամ ինձ էլ տար, կամ տուր ինձ պատան.

—Ոսկո՛, չէ՞ քեզ պատանով թաղեցինք։

Մեռելը ժպտաց, ցուրտ, սպանիչ ժպտով, և Մարգարիտը տեսաւ այդ ժպիտն էլ. այդ սարսափելի էր, գոնէ չը ժպտար. թո՛ղ միայն արտասուէր, թո՛ղ անիծէր, մեռելի անէծքը իր ժպտից ահաւոր չէ. բայց Ոսկօն ժպտաց, ասես դիտմամբ։

—Պատանո՛վ թաղեցիք, բայց դո՛ւ առար այդ պատանը, քո՛ ձեռքի աշխատանքով, քանի՛ տարի էս խեղճ ոսկորներս քեզ պահելու համար մաշեցի, ա՛յ կնի՛կ. էդ բոլորը մի պատան էլ չէր արժի. դու գնացիր պատան մուրացիր ինձ համար. ո՛վ է տեսել պատան մուրան. ա՛ռ, առ այդ պատանը. և նա զայրացած ձգեց ուսի կտաւը, որ ընկաւ, փռուեց նրա ոտների առաջ կազմելով տասնեակ ծալքեր.—Թո՛ղ ես դողամ, շարունակեց նա, անտէր, անտիրական, իմ անքար, անխո՛ւնկ գերեզմանում, էս երկրի սառն հողի մէջ։

—Ախր խո՛ւնկ էլ ծխեցինք, տէրտէրը բուրվառից թափեց վրադ։

—Տէրտէրի բուրվառ՛ից, դո՛ւ էիր ածել այնտեղ, դո՛ւ էիր առել...

—Մարգարիտը նորէն լռեց, ինչպէս դատապարտուած յանցաւոր։

—Անխո՛ւնկ մեռե՛լ... կրկնեց Ոսկօն և դարձեալ ժպտաց այն սարսափելի ժպտով, որ սառեցնում էր Մարգարտի արիւնն իր երակների մէջ։

—Ես մեղաւոր եմ. ճչաց Մարգարիտը, գնա՛, ամա՛ն, գնա՛. ես էլ չեմ երթայ երկիր, մինչև դու պատան ու խո՛ւնկ չունենաս. թո՛ղ հոգուս պարտքը լինի. միայն դու գնա։

Բայց մեռելն ասես չէր լսում նրա խօսքերը, նրա աղերսը. նա շարունակեց պատմել իր ցաւերը.

—Ես խօմ անթաղ եմ, ա՛յ կնի՛կ. ես թափառական եմ, գիշերները վեր եմ կենում և նստում եմ սառը փոսի եզրին. նայում եմ իմ աստղին, նրան եմ պատմում ցաւերս, դողում եմ, դողում եմ. աստղն էլ ցուրտ է, և ես արտասուում եմ։ Ախր դու թաղման վարձը չես տուել, գերեզմանս օրհնել էլ չես տուել. էլ ես ի՞նչպէս հանգիստ քնեմ։ Օ՛, սառն է այս երկրի հողը, շատ սառն

է. պատան էլ լինի, հազիւ տաքանամ, խունկ էլ լինի, հազիւ հանգստանամ, աղօթք էլ ասեն, հազիւ խաղաղուեմ, բայց էլի թող իմ ընկերների պէս լինիմ, թող գոնէ գիշերները չը դուրս գամ, թող ծնամ գոնէ փոսի մէջ, էնտեղ դողամ։ Մի մեծ ժայռ ճարխը, էնպէս, ինչպէս պոկուած է սարի կրծքից, այլանդակ ու ծանր, շատ ծանր. սև՝ ինչպէս իմ սիրտը, կարծր ինչպէս աշխարհի սիրտը. դնել տուր այդ ժայռը գերեզմանիս վրայ, թող ճնշի անվերջ, անողորմ կերպով այս ցուրտ, ցաւոտ կուրծքս. թող ճնշի յաւիտեան... առանց այդ քարի ես միշտ կը վերկենամ, էնտեղ էլ երթաս, էնտեղ կը գամ, էապէս կը գամ, ճիշտ էապէս։ Այ, կնիկ, Աստուած ունես, ուր ես ինձ էապէս թողնում ու գնում, տուր ինձ գոնէ խունկ ու աղօթք, քար ու պատան, կամ ինձ էլ տար. սառն է էս երկրի հողը. ախ շատ սառն է... Իսկ էս, աւելացրեց նա, վերցնելով գետին ընկած կտաւը—տար և տիրոջը տուր. և նա թափով ձգեց այդ պատանը խրճիթի մէջ. կտաւը մի քանի ծալքեր արաւ և փռուեց քնած Գալօի վրայ։

Մարգարիտը ճչաց.

—Ի՞նչ ես անում, այ մարդ, պատանն ինչու ձգեցիր երեխի վրայ. և նա վեր ցատկեց թափով, որ չարագուշակ կտաւը խլի Գալօի վրայից. ձգեց ձեռները տարածուքեան մէջ, և արթնացաւ քրտնքի մէջ կորած։ Ոսկօն չը կար, պատանը չը կար. ճրագը վաղուց մարել էր, խրճիթը խաւար էր, չորս կողմը նայեց. երեսը խաչակնքեց, բայց սարսափը չանցաւ. երկիւղն անագին էր. նա կրկին խարխափելով գտաւ Գալօին, գրկեց, համբուրեց, պինդ-պինդ կպաւ նրա կրծքին, որ լսի նրա շնչառութեան ձայնը, նրա կենդանութեան նշանը, և այդպէս լուռ կացաւ։

Քիչ յետոյ՝ լուսաբացին, հարևանն եկաւ, դուռը թակեց, որ ճանապարհ ընկնեն դէպի վաթան, բայց Մարգարիտն էլ չէր գնում. իր ամուսնուն խունկ ու աղօթք, քար ու պատան էր հարկաւոր և այն ոչ թէ մուրալով՝ այլ իր աշխատանքով, իր ճակատի քրտինքով, իր և իր Գալօի աշխատանքով պիտի ձեռք բերէր։

III

Ամառ էր. Արարատեան հարթութեան սարսափելի ամառը. միջօրէի արևը ճառագայթների փոխարէն ասես երկնքից շիկացած երկաթի ձուլածիղներ էր թափում խանձուած դաշտերի, մրկուած գիւղերի վրայ. երկիրը կարծես հևում էր շոգի ձեռքից, օդը շնչել չէր լինում։ Ճանապարհների թանձր փոշին տաքացել էր ինչպէս վառհնոցում. մերկ ոտներով անհնարին էր քայլել. ջրերն առուներում գոլորշիանում էին և շատ-շատ փախչում իրանց անհիւրընկալ, կանաչազուրկ ափերից, որ շուտով մայր գետի ծոցում գով հանգիստ գտնեն։ Օձերը դուրս էին թափւում իրանց ծակերից, խմբերով դիմում

դէպի առուները իրանց ծարաւը յագեցնելու և ապա շտապով յետ էին գալիս ոլոր-մոլոր և կուտակ դառնում հնձուորի խրձի տակ: Դաշտերում տեղտեղ միայն կանաչները էին երևում. մնացածը դեղին էր. ցորենի արտերը մանաւանդ վաղուց էին հասունացել, չորացել, հասկերն ինչպէս հնոցի վրայ բռված՝ կռնձուել, ցած էին կախել գլուխները, բայց հունձը դանդաղութեամբ էր առաջ գնում. հնձուորները օրուայ մեծ մասն անց էին կացնում խրձերի ստուերում. անհնարին էր մանգաղ շարժել. մարդիկ վառուում էին շոգից ու ծարաւից: Դաշտերում ոչ մի շշուկ, ոչ մի թռչնի ձայն բացի այն միակերպ, տաղտուկ բզզոցը, որ չը գիտես ո՞ր ողորմելի միջատի տարօրինակ երգն է այդ տարօրինակ ժամին: Սակայն այդ տարտափելի շոգն ասես թէ չէին զգում ամենևին այն երկու հոգին, այն կինն ու երեխան, որոնք մեն-մենակ դաշտի տօթակէզ ամայութեան մէջ դանդաղութեամբ անցնում էին արտից արտ, ուր գործել էր հնձուորի մանգաղը, ուր փռուած էին խուրձերը: Երկու հասկաքաղեր էին նրանք, Մարգարիտն ու Գալօն, որոնք այդ անտանելի շոգին հաւաքում էին «խոզաններից»[1]) մէջ թափթփուտած հասկերը և ածում այն տոպրակների մէջ, որոնք կախուած էին իւրաքանչիւրի թիկունքից: Արևն էր այրում վերևից իր կիզիչ

[1]) Հնձուած արտը խոզան է կոչւում:

շողերով, տօթն էր խեղդում կոկորդը չորացնելով, մէջքերն էին ցաւում անդադար բարձր ու ցածր անելուց, փշերն ու ցողունների սուր մնացորդներն էին ծակոտում նրանց մերկ ոտները, որոնք ուռած էին ու բորբոքուած: Այս բոլորի վրայ ուշք չէին դարձնում մայր ու որդի, ասես թէ չէին էլ զգում. նրանք յափշտակուած էին իրանց աշխատանքով. հասկեր էին փնտռում ուշադիր հայեացքով, մէկիկ մէկիկ վերցնում և լցնում էին իրանց պարկերի մէջ սպանիչ դանդաղութեամբ: Քանի՛ անգամ պիտի կռանան ու բարձրանան այդ ուժասպառ մէջքերը, քանի՛ սուր փուշեր պիտի անկուին ճաքճաքոտած, արիւնակալած մատների ծայրին, քանի՛ արտերի մարգեր պիտի անցնեն մի ծայրից միւս ծայրը երկնքից թափուող բոց ու կրակի տակ, մինչև որ լցուին պարկերը, և քանի՛ այդպիսի պարկեր են հարկաւոր, որ թակելով՝ հասկերից ցորեն ստացուի և այդ ցորենի գնով մի թշուառ պանդուխտ խունկ ու աղօթք, քար ու պատան ունենայ: Օ՛, գիտէր հնձուորն արդեօք, որ իր ձեռքից անզգուշութեամբ կամ անհոգութեամբ դուրս պրծած ամեն մի հասկ երախտագիտական զգացմունքով է լցնում այս խեղճերի սրտերը, մոռացնում է իրանց կրած ցաւերը:

Արևը թեքուեց դէպի իր մուտքը. հնձուորները վերկացան իրանց գործը վերսկսելու. միայն մայր ու որդի դեռ շարունակում էին հաս-

կաքաղը. տոպրակները մօտ էին լցուելու, երբ մայրը կամացուկ գլուխը բռնեց ու նատեց։

—Մարէ, էլի, հարցրեց Գալօն ցաւակից տխրութեամբ։

—Հա, քե մեռնիմ, էլի դողս բռնեց. ջուր, Գալօ, ջուր։

Երեխան գլխի «թասակը» հանեց, վազեց դէպի մօտակայ առուն, ջուր ածեց գլխարկի մէջ, վազէվազ յետ եկաւ, մօր դողդոջուն շրթունքներին մօտեցրեց. սա ագահութեամբ ծծեց և գլուխն արտի թմբի վրայ դնելով՝ սկսեց դողալ, դողալ...

—Ջուր... որդին կրկին ջուր բերեց. հիւանդը նորէն խմեց տաք հեղուկն առանց կարողանալու մեղմել իր այրող ծարաւը, հանգցնել ներսի կրակը։

Ամրան դեռ սկզբներից Մարգարիտը տառապում էր տենդով. լեռնային երկրի օդին ու ջրին սովոր կանացի կազմուածքը չը դիմացաւ օտար երկրի սպանիչ, թունաւոր կլիմային։ Ամենայն օր ճաշից յետոյ ճիշտ միևնոյն ժամին պարբերական տենդը այդ դժբախտ կնոջը գետին էր գլորում օր-աւուր աւելի և աւելի մաշելով, աւելի ուժասպառ դարձնելով նրան։ Զը նայելով իր այդ հիւանդութեան, հաւատարիմ իր հանդիսաւոր ուխտին, որ նա արել էր այն սարսափելի դիշերը, Մարգարիտն ամենայն օր դաշտ էր գնում հասկաքաղի՝ Գալօի հետ, մինչդեռ Սիմօնը և Ուսկօն ճիում էին տանը, կամ աւելի

շուտ փողոցներում, մի քանի պատառ հաց էին հաւաքում դռներից, որ երեկոներն ամենքը միասին ուտեն։ Շատ ծանր օրեր անցան այս ձեւով և Մարգարիտը շարունակում էր աշխատել։ Որևէ արտում, որևէ թմբի վրայ կիպչէ արևի տակ տենդով տառապելուց յետոյ, իրիկնապահին նա դաշտերից դէպի տուն էր ուղղում իր քայլերը Գալօի հետ, բայց մի՛շտ մի-մի տոպրակ հասկերով լի ուսերին։ Դաշտերից մինչև գիւղ ճանապարհը երկար էր նրա համար. ոտքերը հազիւ էին շարժւում. բայց երբ տեսնում էր իր դառն աշխատանքի պտուղը, երբ զգում էր իր մէջքին հասկերով լի տոպրակի ծանրութիւնը, նա մոռանում էր կրած տանջանքները, մոռանում էր իր թուլութիւնը և գոհ սրտով շարունակում էր իր ճանապարհը դէպի տուն, ուր դռանն իրար մօտ նստած՝ սպասում էին նրան Սիմօնը և Ուսկօն, փէշերում լցրած չոր հացի պատառներ։

Այսպէս անցան օրեր ու շաբաթներ։ Անցաւ նաև ամառը. վրայ հասան աշնանային ցուրտ, մառախլապատ օրերը. թխպոտ երկնքից այժմ յաճախ էր մաղւում մանր անձրևը, որ այնպէս վհատեցուցիչ, տխուր է լինում սովորաբար։ Մարգարիտի վիճակն այժմ աւելի ծանրացաւ. կամաց-կամաց նա նոյնիսկ անկարող էր լինում խրճիթից դուրս գալ և ամբողջ օրեր անց էր կացնում թոնրի շրթին։ Մեծ դժուարութեամբ նա կարողացաւ վերջապէս ամարային տօթերին ձեռք բերած ցորենը՝ դրամի վերածել։ Մօտե-

ցաւ ժամանակը, երբ նա պիտի ազատուէր յանձն առած պարտքից։ Մի առաւօտ նա վերկացաւ վերջապէս, ոյժ գործ դրեց և սկսեց քայլել դէպի շուկան և կանգ առաւ այն խանութի առաջ, որտեղից Գալօն բերել էր հօր պատանը։ Բազմութիւնը շատ էր ներսում, առևտուրը կենդանի։ Մանե՞լ, թէ չը մանել. մտածում էր նա. բազմութիւնը նրան վախեցնում էր, մի քիչ էլ կանգնեց, բայց շարունակել չէր կարող այլ կացութիւնը. աշնան սառն հովը նրան մրսեցնում էր, թոյլ ոտները դողում էին, ուստի նա մօտեցաւ և դուռը կամացուկ հրեց, ներս մտաւ և կանգնեց անշարժ։ «Ողորմութիւն խնդրող է», մտածեցին ամենքը և խանութի աշակերտը մի քանի կոպէկ դրամ մեկնեց դէպի Մարգարիտը։

—Ողորմութիւն չեմ ուզում, շէն ճնաք. Աստուած ձեր մէկը հազար անի, ես ձեր փողն եմ բերել, ողորմութիւն չեմ ուզում, կրկնեց նա, վախենալով՝ թէ իրան չը հասկացան։

—Ի՞նչ փող։

—Ձեր տուած պատանի գինը. տղաս է տարել պատանը։

Խանութի տէրը ճնաց ապշած. այս գղջզղուած, կմախք դարձած աղքատ կինը, այս խղճալին ողորմութիւն չէր ուզում, դրամը մերժում էր և ինքն էր դրամ բերել. յաճախորդներն էլ զարմացած ու հետաքրքրուած շրջապատեցին այս տարօրինակ աղքատին։

—Բայց, պատանը մենք ձրի ենք տուել, մեր վարձքին ենք տուել։

—Շէն ճնաք, բայց ես չեմ կարող. իմ մեռելը մեղք է, ուրիշի պատանի մէջ մեռել չի դինջանայ, առէք ձեր փողը, Աստուած ձեր մէկը հազար անի։

—Ա՛յ, կնիկ, փողը պահիր երեխաներիդ համար. ասացին այս ու այն կողմից։

—Չեմ կարող, չեմ կարող. երեխաներիս Թող Աստուած պահի, առէք ձեր փողը, ի սէր Աստուծոյ առէք. աղերսում էր Մարգարիտը։ Սակայն ի զուր, վաճառականը յամառութեամբ մերժում էր, ասես թէ այդ դրամն արեան գին լինէր նրա համար. թւում էր, թէ նա վախենում էր այդ դրամից, վախենում էր ձեռք դիպցնել, որովհետև մտանները կ'այրուէին. պատանի գին էր, աղքատի պատանի գին։

Մի տարօրինակ պայքար էր կատարւում այդ ժամին այս աղքատ, գղգղուած կնոջ և վաճառականի մէջ. պայքարի առարկան մի չնչին գումար էր, մի քանի արշին պատանի գին, որ հաւասարապէս անտանելի էր երկու կողմին էլ. կինն աշխատում էր ազատուել այդ դրամից իր մեռած ամուսնու մարմնին հանգիստ տալու, իր հանգիստաւոր ուխտը կատարած լինելու համար. վաճառականը նոյնպէս աշխատում էր ազատուել այդ դրամից, որովհետև նա հաւատացած էր, որ Թշուառի պատանի գինը իր գործին մի ծանր անյաջողութիւն կը բերի, որ ինքը կը մնանկանայ, եթէ

այդ չորացած ձեռքին դիպած թէկուզ մի հատիկ կոպէկ իր դրամարկղն ընկնի։ Ո՛չ մէկը միւսի նեղքինը հասկանալ չէր կարողանում և այս պատճառով ամեն մէկը զարմացած էր իր հակառակորդի անհասկանալի յամառութեան վրայ։ Մարգարիտը կրկին և կրկին աղերսեց, որ դրանն ընդունեն. նա նոյն իսկ արտասուեց. որչափ էր չարչարուել այդ դրամը ձեռք բերելու համար, այժմ ինչու չեն ընդունում, չէ՞ որ իր հալալ աշխատանքն է, իր առողջութեան գինն է, իր կեանքի մի մասն է, որով կամենում է իր ամուսնու յաւիտենական հանգիստն ապահովել. «Տէր Աստուած, մրմնջում էին նրա շրթունքները արտասուքների միջից,— մի՞թէ աղքատն իրաւունք չունի նոյն իսկ գերեզմանում հանգիստ լինելու»։

Տեսարանը ցաւալի էր. ամենքը զգացուած էին, վաճառականը նոյնպէս. բայց և այնպէս իր ուժից վեր էր համարում ընդունել այդ դրամը, նա դողում էր պատանի գնից։ Տեսնելով՝ որ իր բոլոր չանքերն ի դուր անցան, Մարգարիտը վերև նայեց բացականչելով՝ «Աստուած, Դու վկայ եղիր». ապա ձեռքի արծաթեայ դրամները ձգեց բազմութեան առաջ և դուրս գնաց խանութից։

Հասաւ նաև ս. Խաչի մեռելոց օրը. մեծ ու փոքր, թարմ կամ հին հողաթմբերի վրայ բարձրանում էին զանազան ձևի ու մեծութեան քարեր, անուաշ յուշարձաններ ունայն կեանքերի։ Բայց

ոչ մի քար այնպէս մեծ չէր, ինչպէս այն, որ ծածկում էր մի մենաւոր գերեզման. դա Ոսկօի գերեզմանն էր։ Մարգարիտը վաղուց բերել էր տուել այդ քարը սարից, իսկ և իսկ Ոսկօի ուզածն էր՝ «ան՝ ինչպէս իր սիրտը, կարծր ինչպէս աշխարհի սիրտը», պանդխտի գերեզմանն էլ չէր կորչի, չէր անյայտանայ. նա անյիշատակարան չէր։ Մնում էր խունկն ու աղօթքը. ձուր էր Մարգարիտը։ Այժմ նա ծանր հիւանդ էր. շուկայից վերադառնալով՝ նա պառկեց և էլ չը վերկացաւ. արդէն քանի՛ օր էր, որ տանից դուրս գալ չէր կարողացել. ուժասպառուած, հիւծուած կմախք էր դարձել նա։ Բայց ինչպէս և լինէր, այդ օրը նա ուխտել էր գերեզմանատուն գալ. վաղուց անձկութեամբ էր սպասում նա այդ «մեռելոցին»։ Ի՞նչպէս գնալ. գերեզմանատունը մօտ չէր, ինքը մենակ ու թոյլ, Գալօն էլ չը կար դռնէ, որ ձեռքից բռնած տանէր մօրը. նա աշնան սկզբից հօտաղ էր գնացել։ Ճարը կտրած՝ հիւանդը վերկացաւ, և սկսեց դանդաղութեամբ, մրջիւնի քայլերով առաջ շարժուել մի փայտի վրայ յենուած. նա վճռել էր ինչպէս և լինի գերեզմանատուն հասնել, տեսնել այն հսկայ քարը իր մեռելի վրայ. օրհնել տալ վերջին անգամ իր աչքի առաջ, վճարել տէրտէրին թաղման վարձ և յետոյ թող լինի, ինչ լինելու է։ Ուրճթից մինչև գերեզմանատուն, դա ամբողջ ճանապարհորդութիւն էր նրա համար, և այն՝ տաժանելի ճանապարհոր-

դուքիւն. ուրքան քայլեց, քանի անգամ նստեց, հանգստացաւ. կրկին քայլեց և վերջապէս հեռուից տեսաւ գերեզմանատունը. ամեն կողմից քարձրանում էր խնկի ծուխը. ոչ մի մեռել մոռացուած չէը, միայն Ոսկօն էը սպասում մի խնամոտ ձեռքի. ժամեր անցան, Մարգարիտը վերջապէս հասաւ։ Ունկ էլ ունէը, կրակի վրայ ածեց. նուիրական ծուխը ոլոր-մոլոր բարձրացաւ դէպի երկինք, տանելով իր հետ նաև սգաւոր այրեի աղօթքի մրմունջները իր ամուսնու յաւիտենական հանգստեան համար։ Քահանան էլ եկաւ, գերեզմանն էլ օրհնեցին։ Վերջում հիւանդ կինը օրօրուելով մօտեցաւ քահանայի աւետարանին և պինդ-պինդ համբուրելով՝ վրան դրեց մի քանի արծաթ դրամ։

Զարմացած քահանան ապշած նայում էր մերթ դրամին, մերթ կնոջը, հասկանալ կամենալով՝ թէ ինչ է նշանակում այդ։

— Թաղմելէն է, տէրտէր, աչիդ մեռնիմ, իմ մեռելի թաղմելէն է։

— Ա՛յ, կնիկ, քեզանից ոմ է թաղմել ուզում։

— Տէրտէր, Աստուած է վկայ, արդար վաստակ է, ողորմութիւն չէ. չեմ էլ զողացել, մատներովս եմ աշխատել։

— Լաւ ես արել, որդի, որ աշխատել ես. օրհնած, պահիր երեխաներիդ տուր. և քահանան աւետարանի վրայից քարի վրայ ածեց դրամներն ու հեռացաւ։

Մարգարտին թուաց, թէ քահանան իր գլխին մի սարսափելի հարուած տուեց. աշխարհը կարծես մթնեց նրա համար. գլուխը պտոյտ եկաւ, նրա ոտները դողացին և նա ընկաւ ամուսնու գերեզմանի վրայ նուաղած ու գլուխը դրեց քարի վրայ.

— Ձեռն վերցնում... էնտեղ էլ չը վերցրին... էստեղ էլ չեն վերցնում... հողն աղքատի գլխին...

Քահանան չը հասկացաւ անշուշտ, թէ ինչ ծանր վէրք հասցրեց այս կնոջ առանց այն էլ դառն սրտին՝ մերժելով նրա լուման։ Դեռ երբէք ողորմութիւնն այդ աստիճան անմիտ, անպատակ, նոյն իսկ անսիրտ չէր եղել։ Ինչ յոյսերով էր սպասում խեղճ այրին այդ «մեռելոցին», իր ցաւերի մէջ դա նրա մխիթարութիւնն էր, ինչ օրով հասաւ գերեզմանատուն։

Մարդիկ կամաց-կամաց ցրւում էին գերեզմանատնից, ոմանք կարեկցական, ուրիշներն անտարբեր հայեացք էին ձգում դէպի այս կինը, որ շարունակում էր կռացած ճնշել իր սիրելու տապանաքարի վրայ, բայց ոչ ոք չը կարողացաւ հասկանալ, որ այդ օրը գերեզմանատնում կիսուած բոլոր վշտերը հաւասար չէին այդ սգաւորի վշտին. չը կար մի սիրտ՝ որ այնքան խորը կերպով ցաւած և այնպէս անսիրտ կերպով վիրաւորուած լինէր։

Ժամեր անցան. սգաւոր այրին անշարժ ընկած էր քարի վրայ. խունկը դեռ ծխում էր նրա գլխին մօտիկ, բայց այժմ ոչ թէ աղօթք

ու գոհութիւն, այլ հառաչանք, միայն հառաչանք էր տանում դէպի Ամենակալի աթոռը, արհամարհուած խեղճութեան հառաչանքը, աշխարհին անհասկանալի, անծանօթ ցաւերի հառաչանքը։ Արևը մայր մտաւ, կամաց-կամաց խաւարն իջաւ երկրի վրայ. լուութիւնը տիրեց ամեն կողմ, գերեզմանական լուութիւն, որ վըրդովւում էր միմիայն մենաւոր այրիի թոյլ, խըղճուկ հեծկլտանքներով։ Աշնանային երեկոյեան հովը փչեց, ցուրտ էլ էր. Մարգարիտը փորձեց վերկենալ, բայց ուժասպառ կրկին ընկաւ գերեզմանի վրայ. մոռացուած էր խեղճ այրին. սարսափը տիրեց նրան. խաւարի մէջ մեռելները մէկիկ վեր էին կենում և ցցւում իրանց քարերի վրայ երկար-երկար. միայն Ոսկօն չը կար, նա անշարժ էր իր քարի տակ։ Մարգարիտը փակեց աչքերը, բայց տեսնում էր ամենքին. ցրտի ու սարսափի դողը անցաւ նրա մարմնով. նա կծկուեց, պինդ-պինդ կպաւ քարին. ասես դա իր ամուսինը լինէր, որի գրկում պաշտպանութիւն էր փնտռում. քարը ցուրտ էր, շուրջը խաւար. սարսափելի... Երկինքը տեսնում էր, թէ ինչ էր կատարւում ներքևում. բայց անտարբեր էր թարթում իր փայլուն աչքերը...

Այդ երեկոյ Սիմօնն ու Ոսկօն մենակ մնացին խաւար խրճիթում. երկար սպասեցին, արտասուեցին, «մարէ» կանչեցին, բայց մարէն չը կար ու չը կար... Սիմօնը գիտէր, որ մայրը գերեզմանատուն գնաց, Ոսկօին առաջարկեց

ձեռք ձեռքի բռնել և գնալ մարէին գտնել. նրբանք կամացուկ բաց արին խրճիթի դուռը, նայեցին դէպի դուրս. խաւարը սարսափելի էր. հազար ու մի աչքեր էին փայլում այս ու այն կողմում. երկուսն էլ միաժամանակ ճիչ արձակեցին, մէկ էլ «մարէ» կանչեցին և յետ փախչելով խրճիթ՝ ընկան իրար գրկած և լուռ։

Լուսաբացին անցորդները գտան Մարգարիտի դիակը ամուսնու գերեզմանի վրայ և այնտեղ էլ հէնց ամուսնու կողքին թաղեցին։ Ոսկօն ու աղօթք, քար ու պատան չունէր Մարգարիտը. նա անտէր-անտիրական մեռել էր։

Ամիսներ անցան. գաղթականների մի այլ խմբի հետ վաթան էր վերադառնում Գալօն քրոջը շալակած և եղբօր ձեռքից բռնած։ Հին սերունդը չը կար այլ ևս. թշուառութեան ատեպատում նա կորաւ, անյայտացաւ, որպէս գոհ մի դարաւոր քաւութեան։ Ո՞ւր էր գնում այս նոր սերունդը. արդեօք դէպի Երիքով, թէ Բաբելոնեան գետերի ափերին՝ Սիօնը ողբալու։

1899 թ.

ԿՈՅՐԵՐԸ

I

Գիւղի եզրին՝ մշտանոս ու կարկաչիւն առուակի ափին շատ վաղուց բուսել էին երեք հաստաբուն ուռիներ, սգատերև ու լալկան։ Ուռիները միշտ և ամեն տեղ վշտատեսիլ են ու գլխիկոր, բայց այս երեքն առանձին պատճառներ ունէին այդպէս լինելու։ Առուակի ամբողջ երկարութեամբ էլ ուրիշ ծառ չը կար և երեք մենաւոր ուռիները տնկուել էին այնտեղ երեք որբերի պէս, նայում էին ջրի մէջ, դիտում այնտեղ իրանց տխուր պատկերն և ալեակներին պատմում հին օրերի խոհեր։ Կայծակն էր ճայթել նրանց գլխին, որդերը ներսից կրծել էին նրանց սրտերը. տարիներից ի վեր իրանց խոշտանգուած վիրաւոր բներով այս մենաւոր ծառերը նմանում էին այն ծեր պինուորներին, որոնք բազմաթիւ պատերազմներից յետոյ վերադառնում են կտրուած ոտքով կամ ձեռքով և կռացած տարիների ծանրութեան տակ էլի ապրում են երկար, երկար։ Երեքն էլ հաւասար հաստութիւն ու բարձրութիւն ունէին, մէկայն առաջինի բունը ներքևից փթած, բաց էր արել

մի լայն փչակ, որտեղից սպիտակ թեփը թափւում էր անընդհատ իր փշրանքների հետ դանդաղութեամբ տանելով և ծառի կեանքը. երկրորդի կատարը ճեղքուած էր կայծակից և մի մեծ վէրք ունէր, որ չէր ծածկւում երբէք, ինչպէս ցաւոտ սրտի պատառուածք, իսկ երրորդի բնի մի մասի կեղևը պոկուած էր վերից վար բաց թողնելով նրա չորացած, արևից այրուած խղճուկ փայտը, որ այնպէս յիշեցնում էր ցնցոտիների պատառուածքների տակից երևացող մի տանջուած, սևացած մարմին։

Այսպէս ծեր էին մենաւոր ուռիները, ծեր և խարխլուած։ Բայց էլի այնքան ոստեր ունէին, որ կարողանային անձրևից և արևի կիզիչ շողերից ծածկել իրանց քայքայուած մարմնի վէրքերն ու խոցերը, իրանց ծեծուած, վիրաւոր գլուխները։ Եւ կախուած էին այդ ոստերը երկայն ու ոլորուն, հասնում էին մինչև բունը, մինչև գետին։ Իրանց մերկութիւնն ու այլանդակութիւնը ծածկել ջանացող խեղճ մուրացիկների պէս, ծառերը թագնւում, պատսպարւում էին տերևների հովանու տակ և կարծես իրանց վիճակից գոհ էին։ Արմատները շարունակ ջրի մէջ, անընդհատ ծծում էին սառն, պարարիչ հեղուկը, բայց երևի այդքանը բաւական չէր նրանց զզուած, վատոյժ մարմինների կենսական զօրութիւնը պահպանելու, ուստի մի քանի երկար ոստեր նրանց օգնութեան էին հասել։ Նրանք երկար, ոլորուն վարսերի պէս կատարից իջել էին մինչև ջուրը,

թաղել էին իրանց գլխիկներն ալիքների մէջ, գով համբոյրներ էին քաղում նրանցից, փսփսում էին հետները, այնտեղ էին լալիս իրանց ցաւը փոթորկի ժամին, նրանց էին պատմում իրանց սարսափը կայծակի ու շանթի ճայթոցի առաջ և նրանց էին ժպտում գարնան պայծառ, անուշ օրերին, երբ իրանց մայրերը՝ հինաւուրց ուռիները էլ կեանքի միացորդի մի վերջին թափով էլի մի անգամ ծածկւում էին գրաւիչ կանաչով, էլի մի անգամ անցած լաւ օրերի փայլն ու կեանքը յիշում։ Այդ ժամանակ թռչուններն էլ էին յայտնւում նրանց սաղարթի մէջ, չարաճճի, կայտառ ճնճղուկների մի ամբողջ երամ և կեանքի ու կենդանութեան մի պարարիչ շունչ էր անցնում նրանց տխուր հովանու տակ։ Եւ այսպէս ծառերը ոչ միայն ապրում էին, այլ և կարողանում էին, իրանց աղքատիկ սաղարթում ապաստանած այդ փոքրիկ, սիրուն արարածներին ի հարկին պաշտպանել բազէի և այլ գիշատիչների ճանկերից։ Մի յուզիչ բան կար այդ ծեր, մեռնող կեանքերի մէջ, որոնք դեռ կարողանում էին հին կորովի մի միացորդով իրանց խեղճ հովանու տակ պահպանել այնքան փոքրիկ գոյութիւններ։ Ապրում էին, երկնքի տակ դեռ ևս տեղ ունէին, արևից շողեր և ջերմութիւն էին առնում և բոլորովին անպէտք, աւելորդ էլ չէին։

Վատ եղանակներին՝ երբ երկինքը մռայլւում էր վերևից, երբ շրջակայքում ամեն ինչ ասես

սև էր հագնում, ուռիների մելամաղձոտ միայնութիւնն էլ աւելի վհատեցուցիչ էր դառնում. նրանց պատկերն այդ ժամանակ խօսում էր մի մեղմ, պանդաղ մահից, իսկական մահից, որ թէև չէր երևում, բայց մօտենում էր կամաց կամաց։ Իսկ երբ փրդում էր փոթորիկը նրանց վրայ, երբ ոռնում էր քամին, այն ժամանակ հասնում էր շատ տարիներ առաջ սկսուած իսկական հոգեվարքը. փթած բները ցաւով ճռնչում էին, ոստերը վերսկսում էին իրանց հին լացն ալիքների ծոցում և ամբողջ ծառերը տնքում էին կարծես կեանքից յաւիտեան բաժանուելու խոր վշտով բռնուած։ Ծեր էին, բայց էլի ապրել էին ուզում և լալիս էին, աղերսում, սգում։ Փոթորիկն անցնում էր և ծառերն էլի այնտեղ էին իրանց խռոչներով, վէրքերով, խոցերով ու լալկան ճիւղերով։ Եւ այսպէս տարիներ...

Ծառերի տակ՝ հէնց առուակի ափին կոպիտ քարերից և ցեխից շինուած մի փոքրիկ թումբ կար, մի նստարան։ Անձրևը մաշել էր այդ թումբը, չորս կողմից բուսել էին գալարուն պատուտակներ, գունատ, խղճուկ խոտեր, վերից թափւում էին նրա վրայ ծեր ուռիների դեղնած, լեզուաձև տերևները, մողէսները սողում էին, ներս ու դուրս անում նրա ճեղքերից, երբեմն մի օձ էր յայտնւում, որ ամառային տօթից խոյս տալով, գալիս էր այնտեղ զով ստուերում հեւալու. կամ մի վայրենացած կատու զգոյշ քայլուածքով կծկւում էր այնտեղ և մա-

րաղ մտնում ծառերի վրայ ճռուողող ճնճղուկներին։ Եւ միայն այսքան։ Տարիներից ի վեր այնտեղ մարդ չէր յայտնւում, գիւղից ոչ ոք չէր դնում իր յոգնած գլուխը այդ թմբի վրայ մի փոքր հանգիստ առնելու համար։ Ծառերի պէս՝ այդ թումբն էլ մոռացուած էր, նա էլ մահից ու ամայութիւնից էր խօսում։

Մի փոքր հեռու ծառերից, առուակից զատ ոռնվայր իջնող մի խորութեան մէջ կանգնած էր մի տնակ, որի դուռը սակայն միշտ փակ էր, փոքրիկ լուսամուտը միշտ մի խուրձ դեղնած խոտով խնամքով գոցուած. մի համր ու մոայլ տուն, ուր նոյնպէս ոչ ոք չէր ապրում, որի հերդիկից վաղուց էր, ինչ ծխի քուլայ չէր բարձրացել։ Իսկ բակը շատ վաղուց ծածկուած էր բարձր խոտերով, որոնք ամեն աշնան, դեղնում, չորանում էին և ամեն գարնան բուսնում առաջուայ պէս և պատում տան չորս կողմը բոլորովին ամայի, բոլորովին վայրենի տեսք տալով ամբողջին։ Հեռուից ամեն ինչ թւում էր շէն ու բնակելի, բայց այնտեղ ոչ մի կենդանի չէր երևում, աքաղաղ չէր խօսում, հորթեր չէին բառաչում, շուն չէր հաչում։ Լուռ էր։

Գիւղում այդ տնակը համարւում էր «բէխէր» և դատապարտուած էր ամայութեան, որպէս անիծուած վայր, ամենքը փախչում էին այդ տեղերից, ամենքը խոյս էին տալիս մօտովը անցնել, որովհետև նրա հետ կապուած

էր մի արիւնի պատմութիւն, մի հին ոճիր։ Այդ տեղ, այդ մենաւոր տան մէջ մի չար գիշեր խեղդամահ էր արուած մի կին, մի անմեղ, խեղճ արարած։ Գիւղն այն առաւօտ զարթնեց սարսափելի դէպքից ըմբոստ, ինչպէս գիշերն այլանդակ տուներն առաջ խրտնած մի ձի, որ ծառանում է յետին ոտքերի վրայ կատաղաբար փնչացնելով։ Ասում էին, որ տարաբաղդ կինը զոհ է գնացել ամուսնու գազանութեան, իր հարազատ ամուսնու, որ ատում էր նրան. միջոց, հնար էր փնտռում ազատուել նրանից իր մի ուրիշ սիրային կապի համար։ Գիւղը մրմռում էր, բայց յանցաւոր համարուողը կապուած էր տան սեանը. նա հաւատացնում էր, որ անյայտ չարագործներ գիշերը ներս մտան, իրան կապեցին սեանը և կնոջը խեղդամահ արին հէնց իր աչքերի առաջ։ Գիւղը չէր հաւատում. բայց շուարել էր, մտածում էր. ամեն ինչ ասում էր, որ դանն այսպէս պէտք է եղած չը լինի։

—Ո՞րտեղից մտան չարագործները, հարցրեց մի ծերունի։

—Հերդիկից։

Ծերունին առանց ձայն հանելու մի քանի հարևան առաւ, կտուրը բարձրացան, ուշադրութեամբ նայեցին հերդիկին և ինչ... Նեղ հերդիկը, որից մի մարդ սողալով հազիւ ներս կարողանում էր, դեռ ծածկուած էր հին, սև մուրի հաստ շերտով, այնտեղից ոչ ոք ցած չէր իջել։ Ցանցաւորը գտնուեց, ապացոյցն անհերքելի էր։ Եւ ոճրագործ ամուսինն արդարադատութեան ձեռքով գնաց անյայտացաւ կրելու արժանի պատիժը. տունը փակուեց. բանալին կտուրը ձգուեց և յայտարարուեց «ըէխէր»։ Այնուհետև այդ արիւնոտ գործի մասին գիւղը դադարեց խօսելուց, և եթէ դառն անհրաժեշտութիւն էր լինում, մի քանի խօսք էին ասում փսփսուկով, ասես վախենում էին իրանց ձայնից։ Ի՞նչպէս չը վախենային, քանի քանի հոգի տեսել էին ուշ գիշերին՝ թէ ինչպէս այդ փակ դուռը յանկարծ բացւում է ահագին շրխկոցով, այնտեղից դուրս է գալիս սպիտակ, երկար պատանով փաթաթուած մի տուներ, տարաբաղդ կնոջ տուները՝ դուրս էր գալիս յամրաքայլ, ցցւում է բակում, կանգնում է թմբի վրայ և նայում տղերին, փսփսում ուռինների հետ։ Մազեր էին դիզանում այդ պատմութիւններից։ Եւ տունը շարունակում էր ծնալ փակ դռնով և լուսամուտը խոտով խցած։ Միայն մենաւոր ուռիներն էին անտարբեր դէպի իրանց շուրջը կատարուածը, նրանք ամեն գարնան վերստին կանաչում և կախւում էին ջրերի մէջ, տխրութեամբ օրօրում էին իրանց գլուխները քամիների առաջ, թումբը նորից ծածկւում էր բաղեղներով, պատուտակներով և այլ խոտերով։

Գիւղացիք թէև խոյս էին տալիս այդ տնից, բայց ամենքն էլ սրտանց կ՚ուզէին, որ մի մարդ, մի կորած, մոլորած օտարական գայ բուն դնի

այնտեղ, որ չարը հալածուի, վհատեցուցիչ դատարկութիւնը լցուի, երեխաներն էլ չը սարսափեն այնտեղից անցնելիս, կանայք արիւնի հոտ չը զգան, չը փախչեն, ուշացած անցւորները կէս գիշերին պատանով ատուերներ չը տեսնեն: Մի՛թէ չը կար աշխարհում մի անապատատեղ մուրացիկ, մի անճար թափառական, որ յանձն առնէր բնակուել արիւնոտ բնում, որ գար կեանք տալու այդ մեռելութեանը, հալածելու այնտեղ թագաւորող սարսափը: Երկար սպասեցին և վերջապէս մի օր ցանկալի բնակիչները յայտնուեցին, երկու կոյր երգիչներ, երկու թափառական աշուղներ եկան և «բէխէր» տնակում բուն դրին:

II

Ո՞վքեր էին նրանք, ինչպէս յայտնուեցին, գիւղում ոչ ոք չը գիտէր և ոչ ոք էլ չէր հարցնում: Այդ դժուար էլ էր իմանալ, մուրացիկները ու աշուղները «Աստուծու մարդիկ են», աշխարհի բնակիչները, նրանք քաշ են տալիս իրանց հայրենիքը իրանց ոտների հետ և ամեն տեղ մտնում են ածում մի անյայտ պատմութիւն, մի մութ կեանք, որի արկածները թէև անփայլ ու անծանօթ, բայց միշտ յուզիչ են ու ցնցող: Այդ կեանքերը նման են հարթավայրի մէջ գալարուող գետի ալիքներին, որոնք իրանց արտաքին խաղաղութեան տակ թագցնում են այնքան խութ ու խոռոչներ, այնքան գալարներ, սև մութ գաղտնիքներ, թէև երբէք չեն աղմկում, չեն ճչում, չեն ոռնում:

Գիւղը գիտէր միայն, որ նրանցից մէկը կոչւում է Մուրօ և միւսը Մարգար. երկուսն էլ կոյր, թէև նրանցից մէկն իր թաւ յօնքերից մէկի տակ աչքի պէս մի բան ունէր, իսկ միւսը՝ միայն երկու խոռոչ, երկու սև բացուածք, դատարկ ու այլանդակ, որոնք այնպէս յիշեցնում էին մութ ու խորհրդաւոր ձորակի երկու վիհեր, ուր երբէք արևի շող չի կաթում, ուր գիշերն իր սարսափն ունի, և ցերեկն՝ անլոյս ու տրտում, իր յարատև մռայլն ունի: Երկու հոգի էին, բայց մի աչք ունէին, մի հաւիկ ողորմելի աչք, որ վաղուց, շատ վաղուց ծեփուել էր, կոպերն իրար հետ միացել էին բիբի վրայ, միայն նրանց արանքից, ինչպէս մի մութ այրի բարակ ճեղքուածքից, լոյսի պէս մի բան էր թափանցում, մի խղճուկ դեղին փայլ, ճիշտ այնքան, որքան հարկաւոր էր ջոկելու գիշերը ցերեկից, խաւարը՝ լոյսից, առանց կարողանալու ճշտիւ որոշել առարկաները, որոնք երևում էին աչքի տիրոջը իրրև նուրբ, շարժուն անորոշ գծեր, անձև ու վայր ի վերոյ, խառն ու այլանդակ: Այդ աչքի ճեղքից ներս նայողը սովորական աշխարհը չէր, այլ խօլական երևոյթների մի ծով, միշտ ալեկոծ ու փոփոխական, իրար վրայ թափուած պատկերների մի ժխոր, խորհրդաւոր ու վսեմ, որի օրէնքներն ու կարգերն այնպէս անսիրտ կերպով խոյս էին տալիս,

վախչում անընդհատ։ Այդ մի հատիկ աչքը Մուրօի դէմքի վրայ էր, բայց նա նոյնքան պատկանում էր Մարգարին, որքան իր իսկական տիրոջը. թէ երկսին արցունք էր պէտք, այդ մի հատիկ աչքից էր ծորում ինչպէս վխրուն քարի ծակոտիներից, թէ ժպիտ էր պէտք, էլի նոյն աչքն էր գործում, թէ լոյս էր հարկաւոր, նա պիտի արևի շող դողանար երկսի համար էլ, թէ ճանապարհ էր պէտք, նա պիտի ցոյց տար, առաջնորդէր։

Երկու հոգի էին, մի աչք ունէին, ողորմելի անզօր աչք, այնքան անզօր, որ նրանք համարեա կոյրեր էին։

Մարգարն ու Մուրօն երկու աղուղներ էին և մի սազ ունէին, նոյնպէս խղճալի, նոյնպէս անփայլ, որպէս իրանց միակ աչքը։ Եւ այդ սազը միայն երեք լար ունէր, սգաւոր ու լալկան, որոնց թրթիռները հնչւում էին միշտ, ինչպէս հեռու տեղերից քամու բերած բարակ, ընդհատուող հեծկլտանքներ։ Այդ լարերն էլ այնպէս էին յարմարեցրած, որ սազը պէտք էր ածել գլխիվայր, բարակ ծայրը կրծքին յենած, իսկ հաստ գունդը վեր ցցուած դէպի երկինք։ Այդ ձևով առես նա մի բողոքող, մի ըմբոստ սազ էր, ինչպէս մի բռունցք, մի խօսող, հառաչող, անիծող բռունցք, սպառնալի կերպով անկուած կոյր, անողորմ ոյժերի դէմ, որ իր ամեն մի հնչիւնի հետ ցնցւում, դողում էր կարծես զայրոյթից, որ լալիս էր, հեծկլտում, բողոքում, ոռնում։

Եթէ մի հատիկ աչքը միշտ Մուրօի դէմքի վրայ էր, նա էր մանր ածում այդ անփայլ, գունատ լապտերը, լուսաւորում կոյրերի միշտ խաւար ուղին, «տեսնում» երկսի համար էլ միշտ անծանօթ և անըմբռնելի աշխարհն իր մութ, գալարուող ստուերներով. սազն էլ միշտ Մարգարի ուսին էր կախած, կամ ձեռքին էր, նա էր թրթռացնում երեք լարերը, նա պիտէր հընչիւնների քաղցր լեզուն, երգի գաղտնիքը, հարազար ու մի ձայների խորհրդաւոր մրմունջները։ Եղբօր պէս բաժանել էին իրանց ամենաթանկ, ամենանուիրական հարստութիւնը, աչքը՝ մէկին, սազը մէկին, և երկուսն էլ՝ երկսին։

Մաշուած, փոքրիկ դէմքեր էին, վաղուց հետէ անմշակ ու երկայն միրուք, թաւ յօնքեր, որոնք հովանի էին անում կոյր աչքերի խոռոչների վրայ, ինչպէս անդունդի վրայ բուսած խիտ մացառներ։ Սուր, ձգուած, իրար նման դէմքեր էին, ուր յոյզերը, մարդկային սովորական կրքերը չէին զարկւում իրար յախուռն այլանդակ թափով. լեռների մէջ պարփակուած լճակները լինէին առես, որոնք տակն ու վրայ չէին լինում քամիների շնչով և միայն մեղմ յեղյեղւում էին իրանց տակ թագնուած խորհրդաւոր աշխարհի վրայ։ Փոքրիկ մարմիններ ունէին, նոյնպէս վտիտ, նոյնպէս խղճուկ, որպէս իրանց ամբողջ պատկերը. կեանքի բիրտ բաւականութիւնները կարծես չէին ճանաչել և անուել էին եթերից խլած ինչ որ աննիւթ սրնունդով։ Նման զգեստներ չունէին, հագել էին,

ինչ որ կարողացել էին ճարել դռներից, ինչ որ բարի մարդիկ տուել էին և յաճախ անխաիր կերպով մէկի հագածը՝ միւսն էր հագնում, և ընդհակառակը։ Առաւօտներն արթնանալիս, ամեն մէկի ձեռքի տակ, ինչ որ ընկնում էր, նա այն էր հագնում, ճնացածը թողնելով իր ընկերոջը։ Այսպիսով նրանց արտաքինը յաճախ էր փոփոխւում և հեռուից դժուար էր նրանց որոշել իրարից։

Երբ նրանք դուրսն էին, փողոցներում, կամ մեծ ճանապարհի վրայ, Մուրօն երկար փայտը ձեռքին, միշտ առաջ էր ընկնում տանելով իրանց խղճուկ լապտերը՝ ողորմելի աչքը և նրան հետևում էր Մարգարը սագը թիկունքին և աջ ձեռքը ընկերոջ ուսին։

Ամեն առաւօտ հեռու տեղ ճանապարհ ընկնելուց առաջ Մարգարը միշտ առաջինն էր զարթնում, ձեռքի տակ ընկած շորերը հագնում, սագը վերցնում և դառնում ընկերոջը.

—Մուրօ։

—Մարգար։

—Մուրօ, ես ցերեկուայ, լոյսի հոտ եմ առնում, ինչ կ'ասես։

—Ցերեկուայ հոտ ես առնում, հա, ախպէր, լոյսը հեռու չէ, հաւը վաղուց է խօսել։

—Ճանապարհ կը տեսնեմ։

—Ճանապարհը դեռ չեմ տեսնի։

Եւ Մարգարը լռում էր, սագը ծնկների վրայ թողնում, գլուխը քաշ ձգում, մտածելով

այն ճանապարհի մասին, որ Մուրօն դեռ չէր տեսնում, այն աշխարհի մասին, որ ինքը երբէք չի տեսել և երբէք էլ տեսնելու չի։ Մուրօն փորձում էր թարթել մի հատիկ աչքը լոյս, շող չոկելու համար, բայց կոպերն իրարից չէին հեռանում, դէմքի չղերը ձգձգւում էին, ապա յուսահատ պառկում էր իր անկողնում։ Լռութիւն էր տիրում մի առժամանակ։

—Ես շողերը չոկում եմ, լսւում էր քիչ յետոյ Մուրօի ձայնը։

—Դու շողերը չոկում ես, ախպէր, այդ լաւ է, դէ վերկաց։

Եւ դուրս էին ընկնում կոյրերն իրանց գիշերային ապաստարանից, քայլում էին դէպի անծանօթ հորիզոններ, ման էին ածում իրանց հետ երկու մութ կեանքեր և այնքան երգեր։ Մուրօն սովորաբար նայում էր ուղիղ, միշտ հեռուն, առանց գլուխն այս ու այն կողմը դարձնելու, փայտով անընդհատ շօշափելով փոշոտ, ցեխոտ ճանապարհները. Մարգարը քայլում էր նրա յետևից աչքերի մութ խոռոչները ուղղած դէպի վեր, դէպի երկինքն ու արևը, որի ոչ մի շողը չէր կարողանում լուսաւորել նրանց սև յատակը։ Արտաքին աշխարհի և ոչ մի պատկեր չէր գալիս յուզելու Մարգարի բանտարկուած երևակայութիւնը, ուր իշխում էր յաւիտենական խաւարը, և ուր ապրում էին միայն ձայներ, իրանց հազար ու մի երևէյներով, կենդանի, խօսուն մի ամբողջ աշխարհ, լցուած միմիայն հըն-

չիւնները՛վ, սիրտ պատառող յուզիչ հնչիւնները՛վ, որոնց մի մասը, շատ շնչին մասը միայն հասկանալի էր իր ունկնդիրներին։

Այսպէս էին նրանք և մի օր յայտնուեցին Բ... գիւղում։ Գալիս էին շատ հեռու տեղերից, ուր, ասում էին, էլ քար քարի վրայ չը մնաց, ուր էլ երգ ու սազ հարկաւոր չէր սրտեր յուզելու, արցունք քամելու համար, որովհետև ողջ երկիրն արիւն ու արցունք էր։ Նրանց պատմութիւնները զարմանալի էին. գիւղացիք շրջապատած լսում և նայում էին այս անօրինակ գուժկաններին, որոնք ասես հանդերձեալ աշխարհից էին լոյս ընկել և խօսում էին ինչոր ահաւոր բաներ, սրտաճմլիկ ու խեղդող։

—Մենք արիւն չը տեսանք, ինչպէս տեսնենք, Աստուած չի կամեցել, բայց հոտն առանք, հո՛, ինչ հոտ էր, ասում էր Մարգարը։

—Ես տեսայ, շտապում էր ուղղել Մուրօն, ա՛խ ես տեսայ այս կոյր աչքովս, կուպ-կարմիր էին սար ու ձորեր, կուպ-կարմիր, ծփ ծփ։

—Հա՛, տեսանք, մենք արիւնը տեսանք, իսկոյն միանում էր նրան Մարգարը. դէ աչքն ընդհանուր էր, երբ ընկերը տեսել էր, ուրեմն նա էլ էր տեսել։

—Փախի ձայն կար այնտեղ և գայլ-գազան սարերից իջած պատառոտում էին անմեղ գառներին, արիւն աշխարհ էր բռնել.

—Հապա, փախի ձայն կար, արիւնն աշխարհ էր բռնել։

—Եւ լացեցինք, աւելացրեց Մուրօն։

—Օ՛ճ, շատ լացեցինք, միացաւ նրան ընկերը, և կամացուկ ցած բերեց ուսից սազը, բութ ծայրը դէպի երկինք ցցեց իր աչքերի երկու խոռոչների հետ, ասես վերից ինչ որ բան սպասելով. լարերը ձգձգեց և հակառակ կողմից ածել սկսեց սրտապատառ, լալկան նուագներ։ Մուրօն երգում էր.

«Զարկենք սազին, մոմուռ քամենք սարի, քարի, ձորի հետ, հաւար կանչենք, վա՛խ գուլում է, գուլում բոցին ջուր է պէտք. վառուան զըմ-մէն, շատ լացեցինք սարի, ձորի, քարի հետ»։

«Ա՛խ, լացեցինք ծով արցունքով սարի, ձորի, քարի հետ, կուց-կուց արցունք, մոմուռ քամենք դաշտի, չօլի, գետի հետ»։

Զարմանալի՛ աշուղներ... գիւղացիք այսպիսի երգիչներ չէին տեսել, այսպիսի երգ չէին լսել, այսպիսի սա՛զ՝ որ հակառակ կողմից ածէին, որի գունդը դէպի երկինք ցցուած լինէր, դեռ երբէք, երբէք որ և է աշուղ այդ կողմերը չէր բերել։ Լսեցին լուռ թեամբ. մտածկոտ դարձան, փսփսացին և որոշեցին, որ աշուղներն իրանց գիւղում մնան, թո՛ղ թափառեն, ուր ուզում են, նրանք մի տեղ նստել չեն կարող, բայց գիւղում բնակուեն, տուն լսօմ կար, գիւղի եզրի անբնակ, «բէկսէր» տունը արանցից յարմար բնակիչներ չէր կարող ունենալ։ Սրանց երգերի ձայնից չարքերը կը հեռանան, աւուերը կը հանգստանայ, սարսափը խոյս կը տայ։ Եւ աշուղները մնացին. որքան էին թափառել ան-

տուն անապաստան։ Մի մարդ գտնուեց գիւղում, որ կամացուկ ասաց, թէ «բէխէր» տան մէջ այս խեղճերին մի չար բան կը պատահի, ով գիտէ, լաւ չի, որ այնտեղ մարդ ապրի։ Բայց անհրաժեշտ էր, որ ամայի տունը բնակիչ ունենայ և գիւղը լռեց։

III

Այն ամառ մենաւոր տան առաջ, երեք ուռիների տակ կեանքի նման մի բան ղընջացկոյրերն էլ գիտեն ապրել։ Ամեն օր ճաշից յետոյ՝ երբ շրջակայքում այնպէս տօթ էր, երկու աշուղները՝ երկու խղճուկ, օտար թռչունների պէս թառում էին թմբի վրայ, խօսում էին հեռաւոր ու դժբաղդ վաթանից, խօսում էին կարմիր գուլումից, յետոյ Մուրօն կամացուկ սկսում էր մռմռալ իր յօրինած ցաւի երգը՝ «Զարկենք սազին մռմուռ քամենք»...

Նոյն վայրկեանին Մարգարը բարձրացնում էր իր սազի բուռթ ծայրը դէպի երկինք բռունցքի պէս և ծառերի տակ հնչում էին նուագները, որոնք երբէք դեռ այնտեղ լսուած չէին։ Սազը լաց էր լինում մրմունջներով, իսկ տերևները մէկիկ մէկիկ վերից թափւում էին աշուղների գլխին։ Գիւղի մանուկները, որոնք այդ ժամերին սովորաբար լողանում էին առուի մէջ՝ խմբերով դուրս էին թափւում ջրից, բարձրանում թմբի վրայ և մերկ շարքերով պար կապած, նայում էին կոյրերին, լսում նուագները, մոռանալով որ արևը կիզիչ է, որ շողերը այրում են նրանց մերկ մարմինները։ Այդ պառաւ ծառերը, և երկու կոյրերը նրանց տակ իրանց անօրինակ սազով, և թմբի վրայ շարուած, մերկ մանուկների հետ կազմում էին մի անօրինակ ամբողջութիւն, մի պատկեր, որ չը գիտես ինչ մի խորհրդաւոր բան ունէր իր մէջ։ Աշուղները երգում էին ընդմիջումներով և ամեն անգամ երբ երգն ու երաժշտութիւնը լռում էր, մանուկներն իրար հրհրելով ջուրն էին թափւում աղմուկով՝ քիչ յետոյ նորից դուրս գալու և թմբի վրայ շարուելու համար։

Եթէ գիւղում կնունք, հարսանիք կամ թաղում կար, կոյրերն այդ ամբողջ օրն անյայտանում էին և վերադառնում միայն գիշերները. այդպիսի դէպքերում նրանց լաւ էին կերակրում. ծնացած ժամանակ օրուայ մեծ մասը մերթ կուշտ, մերթ քաղցած՝ անց էին կացնում ծառերի տակ և երգում ու ածում թմբերի վրայ շարուած մերկ մանուկների բազմութեան համար։

Երեկոյեան՝ երբ արևը կախւում էր դէպի հորիզոնը և գոմէշ ընկնում էր, երբ ճանապարհների թանձր փոշին էլ այնպէս չէր այրում մերկ ստքերի թաթերը, երբ մարդիկ իրանց ապաստանած տեղերից դուրս էին սողում, կաթլերն ու դաշտերը կենդանանում էին, երկու աշուղները թողնում էին իրանց բնակարանը և դուրս ընկնում իրանց ապրուստը հայթհայթելու

համար։ Նրանք երգում էին կալերում, դաշտերում, փողոցներում և դռների առաջ. երգում էին մանաւանդ՝ լուսնկայ գիշերներին, երբ ցորենի դէզերի առաջ հէշաննների վրայ պառկոտած գիւղացիք տրամադիր էին լինում լսել հեռու երկրի հէքիաթներ, հեռու երկրի երգեր և չը լսուած, սրտաճմլիկ պատմութիւններ։

Խեղճերն այդ օրերում շատ անգամ վերադառնում էին ոչ բոլորովին գոհ իրանց վարձատրութիւնից և սովորաբար տուն հասնելուց յետոյ, նրանց մէջ սկսւում էր մի վէճ, մի հին վէճ աշխարհի և մարդկանց մասին։

—Աշխարհը կռապաշտ է դարձել, ասում էր Մուրօն։

—Հա կռապաշտ է, Մուրօ, համաձայնում էր Մարգարը, որ կռապաշտ չը լինէր, այսպիսի բաներ չէին կատարուի. ինչեր տեսանք, սար ու քար մարդու ձեռից տնքացին։ Այսքանում, երկսով էլ համաձայն էին. բայց Մուրօն իսկոյն աւելացնում էր։

—Էլի հարսանիքը լաւ է, մարդկանց սրտերը լայնանում են, ձեռքերն առատանում։

—Ո՛չ, ամենևին չեն առատանում, մարդիկ այդ ժամանակ ուրախ երգ են ուզում, իսկ մենք միայն լաց գիտենք, յիշում ես իսմայն հարբածին, որ մի հարսանիքում քիչ մնաց սաղը ձեռքից առնէր, դէսից տար, «ուրախ բան ածի» ասում էր. այսպէս է ախպէր, աշխարհը կռապաշտ է, սրտերը քար՝ երբ ամենքն ուրախ են ու երջանիկ. բայց

երբ ցաւը վրայ է հասնում, երբ բաղդը երես է շուռ տալիս, քար սիրտն էլ է փափկանում, և լացողի հետ լացող է ճարւում։ Չէ, չէ Մուրօ, ես թաղումն եմ ուզում, այն ժամանակ երգ էլ հարկաւոր չի, մարդիկ լալիս են իրանք իրանց։

—Թաղում, լաւ չես խօսում, Աստուծուն դուր չի գայ։

—Աստուծուն դուր չի գայ... Մուրօ, հապա այնքան թաղումներն Աստուծուն դուր եկան, երկինքը չը պատռուեց ցաւից, աշխարհը չը ճչաց, ժաժք չեղաւ, սարերը փուլ չեկան, գետերն իրանց ընթացքը չը փոխեցին։ Չէ, չէ Մուրօ, թաղումը լաւ է, շատ թաղում, շարան-շարան դագաղներ, որ փոս փորողները չը հասնեն, որ լացողների արցունքը պակասի, որ գերեզմանների հողաթմբերն իրար խառնուեն և գետնի տակ ոսկորներն իրար քսուին։

—Այդ բոլորից ինչ օգուտ, Մարգար։

—Ի՞նչ օգուտ, որ մարդիկ սովորեն արցունք թափել, և ուրիշի արցունքի գինը հասկանալ, որ էլ ուրիշի դիակները չը կրծոտեն, էլ հարսանիք չանեն այն պատի յետևում, որից այս կողմը իրանց նմանները մոմուռ են քամում այրուած կրծքի տակ պատառ պատառ եղած սրտերից։ Օճ Մուրօ. աշխարհ իրար տըւինք, ցաւ ու կսկիծից մեր ճիչն ու ոռնոցն երկնքին հասաւ, աշխարհը խուլ մնաց, աշխարհը կռապաշտ է. դագաղներ, շատ դագաղներ, շարան շարան...

—Մեղք ես անում Աստուածու առաջ։

—Էլ մեղք չը կայ։

—Մեղայ քեզ Աստուած, մրմնջում էր Մուրօն և լռում. վէճը վերջանում էր։ Քանի տարի այդպէս վիճում էին նրանք և դեռ չէին հասել համաձայնութեան, իսկ աշխարհը շարունակում էր լինել այնպէս ինչպէս կայ, մի տեղ հարսանիք, մի տեղ գագաղները, մի տեղ խնդութիւն, միւս տեղ արցունք, միայն կոյրերի վաթանումն էր, ուր իշխում էր միահեծան տէր արիւնն ու արցունքը, այնտեղ հարսանիք չը կար, խնդութիւն չը կար, երգը՝ լաց էր, ժանր՝ երջանկութիւն։

VI

Փախ էր։ Գիւղը լի էր զինուորներով։

Աշուղներն այլ ևս փողոցներում չէին երևում, նրանց սազը շատ էր ծիծաղելի. հարբած զինուորները սիրում էին քաշքշել այդ ողորմելի գործիքը, ճնկճնկացնել, լարերը կտրատել, կամ հրհրել կոյրերին. խեղճերն իրանց թմբի վրայ էլ ապահով չէին, ուստի ներս քաշուեցին, դուռը փակեցին և կծկուեցին մենաւոր տան մէջ։ Այնտեղ էին երգում, այնտեղ էին ածում, մրմնջում, լալիս։ Գիւղում մի պառաւ կար Մահտեսի Յումարը, անզաւակ ու չորգլուխ մի կին, որ իր ունեցած չունեցածը հաւաքել՝ երուսաղէմ էր գնացել, սուրբ գերեզմանը համբուրել, անցել էր ծովերը, աշխարհներ, ճանապարհորդել էր օրեր, շաբաթներ և այդ բոլորից միայն մի բան էր յիշում, որ նաւը փուրգօնի պէս է ջրերի վրայ, որ ինքը մի անգամ շատ աղաչեց, որ այդ անիծած փուրգօնը կանգնեցնեն, սիրտը խառնում էր, բայց անողորմ փուրգօնչին չը լսեց, և որ Քրիստոսի գերեզմանի վրայ լոյս է ընկնում վերևից։ Կիսապուշ, միամիտ ու բարի պառաւ, որ իր վարձքի համար նրանց չը մոռացաւ և օրը մի անգամ մի քանի պատառ հաց էր հասցնում բանտարկուած կոյրերին։ Այսպէս էլ լաւ էր, ապրում էին։

Աշուն էր. դուրսը քամիները ոռնում էին, ուռիները աերևաթափ օրօրում էին իրանց ճիւղերը և լալիս էին իրանց ծերութիւնն ու մերկութիւնը։ Գիւղը դեռ չէր փախել, բայց ամենքը փշի վրայ նստածի պէս էին. լեռների կատարները ձիւնով էին ծածկուել և նրանց յետևում՝ ասում էին, քիւրդերն ու չէլօնները վրխտում են։

Մահտեսի Յումարը գալիս էր միշտ առաւօտները, փէշի մէջ խնամքով բռնած մի քանի կտոր հաց, որ նա հաւաքում էր դէսից դէնից, բաց էր անում դուռն զգուշութեամբ, բարի լոյս ասում, հացը վար դնում, նստում էր նրանց կողքին և մինչ կոյրերը ուտում էին նրա բերած պաշարը, ինքը պատմում էր գիւղում անցած դարձածը, մանաւանդ մանրամասն հաղորդում էր «Փախի» մասին շրջող լուրերը։ Նրա պատ-

մուխիւննեըն օր աւուր դառնում էին աւելի մռայլ, աւելի սարսափելի։ Նա խօսում էր գօրքից, ասում էր, որ էլի նոր գնդեր պիտի գան, որ թշնամին շատ զօրեղ է, կռիւը սարսափելի է լինելու, ասում էր, որ գիւղերում էլ պաշար չի մնացել, այնպիսի թանկութիւն է լինելու, որի նմանը եղած չէ։

Մի երեկոյ կոյրերը նստած իրանց ընում, մտմտում էին պառաւի պատմածների մասին, ծրագիրներ էին կազմում ժամ առաջ խոյս տալ փախի երկրից, երբ դուռը ճռռաց և ներս մտաւ պառաւ Յուսարը։ Նա յուզուած էր ու գունատ։

—Գօրք շատ եկաւ, ասաց նա կերկերուող ձայնով. գլուխներիդ ճարը տեսէք։

—Ի՞նչ անենք, միաբերան ձայն տուին կոյրերը։

—Փախէք տնաշէններ, փախէք, դուք խօմ կոյր մարդիկ էք, շուտով գիւղը կը փախչի և դուք ոտքի տակ կ՛երթաք, օր առաջ փախէք։

—Օրը ցերեկով ինչպէս փախչենք։

—Գիշերով փախէք, թէ ցերեկը բռնեն, վայն եկաւ ձեզ տարաւ. պաշարը չի բաւականանում, շներին կոտորում են, թէ ինչ է աւելորդ բերան չը լինի, մուրացկաններին էլ դէ, նրանք էլ չեն աշխատում, ասում են, կը սպանեն, եթէ դռներում շրջելիս տեսնեն։

—Կը սպանե՞ն։

—Հա, անպատճառ կը սպանեն, ասում են, ես խօմ մենակ չեմ, ամենքն են ասում սարսափելի բաներ. ասում են, որ կապ կը դնեն անճարների վզերին, քաշ կը տան սարերը շներ հետ և այնտեղ կը սպանեն գնդակով։ Փախէք, այս գիշեր փախէք, ես էլ բան չեմ կարող անել, հաց ճարել չեմ կարող։ Պառաւն իր սարսափելի գոյժը հաղորդեց ու գնաց։

—Որճիթում մի առժամանակ լուսթիւն տիրեց, երկու կոյրերը խաւարի մէջ կարծես չէին էլ շնչում։

—Մարգար։

—Մուրո։

—Մինչև լոյս Արազ կը հասնե՞նք։

—Հա Մուրո, կը հասնենք։

—Ճանապարհը չե՞նք կորցնի։

—Աստուած ողորմած է։

—Դէ վեր կաց, էլ մի սպասիր. սազը չը մսռանաս, մէջքիդ ձգիր. գիւղում քնած են, ոչ ոք չի տեսնի։

—Ես դուրս եկան նրանք. մութ, մռայլ աշնանային գիշեր. թխպոտ երկնքի վրայ մի հատ աստղ չէր պլպլում. Մուրօն իր ողորմելի աչքը այս ու այն կողմը դարձրեց, չռեց, տրորեց մի բան որոշելու համար, իզուր, ոչինչ չէր երևում. միապաղաղ մութ գանգուածը նրանց շրջապատել էր, պէտք էր քայլել շարունակ մի գծով, մի ուղղութեամբ դէպի հիւսիս, նրանք գիտէին, որ Արազն այն կողմն է, բաւական է հասնէին ափին, մնացածը հեշտ էր։

Գիւղը քնած էր, նրանք զգուշութեամբ

դուրս եկան, քայլում էին, որտեղից կարող էին, պէտք էր մեծ ճանապարհը գտնել. իսկ մինչև այդ՝ անցնում էին խուլ դաշտերով։

—Մուրօ, լուսին կայ։

—Չէ, Մարդար, լուսին չը կայ։

—Մէկ լաւ նայիր։

—Լաւ եմ նայել, ախպէր, չը կայ, չը կայ, ուսս պինդ բռնի. փայտս խոր գնաց, առաջներս առու է, լայն չէ, թռչենք։

—Մուրօ։

—Մարգար։

—Դու թռաւր։

—Հա, դու որտեղ ես։

—Ջրի մէջ, ընկայ ջրի մէջ. ցուրտ է, սառն է։

—Ջրի մէջն ես։

—Հա սասցի, ջրի մէջն եմ. այ նստած եմ, ոտներս թրջուած են, գորտեր էլ եմ զգում, նրանք էլ սառն են, դու գորտ չես զգում. նրանք ինձ մօտ են, ինչ են գտել այդ ողորմելիներն այս սառը ջրում։ Է՛հ, էլի երանի նրանց, տեղ ունին, մեզ պէս անտէր ու հալածական չեն։

—Տօ, թող գորտերը, փայտս բռնիր դուրս արի։

—Փայտդ բռնե՛մ, ես փայտ չեմ գտնում, բայց գորտերը շատ են. որտեղ ես, ձայն տուր, որ փայտդ գտնեմ, շարունակ խօսիր, բաներ ասա։

—Դէ, բռնիր, այստեղ, դէպի աջ, հը, հը

չը կայ, չը կայ, ինչ շատ գիշեր է. ոտնաձայն լսո՞ւմ ես. ովքեր կարող են լինել։

—Սուս, սուս, թող անցնեն։

—Մրսում եմ ջրի մէջ։

—Սուս, սուս, մրսիր, բայց սուս, մեր յետևից են ընկել։

—Ի՞նչ գիտես։

—Լսիր, ականջ դիր և սուս։

Զիաւորները էին, խօսում էին իրար հետ։

—Այստեղով փախան, ասում էր առաջին ձայնը։

—Հա այստեղից, պատասխանեց երկրորդը։

—Դու հատատ գիտե՞ս, որ մեր փնտրածներն են։

—Անպատճառ նրանք են, ուրիշ ով կարող է լինել, նրանց ձայները լսել են, լուսնի մասին են խօսել. հրամայուած է փախել, այ թէ կը պատահենք հաճ. բայց այստեղ չեն. առաջ անցնենք։

Ձայները կամաց կամաց հեռացան։ Շըրջող պահակներ էին, որոնք կարծում էին, թէ զիշերային լրտեսների հետքեր են գտել։ Բայց կոյրերն իրանց մասին կարծեցին նրանց խօսակցութիւնը և քարացան իրանց տեղերում։

—Լսեցի՞ր, Մարգար. պատաւ Ումմարը ճիշտ է ասել։

—Հա լսեցի, ինչ անեմ, ես խօմ քեզ ասել եմ, որ աշխարհը կռապաշտ է, որ թաղում շատ է հարկաւոր սրտերը փափկացնելու համար,

փախչում ենք, էլի չենք պրծնում. վայդե տուր, ինչ ցուրտ է այստեղ։

—Ահա վայտը, գտա՛ր, բռնեցի՛ր։

—Հա, բռնեցի, քաշի, քաշի պինդ. լաւ է, դուրս եկայ, թրջուած եմ, բայց գնանք, աշխարհը լայն է, բայց մենք գլուխ դնելու տեղ էլ չունենք։

Եւ նրանք քայլում են անընդհատ. երբ Մուրթի ոտքը դիպչում է քարի, թմբի, և նա գլորւում է երեսի վրայ. յետևից Մարգարը նոյն ձևով ընկնում է ընկերոջ մէջքին, վեր են կենում, իրար գանում, իրար մխիթարում և առաջ անցնում։ Ուշ դիշեր էր արդէն, երբ հասդիւ մեծ ճանապարհը գտան հևալով, անքալով, քրտինքի մէջ կորած։ Այժմ հեշտ էր, հարթ հաւասար տարածութիւն է և նրանք քայլում են անընդհատ։

—Մուրթ։

—Մարգար։

—Լսո՞ւմ ես ձայնը։

—Արագի ձայնն է, աշուն է, ջուրը վարար, հոսանքը զօրեղ, ալիքներն այդպէս աղմկւում են։

—Մթա՞ ենք։

—Շատ մօտ։

—Երբ հասնենք ինչ անենք։

—Նստենք, սպասենք լուսաբացին, որ նաւակները գործել, երթևեկել սկսեն։

—Այդ ձայնից ես վախենում եմ և սիրում միաժամանակ։

—Արագի ձայնից, ինչ վախենալու բան կայ։

—Գանի մօտենում ենք, գոռոցն այնքան ուժգին է դառնում, լսո՞ւմ ես, այնպէս կ'ուզէի մօտիկ լինել, շատ մօտիկ, համարեա ջրերի մէջ, որ այդ ալիքները ականջներիս մէջ գոռան. գիտե՞ս, ես միշտ կարծել եմ, թէ նրանք խօսում են, թէ նրանք էլ մեզպէս ցաւեր ունեն, թափառական ու անտէր, անցնում են երկրէ երկիր, լաց են լինում, բողոքում, ճչում, փսփսում, լալիս և նրանց ոչ ոք չի լսում։ Ծեղճեր. մեր եղբայրներն են այդ ալիքները։

—Ահա հասանք, ա՛յ, նստիր այստեղ, Մարգար, և լսիր, որքան կամենում ես, պէտք է սպասենք մինչև լուսաբաց։

—Ես քայլում եմ դէպի ափը, մօտ ջրերին, թող նրանք ինձ փսփսան, ականջիս մէջ լինեն, դու ցերեկով տեսե՞լ ես, ալիքներն ինչքի՛ են նման, ինձ թւում է՝ թէ նրանք աչքեր, բերան, մի խօսքով դէմք ունեն, որ գիտեն ծամածռել, հազար ու մի ձևեր տալ, որ նրանք կարող են ճչալ ու ծիծաղել, արտասուել ու ցնծալ։ Այդպէ՞ս է, Մուրթ։

—Հա՛ Մարգար, ալիքները ծիծաղել, քրքչալ ու արտասուել գիտեն. բայց մօտ մի՛ գնա, այդ լաւ չէ, ես քեզ չեմ տեսնում. ո՞ւր ես Մարգար, գո՞յ։

—Դու ինձ չե՞ս տեսնում, վայրը ձեռքիս, առաջս շօշափում եմ. ահա, ես այժմ ափին եմ, բոլորովին ափին, ես լսում եմ... քա-

նի՛ ձայները, ինչեր են ասում. սրանք միայն գիշերն են այսպէս, թէ ցերեկն էլ խօսել գիտեն։ Ուռւռ, մէկ իմանայի ո՞րտեղից են գալիս, ինչ են այսպէս փսփսում։

—Բինգեօլից, անաշէն, Բինգեօլից են գալիս։

—Մե՛ր Բինգեօլից։

—Աշխարհում մի Բինգեօլ կայ. չե՞ս լսել երգը՝ «Արագ, Արագ խան Արագ, Բինգեօլից բղխող Արագ»։

—Օճ՛ի Բինգեօլ, հազար աղբիւր, հազար լիճ, ասա Մուրօ, ցերեկն այս ջրերն ինչ գոյն ունեն, սե՞ւ, թէ կարմի՛ր։

—Ես սև ու կարմիր եմ տեսնում, Մարգար։

—Տե՛ս, Մուրօ, նրանք գալիս են, գարկւում են ոտներիս տակ, շըրըփ, շըրը՛փ, յետ ու յետ գնում մռմռալով, ինչ են ուզում, Բինգեօլից են գալիս խեղճերը. ինչե՛ր են տեսել, «Արագ, Արագ խան Արագ, հազար լճից, բղխող Արագ»։ Հազա՛ր լճից, ինչքան բան կարող են ասել այնքան լճերը, պատմեցէք, էէ՛, ինչ էք մռմռում ծեծուած գազանների պէս։

Ալիքները մռմռում են, ու թումբը, որի վրայ կանգնած է Մարգարը, կրծում, քերում են տակից, նա մօտ է թափուելու։

—Մուրօ, սիրտս էլի լցուեց, ասա, մատաղ, ասա մեր երգը՝ «Զարկենք սազին, մռմռա՛ք քամ»...

Երգը կիսատ ձնաց ու լռուեց. ահագին շրըփոց բարձրացաւ, գետափին էր, որ փուլ գալով՝ գնաց կատաղի ալիքների հետ, և Մարգարի ձայնը մէկէն ընդհատուեց։ Մուրօն յանկարծ ճչաց։

—Մարգա՛ր։

Ալիքները մռմռացին, ճղփոց հանեցին ափերի վրայ։

—Մարգա՛ր։

Ալիքները խշխշացին, պատյանները գործեցին, իրար հրեցին, հրհրեցին առաջ անցան։

—Մարգա՛ր։

Ընկերոջ ճիչը ձնաց անպատասխան, և խեղդուեց աղմկուած գետի մէջ, ուր Մարգարի դիակը լողում էր թաւալ թաւալ, սազը պինդ բռնած ձեռքում, դարձեալ բուռ ծայրը դէպի երկինք ցցած, դարձեալ աչքերի խոռոչները դէպի վեր, դէպի անհունը ուղղած։

—Գե՛տ, գե՛տ, հազար լճից, հազար աղբրից բղխող գետ. սարերով, ձորերով սև օրով եկանք, սրտերս մռմռա՛, աչքերս կոյր՝ արեան ծովեր ենք կտրել և անցել. ջուրդ հասանք ափիդ, ես մենակ եմ ձնացել, խեղճ ու կրակ, անյոյս, ու անլոյս, գե՛տ, հազար լճից բղխող անգութ, անողորմ գե՛տ, կամ տար ինձ նրա հետ, կամ տուր ինձ նրան. Մարգա՛ր։

Լուռ էր ընկերը. մռնչում էին ալիքները, իսկ Մուրօն՝ զաւակը կորցրած մօր պէս, վազվզում էր ափերում։

Երկար թափառեց նա, ընկերին կանչեց, ճչաց, ոռնաց ալիքներից բարձր, ալիքներից ցաւով. իզո՛ւր, Մարգարը չը կար, իսկ գետը

շարունակում էր անհոգ երգիչով թաւալել իր հարուստ ջրերը և նրանց հետ մի դիակ, մի խեղճ անտէր դիակ։ Էլի մի քանի րոպէներ և ջրերը կրկին ճղփացին, նրանց ծոցը նետուեց յուսահատ Մուրօն, ալիքները բացուեցին մռմռալով, ներս առան նրան էլ և ամեն ինչ լռեց։

Բինգեօլից էր գալիս գետը, հազար լճերից, հազար աղբիւրից, շատ քաներ գիտէր, բայց միայն մռմռում էր և փսփսում, կամ կականով զարկւում էր իր ափերին։ Եւ ալիքների տակ թաւալ թաւալ գլորւում էին երկու աշուղ ընկերները, կարծես խօսում, փսփսում էին ալիքների հետ, հայրենիքից լուրեր էին հարցնում և նրա սառը ծոցի մէջ հանգիստ օրօրւում։

1902

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՏ - ՊՄ.ՕՐՔ
им. А. Мясникяна
և ՀԱՍԱՆԻՔՅԱՆ ԱՆՎԱՆ

ՑԱՆԿ

1. Սեւ օրեր 3
2. Մասիսը (աւանդութիւն) 143
3. «Խաւարե՛ս լո՛ւսին» 178
4. Դաւաւոր կաղնին 195
5. Դարձը 217
6. Կոյրերը 263

ՀՀ Ազգային գրադարան
NL0328330

18.269